



1. Панна Шаггебашевы
Родились в деревне
9 марта 1884

11

ԹԱՐՅԱԿԻ ԲՈՒԺԵ

ՀԱՐԱՍՈՒ

Յօրինեալ ՚ի Պօղոս արք Եպիսէ Անդրխանուազօլսեցւոյ , ՚ի
նախկին Պատրիարքէ Կոստանդնուպօլսոյ , ՚ի միաբանութէ
սբ Երուսաղէմի :

ԲԱԺԱՆԵԱԼ ՅԵՐԿՈՒՄ ՀԱՏՈՐԾ

Քառաջնուն ցուցանի օգուտն առաջնունց ինչ , որտեղ
առնեն զմարդն երջանէի . իոէ շերիբորդուն վնասն
հող-ընեանց , որտեղնեն զմարդն լշուած :

Ես և հարիսուոր միջնորդ գրիսութեան ճշնորդ քրիստոնէի :

՚ի Հայրապետութեան սբ Խաչմիածնի Տոն և Տոն
Խփրեմի սրբազան կաթուղիկոսի :

Խ ՚ի Պատրիարքութեան սբ Խաչմիածնի Տոն Վառըրե-
էլի արք Խապիսկոպոսի :

Հրամանաւ Տոն Խարապետի ածաթան արք Խապսի,
և արժանաժառանգ Պատրիարքի կոստանդնու-
պօլսոյ :


Հատոր . ա :

Օդուտն առաքինութեանց :

ՅՕՐՁԱԳՐԻ

1824

Դ ՏՊԱՐԱՆԻ ՊԹՅՈՍԻ ԱՐԱՊԵԱՆ :



—
—
—

卷之三

ՄՈՒՀԱՆ
Վ. Ա. Ս. Տ. Բ. Ե. Պ. Հ. Պ. Հ. Գ.

ՆԱՐԱԿԱՆ

Արիս ինչ չարողութեան սեպհական էն մարդոց
որովէ մարդ , իմացական ժառ , և աշտա չամք : ԱՌայոց
չամք առաջի ճանաչել շմշարտուի , և շնորպի առաջի
է եղ բարոց և չարե . իսչ չամաց խորշել է չարեն ,
և առաջի զբարեն աշտա բերմամք :

Եւ այսուիւս եբրե երկուումք թեօք վերանայ մարդոց
'ի պատիեր և ի նմանուի այ , որդիսի ստեղծաւ և առաջ
ջին մարդու առամ . ըստ այնի , * Արայուած մարդ ըստ
պատիերի մըրում և ըստ նմանութեան || Ընն . ա . 26 :

Արարդու գշանչելով չորսու զնմանութիւն այ , այլու չ
զիմելու պատիեր այ . զի պատիեր շինելու մասմէ ի բնական
հարգի . իսչ նման լինելու է բարոցական հարգի . և որ ինչ
բնական է ի բնուել է , և անեղծ . ապա ոպ նախ ան զե-
շանչելու էր անձնելիքան , ի նոյն էկաց և զինի անհման :

Իսչ բնականաւ ոչ ոչ չարե ժառանգել շած . զե
գործողութիւն բնական՝ ոչ ելուզանի ի ապատ չամաց ,
այլ 'ի հարիե բնութեան . և որ ինչ անձնանի ի ներքո
հարիե բնութեան , ոչ է արժանի վարչուց չամ պատճոց :
Իսչ բարոցական՝ որ 'ի ապատ չամոց ներդործի , ար-
ժանի շինի վարչուց չամ պատճոց :

Վայ պարու է մարդոց նմանիւ այ բարոցական առա-
ջնութիւն . զի այս է՝ որ զմարդու առանի նման այ . և ինչ ոչ
ելանի մարդ 'ի նմանուի այ , ոչ չարե դուռել շիտառ
շոր չորսու՝ առժան էր նման այ :

Եւ այս նմանութիւնի հիմնի է համաշայնութե չամացն
այ . վոյ եռ ած զպատաճերան , և եկուց զհանցու չամաց
բերոց . զի նմա ժայնոց ջանացնէ մարդ համայնալ . և
զմա ժայն պաշտէլ : ~~Զի ոչ այլ ինչ է պատաճեն ,~~
չամ համա պատաճերողին . և ~~ոչ այլ ինչ է պաշտէլ զհան~~
այ , չամ օժար չամօչ հնապանութիւն և պատէլ զհան պատ-
ճերին . զի նորատակ գործողուե մարդոց պարու մինչ
համան այ . ըստ այնի , Այս որ հանդիսան աշխատելոց ,
և ինչ ըն գործ է եղելոց : || Ը արական :

ՆԱՐԱԿԱՆ
Պ. Հ. Պ. Հ. Գ.

Առաստ որ ճառադիւր սերով պահէ զպատաճերանս աց ,
յինի համաչայն խանց նը . որ է նմանիլ աց ՚ի բարոյական
խարգի : անհնար է ստեղծուածոց նմանիլ աց ըստ
էւ-թէ : ՞ Յայս դա ս-սուցանեն թշ սի գերս պաշտէլ
զիան աց , որպէս զի խարացու-ք ժառանգել շոծ եբրև
վ-ըշին վախճան :

Իշ ժանշի ած է ողբրձած և գիտակ ահարուե մարտ-
խան , հաստատեաց զհամութիւն իւր ՚ի յուղը-թիւն բարուց
մարտ խան , որ ս-զշի դայն առաջինութեամբ :

Խաչ զառադինութիւն հիմնեաց ՚ի տերին սիլինունս ,
շէ ամենց յուն հեշտնիալ լիցի . և դ' ս պատճառ-եսցէ
զահարութ և զանբաւականութ իւր . ըստ այն է , * Պատ-
ս-իրանս նորա չեն ինչ ծանունք . || ՞ Յովհ առաջին
կաթ . ե . Յ : և թիւ * | ս-ծն իմ առջցր է . և բեռն
իմ գործի : || Ա' ատ . Ժա . Յօ :

Վանշի շինչ դու տերին ժան զակը , ժան զիոն
նարհութիւն , ժուժիալութիւն , հեղութիւն , համբէ-
րութիւն , ներողութիւն , պահեցողութիւն , աղօթա-
սիրութիւն , ողբրձութիւն , և աշն . որք և անաշ խառ
գործին , և ամ ս չարէ առնել :

Խաչ եթի պահանջեր ած առենց յունց զուժեցութիւն
ստիւտնի , զարտգընթացութիւն առայէլի , զարիութին հեր-
տելէսի , շիմաստութիւն արխստութիւն , շբանաստեղծութիւն
վերգիւթոսի , յայնժամ խարէին մարտէի անպարա չայու-
ցանել զանշին : Խաչ ացիմ ՞ չ չարէն մնաշ անպարա ,
շորժամ ՞ չ առաքինանան . վու զի գործ առաջինութիւ-
տերին էն , և ած ս-րէս չարէլի . զի պահանջեն դայն
շաօթարութիւն խանց , և այն է ՚ի պատրաստի եթի
ախորդէ մարտ :

Տես և զիս գիւ-թիւն աց . զի ՞ չ դայն ՚ի տե-
րին սիլինուն խարգիւց զառադինութիւն . այլ և ՞ չ պա-
հանչեաց յամենց յունց թաշափ , այլըսու իւրաքանչիւր չար-
եաց . զի ՞ չ յաղաստաց ինտէի զուրու . և ՞ չ ՚ի հե-
մանտաց զծոնապահութիւն . և ՞ ՚ ՚ ՚ որդիւց զիրատ :
Վ. պատէն ած որոշ սիւնեցուն պարգիւէ զբաւական

շնորհա ըստ իւրաքանչիւր կարգի և աստվանի . նոցնպէս
ինտրէ յամենեցունց՝ զե գործեցէն շբարեն նոզին
շնորհօ՛ զոր եւ նոցա ձրեաբար :

Օ է շնորհն ոռուեալ զինի ՚ի խղմանէ աց, և գործ
ածութիւնն պահանջի ՚ի խղմանէ նարդոցն . այս է
գործաից լենել շնորհացն աց՝ առ ՚ի համույանաշ նմին :

Իւսց գործածութիւն շնորհացն աց խառարէ բարոյա
չան առաքինութեամբ . վասն որոց չիւ ՚ի հեանս նարդոց
օդախար և հարիւառ՝ առն զուսումն բարոյախան ա-
ռաքինութեան : Իսկ և բարոյախան առաքինութիւնն
արդիւնապարբերին յածաբանախան առաքինութեց, որք են
հաւառու՝ ցոյս՝ և սէր . հաւառուն ուսց ճանաշել զանձ .
ցոյսն առ ած առաջնորդէ . և սէրն ըլու աց դաւորէ :

Եւ բարոյախան առաքինութիւնն են մջոց՝ առ ՚ի
պահէլ ամբողջ շածաբանախան առաքինութեանն . առ-
առ ածային և նարդիային առաքինութիւն զստ ՚ի միւնց
ո՛չ հասաւցանեն շշափահաս նարդն օերանախան ժառան
՚ի ժառանգել զանձ . ըստ որում հաւառու առակց գործոց
թուեալ են, և գործու առակց հաւառու թուեալ . զե
ածաբանախանն են որպէս հոգի . և նարդիայինն՝ որ
այն ինչն է բարոյախանուն, որպէս նարդին :

Արդուէն թայն առաքինութեամբ ուղղե կամ նար-
դոց նմանիլ չամացն աց . և առաքինութիւնն գործին
՚ի մէջ ջանիւս և իրեն-թեամբ . բայց ըստ որում նարդինն
հայէ զիտա նարդոց ՚ի հողեղին շարիս, և արգել բա-
զում են առաքինեաց ՚ի իւնցազցու ճանապարհէ ելանել
առ ած, իսրաու նարդն առաջնորդութե իրասուց և
ցորդութանց : Որոց ազագաւ ո՛վ հարդ և վարդարեառ
և առասուլ հոգւոց հաւառացելոց՝ հոգացին թշու և
հոգան սոսուցանել և առըրել շմբուրէի գործէլ
շբարեն ըստ կամացն աց . անուն ՚ո՛չ շերժանին ՚ի պար-
ապառութիւն, եթէ առ դերութիւն անչին անդույթ լիցին
՚ի իրասելոց զայնուի՞ որք կարօտ իցեն իրասուց :

Օ այս պարտառութիւնն ունելով և մէր, արդէն
ոզբին-թեամբ պէտոն ՚ի հրածարել մէր ՚ի պարտ-

արգահան զբազմանց , և 'ի բարերիլ 'ի վանս սբց է շեքի
որ 'ի իրեսու-պօլիս , 'ը համելով զբազմահան ժամա-
նակն անաշխատ վասնել , զմանս բարոցահան իմաստու-
հաւառեալ 'ի դ , և շացլ բազում շառելուալ 'ի նոյն
էլքի իմանդարան իրաստու չի ամ իւնցազգութ վա-
ճառած՝ եւառ առաջի : Ու ամ չարեն առ չեռն պառ-
բառ գասնել եւրաքանչեր գագագօշ շիտեւրո
հոգուց և նարձնոց :

Եւ մ' սկ ասեցէ , թէ անթիւ են իրապահան գրեանք
սրբոց հարց չամ իմաստակերաց . մանաւանդ զի ածա-
շունչ մատեանն ամ ուրեւ անմոլար ուղեցոց է ցանկա-
ցազաց մանապարհին բարեաց : Բացց զինչ , թիւ ան-
տէպ էնչ եցէ զի և զնոյն օգտակար ուղ զանապան է
զանակաւ մատուցանել աշարաց , մանց դառնահամ և
ուսնց չաղցրահամ : զի սմն զայս , և սմն զայն ախորժէ
առնեուլ :

Աս 'չի որ էնչ 'ի ամս է՝ գասնի ացու 'ի բազութ
գրեանս , ացլ ցրեւ , չամ միլին սմիւ . իսչ ասու որպէս
'ի զմիւ հայելով երեխն մանգաման պարզ և մէջին :
Հայ էլք սկ առատինեաց հայեսցի՝ աեսէալ 'ի ամս
զիւղեցիւթեն առատինութեան՝ որով զարտարեալէ ,
զուարձացէալ ցնծաց 'ի հոգի : Խաչ էլք ի նոշեաց սկ
եցէ՝ տիւրաւ նշարէ 'ի ամս զարատ և զբիծ չարաշար
վարուց եւրոց . և բաշտառեալ շանարգն ընտ պատուա-
չանին , ջանաց մատրել յանձնէ զբիծու չարեաց :

Աղառէն աեսուես ցընթացու մատենիս , զի բանէ
իրաստուց որդ ի դ և ի նոյն նիւթ վերաբերին , 'ի բա-
զութ պարբերութեն արսէեալ հատուածօքէն առաջի
տնին էլքի զառածն նախնեաց . որդէն զի պարզ և
մէջն ցուցցի իմաստ բանիցն , և տիւրընչալ մասց վեր-
ծանողոց :


Որով յուսանէ շնորհու տեառն , թէ բազութ ըն-
թեցանութեամբ սորին չաղցացին օգութ անչանց , և
վասեալ 'ի սէր նաշէլի գեղաց առատինութեան՝ զար-
տարեացին գործով վերաբերութեան : Օ չ որպէս նարդու-

անչնիշ խոս պատկեր է աց , շեյք' և բարսահան
առաքինութեամբ համաձայն խամացն աց , որով վերա-
նացէ ՚ի նմանութիւն աց . որպէս զե ընկալցէ շարդեն-նա
վաստակոց առաքինութեամբ շերտահան ժառան , զոր խոստա-
ցու ած սերելեաց ի-բաց :

Եւ ահա սովորն մաօք ժողով աանչին խաշաւ աշխատա-
սերել ՚ի յօրինաւածու մատենիս . յուսալով աատար ՚շար-
նութիւն աց , թէ ոչ լուզու և զեկ անմասն ՚ի վարչուց .
ըստ այնմ , * Որ տարչուայէ զեղաւորն ՚ի նույրութ ճա-
նապարհեն ի-բաւ , իրէնցէ զոգի ի-բ ՚ի մահուանէ , և
ճածիւոյէ զբաշմութիւն մշաց : || հիմակ կաթ . ե . 20 :

Ըպատէն մ-ծաւ սերով և աչնածութիւն մատուցանէ ծ
հայրենէ աշգին ինց զայս տայզն նուհէր իբրև նախըն-
ծաց երեխացէր , ՚ի ժառան աց :

Եւ ինամ վա չեր մշա աշօթարար
ծաց ծացիցն աց՝ պօջոս արք և պո-
անտրիանուպօջուեցէ , նախին պատ-
րիարք իսոստանուպօջուց , մա-
քան սից ալուսոյ և զէդ :



Բանք խրատական հոգւոց մարդկան ,
զարթուցանող զմիւտս բանական .
Որով խորշիլ ի չար գործոց ,
և չանկանիլ ի խորս տղ մոց :

ՕԳՏԱԿԱՐ

ԽՐԱՏԱԲՆԵՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴԵՐԱՔԱՐԴԻՔ ՌԵԶԵՎ

ՀԱՍԱԾԱԿՈՒԹԵԱՆ:

Առաջնորդ :

ԳԼ. Ա

25059
ա Արպես է ղեկավարն՝ ի նաւի, զօրացետն՝ ի զօրու, հովեն՝ ի հօտի, և աշքն՝ ի գլուխ. նոյնպես է և առաջնորդն՝ ի քաղաքի և յազդի իւրում: Օ ի եթէ ղեկավարն է Ճարտար, կարէ նաւն անվտանգ հասանիլ՝ ի դիտեալ նաւահանգիստն: Եւ թէ զօրապետն է քաջ, յաղթական հանդիսանան զօրք նը՝ ի մարտս թշնամեաց: Եւ թէ հովեն՝ հսկօղ, հօտ նը անշորթելի՝ ի գոյլոց արածեալ պարարի՝ ի մարգս դալարիս: Եւ թէ աշքն է պոյժառ, բոլոր մարմինն լինի լուսաւոր: Այսպես եթէ առաջնորդն իշէ արժանաւոր, հասարակութին ողջոյն վայելէ յերջանկութեան:

Է Ամէ արժանի առաջնորդութե , որ
քաջածանօթէ ժողովրդեան , և հրաժարի ՚ի
լինելոյ առաջնորդ . զի որ զանձն ընծայեցու-
ցանէ , և ցանկոյ իշխանութե , ոչ ճանաչէ թէ
զինէ լինել առաջնորդ բաղմաց . և ոչ կարէ
ըսուլ զարտաւորութիւն իւր : Բայց և ժո-
ղովուրդն զայնովիսին պարտի ընտրել որ իցէ
խմատուն և բարեջան : Ա ազ երկու շնորհք
հարկաւոր են առաջնորդին . խոհեմութիւն՝ ՚ի
սահմանելն զօրէնս օդտակարս . և ջանփ՝ ՚ի
գործ դնել զօրէնս :

Դ Ասրեմը է առաջնորդին գիտել զեղա-
նակն բարւոք կառավարութե , թէ ՚ի ժամա-
նակս խաղաղութե , և թէ ՚ի ժամանակս խոռ-
վութե . զի այլէ կերպն կառավարութե ՚ի
խաղաղութե ժամանակի , և այլ՝ ՚ի խոռվութե .
և եթէ յերկոսին վիճակս միօրինակ վարես-
ցի , չէ նա խոհական և կատարեալ :

Դ Պարտ է առաջնորդին զգոյշ լինել յամի .
վասն զի ամ մարդիկ անթարթ ազօք գիտեն
զօրհանապազ , զի դատեացեն զնա . չե՞ն տեղեակ
վիճակին յորում գտանի նա . և ոչ զգան ըզ
դժուարութիւնն զօրս կրէ . այլ խնդրեն տե-
սանել ՚ի նմա զետարելութիւն՝ որ ՚ի վեր է
քան զմարդկային կարողութիւն :

Ե Առաջնորդք և իշխանք առաւել պար-
տին հոգածու լինել մանկանց հասարակութե
քան զծնօղս նց , ջանացեալ վարժել զդեռա-
բոյս մանկունս քաղաքին , կամ ազգին , յու-

սումն գիտութե և բարի վարուց, և հարկաւոր արհեստից։ Օ ի մանկունք՝ որք ՚ի թարմագոյն հաստի տովորին լինել ուսումնատեց, կամ անգործ, կամ չարաբարոյ, դժուարին է յոյժ ՚ի զարդանալ տիոցն գտանիլ ուսումնասեր, ժրաջան, և բարեբարոյ։

Դ Առաջնորդք փոյլի կալցին ուսուցանել ժողովրդեան արհամարհել զտանջանս և զմահ վս ձշմարիտ հաւատոց. Տեռի կալ՝ ՚ի փափկութե, և յապերախտութե. Ժիր և անձանձիր լինել յաշխատանս. Ճանաչել վերախտիս բարեբարին. և սիրել զաղդն և զհայրենին։

Ե Առաջնորդն՝ որ սիրէ միայն զմեծարանս և զօդուտ և զդիւրութիւն անձին իւրոյ, չկարէ լինել սիրելի ժողովրդեան. վասն զի օգուտն հասարակաց առաջին է դասելիքան զօդուտ և զդիւրութիւն անձին։ Ա այն կարեն անբասիր լինել նոքա, որք վս հանդիսատ և հանդարտ կեանս վարելոյ՝ հրաժեշտան ՚ի բառնալոյ զծանրութիւն կառավարութե հասարակաց։ Զեն անբասիր և նոքա՝ որք ցանկան լինել կառավարիչ, և ննարս հնարեն յափշտակել զայն քաղցր պատառ։

Առաջնորդն՝ եթէ միայն ՚ի հաճոյս և յօդուտ իւր վարէ զիշխանութիւն, է անիրաւը բռնաւոր. իսկ եթէ ըստ իրաւանց և յօդուտ հասարակաց վարէ, է նա հայր գթած, և արժանի առաջնորդութե։

Շ Առաջնորդք պարտին ունել որոշեալ

Ժամանակ լսել հպատակաց իւրեանց, որք ունին բողոք առ նա, կամ լուր ինչ հասուցանել: Ինդունել պարտ է և զեկս և զպանդուիտոս, և խօսակից ընդ նոսա լինել, և տեղեկանալ սովորութե հեռաւոր ազանց. յորոց մարթ է ուսանել զօրէնս ինչ, որ իցէ օդտակար ժողովրդեան իւրոյ:

Թ Առաջնորդք կարեկցութե են արժանի առաւել քան զայլ՝ քան թէ դատողութե. զի զգածեալ գոլովմարդկային տկարութե անկեալ են ՚ի ներքոյ անտանելի ծանրութե: Ո ի պարտաւորեալ են կառավարել ըզ բազմութի ժողովրդեան, և բարիս առնելնց, և հոգալ միշտ զպէտս որոց կարօտին. և զի բազում են պիտոյքն, բազում աշխատութիս կրեն, որք կամին բարոք կառավարել:

Ժ Առաջնորդն՝ եթէ տեսանէ զպակասութի գործակալաց իւրոց ՚ի պաշտամունս իւրեանց, պարտ է նմա յորդորական բանիւք յայտնել զպակասութիս նոցա, և իրաւունս պահանջել առանց վրդովմնն. եթէ այսու ուղղես ցին, յուսալի է հաւատարմութե նոցին. ապա թէ ոչ, պարտ է զգուշանալ ՚ի նոցանէ, զի մի՛ մնասեսցի:

Ճ Առաջնորդ ոք՝ թէ և իցէ բարեկարգ, գոնէ սիսալի երբեմն իբրև զմարդ. և արդարե գովուել լինի ժառանգաւոր, եթէ ունկնդիր եղեալ խրատուց՝ ջանոյ ճանաչել զպակասութիւր, և ուղղել զանձն: Կան ուղղութե է

խոստովանին զպակասութիւն անձին . և տանիլ
ծանր խրատուց իմաստուն բարեկամաց :

ԺԵ Առ ոչ է առաջնորդ , ոչ գիտէ տակաւ
վին թէ զինչ է առաջնորդելն բազմաց . վոյ
համարձակաբար դատի զառաջնորդն , թէ յայս
և՝ ի սոյն իցէ սխալեալ . բայց մինչ այնպիսւոյն
դեպ լինի հասանիլ յիշխանութիւն առաջնոր
դական , առաւելեալ ևս սխալի , և դատի յայլոց :

ԺԴ Առակական մարդ՝ կարծէ զանձնէ թէ
ստացեալ իցէ զքաջ հմտութիւն ամ հանգամա
նաց կառավարութեալ առաւել քան զամենե
սին . և համարի թէ ինքն ոչ սխալէր , եթէ
լինէր տեսուչ . բայց ոչ գիտէ , թէ իշխա
նութիւն կառավարութեալ նուածէ զմիտս . և
ըստ մեծութեալ իշխանութեալ , մեծամեծ եւ
ըստին ՚ի նմա փոքր սխալանկ :

ԺԴ Չարք՝ երբեմն կարծելով չարիս հա
սուցանել բարի կառավարչաց իւրեանց , զըր
պարտութիւն ամբաստանեն զնոցանէ , և տան
վարել յօտարութիւն . բայց այսու առնեն մեծ
բարիս . զի նոքա զերծանին ՚ի բազմատագնապ
հոգոց կառավարութեալ հասարակաց . և գտա
նեն զհանգիստ և զանզբաղ կեանս :

ԺԵ ՂԱՊԱՀՆՈՐԴՔ ունին պարտաւորութիւն
երկար խուզողութիւն քննել զվէճն ՚ի դատաս
տանի , և հասու լինել իրացն ճշմարտութեալ .
զի ոչ ամբաստանեալ է յանցաւոր . և ոչ ևս
կարծիք յանցանացն կարէ առնել զոք արժանի
դատապարտութեալ ըլքողքելոյ դատախաղից .

ԺՇ Առաջնորդն է պահապան օրինաց, և օրինակ բարի հասարակաց. ուստի պարտաւոր գտանի դատատուանի վա մեղաց ժողովրդեան, եթէ զանց առնէ ՚ի պատուհանելոյ զյանցաւորս օրինաց. և կամ անիրաւութէ, ադահութէ, և սնափաւութէ իւրով լինի չարօրինակ այլոց. և պատճառս տայ դայթակ զութե և մեղանչելոյ նոցա:

ԺՇ Արքափ ոք նախամեծար քան զայլս դըտանի, այնչափ առաւել քան զայլս բարեկարգ լինել պարտի: Փոքը յանցանկ առաջնորդին՝ պատճառեն զմեծ չարիս ՚ի ժողովուրդն. որ երբեմն ձդի ՚ի բազում դարս: Ճաղովուրդք աջալուրջ են ՚ի տեսանել զի՞քը պակասութիս առաջնորդին քան զմեծամեծ առաքի նութիս նը. և առաւել զբան զսակաւ վեան զոր կըեն ՚ի նմանէ, քան զբազում օդուտս զոր սուանան նովաւ:

ԺՇ Առաջնորդք արժանի լինին պատժոյ, յորժամ տան զկառավարութիւն իւրեանց ՚ի ձեռն անսարժանից, որք չարիս հասուցանեն հասարակութեն: Ո ի թէ և ինքեանկ անհաղորդ իցեն վսասուն. բայց քանզի ոչ փոյթունին քննել և գտանել զարժանաւորն, և նմին յանձնել զբործակալութին. վայ իրաւամբք պահանջի ՚ի նոցանէ դատաստանն:

Առաջնորդն՝ եթէ կամի առնել զբք գործակալ, պարտ է յառաջադոյն կացուցանել զնա ՚ի պաշտօն ստորին. փորձել զբործունելութին

նը , և զշաւատարմութի՞ . լրտեսել զառանձնական վարս նը . յաճախս խօսակից լինել ընդ նմա . հարցանել ՚ի ծածուկ , և ուսանիլ ՚ի նոցանէ որք ընտանեբար վարին ընդ նմա , թէ զի՞նչ յաւետ ախորժելի է նմա , որոց առաւել հաւանի . զո՞րս բնաւորաբար սիրէ . առո՞րս ատելութի՞ բերի . և յետ աեղեկանալոյ ամ հանգամանաց նը , ապա կարդել ՚ի դործակալութի՞ բարձրագոյն աստիճանի :

Ժթ Առաջնորդն՝ եթէ բռնադատիցի զքարոք ՚ի պաշտօն ինչ կարդել , պահեսցէ զնա միշտ ՚ի ստորին կարգի . և զգո՞յշ լիցի յամի , զի մի՛ ել լանիցէ ՚ի բարձրագոյն պաշտօն . և մի՛ դադունի և ներքին խորհրդոց լինիցի իրազեկ : Եւ ևս արժան է հայիլ . զի եթէ սակաւ առ սակաւ յուղղութի՞ ոչ եկեսցէ , հնարիւք իմն ՚ի դործակալութէն ՚ի բաց հանիցէ : Բայց պահրտէ խոհեմութի՞ վարիլ , զի մի՛ աղմուկ ինչ վերերեւեսցի . զի եթէ չէ հնար զքարն առ օրին ՚ի բաց հանել , արժան է միշտ մտադիր լինել դիպողագոյն առթի ՚ի միջոյ բառնալ :

Ի Առաջնորդք՝ ՚ի կարդել իւրեանց զայր բարի և գործունեայ ՚ի պաշտօն ինչ , և ՚ի գործակալութի՞ , արժան է այնուհետեւ աներկմիտ սրտին հաւատալ նմա . զի արք առաքինիք կամ մին ռւղղութի՞ ստանալ զշամբաւ բարի՝ քան զդանձս ոսկւոյ : Բայց պահրտէ ՚ի չափութիւն ապահովայման համարձակութի՞ . զի այնպիսին որ կարէր մնալ միշտ

առապքինի և հաւատարիմ, գուցէ անկոպար իշխանութեն կարի համարձակեալ՝ արտօպքոյ ելցէ ՚ի յուղղութէ :

իսա Փառք և խաղաղութիւն անբաժ լծորդ են ուղղութէն և հաւատարմութէն . վայ մինչ պակասի յառաջնորդէն ուղղութիւն կամ հաւատարմութիւն, բառնի փառք և խաղաղութիւն ՚ի ժողովրդենէ . և փոխանակէ անարգութիւն և խռովութիւն :

իւ Բազում հաւասարապատիւն մարդիկ չկարեն տնօրինել զօրէնս վաղեմիս, կամ դնել զնորս, մինչեւ ոչ գտցի ՚ի նու գլխաւոր ոք, որ ունիցի բաւական իշխանութիւն ՚ի վճռել և ՚ի սահմանել զօրէնս . զի իւրաքանչիւր ոք ՚ի համապատիւն անձանց պնդէ զիւր դատումն հաստատել . յորմէ ծնանի հակառակութիւն և խռովութիւն :

իւ Ոչէ պարտ առաջնորդին առանց ճիշդ և երկար քննութէն շտապաւ հատանել վճիռ ՚ի դատաստանի . զի չարք բազում են յամուրեք . և խորամանի ծնարիւք խաբեն զանգդոյշ դատաւորս՝ և մոլորեցուցանեն . այլ պարտ է նմա երկուց հակառակ կողմանց ունին մատուցանել, և ապա վճռել : Առաջնորդ ոք կամ իշխան՝ պարտի լսել ամենեցուն, բոյց հաւատալ սակաւուց :

իւ Առաջնորդն կարգեալէ բառնալ զծան ըութիւն կառավարութէն ժողովրդոց՝ ողջ հովհանուն մի հօտին, և հայր ընտանեաց . և այս

ոչ է նմա վատաբախտութիւն, այլ երջանկութիւն։ Օ ի յինքեան ցուցանէ զնմանութիւնն այ պատժելով զըսրա, և վարձատրելով զըսրիս, և զամենեսին յորդորելով՝ ի կատարել զօրէնս այ։ Ա պա բաւական փառք են նմա լինել պահա պան օրինացն այ։ և բաւական միսիթարութիւն վարձքն յաւիտենական կենաց։ որ պատրաստեալ է յոյ փոխանակ աշխատութե նր։

իւն Առաջնորդ ոք՝ եթէ ցանկայ զարս իւ մաստունս և առաքինիս բազմացուցանել, պանրտ է նմա զայնպիսի արս որչափ և սակաւ իցեն՝ ունել՝ ի պատուի։ և օրինակզք նոցին յորդորել զըսրումն յուսումն գիտուե, և՝ ի կրթութիւն առաքինութե։ և որք յառաջա նան՝ ի նոցանէ՝ ի բարելաւութիւն և յիմաստութիւն յարդել զնս, և կարգել՝ ի պաշտօն ինչ։ Որպ զի տեսեալ և այլոց բազմաց զմեծարանս նց, գուն գործեսցեն լինել նմանօղ, զի ստացին զպատիւ։ Ի անզի գտանին բազումք որք այժմ զուրկ են՝ ի գիտութիւն և յառաքինութե։ և մարթ էր նոցա լինել իմսատուն և բարի, եթէ լեալ էր յոյս և ակնկալութիւն պատույ։

իւն Որ կարգեալ է տեսուց հասարակութե, պանրտ է լինել, համբերօղ և երկայնամիտ, զի լինիցի տոր անձին իւրոյ, և ապա անձանց այլոց։ Ա ն զի անհամբերութիւն ոչ եթէ զօրութիւն ինչ է հոգւոյ, այնու զի վաղվաղէ առ վախճան իրին։ այլէ տկարութիւն, զի ոչ կարէ

տոկ ունել վշտաց :

Որ ո՞չ գիտէ սպասել և համբերել, նման
է այնում, որ ո՞չ գիտէ լրել և պահել զխոր
հուրդ իւր . և երկոքեան սոքա յառաջդան ՚ի
տկարութէ, որով զկարէ զուսպ ունել զանձն :

Օ ի զոր օրինակ որ արշաւէ սրբնթաց կա
ռօք, և ըունի բաւական զօրութի ըստ պիտե
լոյ գաղաքարեցուցանել, գահավշժ կործանի ՚ի
վիճս . այսպէս և անհամբերն՝ ո՞չ կարելով
զկայ առնուլ, անկանի ՚ի գուբն թշունառուե :

Օ ի ո՞չ սպասէ երբեք, և ո՞չ գիտէ չափել
զժամանակն . այլքուռն առնէ զնմ ինչ ծա
ռայեցուցնել ՚ի հաճոյս իւր : Աեկանէ զոստա
՚ի ժողովել զպտուղ յառաջ քան զշասունակիւ
նց . խորտակէ զւրունս, և ո՞չ սպասէ զի բաց
ցի . կամի ինքն հնձել, մինչդեռ այլք սերմա
նեն : Օ ի զոր ինչ առնէ՝ կարճմտութի շտա
պէ . ո՞չ գիտէ ժուժել և մնալ դիպողութե
ժամանակի . և ո՞րքան մեծ է իշխանութի իւր,
այնիքան մեծ լինի և վնասն իւր :

Ի՞ Շաջնորդ ազգի ուրուք՝ կամ իշխան
սք ժողովրդեան՝ եթէ հայեսցի ընդ վեշտա
կառավարութի, և ընդ ապերախտութի մարդ
կան, դժբաղլութիւն անձին համարի լինել
իւր առաջնորդ կամ իշխան : Այց պարա է
նմա գիտել՝ թէ մարդիկ լինին ապերախտք .
սակայն չէ արժան վս այնորիկ ՚ի բաց հրաժա
րիլ ՚ի բարերարութէ . այլ հարկ է ամ իրօք
խնամել և շահել զալք և զժողովութի իւր բա

ըի օրինակօք, ո՞չ այնպահ վե սիրոյ նց, որքան վե սիրոյն ոց. զե ո՞չ կորնչի բարերարութի, զոր առնէ ոք այլոց ՚ի փառա ոց :

Եաւ եթէ ապերախտք բազումք իցեն, գտանին և երախտագէտք ոմանք, որք ճանա չեն զերախտիս և զբարերարութիս. և սիրեն զերախտաւորն : Աւ հասարակութին թէպէտ և փոփոխամիտ իցէ առ՚ի լինել երախտագէտ, բայց ո՞չ իսպառ մնայ երախտամոռաց . զե կա նուխ կամ անագան առնէ դատաստան վասն ճշմարիտ առաքինութեն, և ճանաչէ զբարութին :

Աւ քանզի ապերախտութին առաւել յա ռաջդայ ՚ի վատթարութէ բարուց . վասն որոյ պամրտ է առաջնորդին կամ իշխանին ջանալ ՚ի բարեկարգել և ուղղել զբարս մարդկան, և առնել զնոսա առաքինի, հաւատարիմ, և երկիւղած յայ . որպէս զե կարօղ լինիցին ճա նաչել զբարերարն և զերախտաւորն իւր եանց, և սիրել զնա : Ուստի առնելով զհա տարակութին կատարեալ բարի, առնէ ինքեան զբազում բարի . և ո՞չ երկնչի բնաւ յապերախտութենէ նոցա :

Եպա եթէ առաջնորդն կամ իշխանն իցէ անիրաւ, և անհաւատարիմ . ո՞չ ինչ են զար մանկք թէ և ժողովուրդն լինիցի ապերախտ : Բայց եթէ առաջնորդն կամ իշխանն իցէ բա րի, և աշխատ լինիցի օգտակար խրատուք՝ և բարի օրինակօք իւրովք վարժել զհատարա

կութին ՚ի բարի սովորութիս , և՝ ՚ի պահպանութի օրինացն ոյ . գտանէ և վայելէ զպը տուղ աշխատութե իւրոյ յառաքինութիւնս հասարակութե . կամ գոնէ վայելէ զայն յանձին իւրում յառաքինութիս իւր :

ԵՌ Լարկիւղն հարկաւոր է , յորժամ սէրն պակասի ՚ի ժողովրդենէն . բայց պիտոյ է ունիլ զայն ՚ի կառավարութեան միշտ ակամոյ , որպէս զդեղ ինչ առաւել ազդու և առաւել վտանգաւոր :

ԵԹ ԶԷ' ամօթ առաջնորդաց խոնարհիլ և լինել երբեմն իբրև զտկար՝ զի շահեսցին զտկարս . քանզի և վարժապետն մինչ ո՛չ զիջանիցի և ասիցէ ոյք , աշակերտն ո՛չ կարէ ուսանիլ և ասել ոյք .

Ե ԱՇ ամձկումք միատեսակ խայծիւ որսացեալ լինին . և ո՛չ ամմարդիկ միակերպ խրատուք ՚ի բարին յորդորին . ապա ըստ այլ և վիճակի և բնաւորութեան մարդկան պարտ է յարմարել զբան խրատուն :

ԵՌ Տկարամիտ համարի առաջնորդ ոք , որ մինչ տեսանէ զժողովուրդն անլուր խրատութրում , յուսահատեալ յետս կասի ՚ի խրատելոյ զնն : Քանզի պարտաւոր է ըստ պաշտաման խրում սաստել յանդիմանել և միխթարել ամ երկայնմտութե . ապա յետ այսր ամի եթէ մնացեն անուղղայ , ինքն առնուլ յոյզ զվարձս վաստակոց իւրոց : Բայց բազում անգամ հայեցեալ ոյ ՚ի ջանս առաջնորդին , շնոր

Տպ իւրովք շարժէ զկամն ժողովրդեան անսալ բանից խրատու նը, և դառնալ յուղ զութիւն :

Եւ Առաջնորդն և ժողովուրդ իւր այնպէս սիրեսցեն զմիմեանս, մինչև մնալ անորոշելի, թէ ու առաւել սիրիցէ : Վանզի պարտին ջանալ յաղթել միմեանց սիրով . առաջնորդն՝ վստի ժողովրդեն, և ժողովուրդն՝ վստիւրութե և խաղաղութե առաջնորդին :

Եւ Անխոհեմ է առաջնորդն, որ վստի միոյն սիրոյ՝ ատելի լինի ամենեցուն . կամ վստի միոյն օգտի՝ զըկէ զամենեսին . կամ միոյն խորհրդոյ անսալով, արհամարհէ զեսորհուրդս ամենեցուն :

Եւ Առեղանչէ առաջնորդն՝ եթէ պատուեսցէ զփարթամն և զիշխանաւորս, որք չեցեն օրինապահ . և անգոսնեսցէ զաղքատս և զսոսկականս, որք պահիցեն զօրէնս . կամ պատժեսցէ զսոսկականս, որք ստունգանեն օրինաց . և անպատիժ արձակեսցէ զփարթամն, որք յանցանեն ընդ օրէնս : Օ ի թշնամի արդարութե է՝ որ անպատիժ թողու զյանցաւորն, և անվարձ զանմեղն :

Չէ՛ արժանի առաջնորդութե ագահ ոք՝ կամ ոխակալ . զի ագահն վաճառէ զարդարութին ընդ արծաթոյ . և ոխակալն թիւրէ զիրաւունս վստիւրութե զոր ունի ընդ ումեք :

Եւ Առեծապէս պատժել վստի ոխակալութե զյանցաւոր ոք՝ որ միսյն արժանի է կը

տամբանաց և սաստից, է անիրաւութիւն։ Օ ի
պատիմն է սպասաւոր արդարութեան ։ և պարտ
է միայն ՚ի նոյն պաշտօն ծառայեցուցանել։
ապա թէ ոք ծառայեցուցանէ կրից իւրոց, է
անիրաւ։

Չէ արժան ՚ի ժամու սաստիկ բարկութեան
պատժել զվանցաւորն ։ այլ պարտ է թողուլ
մինչեւ շիջանիցի բորբոքումն սրտի ։ զի բար
կութին խանդարէ զուղեղ մարդոյ ։ և տոյ խօ
սել զանվայելս, և գործել զանիրաւութիւն։

ԼՇ Պարտ է առաջնորդին լինել քաղցր
առ ամենեսին ։ զոր կարէ առանձինն խրա
տուք շահիւ, մի՛ խրատեացէ հրապարակաւ ։ և
զոր կարէ առնել ողոքանօք, մի՛ արասցէ սպառ
նալեօք ։ և զոր կարէ ուղղել սպառնալեօք,
մի՛ ՚ի դործ դիցէ զպատիժ։

Բայց եթէ հարկաւոր իցէ պատժել, պար
տի վարիւ գթութեան, և ո՛չ ճիշտ արդարութեան, զի
մի՛ յանցաւորն փոխանակ ուղղելոյ՝ դարձցի ՚ի
յանդդնութիւնն ։ զի առաջնորդին ո՛չէ դահիճ
յանցաւորաց, այլ ուղղեց։

Ե Աշաջնորդ ոք՝ եթէ յամ գործս կա
ռավարութեան խորհրդով այլոց վարի, է ան
խահեմ, և անարժան առաջնորդութեան ։ իսկ
եթէ ո՛չ բնաւ ընդ այլոց խորհրդակցի, այլ
զամ ինչ դործէ միայն ըստ խորհրդոց կամաց
իւրոց, է կամակոր և յանդուգն ։ այլ որ խո
հական է և արժանի կառավարութեան խոր
հըդակուցի ընդ իմաստնոց և գլխաւորաց ժո

զովրդեան . և գործէ զարժանն և զվայեւ
լուցն յօդուտ հասարակութեն :

ԼԵ Տեսուչ ոք ժողովրդեան՝ եթէ կամի
զոք համոզել՝ ի գործադրութիւն օգտակար ինչ
իրողը թե , պարտ է յառաջադրութիւն խորհիլ , թէ
իւ իւիք հնար է յինքն յանկուցանել զկամս
նը . զի ոչ ամենեքին են համաբարոյ . և ոչ
միատեսակ բանիւք յորդորին՝ ի գործ :

Քանզի ոմանք շարժին առ վայելքականն ,
ող երիտասարդէք . ոմանք առ օգտակարն , որպէս
կատարեալքն հասակաւ . և ոմանք առ համբաւ
ւաւորն , ող ծերք . կէպէ առ շահաւէտն ան
ձանց , ող ադահք . այլք առ փառաւորն , ող
փառասէլք . և այլք առ այլինչ առարկոյ , որք
ախորժելիք են բնաւորութեն իւրեանց . ապա
գործ է ձանաչել զբարս իւրաքանչիւր ու
մեք , ող զի կարասցէ ածել զմիտս նը՝ ի հաւա
նութիւն , և՝ ի գործ շարժել զկամս նը՝ զոր հա
մոզէ : Այրեսոր է նկատել ևս զպարադայս
ժամանակին , անձին , և գործողութեն . ապա
թէ ոչ մնայ գործն ամուլ , կամ թերի . և է
ուրեք զի փոխանակ օգտութեանն , գոտանի
առիթ վնասու :

ԼԵ Ազնիւ և քաղցրահամ է մեղը . բայց
յաճախ մատուցանել՝ ի կեր՝ առ բերէ ըլ
տաղտիութիւն՝ սեղանաւորս . բանք քարոզչին
որչափ քաղցրալուր իցեն և ընտիր՝ եթէ ըս
տէալ կրկնեացին՝ ի միում ատենաբանութեն .
կամ յաճախութիւն բանից երկարաձգեացին ,

պատճառեն զՃանձրութիւն ՚ի յունկնդիրս ։

Նա զի յառաւելութիւն բանից դժուարին է չապրդիլ ակամայ վընպանաց , կամ չխառնիլ անպիտան և աւելորդ զըռուցաց ընդ պիտանիս և ընդ կարեորս : Ազա պարտ է զգուշանալ քարոզ չին յերկարաբան ճառից , և չափով և կշռով խօսիլ . ո՞ղ զի բանկը խրատու իւրոյ ա խորժելի և ազգու լինիցի ունկնդրաց . և ինքն ընկալցի զպատիւն և զգովութիւն :

Առաւելութիւն բանից ո՞չ է նշան իմաստ նոյ՝ այլ տգիտի . քանզի տգետք սովորաբար են շատախօսք , և իմաստունք սակաւախօսք . բայց այսու ամի՞ն ունին զպատիւն և զմեծարա նըս . ո՞ղ և տգետ շատախօսք զարհամարհանս :

Ի Շխանք աշխարհի կացուցանեն գործակալս . զի ո՞չ են կարօղ անձամք միայն զշոգ ժողովրդեանն բառնալ . ո՞ղ մովսէս ըստ խոհական խրատու յոթորայ , կարգեաց զարս զօրաւորս՝ ածապաշտս՝ և արդարակորովս ՚ի մասնաւոր գործս կառավարուեւ : Եւեց . ծը . 21 :

Ուստի և առաջնորդք կարգեն զքահանայս՝ իբրև փոխանորդ և գործակալ ՚ի վըժողովրդեան . զի ո՞չ կարեն զբազմութիւն ժողովրդեան անձամք կառավարել որոց կարգեալ են ՚ի տնե հովիւն և դէտ : Ա ս որոյ պարագին ամ արթնութիւն քննել և իմանալ զմարս և ըզ կառավարութիւն քահանայից . զի մի՛ արատ ինչ կամ պակասութիւն գտցի ՚ի նս . այլ յամի լինի ցին բարեկարգ և ածահաճայ , ո՞ղ պահանջէ

պայմանն քահանսութեն . զի որովհետեւ քահանսյան են գործակալք առաջնորդին , ամպակասութին նշ վերաբերի առ առաջնորդն :

* Պահպահ զօրութիւն և դ' խնացեր . բարձրացն էիրեական պարբետաւու . պատմական ժողովրդեան ինու ըշ մշակույթաւու : || Խառայ . Տը . 1 :

* Բառծին հոգիւն զանձինս իւրեանց . և զիսալինս ինչ արածէին . այսպէս առէ որ որ . ահաւասի են ՚ի վը հովանաց , և պահանջեցին զիսալինս ին ՚ի ճեռաց բայց : || Խազեկ . Ը . 8 :

* Օ գուշ իացէս անձանց և ամ հօտէտ , զորում էր շէտ հոգին ո՛վ աւսուց , հովան զժողովրդ որն . || Պարծ . Ը . 28 :



* Խառնա եա զնանս առաքեալս , զնանս նարգարէս , զնանս առաքարանիչն , զնանս հոգիւն և վարդապէտու . ՚ի հաստատութիւն որբոց , ՚ի գործ պաշտաման , ՚ի շինուածած նարինոյն ժի : || Խափես . Ղ . 11 :

* Օրենսէ շնէլէր հաւատացելս , բանիւս , գնացէտ , սէրով , հաւատովլէ : || ա Տիմ . Ղ . 12 :

* Բարսուս պաշտօնէաց շնէլցիւ ժի օր , անանիշին բանիւս հաւատոց , և բարսուս վարդապէտութիւն : || ա Տիմ . Ղ . 6 :

25059

A
1077



ԳԼ. Բ

ա Քահանացք՝ վս զի հրեշտակ տն ամենասկալի կոչին . նաղաք' . Է . 7 : վս որոյ պարտին զվարս հրեշտակաց ունել ըստ կարողութեն մարդկան . զի թէ ծառայ և սպասաւոր ոյ անոնանիլ մեծ պատին է , քանի՛ ևս առաւել բարձրագոյն պատին է կոչի հրեշտակ տն ամենասկալի . որ ոչ միայն զծառայութեն սպասահարկութիւն , այլ և զմիջնորդութեն պաշտօն յինքն փակի . զի քահանայն է միջնորդ ՚ի մէջ ոյ և մարդկան :

Կարձեալ քահանայն է այր ածատեսակ . զի թէ միայն ոյ է յատուկ քաւել զմեղս . ահա զնոյն առնէ և քահանայն զօրութք նբարդին , ըստ բանի տն : || աշխ . Է . 23 :

Կարձեալ ՚ի խորհուրդ նբ պատարագին քահանայն ձեռք շօշափի զայն , որում հրեշտակը ահին սպասաւորեն . ապա մոածեսցեն թէ յորպիսի գերագոյն պատին վերացեալ կան , և ըստ այնմ քաղաքավարեսցին . զի * որում շատ տոնաւ՝ շատ խնդրեսցի ՚ի նմանէ , և որում բազում աւանդեցաւ առաւել ևս պահանջեսցեն ՚ի նմանէ : || ըստ . ծբ . 48 :

Ե Կարձեալ յատուկ է միջնորդին սիրելի և հաճոյ լինել այնմ առ որ բարեխօսէ . իսկ սիրելութին հիմնի ՚ի համակերպութեն . և զի քահանայն է միջնորդ ՚ի կողմանէ մարդոյ առ ած . ապա հարկաւ պահանջէ , զի իցէ

նա մնրդ ածատեսակ . ող զի կարասցէ լինել
սիրելի ոյ՝ և բարեխօս ընդ մարդկան :

Դ Ա Շ պ երկբայի թէ քահանային պարտ
է ունիլ ոչ միայն զտեղեկութի հին և նոր
կտակարանաց , այլ և զմանութի իմաստասի-
րական դիտութեց . քանզի առաջի կոյ նորա
խրատել՝ ուսուցանել՝ համոզել՝ ի բարիս , և
խորշեցուցանել՝ ի չարեաց զարս աշխարհիկս .
յորոց բազումք առատամիտ են և ուշիմ ,
հանձարեղք ՚ի գիւտս ձեռնարկութեց , և
զօրաւորք ՚ի դարձուածա բանից . եթէ քահա-
նային տկարասցի յաղթել սյնպիսեաց զօրաւոր
փաստիւք , ոչ ևս ազդէ խրատական բանք նը
՚ի յամառ միտս նց . և գուցէ հպարտացեալ
իսպառ հետեսցեն հոգեւոր խրատուց . և
տգիտութի քահանայից առիթ լիցի կործան
ման նց : Ա ս որոց պարտ է քահանային ամ
իրք գերազանցիլ քան զամենեսեան . ող ՚ի
սրբութիս վարուց , նոյնպէս և յիմաստութիս :

Դ Ա Շ անայ՝ որ անարի է ՚ի հոգեւոր
պաշտաման իւրուամ՝ և անփոյթ զկարեսոր գի
տութէ , ոչ միայն անպատին է յերկրի , այլ
և արժանի պատժոյ ՚ի հանդերձեալն : Դու-
լութին՝ որ յածային պաշտօնեայս , և տգի-
տութին՝ որ յաշխարհականա՝ են չար և ար-
ժանի նախատանաց . ՚ի քահանայն՝ լինին ա-
մենաշար , և անհնարին անարդանք :

Ե Ա Շ անայք՝ իբրև զարեգակն պարտին
լուսատու լինել խաւարեալ մտաց . ջեռու-

ցիւց ցրտացելոց ՚ի սիրոյն այ . Ուստի քո աւսաց առաքելոց , դուք էք լոյս աշխարհի . ապա եթէ պակասութիւն ինչ գոտի ՚ի բանս և՝ ի գործս քահանային , ուն թէ արեգակն հովանայ և մթագնի :

Ապաքէն մինչ երկիրն միգապատ լինի կամ տղմաշաղախ . ոչ ումեք ինչ փոյթ է դիտել ընդայն , զի առ ոտս կայ . իսկ մինչ արեգակն կամ լուսին բնական պատճառաւ խաւարի , ամոք ակնապիշ լինի . զի են գոյացութիւնք վերամբարձեալք՝ զօրաւորք և ներգործականք : Այսպէս ընդ չարաշար անկումն միոյ ուրուք ժողովրդեան՝ ոչ ոք հայի , և ոչ ոք զարմանայ . բայց ընդ փոքր մի գթել քահանային՝ աչք ամենեցուն ՚ի նա հային և զարմանան , և բազումք ևս գայթակղին :

Պ օ արմանք են՝ թէ զիարդ ոմանք միջնորդ ՚ի մէջ արկանեն , աղաշանս մատուցանեն , զկաշառս խոստանան , և ազգի ազգի արոնեստս ՚ի դործ դնեն , զի ընկալցին ըշձեռնադրութիւն քահանայութեն : Պուցէ սոքա ոչ գիտեն թէ զինչ է լինել քահանայ . և կամ ոչ ճանաչեն զշափ անձին , և կամ միայն զմորմնաւոր պիտոյից հոգան :

Աթէ ոչ ճանաչեն թէ զինչ է լինելն քահանայ , ծանիցեն՝ թէ է լինել հրեշտակ երկնաւոր , լոյս թափանցիկ , ոսկի ընտիր : Աթէ զշափ անձին ոչ ճանաչեն , փորձեսցեն զանձինս եթէ ունիցին զվարս հրեշտակաց , զլոյտ

գիտութե . և իցեն փորձեալ իբրև զոսկի ՚ի
բովս համբերութե . ապա թէ ոչ ած մեր
հուր ծախիչէ , այրէ զիսոտ , զփայտ , զիսոխն ,
և զամ նիւթ կիզանուտ : Ասկ եթէ զաս
տեացս միայն խորհին՝ անփոյթ եղեալ զշան
դերձելոց , ածցեն զմոտաւ՝ թէ կեանք կենցա
զոյս անցաւոր է և անոտի . և իբրև առ ազգը
ինչ ստուեր նկատմամբ կենացն յաւիտենից :

Ա. ըդ՝ զի՞նչ տացեն պատասխանի յահաւորն
ատուենի շորժամ լոնդիցեն՝ ՚ի առնէ . ընկեր՝ զիարդ
մուեր այսր՝ եթէ ոչ ունեիր հանդերձ հար
սանեաց : Աւ զի եկեղեցին է տիպ և օրինակ
երկնաւոր հարսնաբանին . ապա քահանայք՝
որք մոտանեն ընդ նա իբրև բազմականք , պար
տին ունել զշանդերձ մաքուր ածահաճոյ
առաքինութե :

* Ա՛յս պատուհէր է ի՞ առ չեղ ժահանացք . ելէ
ոչ լսեցէք և ոչ ունին բնեցէք ՚ի սրտէ չերում բաշ
ժառան աննշան իմուն՝ առէ ոէր ամենախալ , առադեցից
՚ի վէրաց չեր անէծս : || Ա' աղաք բ . 1 :

* Օ երեցունս այսուհետեւ աղաջէն . . . արածեցէք
որ ՚ի չեղ հօտ է այ . վէրահացու լինել ՚ի երեւ ախ
ձայ՝ այլ չաժառ ըստ այ : || ա Պետ" Ե . 1 :

* Որ բարսու վէրահացու լինին երեցունք , իրին պատ
աց արժանի եշեցին : || ա Տիմ . Ե . 17 :

ԳԼ. Գ.

ա Ուեծութի Շի իբրև նաւ հոյակապ ան
գաղաք ծփի ՚ի յորձանս ծովը . և որ ՚ի նաւին
է , կրէ զկասկած մահու , և ցանկոյ ելանել ՚ի
ցամաք . իսկ որ ՚ի ցամաքի է , տեսեալ ՚ի հե-
ռուսոտ զգեղեցկութի նաւուն՝ ցանկոյ մտա
նել ՚ի նա . և ոչ զգոյ , թէ քանի՛ վտանգ կոյ
առաջի՛ մինչեւ մացէ ՚ի նա . և քանի՛ դառն
վեշտո ունի կրել մինչդեռ գտանիցի ՚ի նմա :

Օ արմանկը են , զի ոմն փութայ ելանել ՚ի
նաւէն , և ոմն Ճեպէ ՚ի ներքս մտանել . զո՞ր
օրինակ ՚ի խուճապել և զեռալ ձկանց ըմբոննե
լոց ՚ի ցանցս , կարծիցեն ձկունկը որք արտա-
քոյ են՝ տօն ուրախութե լինել անդ , և առ
ցնծութե կայթել , շտապեսցին և ինքեանկը ՚ի
ներքս մտանել :

Օ ի մինն փորձ առեալ տառապանաց մե-
ծութե , գուն գործէ ՚ի բաց հեռանալ . և
միւսն անփորձ տակաւին՝ ջանայ ՚ի մեծութի
անդը հասանել : Արանի այնմ , որ ե մուտ յայս
նաւ , և ել անվխաս . և ևս երանի այնմ , որ ոչ
երբէք եմուտ ՚ի նա . բայց մկարէ զայս ճըշ
մարտութի հաւատարիմ առնել այնոցիկ , որ
դեռ կան ՚ի ցամաքի . այսինքն չե՛ ևս զիորձ
առին մեծութե :

Է ՚ի խանդարիլ մասանց՝ խանդարի և բո-
լորն . ոտք ՚ի խախտիլ հիմանն՝ խախտի և կոր-
ծանի շինուածն որ ՚ի վը նը է հաստատեալ :

Խակ արդ՝ մարմին մարդոյ բաղկանաց ՚ի տարեւ
ըաց իբրև ՚ի մասանց . և ցորչափ տարելքն են
բարեկարգ , մարմինն կոյ առողջ . բայց մինչ
խանդարի բարեկարգութիւնց , մարմինն տկա
ռանաց , կամ հինանդանաց , և կամ մեռանի :

Արմին տէրութե կամ ազգի բաղկանաց
յօրինապահ իշխանէ , յաշխատասէր հպատա
կաց , յարդարութե իրաւանց , և ՚ի խաղաղու
թե սահմանակից ազանց . ապա մինչ ամբոխի
բարեխառութիւն սոցա , իշխանութիւնն այն
կամ հասարակութիւնն ընկճի և նուաճի ,
կամ ՚ի վատանդի կործանման լինի , և կամ կոր
ծանի խպառ :

Ա նորոյ պարտ է իշխանին լինել օրինա
պահ . զի և այլ ամ մասունք՝ յորոց բաղկանաց
կամ հաստատի հասարակութիւն , ՚ի բարեկար
գութե կացցեն . և ողջոյն մարմինն տէրութե
կամ ազգի մնասցէ զօրաւոր և հաստատ :

Ա խալմունք գործակալաց՝ աղաւաղէ զհամ
բաւս իշխանաց և առաջնորդաց :

Պ Խշխան բարերար՝ է իբրև արեգակն
լուսափոյլ . և ողջ անունք և շամփոք ո՛չ ըստ
արժանաւոյն գիտեն զկենդանական զօրութիւն
և զհարկաւոր օգտակարութիւն՝ զոր ներդոր
ծէ արեգակն ՚ի ձեռն ջերմութե և լուսոյ ՚ի
բոլոր բնութե ընդհանուր տիեզերիս . նոյն
պէս ո՛չ գիտէ ռամիկն՝ ողջ արժան է գիտել
զաղգօգուտ արդիւնս և զբարերարութիւն զոր
առնէ իշխանն ՚ի բովանդակ հասարակութե :

Ի՞սյց պարտ է առն բարեսրտի ներել որ
կարամուռթե նց, և ոչ գժդմնիլ . զի եթէ
վա ոչ ճանաչելոյ նց զերախտիս իւր՝ դադա
րեսցի ՚ի բարերարելոյ , լինի նա իբրև զի ՚ի
հասարակ մարդկանէ . և ող թէ խաւարի ա
րեգակն :

Այլ ող յայտ է փորձիւ . զի մինչ խաւարի
արեգակն , ամ բազմութին ընդ այն պշնուն .
և բազումք բազում ինչ զնմանէ գուշակեն .
սոյնպէս յորժամ լուէ իշխանն ՚ի բարիս առ
նելոյ , ամենեքին վրդովին՝ և ՚ի պէս պէս մի
տըս հարկանին . և անտեղի կարծեզք բազում
ինչ այլ ընդ այլոյ խօսին :

Եւ ող արեգակն հարկաւոր օրինօք ան
դադար շարժի ՚ի լրումն պարտաւորութե իւ
րոյ , որ է օգուտն աշխարհի . թէ և ոչ ճանա
նաչիցէ աշխարհ զերախտիս նր . նոյնպէս և
իշխանն՝ վա զի ՚ի վերին խնամոց ամբարձեալ
է ՚ի պատիւ գլխաւորութե ազգին , ունի ըզ
պարտաւորութի բարերարելոյ , և ոչ երբէք
դադարիլ . թէ և չիցէ բաւական հասարակու
թինել երախտագէտ :

Դ Ա կատառասուչ ոք կամ իշխան՝ ոչ միայն
զիւրոց առանձնական առաքինութեց զվարձան
ունի ժառանգել . այլ և այնոցիկ՝ որոց բանիւ
կամ գործով եղեալ է պատճառ բարեգոր
ծութե : Ապա որ անկարգութի վարի , ոչ
միայն զիւրոց ապիրատ գործոց ընդունի ըզ
պատիւ . այլ և որոց օրինակ չարեաց եղեւ

զեղծ վարուք իւրովք , կամ անհոգութե իւրությլ ետ նց գործել զըսրիս :

Ե Ա այրիենական սխալումն գլխաւորաց ժողովոդեան , վեաս մեծ գործէ բազմաց , և ձգի ՚ի բազում դարս . ապա գիտելով նց թէ մարդիկ են մաեղի , բազմավրէպ և դիւրասահ բնութե վեճակեալ , ոչ պարտին վաղվաղակի որոշել զիմն . այլ արթուն մտօք կշռել և խու զարթել , և յետ այնորիկ վճիռ հատանել . զի եթէ միանդամ սխալեացին ՚ի դատաստանի , թէ և բազում անգամ զղջացին , ոչ յետս դառնան սխալմունք նց :

Պ Գործ բարի և գործ չար՝ մեծատանն և սոսկականին , որք թէպէտ նոյն իցեն ըստ երակութե , այլ չեն նոյն ըստ արժողութե . վայ և ոչ համաշափ են փոխարինութիք :

Ա պաքէն զնոյն բարին՝ զոր առնէ մեծա տուն ոք և սոսկական , որպէտէ երկաքանչիւր տայցեն ողօրմութի դահեկանս հարիւր . սոսկա կանն առաւելու արդեամբք յայնմ քան զմե ծատունն . վայ որոյ և առաւելու վարձք նը :

Ե Ա զըարն , զոր առնեն երկաքանչիւր , որպէտէ զրկէին զորբն , և առնուին դահեկանս հարիւր . մեծատունն առաւելու յանցաւո րութե յայնմ քան զսոսկականն . վայ և ա ռաւելու պատիմ նը :

Օ ի արդիւնք կամ յանցաւորութի բարի կամ յամ զործոյն , յեակութենէ գործոյն , այլ և յաստիճանէ գործողին :

Ապա յաւելտ զգոյշ լիցին մեծատունք չառ
նել զգործ ապիրատ . զի սոսկական ոք արա
բետ զայն՝ լինի չար . իսկ մեծատունն՝ չարա
դայն . վայ և ծանրագոյն պատժոյ արժանի :

Է Գլխաւողին ժողովրդեն են պատճառ
բարեկարգութեն , կամ անկարգութեն աղքին .
զի կենցաղավարութիք , շարժմունք , զբեսաք ,
և զարդք նց են իբրև վարժարանք հասարա
կութեն . զի զոր ինչ տեսանեն առ նոսա հու
մեստ կամ անչամեստ , զնոյն ուսանին . առ
նել : Ուստի և իշխանուողք՝ ող հաղորդա
կից են առաքինութեն կամ մոլութեն աղքի
իւրեանց , նոյնպէս և փոխարինական վար
ձուց կամ պատժոց :

Ը Ապ չէ ճնար կշռել զպատիւ համաշափ
աշխատութեան հոյրենսակը իշխանաց , որք
տքնին վա օգտի սեպհական աղքի իւրեանց .
նոյնպէս չէ ճնար կշռել զանարգանս զուգա
չափ վնասու զանցառութենց , որք կարօղ են
նպաստել , և պատճառառանք իմն յետս կան , և
ոչ ջանան առնել : Եշան է կործանման քա
ղաքի կամ աղքի , յորժամ գլխաւողք ոչ խոր
հին զբարեկարգութենը , այլ միայն զբիւ
րութեն անձանց իւրեանց :

Թ Որ կարօղէր արգելուլ զվեաս կամ զա
նագանս աղքին իւրոյ , և զանցառութեն իւ
րովեթող վնասիլ կամ անարգիլ , հարկաւ վնա
սի կամ անարգի և ինքն ընդ աղքին իւրոյ . զի
յապականիլ բոլորին , ապականի և մասն նը :

Ճ Կառավարիչ ոք ազգի կամ ժողովը
դեան՝ եթէ իցէ ցոփակեաց և հեշտասէր, ՚ի
հարկէ լինի և զբկող. քանզի քաջ գիտէ թէ
մեղկ և հեշտասէր բարոյիւքն ատելի է հասա
րակութե, զրկանօք ջանոյ մթերել գանձա.
զի գոնէ նովաւ կարասցէ կալ յիշխանութե
իւրում.

Բայց այսու առաւել ևս սխալէ. զի տըր
տունջ և քրթմնջիւն ող կոյծ ինչ անկեալ
՚ի խոհիւս փշոց՝ դաշտնի վառի ՚ի ժողովը
դեան. և օրքան զօր ճարակեալ և տարածել՝
յարուցանէ զհրդեհ ապսոամբութե.

Իսկ որ զրկանօք ժողովեաց զինչ բռնա
լիր ցրուէ առ՚ի նուածել զժողովուրդն, բայց
շահի և ոչ ինչ. զի գանձքն սպառին, և ապրս
տամբքն բազմանան. և գրոհ տուեալ յաւուր
միում՝ զրկեն յիշխանութէ զզրկօղն իւրեանց:

Ապա կառավարքն լինիցին բարեկարդ, զի
վայելեացեն յիշխանութե իւրեանց. իսկ եւ
թէ լինիցին զբկող, կորուստ և ապականու
թիւն մերձ է առ դուրս նց:

Ժ Յաւէտ կարեւոր է իշխանաց հարատա
ցուցանել զորդիս իւրեանց իմաստութիւն և
առաքինութիւն՝ քան մեծագանձ ճոխութիւն.
քանզի հանդերձեալ են նոքա իշխան և հրա
մանատար լինել ժողովրդեան. և որ ոչ գիտէ
իշխել կրից իւրոց՝ զկարէ լինել իշխան այլոց,
ժիւ Բազումք յորդւոց իշխանաց են մոլիք,
և անարժան իշխանութե. զի ՚ի կենդանութե

Հօր իւրեանց սնեալ են ՚ի մէջ փափկութե
և ամբարատանութե . վայ մինչ սկսանին իշ
խել , համարին զմարդիկ թէ ծնել են ՚ի ծա-
ռայել ինքեանց . և ինքեանք ոչ իցեն ՚ի բնու-
թէ հասարակ մարդկան : Ուստի ոչ յայլ ինչ
պարապին՝ քան թէ գտանել զնորանոր փափ-
կութիս . վատնեն զգանձս հայրենի . և տան-
ըեն զշպատակս իւրենց ՚ի կեղեքել զինչս նց :

Արհամարհեն զիրատա ծերոց և իմաստ-
նոց , և անսան հասակակցաց իւրեանց շոգ-
մոգ երիտասարդաց . յորմէ զշետ գոյ անհնա
զանդութիւն ժողովրդեան , և կործանումն
իշխանութեան :

Խցանել արժան է զականջս նց իսպառ ,
կամ հրացեալ շամփրով բանալ , որք ոչ լսեն
հոգեշահ բանից իմաստուն իրատատուաց ,
այլ միայն հոգեկորուստ համոլանաց օգտա-
խնդիր շողոքորթաց :

ԺՇ Աճատուն ոք մոլեալ զշետ մարմնա
կան հանութե՝ երչափ և ջանայցէ հեռի լի-
նել ՚ի տրտմութէ , ոյնքան առաւել հուզ մատ-
չի առ տրտմաբեր կիրս . զի չի՞ք յաշխարհի ու-
րախութի՝ ինչ մարմնական , որ կարիցէ ան-
մասն լինել ՚ի տրտմութէ :

Խակ այր առաքինի՝ թէ և չունիցի զկա-
րեոր պիտոյս մարմնական , ունի տակաւին
զերկնային իմն ուրախութի՝ , և զքաղցրութի՝
՚ի հոգին , որով միշտ մատթարի և բերկի :

ԺՇ Աճատուն ոք եթէ իցէ տղէտ՝ է

պատիժ Հասարակութեն . զի տգետն է իբրև
կոյր ոք . և մեծութին է իբրև սուր ՚ի ձեռս
նը . և ող կոյրն առեալ զսուր՝ անխտիր Հար
կանէ զբարեկամն և զթշնամիս . սոյնպէս և
մեծատուն տգետ խանգարէ զամ բարեկար
դութիս ժողովրդեան :

Ուստի եթէ բարկասցի ած քաղաքի իմիք
կամ ազգի , թողու իմաստնոց լինել աղքատ ,
և տգիտաց փարթամ : «Բանզի տգետն եթէ
Եցէ փարթամ , կամ խնդրէ լինել իշխան՝ կամ
Խորհրդակից իշխանի . և զինչօգուտ ստասցի
ժողովուրդն յայնմանէ , որ ո՛չ ճանաչէ զօ
դուտն և զվեաս :

Ապա պարտ է խնդրել ՚ի տեառնէ , զի կամ
փարթամք իմաստասիրեացեն , կամ իմաստունք
փարթամասցին . ող զի Հասարակութի ազգին
այնորիկ ունիցի զերջանիկ կեանս և զբարօ
րութիւնս :

Ճե՛ ԱԵծատունք և աղքատք Հաւասարա
պէս պարտին պահել զօրէնս և զսահմանա
գրութիս , որք միապէս հային առ երկոսինն .
ապա եթէ այլայլութի ինչ լինիցից ՚ի պահպա
նութե օրինաց , անդէն վրդովի խաղաղութին :

Օ ի մեծատունն ո՛չ պահելով ընդ աղքա
տին , Համարի զանձն գերագոյն քան զմարդ .
և Հպարտացեալ արհամարհէ զայլ . և աղքատն
տեսեալ զի մեծատունն ո՛չ պահէ զօրէնս հա
սարակաց , տրտնջէ և վճարի զանձնէ :

Ուստի եթէ մեծատունք և աղքատք միա

պէս պահեսցեն, երկոքին ևս առնուն զվարձը . ապա եթէ մեծատունք խզեսցեն զոստայն օրինաց, սխալին մեծապէս, և պարտաւոր գտանին դատաստանի . զի լինին ամբոխիչ եկեղեցւոյ, և օրինակ չարեաց այլոց :

ԺՂ Եթէ ոք՝ ի ստորին կարգէ բարձրանայ յիշխանութիւնի և՝ ի պատիւն, արհամարհեն զնա ազնուականք, խնդրեն զանկումն նոր հաւասարք, և նախանձաբեկ լինին նուռասոք . ապա որ կամի կալանկասկած և յապահովի յիշխանութեն իւրում, յարգեսցէ զազնուականսն, սիրեսցէ զհաւասարսն, և խնամակալ լիցի նուռաստից :

ԺԵ Իշխան ոք մինչ կողոպտէ և նեզէ զհը պատակս իւր. և ոչտայ նց վայելել յարդիւնս գործոց իւրեանց, ոչէ պէտք նմա արտաքին թշնամի . զի ինքնին բուռն հարեալ ջանայ կործանել զիշխանութիւնիւր . և ող ախտացեալ ոք լերդացաւութեամբ՝ հիւծեալ մաշի օրըստորէ, և հուսկ ապա բառնի ՚ի միջոյ . Փութով կործանի իշխանութիւնն, որ միայն ջանայ ստանալ զգանձս, և ոչ զբարի և զի մաստուն խորհրդակիցս :

ԺԸ Ուեծ յաղթութիւն գործէ, որ յաղթէ թշնամոյն գթութիւն և բարերարութիւն, քան զօրու և զինու : Օ ի որ բոնութիւն նուռաձի, աննուաձելի զսիրտ իւր ունի . և սպասէ պարապոյ յառնել ՚ի վր, և խորտակել զբոնութիւնը : Խակ որ նուռաձի մարդասիրութիւն, ոչ

Խորհի առնել զթշնամութի՞ . և է՝ զի լինի մոե
ըիմ բարեկամ . զի բարերարութի՞ն բազում
անգամ դարձուցանէ զթշնամութի՞ն ՚ի հաւա
տարիս բարեկամութի՞ :

ՃՌ Իշխան իմաստուն՝ քաջ պատսպարէ ըզ
տէրութիւն իւր խաղաղութի՞ վարելով ընդ
սահմանակիցս՝ քան բազմութի՞ զօրաց և ամ
ըութ պարսպաց . քանզի յանկարծադէպ պա
տսհարօք ցրուին զօրք՝ և կործանին ամրոցք .
բայց հաստատուն մնայ խաղաղութի՞ն , զոր պա
հեալէ հաւատարմութի՞ :

Ի՞ Յոյս վարձուց և երկիւղ պատժոց՝ է
կշիռ ուղղութե՞ ՚ի ձեռս իշխանին . որով ՚ի
խաղաղութե՞ և ՚ի բարօրութե՞ պահէ զժողո
վուրդ իւր : «Քանզի յոյս վարձուց քաջալէ
րէ զբարիս՝ անդադար բերել պարապ յազգօ
դուտ իրողութիս և ՚ի վաստակս . և երկիւղն
պատժոց սանձահարէ զբարս՝ դադարիլ ՚ի վը
նասակար գործոց :

Իսկ եթէ իշխանն թիւրեսցէ զայս կշիռ ,
եբ զի ո՞չ հասուսցէ վարձս բարեաց , և ո՞չ
զպատիժ չարաց , բառնի բարեկարգութի՞ և
խաղաղութի՞ ՚ի ժողովրդենէ , և տիրէ անիրա
ւութի՞ և աղմուկ . քանզի աղք բարիք յոււ
սակտուր եղեալ լքանին և ՚ի բաց մեկնին . և
չարք անպատիժ մնացեալ յաճախեն ՚ի չարիս :

Պարգեք իշխանաց և խոստմունկք վարձուց
յառաջ բերեն զնորանոր արհեստս յօդուտ
հասարակաց :

իս Իշխան ոք բարեմիտ՝ կարէ վ՛ս հասու
րակաց օգտի այսու դաշտմբ յանձն առնուլ
զիշխանութին, որում արժեանի դատեցաւ ժու-
ղովուրդն ։ իբր զի՞ եթէ ինքն ստունդանես
ցէ օրինաց, և շարժեսցի անկարգութե, հան-
ցեն զնա յիշխանութին։ Իսկ եթէ լուցու-
զօրէնս, զոր պահանջէ պարտաւորութի պաշ-
տաման իւրոյ, ժողովուրդքն հլու և հպատակ
կացցեն ամակնարկութե նը։

Եւ այսու պայմանաւ վստահ և ապահով
առնէ իշխանն զսիրոս ժողովրդեան իւրոյ։
թէ արդարե կամի նա պահպանել զօրէնս, և
ոչ երեկք զարտուղիլ։ և պարաւանդէ զնո՞ի
միամիտ հնազանդութի իւր։ վայ իշխանն և
հնազանդեալք իւր մնան ընդ միմեանս սիրով
և օգտին։

ին Որ կարօղէ իրօք և արդեամբ օգնել
կարօտելոյն, և միայն օդաշու բանիւք մնոտի
խոստման լու զունկն՝ որ խնդրէ զօդնութի,
ոչ զոք գտցէ իւր ձեռնատու և օգնական ՚ի ժա-
մանակի կարօտութե, բայց միայն զընդունայն
կարկաչումն լեզուի ։ զի՞ զոր սերմանէ ոք,
զնոյն և հնձէ։

ին Իշխան ոք եթէ ոչ օգնէ ժողովրդոցն
իւրոց ՚ի ժամանակի նեղութե նը, տայ նոցա
ցանկալ իշխանութե։ Եւ զի՞ գիտեն՝ թէ ոչ
կարեն ըստ կարգի բերման վեճակի իւրեանց
հասանիլ այնմ, յանդգնին ձեռնամուխ լինել
յանարժան և ՚ի վնասակար միջոցս ։ զի՞ գոնէ

նոքոք հասանիլ կարացեն . և յոյսմանէ հետեւի ընկճութն իշխանին , և ապստամբութի ժողովրդեան . որ երկրքին են չար :

Ազգա իշխանն պարտի օգնել ժողովրդեան , և ածել զբութ և զինամ . և ժողովութեան գոհ լինել զվեճակէ իւրմէ , և մալ'ի հնազան դութե և յակնածութե :

Ի՞՛ Իշխաննք՝ որք պատժեն զռամիկս վասն փոքու յանցանաց , որոց կարէին ներել առանց անիրաւելց յիրաւունս . զինչ արդեզք պատասխանի տայցեն ոյ , որ ներէ մեծամեծ յանցանաց նց , զորս կարէր պատժել արդար իրաւամբ :

Ի՞՛ Իշխան ոք՝ եթէ կամի զի չարք պակասեսցին , և բարիք բաղմասցին . մեծարեսցէ զքարեբարոյս , և անգոսնեացէ զքարս : Օ ի մարդիկ բնականաբար գոլով պատուասէր , միշտ հնարին ստանալ զպատիւ . և մինչ տեսանեն՝ թէ չարաչար ընթացիւք ոչ կարեն ստանալ , ջանան ուղղել զանձինս , զի այնու կարացեն հասանել : Ուստի և պատիւն լինի խթան առաքինութե՝ զարթնուլ 'ի մոլեկան թմրութէ , և գործել զքարիս : « Բանզի ոչ պակասին չարք , մինչդեռ յարդի են նոքայաչ իշխանին . և ոչ բաղմանան բարիք՝ ցորչափ կան յանպատութե :

Ի՞՛ Հոգի իշխանին կապեալ ունի ընդինքեան զշոգիս ժողովրդեան , ուստի եթէ կամի իշխանն զի ժողովուրդ իւր լինիցի առա

քինի, եղեցի՝ և ինքն առաքինի . և ահա գլու
շէ զամ հասարակութիւնն փոխեալ ՚ի լաւ
անդը :

Ի՞ Պարտ է իշխանին՝ որքան ունի հպա
տակ, այնքան ունել և զակրտ . քանզի կամի իւ
րաքանչիւր ոք զի իշխանն տասցէ զակրտ իւր
նմա, և զնմանէ միայն հոգասցի . և իւրաքանչ
իւր ոք առանձինն ճանաչէ զնա՝ թէ միայն
վս իւր է իշխան, և՝ ի նա միայն հայի . զի ա
մենեքին զօդուան իւրեանց ՚ի ձեռն նր ակն
ունին գտանել . և եթէ վշտանան յումեքէ,
՚ի նմանէ խնդրեն զօդնականութի . իսկ իշ
խանն զամենեսին ունի յինքեան, և զամենե
ցունց հոգայ :

Տես քանի՞ դժուարին է իշխան լինել հա
սարակութէ, չասացից թէ ծառայ . ամժողու
վուրդն ծառայէ միոյ իշխանի . և մի միայն
իշխանն պարտի ծառայել ամենեցուն :

Ի՞ Խշխանն բազումանգամ խաբի ՚ի շահա
սէր անձանց, որք երեւեցուցանեն նմա զան
ձինս հաւատարիմ : Օ ի երբեմն զգացուցա
նեն նմա զիրողութի . ինչ՝ որ թուի նմա կո
րեոր ՚ի գիտել, մինչը հարցեալ իցէ ՚ի նոցա
նէ . որով յինքեանս յանկուցեալ զկամն նր,
կարծին լինել բարեկամ : Խակ յայրում նուռ
գի բանս ՚ի մէջ արկեալ, խօսին զնոյն իրողու
թէ ոյլազգ՝ քան զոր կանխաւ խօսեալ էր նց :
Խւ որ յառաջնում ազդարարութէ՝ ծանօթու
թի իրացն օգտակար ինչ երեւել լսողն, յեւել

Պորդումն յեղափոխեցաւ յօգուտ ասողին՝ 'ի
վեաս այլոց :

Ապա զգոյշ լիցին իշխանք՝ ըևաբել 'ի շահա
խնդրաց, թէպէտ և դժոնարին է յոյժ՝ ցոր-
չափ կենցաղավարին ընդ նո՛. զի այր հաւատու
թիմ կարի' սակաւ գտանի, որ խօսիցի յօգուտ
այլոց, և 'ի ծառայութի իշխանին :

Իթ Բնդէր պարծի մարդ՝ եթէ կարէ տի-
րել երկրի, հրամայել ծովու, նո՞ւածել զժողո-
վուրդ բազում, օրինադիր լինել հասարակաց,
պարտաւորել զամենեսին 'ի պահպանութի օ-
րինաց. մինչ տկարանայ իշխել անձին, և նո՞ւա-
ծել զկիրս իւր, և պահել զօրէնս որ յածուստ
տպաւորեալ է 'ի սրտի իւրում. զի նաև է ճշմա-
րիտ տիրօղ, որ տիրէ յօժարութեան և կրից
իւրոց :

Ո՛չ յաղթօղ՝ որ յաղթէ այլոց, բայց ե-
թէ նա՝ որ յաղթէ անձին :

Ե Արաւամբ մեղադրին նոքա, որ մինչդեռ
'ի նո՞ւաստ կամ 'ի միջակ վիճակի գտանին,
բարեկարգ են և առաքինի. այլ յորժամ ստա-
նան մեծութի և զփառս, սկսանին անկարգա-
նալ և մոլիլ. ուր պա՛րտ էր նց առաւել ևս
լինել բարեկեցիկ, մինչեւ ակն ածել 'ի նոցա-
նէ ամենեցուն :

Ըստ Առաւել մեծագործութի է զբարս ժո-
ղովրդեան ուղղել, քան զաւերեալ քաղաքա
նորոգել: Բնդ վայր աշխատուի է նորոգել
զաւերակս, եթէ բնակիչքն իցեն անուղղայ:

զի անիրաւութիւք բնակչաց փութով կարեն տապալել զքաղաքն, թէ և իցէ նորակերտ և ամրակուռ :

Չէ պարծանք քաղաքի՝ բազմութիւք մեծավայելու և քարուկիթ շնունածոց, այլ կենցաղօգուտ առաքինութիւնք աշխատասէր բընակչաց :

Եւ **Օ** ինչ օգուտ է ումեք լինել ազնուատոհմ, եթէ չիցէ ազնուաբարոյ ՚ի կեանս, և բարեհամբաւ ՚ի մահու ։ ապա մի՛ պարծեսցին մողիք՝ թէ իցեն բարետոհմիկ ։ այլ ջանացեն յաւէտ լինել բարեկեցիկ ։ զի առաւել անարդար է լինել տոհմին պատուական, և բարուք անպիտան :

Ո՞եծամեծ առաքինութիւք նախնեաց՝ ծանրացուցանեն զապիրատութիւս որդոց ։ զի յետնեալ գոտան ՚ի բարեմասնութէ նախնեաց իւրեանց :

Եւ **Խշանն իշխէ** ՚ի վը հպատակաց իւրոց ։ բայց և օրէնքն իշխեն ՚ի վը իշխանին ։ այն է ճշմարիտ իշխան, որ հնազանդի օրինաց ապա թէ ոչ բունաւոր է նա և ոչ իշխան :

Ո՞յն է օրինաւոր իշխան՝ որ տայ օրինաց իշխել հպատակաց ։ զի պարտ է իշխանին միաբանիլ ընդ օրէնս, և ՚ի միասին իշխել ։ և ոչ թէ ինքն միայն : **Ո՞չ** է նա գումելի որ քաջ գիտէ զօրէնս՝ այլ որ ՚ի դործ դնէ :

Խշանութին զօր վարէ իշխանն ոչ է իւր, զի ոչ կարէ առնել ինչ վ՛ փառաց և հաճոյից

իւրոց . սյլ է իշխանութիւն օրինաց , որում և
ինքն է պաշտպան . ուստի պարտ է նմա հնա
զանդիլ օրինաց , առ ՚իլինել օրինակ հպա
տակաց :

Եւ Խշանն ունի ազատ կարողութիւն առ
նել զբարիս . բայց չունի ազատութիւն առնել
զբարիս . քանզի օրէնքն յանձն արարեալ է նը
մա զժողովուրդն իբրև պատուական աւանդ՝
զի լինիցի հասարակութե հայր խնամածու .
և ծառայեացէ իմաստութե և բարեկարգու
թե վա երջանկութե և խաղաղութե ամե
նեցուն . և ոչ եթէ ամենեքին ծառայեացեն
նմա իբրև տառապեալ գերի , ՚ի լնուլ զբաղ
ձանս մնափառութե նը և փափկութե :

Եւ Երկիւղն ոչ է բաւական պինդ ունել
զժողովուրդն ՚ի հնազանդութիւն ամ ակնար
կութեց իշխանին , սյլ սէրն . զի նոքա ոչ են
գերիք սյլ քաղաքացիք . և ող ոչ է բարոք
զի լինիցին գլխովին ազատք , նոյնպէս ոչ է
բարոք զի իցեն բոլորովին ծառայք :

Եւ Խշանք պարտին ունել զգութ ՚ի վը
հպատակաց իւրոց . զի եթէ ծանրացուցանեն
զշարին առաւել քան զկար նց , խարհուրդն
ապստամբութե զօրացեալ ՚ի նս , ծնանի զա
տելութիւն ՚ի կործանումն հասարակաց . զի յայն
ժամկամիշխանն նուածէ զշպատական ՚ի չա
րաչար ծառայութիւն , կամ հպատակքն իսպա
մերժեն զիշխանութիւն նը . և լինի պատառ
մըն չար ՚ի միում մարմնի :

Ե Անմիտ է իշխանն՝ որ կարծէ մեծարութնել անիրաւ բռնութք, կամ գոռազութք, կամ խստութք. զի այն է մեծարելի, որ է արդար, հեղ, և քաղցրաբարոյ:

Իշխանք առաւել բարեհամբաւ և մեծանուն հանդիսանան իմաստուն կառավարութք՝ քան թշնամեացն յաղթութք:

Ե Երանելի է ժողովուրդն, որոյ իշխանն կըթէ զնա՞ի բարիս. բայց այնու երանելի և լինի իշխանն՝ զի գտանէ զժողովուրդ իւր փոխեալ ՚ի լաւ անդր. զի զարդացեալ առաքինութք, ուժգին կապին ընդ ինքեան սիրով քան երկիւղին: Յայնժամ ոչ իշխանն ունի պէտա ջանից առ ՚ի ճնազանդեցուցանել զժողովուրդն, զի յօժարութք ճնազանդի նմա. և ոչ ժողովուրդն ցանկայ վատարանցել և ազատ մնալ յիշխանութէ նը, զի երկնչի կորուսանել զնա. Վայ նուիրէ զկեանս իւր վայ նը:

Այն է արժանաւոր իշխանութք, զըր կամ ած յայտնէ, կամ ժողովուրդն խնդրէ. զի իշխան լինել բռնութք՝ ընդդէմ կամաց և հաճութք ժողովրդեան, է առնել զանձն թըշուառ, և զհասարակութին գերի:

Իռոնաւոր և անիրաւ իշխանն՝ է ցասումն ածային հասեալ ՚ի վը մարդկույին սեռի՝ ՚ի կործանումն բաղմաց:

Աթ ՚ի ժբաղդ են ժողովուրդք, զի կառավարին ՚ի միոջէ իշխանէ. որ նա ևս է մարդիբերե զնա, սիալական բնութե վիճակեալ.

քանզի կառավարել և ուղղել զմարդիկ՝ ոչ
էր անկ . զի նա միայն է անսխալ .

Պատբարդ է և իշխան , զի է մարդ բազմա-
վրեպ հանգունակից այլոց . և ունի կառավա-
րել զանթիւ բազմութիւն նենգամիտ մարդկան ,
և կալ անբամբաս :

Իշխան ոք բարի՝ է տակաւին մարդ . ունի
կիրք , բարք , և սովորութիւն որք իշխեն նմա .
և պաշարեալ է յարանց շահասերաց , որք խա-
բեն զնա . վայ հանսպազանկանի ՚ի սխալանս ,
երեմն յախտից իւրոց , և երեմն յախտից
այլոց . և յուղուել իւրում զմի ինչ պակասու-
թիւ , գահավեժի ՚ի միւռն :

Ին Իշխանք աշխարհի՝ առաւել քան զամ
մարդիկ փութուլ ՚ի ծերութիւն հասանեն . զի
եթէ լնուլ կամիցին զգարտաւորութիւն իւ-
րեանց , խատութիք պատերազմի՝ և հոգք հա-
սորակութե հրւծեալ մաշեն զկեանս նոցա :
Խակ եթէ անփոյթ լինիցին զգարտաւորութ-
իւրեանց , և թողեալ զջոգ հասարակաց բար-
ւոյ տացեն զանձինս ՚ի մարմնական հեշտու-
թիւ , կորուսանեն զառողջութիւն և փու-
թացուցանեն զմահ :

Որ ցանկայ իշխանութեալ ըն իմաստուն . զի
եթէ ջնասացէ արդար իրաւամբ դատել , ան-
չն սրին աշխատութիւն է նմա . խակ եթէ անի-
րաւութիւն , լինի առելի մարդկան , և արժանի
յաւիտենական դատապարտութեալ :

Աշխանութիւն է ծպտեալ իմն ծառայութիւն :

զի փառք և մեծութիւն իշխանին կախի զբաղ
մաց որոց իշխէ . իսկ կախիլն զբաղմաց՝ է
ծառայել բազմաց :

Հարկաւոր է իշխանին առաւել քան զամ
մարդիկ լինել ժուժկալ, և թշնամի փափկու
թե . զի ած ոչ աշար զնա իշխան և մեծ վո
իւր, այլ վո օգտի ժողովրդեան . վոյ պարտ
է նմա զամ ժամանակս կենաց իւրոց, և զջա
նըս, և զսէր նուհիրել վո նց . մինչեւ մոռանալ
զանձն իւր, և զոյել վասն բարեաց հասարա
կութեան :

Իսա Խշխանք՝ վո երկուց առաւել պարտին
հոդալ . մի՛ վո ունելոյ ինքեանց խորհրդակից
զարս իմաստունս և առաքինիս . որք ծաղկեց
ցուսցեն զօգտակար արհեստո, և առաջարկես
ցեն նց առնել զբարին . և երկրորդ՝ վո բազ
մացուցանելոյ զերկրագործո . ո՞պ զի երկիրն
բարւոք մշակեալ աճեցուսցէ զարմտիս ՚ի դար
ման և՛ի սնունդ ժողովրդեան :

Խշխանն ոչ կարէ քաջ ճանաչել զընաւորու
թիս մարդկան, որք շուրջկան զիւրեւ . քանզի
նոքա միշտ կերպարանափոխ եղեալ, ծածկեն
զընաւորութիս իւրեանց . և պէս պէս ճնա
րիւք ջանան հանոյ երեխլ յաջս նը և խաբել
զնա : Աշ ո՞րքան մեծ է իշխանն, և ունի ընդ
իւրեւ ժողովւրդ բազում, այնքան բազում
գործակալաց կարօտի . և որքան բազում են
գործակալք, այնքան բազում են խաբօղք . ա
պա կարի՛ արթնութեան պէտս ունի՛ զի մի՛

Խարեսցի :

Իսք Պամրտ է իշխանին կրթել զՀպատակսկ
իւր յօդտակար արհեստու , մանաւանդ յերկ
Ծագործութիս . և արգելուլ զանպիտան ար-
հեստու, որք հային ՚ի փափկութիս և ՚ի զարդա-
րանս . չներել երբեք պՃնասիրուե արանց և
կանանց , և շուայրութե կերակրոց և ըմպե-
լեաց . զի չափազանց վայելքութիք և զեղխու-
թիք ապականեն զբարս . ուստի ողկ քաջպար-
տիզպան հատանել պամրտ է նմա զանպիտան
Ճիւղս , զի մի՛ գօսաացին պտղաբեր ծառք :

Իսկ Իշխանն արկանէ զանձն ՚ի վարանս ,
յորժամ հաւատոյ զինքն գործակալի իւրում
որ կեղծիւք ձեւանոյ հաւատարիմ . քանզի ՚ի
կասկածիլ իւրում զՀաւատարմութէ նըր , եր
կընչի հերքել զնա, զի գիտակ է ամ գաղանեաց
իւրոց . և ջանոյ անտես առնել զխարդախու-
թիս նըր . և ցուցանէ կամովին թէ խարեսոլ է:

Եւ մինչ կեղծաւորելն զգոյ , թէ իշխանն
ունի զիւրմէ զկասկած , խորհի ննարս նենգու-
թե ցուցանել զանձն հաւատարիմ : Հեռն
արկանէ ՚ի նորանոր գործո՝ որք յաւելուն ըզ
փառս և զՀամբաւ իշխանին . զորս ՚ի կատար
ածել հարկաւորէ գործակալութե իւրոց :

Կ արժէ զեզու իւր ըստ հաճոյս իշխա-
նին , զի բարձցէ ՚ի մնաց նըր զգոյթակղութին :
(Օտարացուցանէ զարս բարիս ՚ի նմանէ , զի
մի՛ յայտնեսցին խարդախութիք իւր : Յար-
դորէ զեշխանն հանդչիլ և վայելել ՚ի փափկաւ

թիս, և ինկըն յանձն առնու կրել զամ աշխատ
տութիւն վն կենաց և փառաց նը . վնյ և իշ
խանն միշտ ֆնայ ՚ի վարանման . և չկարէ որու
շել, թէ արդեգք իցէ՞ հաւատարիմ, եթէ նեն
գաւոր և դաւաճան :

Խաղաղ սովորաբար կասկածոտք են,
և անզգոյշ . կասկածոտք են, զի բազում անգամ
առեալ են զիործ նենդաւոր դաւաճանութե
մարդկան . անզգոյշ են, զի տուեալ զանձինս
՚ի զըօսանս, յանձնեալ են զղեկ կառավարուե
՚ի ձեռս գործակալաց . որոց բազումք ո՛չ ծա
ռայեն նմա ուղղութե . վնյ և խաղալիկ լինին
սուտակասպասից, և թշուառ քան զամ մար
դիկ :

Խե՛ Իշխանք՝ անդստին ՚ի մանուկ տիոց յար
դական գովեստիւք զարդացեալք, և մանա
ւանդ շողբքորդական բանիւք ապականեալք,
խոժուին յոյժ՝ յորժամ ոք անհաւան գտանի
խորհրդոց և գործոց նոցին, և զուղիղն առա
ջարկէ . այլ սիրեն զշաճելիս ախորժակաց, և
զգովութիւն խորհրդոց և գործոց իւրեանց :

Ա նյ մարդահաճոյք սիրելի են յաշա իշխանաց
իբրու իրաւախոհք և քաղաքավարք . և ճշմար
տախօսք ատելի, իբրու յանցաւորք և վայ
րենաբարոյք :

Իսյց հարկաւոր է իշխանին ՚ի խնդիր լինել
և գտանել բարեկամ և խորհրդակից զայնպիսի
այր, որ կարօղ իցէ ասել զշշմարիտն . և ո՛չ
եբեկք շողբքորդել . և ՚ի գտանելն անկորուատ

պահել, և մտադիւր անսալ բանից նո՞ :

Խզ Կենցաղավարութին իշխանաց՝ է ջինջ
Հայելին հասարակաց . զի ամենեքին ցանկան նը
մանիլ նց ըստ կարողուե իւրեանց : Աթէ ա
ռաքինի կեանս վարեսցէ մեծատունն , բաղ
մանան առաքինիք ՚ի հասարակուե . իսկ եթէ
մոլեկան վարս ունիցի , բազմանան մոլիք :

Ապա եղուկ է մոլի մեծատանց , որք օրինաւ
կաւ իւրեանց լինին պատճառ չարեաց հասա
րակաց :

Խէ Իշխանն կամի՝ զի ամենեքին հետևես
ցին կամաց իւրոց . և ամենեքին կամին՝ զի իշխանն
հետևեսցի կամաց իւրաքանչիւրոց .
ահա վէճ՝ անվերջ : Ապա կամեսցի իշխանն ըզ
բարին հասարակաց , և յայնժամ ամենեքին հետևին
կամաց իշխանին . ահա խաղաղութ անվըդով :

Խը Իշխանաւորք պարտին լինել զգուշաւ
որք ՚ի խօսս և՝ ի գործս իւրեանց . զի զորինչ խօսին՝ ամենեքին լսեն . և զորինչ գործեն՝ ամենեքին իմանան : «Քանզի նմանին ա
հագին զանգակի , զի իցէ ՚ի բարձրագոյն դիտա
նոցի . որ մինչդեռ հարկանի , ամենեքին լսեն :
Խակ ռամիկքն նման են ծոցակրելի զանգուիին .
որոյ ձայնն միայն ինքեանց է լսելի :

Խթ Անիրաւութի իշխանին խանդարէ ըզ
կարդ աշխարհի . զի հպատակքն նեղեալ յանիրաւութէ նո՞՝ գուն գործեն լինել ազատ .
և ազատութին ստիպէ՝ զի լինիցին հրամայօղ :

իսկ արդ՝ ՚ի լինել ամենեցուն հրամայօղ՝ ով
լինիցի հպատակ, կամ ում հրամայեսցէ . ահա
խոռվութիւն անհաշտ, և աղմուկ անվախան :
Վազ իրաւասէր լինիցին իշխանք, զի եղիցին
հպատակն հլու և հնագանդ :

Ճ Անկարգութիւնը ինչ՝ թոյլտութէ իշխանին աիրեալ միանգամ ՚ի հպատակս, հեղենակութիւք օրինաց՝ և վրէժխնդրութիւք պատժոց՝ կարի գժուարաւ, և կամ ոչ բնաւ կարեն բարեկարգել . վայ չէ արժան գոնէ գոյզն մի համարձակութիւն տալ նց, որք օրինազանցն լինել կամին . զի որ զփոքք յանցանս ուրուք անտես առնէ, թողունման գործել զմեծամեծս :

Ճա՛ Իշխան ոք եթէ իցէ ագահ, սովոր է կողոպտել զշարստութիւն հպատակաց իւրոց . և զի հաստատեալ է ՚ի միտս՝ թէ հպատակն ոչ կարեն տանիլ անիրաւ զրկանաց իւրոց, չունի հանգիստ ՚ի տունէ, և ոչ քաղցր քուն ՚ի գիշերի . յարաժամ երկնչի ՚ի ստուներէ իւրմէ, և ամ ինչ թունի նմա վտանգաւոր :

Ճա՛ առ՝ ՚ի յաւելուլ զտանջանս նորա, բեռնաւորէ զնա գանձիւք բազմօք, զորս ոչ համարձակի վայելել . Պանձն զոր մթերէ առ՝ ՚ի լինել երջանիկ, է արգել երջանկութէ իւրոց . զի երկիւզն կորուսանելց՝ ոչ տայ նմա հանգիստ երբէք :

Չիք ուրախութիւն՝ ՚ի սիրտս նը, այլ անհնարին սարսափ . յամ շնչմանց այլափոխի, և գընդակ տիրութիւն՝ ՚ի գէմս նը նկարի : | ուէ

յաճախ , և հառաջէ յանկարծ . ոչ կարէ թաքուցանել զիսայթ սրտին , որ տուղթէ զաղիս նը . համեղութիք կերակրոց անախորժ թուին նմա և դառն . և փափուկ գահաւորակք՝ գետնախշտի անկողին : Երկնչի յորդոց իւրոց , և համարի զնն թշնամի . ամ ստացուածք իւր անօդուտ են նմա , և անպիտան ուղ զաւազ . զի ոչ կարէ վայելել՝ ի նս :

Ապա յայտ է՝ թէ ոչոք բռնաւոր կարէ լի նել ապահով . զի որչափ անկրաւ բաղձանս ու նի , այնքան դահիճս ստացեալէ անձին իւրոյ :

Ճ՛՛ Ուեծատուն ոք՝ մինչ յօժարամիտ է յանձն առնուլ զվիճակ նուաստուե՞ ՚ի փոխիլ յաջողութե՞ իւրոյ , այնպիսին անվրդով մոօք վայելէ ՚ի մեծուե՞ իւրում . ապա թէ ոչ միշտ ՚ի կասկածանս է , և ոչ ունի հանդիսատ , դիւտելով՝ թէ մեծութի՞ իւր յորս վայելէ , ան հաստատ է և շուտափախուստ :

Ճ՛՛ Հաստատութի՞ իշխանութե՞ հիմնի ՚ի հաւատարմութե՞ , յարդարուե՞ , և ՚ի բարերարութե՞ , թէ առ հպատակս , և թէ առ սահմանակիցու : Ուստի մինչ պակասին սոքա . և փոխանակէ խարդախութի՞ , անկրաւութի՞ , և անդթութի՞ , օր քան զօր տկարացեալ կործանի իշխանութին :

Ճ՛՛ Ուշխան ժողովրդեան կամ ազգի՝ եթէ իցէ ագահ և հպարտ , յառնէ պատերազմաւ ՚ի վը սահմանակից իշխանաց , որք կան ակնածութե՞ և խաղաղութե՞ ընդ նմա . ուղ զի տիւ

ըեսցէ նց՝ և յաւելցէ իւր գանձ և համբաւ։
Բայց այս անիրաւ բաղձանք՝ լինի պատճառ
չարաչար կործանման իւրոյ ։ քանզի սահմանա
կից իշխանք դաշնաւորեալ ընդ միմեանս՝ ՚ի
կոին գումարին ընդ նմա ։ խորակեն զեղ
ջիւր ամբարտաւանութեն նը, և բառնան ՚ի
միջոյ զապականիցն հասարակաց :

ՃԵ Իշխան ոք՝ եթէ վ՛ սնափառուեն յա-
րուցանէ զպատերազմ անիրաւ, և իբրև թէ
՚ի խաղ արկեալ զմարդկային բնութին՝ զոհէ
ախտից և կամաց իւրոց զանհամար անձինս .
այնպիսին չար քան զգազանս գտանի . զի նոքա
զտեսակակիցս իւրենց ո՛չ սպառեն . իսկ սորոյս
անսագորուն սիրո՝ գլխովին մոռացեալ զմար-
դասիրութի՝ և զմարդկութի՝ վ՛ սնոտի փառաց
և կորստական մեծութեն, թաթաւէ զձեռն
յարեան եղքօր իւրոյ, որ նման է ինքեան :

ԼՌ Երբեմն յամեցուցանէ զվըէժինդրութի
այսպիսեաց, այլ ո՛չ խսպառ թողու անպատիժ .
զի ՚ի վախճանի հատուցանէ զինխարէնն ար-
դար իրաւամբք :

ՃՊ Պատերազմն է օրինաւոր՝ եթէ իցէ
հարկաւոր վ՛ բարեաց հասարակաց . զի ո՛չ է
արժան հեղուլ զարիւն ժողովրդեան, եթէ
ոչ ՚ի փրկել զնոյն ժողովուրդ ՚ի ծայրագոյն
վտանգէ : Իսկ յարուցանել զպատերազմ վ՛
սնոտի փառաց և ագահուեն, է անզգայ թշուա-
ռութի . զի արկանէ զանձն ՚ի վտանգ առանց
հարկաւորուեն . և գործէ զանթին չորիս ժող-

զովրդեան իւրոյ առաւել քան թշնամեաց :

ՃԵ ԱՌԵծագոյն յաղթութիւն թշնամեոյ՝ է
բարերարել նմա , քան վնասել . զի վնասելն՝ է
գործ տկարի և չարաբարոյի . իսկ բարերարելն՝
է գործ վեհանձին և բարույ . որով և զթշնա
մին առնէ իւր բարեկամ և մտերիմ . որպ ՚ի
թիւնաւոր օձից կազմելով զդեղթափ :

ՃԸ ՈՒ շուառ է իշխանն , որ զըկանզք ժու
զովրդեան իւրոյ համարի լինել երջանիկ . զի
յափշտակեալ ՚ի չարաչար կրից իւրոց , ոչ կու
րէ ճանաչել զպարտաւորութիւնը , որ է միոյն
առնել զբարիս . և ոչ գիտէ վայելել ՚ի քաղց
րութիւն առաքինութե :

ԴՐԱ առայգ իշխանաց ցաւակցութե են ար
ժանի . զի եթէ չարք են , և խոշտանգեն զմար
դիկ , գանձեն անձանց իւրեանց զպատիժ գե
հենին : Իսկ եթէ բարիք են , և ջանան առ
նել բարիս հասարակաց , անդադար կրեն զնե
զութիւն ՚ի նենգութէ չարագործաց . զի չարք
միշտ հակառակ կան բարեաց :

ՃԸ ԱՌԵ առաք՝ որք ոչ խորհին բարերարութ
և սիրով յինքեանս յանկուցանել զաիրտ հպա
տակաց , ոյլ առաւել քան զըափն նոռնաձելով
զնն՝ ջանան ահարկու երեկիլ նց , են խանգա
րիչ , և պատիժ ազգի մարդկան : ԱՌ արկա
նեն յամենեսին , բայց ատեցեալ լինին յամէ .
Վայ ինքեանք առաւել պարտին երկնչել ՚ի հը¹
պատակաց , քան նոքա յիշխանաց :

ՈՐ Թոյլտոյ ծառայից իւրոց անիրաւիլ և

վնասել այլոց, մի՛ յուսասցի մնալ աղատ՝ ՚ի վր
նասուե նոցին . զի որ ուսան անիրաւիլ առ
այլս, անիրաւեսցին և առ տեարս իւրեանց :

Է Իշխան անիրաւ չունի զբք բարեկամ.
քանզի արք բարիք վշտացեալ յանիրաւութէ
նը՝ օտարանան ՚ի նմանէ, ոչ ինչ չար կամելով
նմա . և չարք երկուցեալ ՚ի խատութէ նորին՝
նիւթեն զքարիս, զի բարձցեն ՚ի կենաց . վայ
և է միշտ ՚ի վտանգի :

Կ Առ ոչ զգոյ զիսայթ խղճի մտաց, ոչ ձա
նացէ նա զառաքինութի . և կարծէ թէ մե-
ծութի և իշխանութի կայանայ ՚ի տիրելն ա-
մենեցուն, և յահարկու երեխն բազմաց . վայ
՚ի մոի դնէ զրկել զայլս, և ծառայեցուցանել
ինքեն . բայց խաբի յայտ, զի մեծութի և իշխա-
նութի կայանայ ՚ի լինելն բարերար, և սիրելի
հասարակութե՝ քան երկիւղալի :

Իշխան բարի՛ առաւել ախորժէ լսել զաղա-
ղակս աղքատաց և կարօտելոց՝ զի արասցէ առ
նո՞ւ բարիս, քան զքաղցրաձայնութի երգոց և
նո՞ւ ագարանաց : Բայց որ խնդրէ միայն փափ
կանալ ՚ի զանազան հեշտութիս, և ոչ ինչ հո-
գոյ զաղքօգուտ իրողուեց, այնպիսին է խան
գարիչ աղքին . զի ոչ միայն ինքն ոչ օգնէ աղ-
դին, այլ և չար օրինակաւ իւրուլ արգել լինի
բազմաց հեռի կալ ՚ի գործոց օգտակարաց, և
պարապիլ միայն ՚ի համայս անձանց իւրեանց :

- * Տ Յ ա ն ՞ ի յ ե ւ շ է լ զ ա ր ս ի մ ա ս պ ո ւ ն ս և խ ո ր հ ր տ ա յ ա ն ս և հ ա ն մ ա ր ե ց ՝ ՞ ի վ ե ր շ է լ զ ե ր ս ց ։ և չ ա յ ս ո ւ ց ե ց ՞ ի վ ե ր ա ց ն ե ր է լ ե ա ն ա ն ս ։ ॥ Բ (Օ) բ ն ։ ա ։ 13 ։
- * Ա յ ա ն շ է լ ս կ բ ո ւ ն ս ՝ ե ն բ ա ն ս ի ս ։ զ է ս ւ ս ա ն ի ց ե ց շ ի մ ա ս պ ո ւ ն ի ւ ։ և դ ՝ ս ի ս ա լ ե ց ե ց ։ ॥ Խ մ ա ս տ ։ զ ։ 10 ։
- * Ե թ ե ց ա ն ի ա յ ա ք ա լ ե ս ո ւ ց ։ և գ ա ս ա շ ա ն ա ց է շ ի մ ա ն ո ւ ն ի ւ ։ բ ո ւ ն ս ժ ա շ վ ր ե ց ։ պ ա տ ո ւ ժ ե ց ե ց ։ շ ի մ ա ս պ ո ւ ն ի ւ ։
॥ Խ մ ա ս տ ։ զ ։ 22 ։
- * Խ շ ի մ ա ն ո ւ ն ի ւ բ ա ն ի ՝ ա ա ց ս ի ե լ ի ն ա ր տ ա ր ս ո ւ ն ե ա ն ։ և ա ս ա շ ա ն ո ւ ց լ ի ն ի չ ա ր օ ս ո ւ ն ի հ ա յ ա ս ա յ ո ւ ն ի ւ և ի ս ի ւ ։
॥ Ա յ ա կ ։ ժ է ։ 14 ։
- * Պ ա տ ա ս ո ր ի մ ա ս պ ո ւ ն ի ր ա ս ժ ա շ վ ր ե ա ն ։ ։ ։ ։
ժ ա շ ա ք շ ի ն ե ս ց ի մ ա ս պ ո ւ ն ի ւ է լ ի մ ա ն ա ց ։ ॥ Ա յ ր ։ Ժ ։ 10 ։
- * Շ ա պ ա ւ շ է լ յ է լ ի մ ա ն ա ւ տ ի ս ի ր ա յ է լ է ։ ա ր տ ՚ ի բ ա ց ա ր ա ր ե ց շ ա պ է ր ա ս ո ւ ն ի ւ և շ շ ն ա ս ո ւ ն ի ւ ։ է ր ա ս ո ւ ն ը և և ա ր տ ա ր ս ո ւ ն ի ւ ա ր ա ր ե ց ։ ՚ ի բ ա ց մ ե ծ ե ց ե ց ը շ բ ա ն ո ւ ն ի ւ ։ ՚ ի ժ ա շ վ ր ե ն ի ւ ի մ է ։ ա ս է ո ւ ծ ։
॥ Ա յ ա կ ։ խ է ։ 9 ։
- * Ա յ է ժ ա տ ա ն ց ո ր ե ն ց ա յ ս ա շ ի ա ր ի ւ ։ պ ա տ ո ւ ժ է լ ի ց ա ս ւ շ է ր ՚ ի հ պ ա ր ա տ ա ն ա լ և դ ՝ ց ո ւ ս ա լ ՚ ի մ ծ ո ւ ն ի ս ն ո ւ ի ։
॥ ա Ս ի մ ։ զ ։ 17 ։
- * Օ գ ո յ շ շ է ր ո ւ ՚ գ ո յ է է լ ի մ ա ն ո ւ ն ի ւ շ է ր ա յ տ ՚ գ ա ց բ ա յ շ ո ւ ն ի ւ շ է ր ա յ տ ։ ॥ ա Խ ո ր ն ։ ը ։ 9 ։

ԳԼ. Դ

ա լիպ առաջնորդք և իշխանութեան սիրեն զհա
սարակութին, և կրեն միշտ զպէս պէս աշխա
տանս և զնեղութիս վս օգտի և խաղաղութե
նց, նոյնպէս պարտ է հասարակութեն և ամ
ստորագրելոց՝ հնազանդ լինել սիրով հրա
մանաց առաջնորդին և իշխանին. և ձանաչել
զբարեբարութիսն, զոր առնեն նքա յօդուտ
իւրաքանչիւրոց :

Խակ եթէ ոչ ձանաչիցեն զերախտիս և ըզ
յարդ բարեբարաց իւրեանց, և խստապարանոց
եղեալ հետեսցեն հրամանաց նց. յայնժամ
ած բարկացեալ ընդ ապերախտութի ժողովը
դեանն՝ բառնայ զիսնամակալ և զբարեջան ա
ռաջնորդս և զիշխանս. և փոխանակ նց՝ տայ
զըկօղս և զբարայոյզս : Ուստի ածային բար
կութե և պատժոց նշան է, պակասիլ բարե
բարոյ իշխանաց, և յաջորդել չարաբարոյից :

Ե Պարտ և արժան է ամ ժողովրդական
նաց, նախ՝ ունել զբարի համարումն զառաջնոր
դին, որ ուսուցանէ զամ բանս օգտաշահ . և
մի' թիւր դատողութ առ չիմանալոյ զմիտս ա
սողին՝ անգուսնել՝ ի սրտի և օտարանալ՝ ի նմա
նէ : Երկրորդ՝ ձանաչել զնա օգտախնդիր հա
սարակութե, և վրէժինդիր հայրենատուր օ
րինացն . և մի' ի պատժելն զոմանս վս բանի
կրօնի, շշնջել ընդ միմեանս և բամբասել՝ թէ
առ ատելուն առնէ, և այլն : Ապա եթէ զեր

կուս զայտոսիկ չողովուրդք , ամ
բանք և գործք առաջնորդին այլ ընդ այլոց ե
րեխն նց և կասկածելի . ուստի բառնի հնա
զանդութին ժողովրդոց առ առաջնորդն , և
սէր առաջնօրդին առ ժողովուրդն :

Դ Արեբատիկ է ազգն՝ յորժամունիցի
զիսոյեմ և զիմաստուն առաջնորդ . այլ բարե
բաստիկ ևս է , եթէ ունիցի զժողովուրդս հը¹
նազանդս առաջնորդաց եկեղեցւոյ : «Բանզի
հպատակութի ժողովրդոց առ բանս խրատու
և պատուիրանաց հոգեոր իշխանաւորաց՝ առ
ած վերաբերի : ըստ այնմ * Որ ձեզ լսէ ,
ինձ լսէ : || զ-է . ծ . 16 *

Իսյց գտանին ոմանկք , զի զպակասութինչ
զոր տեսանեն ՚ի կարգաւոր ոք , առ ամ կար
գաւորս տարածանեն . և զամենեսին ստգտա
նեն և բամբասեն . գոնէ լսնիցեն այնպիսիքն
ածային գրոյն՝ որ ասէ . * Օ իշխան ժողո
վրդեան քո մի՛ հայհայեացես : || էլեց . էֆ . 28 *

Դ Իշխան քաղաքի կամ ազգի՝ է որպէս
գլուխ ՚ի մարմնի . իսկ ժողովուրդք ողպ ան
դամք՝ ըստ իւրաքանչիւր կարգի և աստիճա
նի : Եւ զոր օրինակ ամ անդամք մարմնոյն՝
արբանեկեն գլխոյն , զի մի՛ վնաս ինչ հասա
նիցէ նմա . ողպ ՚ի կարկառել թշնամւոյն ըդ
սուր՝ հարկանել զգլուխ ուրուք , ձեռն նը
վաղվաղակի յառաջ մատչի՝ յինքն ընդունել
զհարուածն . և ՚ի ձգել ուրուք զքար հարկա
նել զաքսն՝ դիմակալ լինի բազուկն : Եւ

թէակէտ միոյ մարմնոյ անդամք են գլուխ և
աչք և ձեռք . սակայն ձեռն իւրովի ընդ ա-
ռաջելանէ ու եիցէ արկածից՝ 'ի պաշտպանու-
թի գլխոյ և աչք . քանզի բնութին իսկ ու-
սուցանէ՝ թէ նուասան ծառսյեսցէ պատ-
ուականին :

Ա. Ըստ՝ իբրև գլուխ և իբրև աչք են առաջ
նորդք եկեղեցւոյ , և ազգասէր իշխանք և
գլխաւորք . իսկ հասարակութին իբրև ձեռք:
Վպա արժան է ժողովրդեան առատուականս
ունել զգլիսաւորս ազգին . ոգւով չափ ճգնիլ
զի մի՛ վսաս ինչ հասանիցէ . ճանաչել զնան հոյրե-
նասէր և խորախորհուրդ . և բարեկարգ ակն
արկութե նց ամ յօժարութիւ հլու և հպա-
տակ կալ : « Քանզի ՚ի տկարանալ կամ ՚ի պա-
կասիլ գլխաւորաց՝ անդէն լքեալ թուլանոց
հասարակութին . բառնի վայելութիւ և յարգ
և համբաւ նը, և լինի կոխան ազգաց օտարաց:

Ե Պերազանց գտան մեղուք ՚ի խոհակա-
նութե քան զամ կենդանիս , ՚ի կարգել ՚ի վը-
հասարակութե իւրեանց զմի նախագահ և
իշխան՝ հնազանդիլ նմա ամ ակնածութիւ . զի
եթէ ոչ ունէին զգլիսաւոր՝ հնազանդ լինել
նմա , միաբանութիւ իւրեանց քակտեալ փե-
ռեկտէր , և ոչ կարէին լնուլ զիեթակս իւր-
եանց մեղու :

Ոյն օրինակ Ճանէ է իմանալ և վազ
մութե ժողովրդոց . որք եթէ ունին առաջ
նորդ և իշխան՝ և հնազանդին նց , լքեալ պա-

բարին ամ բարեգք հոգւոյ և մարմնոյ . Իսկ
եթէ իւրաքանչիւր անհատ զինքն ծանիցէ
դլուխ , տիրէ ՚ի վը նց անկարգութի , և շփու-
թութի , և զբկին յամ բարեաց . նմանել իշա-
մեղռաց , որք ոչ ունին դլուխ , և ոչ կարգ ,
և ոչ միաբանութի . վայ և ոչ կարեն գործել
զմեղը . և են անարգ և հալածեալ յամէ .
Ապա պարտ է ժողովրդոց ունիլ զգլիսաւորս,
և կամակար սիրով հնազանդիլ նց . զի բարեվայե-
լուց կարգօք և շինութի օր քան զօր պայծա-
ռասցի ազգն , և հոգեւոր և մարմնաւոր բա-
րեմանութի բարգաւաճեսցի :

Դ Ո՞չ ՚ի մարդկանէ՝ որ զմիտս ունի՝ կտ-
րէ յերկուանալ կամ հակառակիլ յայտնի ճըշ
մարտութես . թէ առանց գլիսաւորի՝ չէ հնար
հաստատուն կալ բարեկարգութի իմկք : Այց
յատկութի գլիսաւորութի է ունիլ հպատա-
կեալս . և յատկութի հպատակութի է՝ միա-
միտ հնազանդութի իւրում գլիսաւորի : Ուր
մին յերկուց աստի պակասի՝ ոչ գտանի անդ
բարեկարգութի . և հետեւաբար՝ ոչ երեխ բը
նաւ ազգօգուտ շահեկանութի ինչ . զի ՚ի
բառնիլ պատճառին , բառնի և գործն . իսկ
պատճառ ամ օգտակար գործոց՝ որով պանծա-
լի հանդիսանաց ազգն , է հաստատութի բա-
րեկարգ սահմանադրութեց :

Ե Օ թնչ օգուտ է գտանիլ ՚ի մէջ ազգի
կամ քաղաքի խոհեմ և ազգասէր իշխան , և
թէ հասարակութին ոչ հնազանդեսցի նմա , և

օդտակար բանից նը ոչ անսայցէ : Խւ զի՞նչ օ
գուշտ է լինել ժողովրդեան հնազանդ և բարե-
միտ , եթէ ոչ գտցի 'ի նա արժանաւոր իշխան՝
առաջնորդել նց 'ի բարին և յօդտակարն . դիւ
մագրաւ լինել վտանգաւոր դիպուածոց , և
դնել զանձն 'ի կշեռ՝ 'ի պաշտպանել զհասարա-
կութին :

Ա. Ալսակայն մարթ է խոհեմիշխանի՝ առնց
ժողովրդոց իբրև զմի 'ի հասարակ մարդկանե
կեալ յանքոյթ , զհոդ անձին իւրոյ և զիւրոյ
նոց միայն հոգալ , և լինել երջանիկ յառանձ
նութե իւրում . այլ ոչ է հնար բազմութե
ժողովրդոց՝ առնց իշխանի և բարեկարդ սահ
մանադրութե , իւրաքանչիւր անձին իւրում
օրէնսդիր լինելով՝ մնալ անխուռով , և լինել
երջանիկ :

« Բանզի բազումք 'ի նոցանէ զաջ և զահեակ
ոչ ճանաչեն . զօդտակարն և զմսասակարն ոչ
կարեն որոշել . ուստի բազում անգամ զբարե-
բարն իւրեանց բամբասեն և վշտացուցանեն
անիրաւ դատողութե . որովհե միայն մեղանչեն
առ իշխանն , որ արար զմեծամեծ բարիս , այլ և
առ ած՝ որ ետ նոցա զայնպիսի իշխան . նմին
իրի բազմիցս պատժին յածուատ վասն ապե-
բախտութե իւրեանց :

Ե Հասարակութին ողջոյն ազգի կարի վայ
ելքապէս նմանի ծառոյ . որոյ գլխաւորքն ու-
նին զտեղի արմատոյ և բնոյն , և ժողովուրդքն
սատոց . և ոսպ սատք ծառոց յամ հողմոց շար-

Ժին . և յոլովակի անզօրքն ՚ի նոցանէ ՚ը կարա
ցեալ տոկալ բունութե նորին՝ բեկանին, և՝ ՚ի
բունոյ ՚ի բաց քեցեալ չորանան . ըստ այսմ և
տկարամիոքն ՚ի ժողովրդոց յամ շնչմանց աղմը
կեալ վրդովին . և հետեալ խորհրդոց և կա-
մաց գլխաւորաց իւրեանց, զանձինս ՚ի բաց ո-
րոշեն . որով ՚ը զայլինչ շահին, բայց եթէ ըզ
վնաս անձանց՝ և զկործանումն ազգին :

Թ Փառք ազգին՝ են գլխաւորք նորա . զի
որքան գլխաւորքն են մեծաշուք և զօրաւոր
յիրս և՝ ՚ի բանս, այնքան գովանի հանդիսանեայ
անուն ազգին . և երանելի համարին իւրա-
քանչեւր անհատ նը . ուզ գլխայն հարաւոյ ե-
րանէր զծառայան սողոմոնի . զի այնպիսի իմաս
տուն տն ծառայէին : || 3 . Եակ . ծ . 8 .
Ապա ժողովուրդ՝ որ զգլիսաւոր իւր սիրէ
և պատոնէ, զիառս իւր բարձրացուցանէ :

Խակ փառք գլխաւորաց՝ են ամ առանձնա
ւորք ազգին . այլ այս փառք նց՝ ՚ը ՚ի բազմութե
անհատից կայսանոյ, քան թէ ՚ի բարեկարդութե
օրինաց, և՝ ՚ի միաբանութե ընդ միմեանց . վազ զի
բազմութի ապառում և խաժամուժ ամբո-
խից՝ առաւել վնաս գործեն քան օդուտ : Այլ
սակայն չէ արժան բարի իշխանի՝ վշտացեալ
ընդ անպատկան բանս և գործս սոպու և անո-
պոյ անձանց, հրաժեշտ տալ յազգօգուտ ի-
րողութեց . քանզի ՚ի մէջ հասարակութե ազ-
գին՝ ՚ը սակաւ աղնոնաբարոյ, խոհեմ, և բարե-
սէր անձինք գտանին . որք քաջ ճանաչեն զե-

ըախտաւորս և զպատիւ իշխանաց : Բայց
միայն պարտ է նց յորդորել զհամազգիս , լիւ
նել հնազանդ՝ երախտագէտ՝ և պատուադիր
ազգասէր բարերարաց . և աղօթս առնել վս
նց , զի՞ օր ըստ օրէ շքեղափայլ պայծառացին
՚ի բարօրութե և՚ի յաջողութե , ՚ի սէր և՚ի
խնամն հասարակութե . որով առաւել ևս ազգն
փառաւորեսցի ՚ի նո , և նոքա ՚ի բազմութե
ազգին : ՚Քանզի և ած մինչ տեսանէ զջանս և
զսէր գլխաւորացն և ժողովրդեան , ինքնին
կանխէ լնուլ զամենեսեան հոգեւոր և մարմա
ւոր բարեզք . ըստ այնմ . * Լըւ եղիցի մինչեւ
կարդացել իցէ նոցա , ես լուսայց նոցա . և
մինչդեռ խօսեսցին , ասացից՝ թէ զի՞նչ խընդ
րէք : || Եսաց . չէ . 24 .

* Լըշաչէ զէւշ ե՛շբարէ՝ մանաշէ զվատահաւորս
և զվերահայուս չէր ՚ի աէր , և զերարտէշ չէր . և
համարեցարուս զնոսո արժանիս տաւաւել սէրոց՝ վասն
գործոց նոցա : || ա թաեսաղ . ե . 12 :

* Ա-նէնտէր լէրուս տաւաջնորդաց չէրոց , և հպատակ
չայէս նոցա . զէ նուա առնին վասն ուժոց չէրոց՝ ող
թէ համարս առաջ եցեն ընտ չէր : || Լըւ . ժկ . 17 :

* Լընացն անչն որ ընտ եշխանութիւն է , ՚ի հնազան
թութիւն չացցէ . չանցի ոչ ուսուեւ է իշխանութիւն , եթէ
ոչ յացաւ : || Հուօմ . ժկ . 1 .

ԳԼ. Ե

ա Ապ մարմին մարդոյ է բոլոր ինչ բաղկաց
շեալ յանդամոց իբրև ՚ի մասանց, սոյնպէս և
հասարակութիւն միոյ ազգի է բոլոր իմն, որոյ
մասունք կմ անդաք՝ են իւրաքանչիւր անձն
նոյն ազգին։ Այլ սպ ՚ի վշտանալ հիւանդու-
թե միոյ յանդամոց մարմնոյն, ոյլ ամ անդաքը
ջանան դարման մատուցանել նմա և բժշկել.
զի մի՛ հիւանդութիւն մահաբեր զբոլոր մար-
մինն ապականեսցէ, որով և ինքեանք ապա-
կանեսցին։

Այսպէս և իւրաքանչիւր առանձնաւոր՝
որ են անդամք հասարակութե ազգին, պար-
տին օգնական լինել, և դարմանիչ տկարուե-
և յաւոց ընկերին, որ վշտացեալ իցէ ձախո-
զակի պատահարօք։ զի մի՛ հետ զհետէ յոյլ
ամ անդամն հասարակութեն տարածանիցի
ախտն։ վազ զի ՚ի տկարանալ և ՚ի կործանիլ ող
ջոյն ազգին, անշուշտ կործանին և ինքեանք։
Ուստի որք կարօղքն են՝ եթէ ոչ ջանան ցա-
ւակից և օգնական լինել ազգայնոց իւրենց,
պարտաւոր են դատաստանի։ զի անհոգութե
լինին պատճառ կործանման բոլոր ազգին։

Ար ո՞չ լինի ձեռնոտու փորձանաւորաց ՚ի յա-
ջողութեան իւրում, ո՞չ զոք դտցէ ձեռնոտու
ինքեան ՚ի ձախորդութե իւրում։

Է Ամենիմաստ տեսչուին ածային՝ որ ինսա
մէ զարարածս իւր քաղցրութ, ո՞չ արար զամ

մարդէի միօրինակ , այլ զոմանս փարթամ , և
զոմանս աղքատ . ող զի ողըրմելի վիճակ աղքա
տաց՝ շարժեսցեն ՚ի գութ զիարթամն . և փար
թամբ յընչից իւրեանց լցուացեն զկարօտու
թիս աղքատաց . և փոփոխակի լինելով մի
մեանց պատճառ բարեգործութե , ամենեքին
ընկալցին զվարձս յոյ : Օ ի եթէ ամենեքին
լինեին աղքատ , ովկարէր տալ զողըրմութի .
և եթէ ամենեքին էին փարթամ , ովզիջանէր
առնուլ զողըրմութի :

Ապա ուրի կարողք են յողորմիլ , գոհացօղք
լիցին զտնէ , որ ետ նց զինչս օգնել կարօտե
լոց . ող զի ընկալցին վարձս անեզրական՝ փո
խանակ բարերարութե իւրեանց : Այնպէս
և աղքատք ՚ի լնուլ իւրեանց զկարօտութ աը
րովք փարթամաց , երախտահատոյց լինիցին
գոհութե զտնէ և զպարգեողաց , ող զի ար
ժանասցին առնուլ վարձս յոյ :

Սակայն թէ և բազմութին ըլինիցի երախ
տագէտ , չէ արժան փարթամաց դադարիլ ՚ի
բարերարելոյ , եթէ ցանկան նմանող լինել ոյ .
զի ահա բազումք զբազում բարիս ընկալեալ
յոյ , ոչ ճանաչեն զբարերարութ նը . սակայն
ած տակաւին առնէ նց զբարիս :

Դ Առ աղքասիրի չէ բաւական միայն սի
րել զօդուտն հասարակաց , և վս նը աշխա
տիլսյլ պարտէ ատել և ՚ի բաց հալածել զայն՝
որ ներհակի բարւոք դիտողութե իւրում . և
չանոյ վեաս հասուցանել հոյրենւոյն :

Ե Արժան հայրենասիրին խապառ հա
մակիլ տրամութե և լքանիլ, տեսեալ թէ բաղ
մութի մարդկան ատելութե բերին առ մի
մեանս . առ երեսս կերպարանին բարեկամ, և
՚ի սրտի իւրենց խորհին զըարիս . կեղծաւորին
զօդուտն միմեանց խնդրել, բայց գործով ՚չ
դադարին վնասել . լարեն որոդայթս սոտից ե
րախտաւորաց իւրեանց, և ՚ի յայտնիլ դաւա
ճանութեն զլանան և ՚ի զքմեղս լինին . խրա
ախն և ՚չ զգաստանան . յանդիմանին և ՚չ պատ
կառեն : Այլ պամատ է նմա քաջալերիլ և միսի
թարիլ . զի գտանին և սակաւք՝ ոյք սիրեն զըն
կերս իւրեանց Ճշմարտութե, և ջանան առնել
նց զըարիս . դնեն զանձինս ՚ի վտանգի վո՛ հա
սարակաց օգտի, և ՚չ ՚ի թշնամութ սուտ բա
րեկամաց սրտաբեկ եղեալ կասին յետա :

Ե Որ կարօղէ ՚ի բարերարել այլ եթէ ՚չ
գուցէ կարօտ ոք՝ որ խնդրիցէ ՚ի նմանէ զօդ
նականութի, մնայ անարդիւն . իսկ եթէ գըտ
ցին կարօտեալք, բայց ինքն ՚չ կամիցի օգնել
նց, մնայ պարտական . Օ ի զինչ օգուտ իցէ
լինել հարուստ, և ՚չ ձեռն կարկառել աղքա
տաց . կամ գիտնական, և ՚չ ուսուցանել տգի
տաց . կամ խորագէտ, և ՚չ խորհուրդ տալ
փորձանաւորաց . կամ ուժեղակ, և ՚չ բառնալ
զոկարութ տկարաց : Օ ի ամբարիք իւր՝ որք
չեղեն ինչ օգուտ ումեք յընդարձակ աշխար
հի, ՚չ բնաւ լինիցին օգուտ նմա յանձուկ
գերեզմանի . այլ մանաւանդ դարձցին ՚ի պա

տիժ և՝ ի դատապարտութիւն անձին իւրոյ ։ զի լսելոց է՝ ի տնէ յանաշառադատն ատենի, ծանուց չար և վատ՝ ընդէլը ո՛չ ետուր զարծաթն իմ՝ ի սեղանաւորս ։ զի և ես եկեալ տոկոսեգք պահանջէի :

Պ Որ մասնաւոր անձին ումեք առնէ ըզ բարերարութիւն, առնու զշատուցումն ՚ի նմանէ զշնորհակալութիւն ։ իսկ որ հասարակաց լինի բարերար, ո՛չ ոք զնա համարի ինքեան յատուկ երախտաւոր, զի գոնինէ հատուցէ նմա զպարտը իւր գոհութիւն ։ Ո չոյ հասարակաց բարերարն՝ առնու զշատուցումն վաստակոց իւրոց ՚ի տնէ, որ անթերի հատուցանէ իւրաքանչիւր ումեք ըստ գործս իւր :

Է Որ կարէ բանին և գործով օգնել կարօտելոյն. և միայն բանին բերանոյ մատքի յօդնութիւն՝ և ո՛չ գործով պարտաւոր գտանի վարձուց գործոյ ։ զի կարէր՝ և ո՛չ կամեցաւ առնել. կորուսանէ ևս զվարձա լեզուի իւրոյ, որով աշխատ եղեւ վն նորա : Իսկ որ ո՛չ կարէ օգնել գործով, և միայն բանին ջանայ նպաստել՝ միջնորդութիւն, կամ խրատու, կամ միսիթարութիւն, առնու զվարձս գործոյ՝ վասն յօժարութեն . զի կամել, և չէր ձեռնհաս առնել :

Ո արդիկ հանդերձեալ են պատժիլ ՚ի դըժոխս, ո՛չ միայն վն չարեացն զօր արարին. ոյլ և վն բարեացն զըր պարտ էին առնել, և զանց արարին :

Ը Կանացի և անարի սրտի է երկնչել ՚ի

Ճանրութե՛ աշխատուե՛ , և յետս կասիլ յազգւ
օդուտ իրողութեց՝ յորժամ կարօղէ յանձնաւ
ռութե՛ դժուարութեց կատարել զայնս . զի
այնպիսին ո՛չ միայն մնայ անվարձ , այլ և պար-
տաւոր . զի ձեռնչաս էր առնել , և ո՛չ արար :

Ո՞չ այլ ինչէ լինել իշխան , բայց եթե
բառնալ զբեռն հասարակութե :

թ Ա. զդ մարդկան՝ որ ընդ ամ աշխարհս
են տարածել , ունին զսկիզբն սերնդեան իւր
եանց ՚ի միոջէ , և են եղբարք միմեանց . վայ
պարտին սիրել զմիմեանս , և օգնական լինել
այր ընդ ընկերի իւրոյ . ապա որ վնասէ ընկե-
րին , վնասէ անձին . զի ՚ի միոջէ արենէ են
զանդեալ :

թ Իռնաւորն որ զայլս Ճառայեցուցանէ ,
նման է զայրացել գետոյ . որ փոխանակ հեզկի
խաղացմամբ արբուցանելոյ զերկիր , ուժգին
հոսմամբ արտաքս զեղեալ ՚ի խրամոյ իւրմէ ,
ապականէ զանդս և զտունկս ըստ անցանէ :

ժա Իռնութիք իշխանաց ո՛չ կարեն աճե-
ցուցանել ՚ի քաղաքի զօգտակար արհեստ ինչ.
այլ վարձատրութիք արհեստաւորաց , և օդուտն
հասարակաց . զի մարդիկ վայ օգտի իւրենց ջա-
նան հնարել կմ կատարելագործել զարհեստա:

ժէ Ճառզովուրդ որ առաջնորդին ՚ի բարե-
րար և յիմաստուն իշխանէ , կեան երջանկա-
բար , և լի ամ բարեզք . վայ սիրեն զիշխանն
առաւել քան զկեանս իւրեանց . և նմա յօ-
ժարին նուիրել զամբարիս . զի նովաւ ունին

զամ: Բայց և իշխանք պարտին սիրել զվազ
տակս իւրեանց իբրև զորդիս . զի և ինքեանք
սիրեցեալ լիցին՝ ի նոցանէ իբրև զհայր:

ԺԴ Իշխան որ ջանոյ վ՛ բարւոյ և հան
գըստեան ժողովը եան իւրոյ, նոքին ևս օգ
նեն նմա՝ ի ժամանակի նեղութե . ոչ խնայեն՝ ի
նմանէ զինչս իւրեանց, զոր ջանիւք նը ստա
ցեալ ունին . և այսպէս ինչք հասարակաց լի
նին իշխանին առանց զըկողութե և յափշտա
կութե . նաէ նց իբրև բարեգութ հայր, և
նոքա իբրև որդի հաւատարիմ:

ԺԴ Իշխան բարի և ազգասէր չունի հոգ
կարգել պահապանս վ՛ կենաց իւրոց . զի սէրն
հասարակաց պահէ անվեսաս զկեանս նը . գիւ
տեն՝ զի՝ ի կորուսանել զնա, կորուսանեն զեր
ջանկութի իւրեանց . վայ նուիրեն զանձինս
իւրենց՝ ի պահպանել զնա . զի պահեսցեն զեր
ջանկութի իւրեանց՝ զոր ունին նովաւ :

ԺԵ Աշխատութի ինչ յօգուտ ազգի կամ
քաղաքի, կարէ լինել կրկնակի . կամ նուիր
մամբ անձին վասն սիրոյ հայրեննեաց՝ առանց
ակնկալութե փոխարինի . և կամ վաճառմամբ
աշխատանաց՝ վ՛ ընդունելութե վարձուց:
Արդ՝ նուիրումն անձին ձրիապէս, է գործ
ազատաբարոյի . իսկ ակնկալութին վարձուց՝
է գործ ծառայի . զի այս երկու ծայրք են
անմէջ:

Բայց պահանջէ արդարութին, զի հասա
րակութին ձանաչեսցէ զւափ երախտեաց բա

րերարին, որ աշխատի ձրիապէս, և հատուսցէ զփրխարէնն՝ զնորհակալութի կամ զվարձս. միոյն թէ երախտաւորն չունիցի ինչ ակնկալութի. զի' մի' ազատութին ազնուական՝ դարձի յանարդ ծառայութի. զի' ծառայից է առնուլ վարձս ընդ աշխատուեն. Անհնար է թէ կորուսցէ ինչ, որ յօգուտ ընկերին առնէ զբարիս:

Ժղ Ա. աշխատիլ ձրիապէս ՚իսէր ոյ վ՛ս օգտի ընկերին՝ է ծառայել ոյ, և բարերարել ընկերին. իսկ աշխատիլ վ՛ս ընկերին ակնկալութք վարձուց՝ է ծառայել մարդկան, և բարերարել անձին. Որ ակնկալութք պատույ և մեծութեն աշխատի յօգուտ հասարակաց՝ է ծառայ մեծութեն և պատույ. իսկ որ աշխատի ազատօրէն՝ միայն վ՛ս սիրոյ առաքինութեն, է իշխօղ պատույ և մեծութեն:

Ժէ Փառքն կոյանայ ՚իբարերարուեն, և ո՞չ ՚ի փարթամութեն. ապա թէ ոք կամի սոտանալ զփառս, մի' դադարեսցի առնել զբարիս այլոց. Ո՛չ ոք կարէ ունիլ զջմարիտ մեծարանս և զփառս, եթէ չունի բարերարութի. Պարտ է աշխատիլ յօգուտ հասարակաց սոսկ վ՛ս սիրոյ առաքինութեն, և ո՞չ եթէ վ՛ս փառաց՝ գովուեն՝ և շահու. զի' եթէ իբրև վարձ աշխատութեն ընկալցի զփառս կամ զգովութի կամ զինչս, կորուսանէ զյարդ առաքինութեն. և ո՞պ թէ զոսկի փոխանակէ ընդ հողոյ:

Ա՞եծատուն ոք օրէնսդիր ՚ի հնումն՝ եդ ըզ բազում օգտակար օրէնս ազգի իւրոյ. և երդ

մեցոյց զնա ըլուծանել ինչ յօրինաց անտի ,
մինչ ինքն ոչ գտանի ներկայ ՚ի միջի . և ապա
գաղտ մեկուսացեալ ՚ի հայրենեաց իւրոց յեր
կիր օտար , եկայ անդ իւրեւ ոյր մի աղքատ
մինչև ցմահ . զայս արար վն սիրոյ աղդին . զի
հաստատուն և մշտնջենաւոր մնացեն օրէնքն
ընդ պարտաւորութէ երդման :

Ոեքըուապ եգիպտացի որ եղեւ իմաստուն
թագաւոր աթենացւոց՝ այնքան կամեցօղէր
բարւոյն հասարկաց , մինչզի ոչ կամեցաւ կար
գել զորդին իւր յաջորդ թագաւորութէ .
ածեալ զմուաւ , թէ գուցէ գտանիցի ոյլոք
առաւել արժանաւոր քան զորդիս իւր :

ԺՇ Ո՛չ ինչեն զարմանք , եթէ իշխան բարի
և երախտաւոր հասարակաց՝ վատահամբաւես
ցի յայնցանէ՝ որոց արարեալէ զբարիս . զի ոյս
իսկ են այժմ օրէնք աշխարհի՝ թէ երախտաւ
ւորն ատեսցի յամենեցունց : Ուստի և բարե
ըար իշխանն գիտելով զայս , ոչ ինչ գժուարի
ընդ գժնդակ հատուցումն զոր ընդունի . այլ
միիթարի ընդ գիւցազնական առաքինութիւ
իւր , որք բաւական են սփոփել զսիրոտ նոր .
մանաւանդ զի հաստատեալէ ՚ի միտս , թէ ար
ժանէ բարւոյ իշխանի առնել հասարակաց զբա
զում բարիս , գիտելով՝ թէ առաջի կոյ նմա
առնոււլ զատուցումն յապաշնորհից զբա
զում չարիս :

ԺԹ Ռնկերական կենցաղավարութին է իւրեւ
անոնաւոր ժամացոյց . ուր անդամք ընկեւ

ըութե՛ հաղորդութե՛ միմեանց գործեն զշասա
բակաց բարին . զի ոմն մշակէ զերկիր . և ոմն
դարմանէ զխաշինս . ոմն անկանէ զոստոյն . և
ոմն գործէ զերկաթ . ոմն օդտակար օրինզք
կառավարէ զշասարակութին . և ոմն զօրութե՛
զինու պահէ զշայրենիս . և այլք ամենեքին
ը պէս պէս շնորհացն զոր ունին յայ՝ արդեմքք
վաստակոց արբանեկեն հասարակութե՛ :

Եւ զ՞ր օրինակ՝ եթէ մի ինչ անիւ ՚ի ժա
մացուցէ անտի պակասեսցի կամ խանդարես
ցի , տկարանայ այնուհետեւ զպարտուպատշաճ
գործողութին իւր անվրէպ կատարել . այլէ՝
զի կաղ՚ի կաղ ընթանայ . և է՝ զի կառեալ դա
դարի : Բատ սոյն սարասի՝ եթէ մի ՚ի կա
րեոր անդամոց անտի հասարակութե՛ պակա
սեսցի կամ խանդարեսցի , հասարակութին ողջոյն
լինի ՚ի վտանգի , կամ խապառ կործանի . ողջ
եթէ պակասեսցի մշակ , կամ ոստայնանկ , կամ
դարբին : Եւ կամ թէ խանդարեսցի զինունո
րական բարեկարգութին , կամ օրինացն ար
դարութի . ողջ եթէ զինունորն փոխանակ լինե
լոյ քաջասիրտ և հայրենասէր , եղեցի վատա
սիրտ և հայրենեացն մատնիչ . և իշխանն կամ
դատաւորն փոխանակ օդտակար և խմաստուն
օրինաց , դիցէ զօրէնս անիրաւս և վասարակա
րը հասարակութե՛ . մանաւանդ եթէ զկամն
իւր արասցէ օրէնք :

Ապա փութալի՛ է ազգասիրին զպակասն
յանդամոց անտի լնուլ և զխանդարեալն ուղ

զել։ Խակ եթէ չկամեսցի ուղղել, արժան է զայնպիսին ՚ի բաց քեցուլ՝ ՚ի մարմնոյ հասարա կութե։ զի մի՛ և զայլս յանդամոց խանդարես ցէ։ Խւ ահա յայսմ է հաստատեալ երջանկութիւն և թշուառութի՝ ընկերական կենցա զավարութեան։

Ի՞ Չորք ինչ կարի հարկաւորք են առեր ջանկութի՝ ազգի ։ առ մեծ և առաջին գրել զպահպանութին օրինաց ։ Է, իւրաքանչիւր ումեք աշխատ լինել՝ ՚ի ստացումն կարեւոր պի տոյից ։ Դ, ՚ի ժամանակի հարկաւորութե՝ ՚ի թիկունս հասանել ընկերին ։ Դ, ջանալ վասն օդտի և բարւոյ հասարակութե։

Երջանիկ է ազգն, որոյ առջնորդք են բարեկարգ ։ իշխանք հայրենասէր ։ քահանայք իւ մաստուն ։ դատաւորք արդար ։ ուսուցիչք առաքինի ։ ծերք խորհրդատու ։ երիտասարդք բարեջան ։

Ի՞ ո՞չ առնէ որքան կարէ՝ ոյլ որքան կամի ։ իսկ մարդս ո՞չ առնէ որքան կամի՝ ոյլ որքան կարէ ։ և աճ այնչափ ինչ պահանջէ ՚ի մարդկանէ զբարիս, որչափ կարէ առնել։ Բայց պարտ է առն հայրենասիրի առաւել ընտրել զօդտակարն ազգին՝ քան զփառաւորն, յորժամ չիցէ ճնար զերկոսին ևս միանդամայն առնել։

Ի՞ Որ ունի զսէրն այ բնակեալ՝ ՚ի սրտի իւրում ։ ո՞չ դադարի ՚ի սիրելոյ զընկեր իւր ։ իսկ սիրել զընկերն՝ է առնել նմա զբարիս ։ զի

սէրն է հիմն և արմատ . և բարերարութիւնն է ոստ և բողըոջ . իսկ եթէ ոստն իցէ դալսր, յայտ է թէ արմատ նը է կենսաւոր: Ապա որ բանին լոկով ցուցանէ սիրել զընկեր իւր, և չառնէ ինչ գործ օգտակար նմին , չէ կատարեալ՝ ի սէրն այ:

ԵՌ Որ կորուսանէ ղգութ և զմարդասի բութի, ոչ ևս է մարդ՝ այլ գաղան ոյլանդակ. Վայ մինչ անկանի՝ ի վտանգ-ս, ոչ ոք դտանի նմա կարեկից և օդնական. այլ ամենեքին իբրև ՚ի գուռ գաղանէ հեռի կան ՚ի նմանէ . զի որ ան գութ էր այլոց , արդարութիւն այ ոչ ներէ գտանել նմա զգթութիւն յումեքէ: Վայ մի ումեք մեղադիր լիցի ՚ի նեղութե իւրում: զի արժանի անգթութե սրտի իւրոյ , առնու զշատուցումն :

ԵՌ Որ կարէ օգնել և ոչ յանձն առնու օգնել՝ է անգութ . իսկ որ կարէ և յանձն առնու՝ այլ ոչ օգնէ , է անգութ և անիրաւ. զի առաւել սրտաբեկ առնէ զկարօտեալն :

Կան է բարեգութ սրտի , որ ինքն ՚ի նեղութեան գոլով՝ ջանայ օգնել նեղելոյն ըստ ձեռնչաս գոլոյ :

ԵՌ (Օ)գնել ամենեցուն յամժամանակի , է գործ այ . կատարել զամինդիրս՝ է գործ ծառայի . կատարել զոմանս՝ և զանց առնել զոմսմբք , է գործ ազատի . տրտնջել վո այն՝ զոր ինդրեց և ոչ էառ , է գործ անիրաւի . ապերախտ գտանիլ առ այն՝ զոր ինդրեց և էառ,

է գործ անհաւատի . չորտմիլ ըստ այն՝ զոր խընդ
րեաց և ոչ էառ , է գործ առն բարեբարոյի :
Եղ Այս քաջ և երկայնամիտ ոչ լինի յու¹
սաբեկ , յորժամ յապաղի կատարումն խընդ
ըոյն՝ զոր խնդրեաց յօգուտ իւր . այլ քաջուք
համբերէ մինչեւ առցէ . իսկ որ անարի է և
փոքրոգի , ընդ յապաղելն լքանի և ՚ի բաց
դաւնայ : Եւ նա որ մոռանայ զբարերարու^{թին}
թին՝ զոր ընկալեալէ յումեքէ , և գանդատին
վստահ զոր խնդրեաց և ոչ էառ , անիրաւ
է և ապերախտ :

Են Յետին անմտութին է և արտաքոյ բնա
ւորութե , վատահամբաւելումեք զանձն իւր .
և զարմանք են՝ եթէ զիարդ ոմանք վատահամ
բաւեն զազդն իւրենց չարախօսելով զնմանէ .
ող թէ ինքենք միայն իցեն ընտիր և պատուա
կան , և աղդն ողջոյն անարդ և վատթար : Եւ
ոչ տեսանեն կուրացեալքն կրիւք , եթէ ամ
մասն կարգի առ բոլոր ինչ , և ՚ի նմա բովան
դակի . իսկ եթէ բոլորն վատթար իցէ և ար
համարհ , քաջայայտ է թէ և մասն ինչ նորա է
ընդ նմա անարդ և վատթար :

Արդ՝ թէ հասարակութին ողջոյն աղդին
իցէ անդունելի և վատթար , ապա նոքին իսկ
չարախօսքն՝ որք են անդամ և մասն հասարա
կութե ողջոյն աղդին՝ լինին անդունելի և
վատթար : Ուրեմն չարաչար կուրութիւն է
վատահամբաւելումեք զազդ իւր :

Եւ Այս մոլի՛ իբրև յանդիմանի և անարդի

յազգէ իւրմէ , Երթոյ յարի յազգ յոյշ՝ կատա
րել զհաճոյս իւր . զի ոչ յուտայ ոյնուհետեւ
ընուլ զկամն չարութեն իւրոյ յազգի անդ իւ-
րում , և ոչ եւս գտանել զպատիւն զոր կորոյս :

Աղա սկսանի չարախօսել զազգէ իւրմէ՝
անխիղջ մտօք բիւր բամբասանս կուտելով՝ ի
վերայ՝ առ ՚ի չքմեղս կացուցանել զինքն , և
հաճոյ յաշա օտարաց . աւաղ կուրուեն մտացն
և յաւէտ անզգամութեն . կամելով գտանել
զյարգանս , առաւել անարգի . զի նախատե-
լով զազգ իւր՝ զանձն նախատէ . քանզի եթէ
արմատն ոչէ բարի՝ ապա և ոստն : Եւ ոյսու
յաւելու զքար ՚ի վե չարի . զի յառաջն միոյն
էր չար յազգի իւրում , և յաւելով զանարգ
և զտմարդի գործ ազգատեցութեն՝ լինի ամե-
նաչար , և մատնիչ հայրենեաց : Եւ որովհամէր
զվատթարութիւն իւր վարագուրել , այնու ա-
ռաւել յայտնի ցուցանէ . զի լսօղք բազմիցս
անզգոյշ գտեալ հաւաստի համարին զսուտ
զըպարտութիւն նր . բայց վե ապերախտութեն
նր առ ազգն իւր՝ արհամարհեն զնա , և խո-
տեն . ածեալ զմտաւ՝ թէ որ առ իւրան ան-
հաւատարիմ եղլ . զիարդ առ օտարս լինիցի
հաւատարիմ :

Տեսեալ ազգատեցին՝ թէ ունայնացաւ սը
նոտի յօյս իւր , որ ակն ունէր ընուլ զհաճոյս
անձին իւրոյ , միանգամայն և գտանել զպա-
տիւն իբրև Ճմարտասէր . այնուհետեւ դարձ
առնել ՚ի հայրենիսն ոչ ախորժէ , զի ոչ կամի

Ճանաչել զսխալանս իւր . վայ իսպառ յուսա
հատեալ՝ յաճախէ զանհնարին բարուրանս և
զստութիս , մերթ ՚ի վը միոյ և մերթ ՚ի վը
միւսոյ աղքին . ոոկ զի գոնէ միում ՚ի նոցանէ
բարեհաճոյ թուեսցի . այլ սակայն միշտ աւ
նարգ և վատահամբաւ գտանի :

Արդ՝ ՚ի պատճառս չարութե այսպիսեաց
լի են գրեանք բազում աղքաց սուտ զըսպար
տութեք զմիմեանց . զի հայրենատեացն ՚ի ծած
կել զյանցանս իւր անխիղճ մոգք ստէ . և լը
սօղն առանց քննութե հաւատոյ և դատի .
յորոց ծնաւ և ծնանի միշտ անհնարին ատեւ
լութի ՚ի մէջ աղքի և աղքի :

Իթ Այնքան հարի ՚ի վը կոյ իւրաքանչիւ
րոց ՚ի մարդկանէ սիրել զհայրենին և զաղք
իւր՝ մինչեւ ՚ի ստիպել բանաւոր պատճառաց
հարկեն ՚ի վը եկելոց , պարտաւոր դատի ոչ
միոյն զարտաքին բարիս՝ զինչս և զստացուա
ծըս , այլ և զկեանս մարմնոյ նոռիրել ՚ի սէր
և յօդուտ հասարակաց բարւոյն . զի այս է կը
շիռ իրաւանց աղքասիրութե . Ան զի եթէ
միոյն վսասուք և մահուամբ մարմնոյ բազումք
փրկելոց իցեն ՚ի վտանդէ կորստեան հոգւոց
կամ կենաց , վսասեսցի այն մին՝ զի փրկեսցին
բազումք :

Եւ յայն դիպուած ոչ համարի նա մեռել
այլ անմահական յիշատակաւ յաւէրժացեալ .
զի ընդ իւրոյ աղքին կամ հայրենոյն կեայ
միշտ կենդանի , որոց եղեւ առիթ փրկութե .

մանաւանդ թէ ազգն կեռյ ՚ինմին, որ ետ զան
ձըն և զինչս իւր վ՛ս ազգին. ըստ այնմ՝ քաղցր
է վ՛ս հոյրենեաց մեռանիլ :

Իսյց զգուշալին է յաւէտ, զի մի՛ վտանգ
կորստեան հոգւոյ իւրոյ լինիցի. զի զինչ օ
գուտ է՝ զաշխարհ ամ շահիլ, և զանձն իւր
տուժել, ոյսինիքն վՀոգին : «Քանզի պարտ է
ամ մարդոյ զիրկութի հոգւոյ իւրոյ նախա
դասել քան զազգս իւր, և զՀոյրենին : Ո է
ուր հոգին տուժի, անդ շահ ինչ ոչ գործի .
զի ընդդէմ է իրաւանց և ածային վճռոյն,
՚ի պատճառս այլոց ոմանց՝ կորուսանել ումեք
զՀոգի իւր :

Կարձեալ՝ եթէ կորստեամբ ընչից կամ
մահոնամբ մարմնոյ միոյն՝ փրկելոց իցէ հոգի
միւսոյն, լաւ է միոյն թէ կորիցէ ինչք նը, և
մեռցի մարմնով, զի կեցցէ հոգի միւսոյն . զի
առաւել է փրկութի հոգւոյ միոյն, քան զամ
գանձս, և զմարմնական կեանս միւսոյն. քանզին
ընդդիւտ միոյ հոգւոյ՝ ոչ ինչ գանձք Շի, և
ոչ ինչ մարմնական կեանք կարեն փոխանակել:

Եւ դարձեալ՝ եթէ միոյ ուրուք՝ ՚ի յերկուց
ոմանց մեռանիլ հարկն ստիպեսցէ միայն մարմ
նոյ մահոնամբ, պարտ է երկաքանչիւրոցն ևս
ջանալ՝ ՚ի պահել զկեանս իւրեանց. զի նախկին
է սէր անձին, և երկրորդ՝ ընկերին : Այսու
օրինակաւ վարելի է և՝ ՚ի կորուստ ընչից . զի
պարտ է ամենեցուն զիւրն նախ պահպանել,
և ապա զընկերին :

Եւ դարձեալ թէ պատահի ումեք կամ ըզ
հոգին կորուսանել, կամ զինչ և զկեանս .
պարա է զօգին պահել, և զինչ և զկեանս
մարմնոյ կորուսանել . զի ոչ եթէ հոգին վա-
ընչեց և մարմնոյ , այլ ինչք և մարմինն վասն
հոգւոյն են յածուստ սահմանեալ :

Ե Արդկոյինս ազգ՝ յայտ է զի յառա-
ջագոյն ՚ի միոջէ սկզբնաւորեալ եղեւ . և ապա
տեղեաւ , լեզուաւ , կրօնիւք , և քաղաքական
կառավարութէ ՚ի միմեանց որոշեալ զատան .
բոյց ՚ի բնութիւս մարդոյ արմատացեալ գործ
գերազանցիլ ՚ի վը ընկերին, իւրաքանչիւր ազգ
օրըստ օրէ փոյթ կալան զառ ՚ի միմեանց փոխ
առնուլ զօդտակարն և զդիւրագոյնն ՚ի կեն-
ցաղօդուտ պիտոյից . որով ոյժմ պայծառացել
պանծան ազգ յազգի վը :

Ա յլ սակայն ազգային իրք յայնժամ՝ ՚ի լաւ
անդր յառաջանան , յորժամանհատ անձինք նը
՚ի մի կամ գոտէ պնտեալ ջանան յառաջածել
զբարին հասարակաց . և զոր միանգամ ստանան,
զնոյնն յարատեռութէ հաստատուն պահեն .
որով ազգն ողջոյն անպակաս յամէ որ ինչ
մարդկութես է պիտանացու , ՚ի բարեբաստիկ
կեանս վայելեն յաշխարհի :

Բ այց սոյն ազգօդուտ իրողութիւն չէ նար
յատկանալ միոյ ումեք , կամ սակաւուց ոմանց .
զի եթէ ՚ի մի ոք՝ կամ յոմանս սեղմեալ լինէր,
՚ի պակասիլ նց չքանայր և գործն այն օդտա
բեր . ապա յայտ է թէ առ ամենեսին տարա-

ծեալ պահի : Ասոյ ո՞յ յամենեցունց տիրաբաթ
կարէ պանծալ զանձնէ իւրմէ , թէ իցէ պատ-
ճառ բարութե ազգի միոյ . մինչ նոյն մին՝ ո՞ք
և իցէ , կարօտի բաղմաց օգնութե . զի բաց
՚ի յոյ ո՞չ գոյ մի , ըստ ինքեան բաւական՝ առ
նել զոր կամի :

Ուրեմն անկ է միաբանութե բաղմաց գոր
ծել ինչ յօդտակարաց . և այս լինի միոյն ազ
գասիրութե . ո՞պ զի օգնութե միմեանց կարո
զասցին ունել զոր ո՞չ ունեին . և անկորուստ
պահեսցեն՝ զոր միանգամ ստանան :

Ապա եթէ տեսանես թէ դոյ ազգ մի մեծ,
ծանիր թէ գոն ՚ի նմա բաղումք՝ որք ազգա
սէր բարոյիւք միաբանեալ զօրէն մեղուաց՝
նախահաճախնդիր են պահպանութե հայրենի
ազգին իւրեանց . ապա թէ ոչ անհետանայր
ողջոյն ազգն այն :

Ա զի պահպանութի ազգի՝ կայտնայ ՚ի
յատուկ օրէնս իւր՝ ՚ի կառավարութի իւր՝ ՚ի
լեզու իւր, և ՚ի սովորական կանոնս իւր . քանզի
յեղծանիլ և ՚ի կորնչել աց , կորնչի և ազգն . զի
՚ի բառնիլ այսպիսի տարբերութեց՝ ամմարդիկ
ո՞պ նոյն են ՚ի բնութիս , նոյն լինէին և յազգի .
և աշխարհս դառնայր ո՞պ ընդհանուր բաղա-
նիս . ուր մերկ ՚ի հանդերձից ո՞չ որոշին ՚ի մի
մեանց մարդիկ՝ թէ յորմէ ազգէ իցեն :

Ապա կրօն , լեզու , սովորութի , և այլն , են
ո՞պ զարդ և հանդերձ ազգի . որք վայելքանան
հանապազօր երկասիրութե ազգասէր անձանց .

զի ոմանք վկրօնն պահպանեն . ոմանք զլեզուն
կատարելադործեն . կէսք զդիտութիս պայծա-
ռացուցանեն . այլք զօդտակար արհեստու , և
զայլ պիտանիս յօտար երկրէ ՚ի նեղքս ածեն .
Եւ սոքա ո՛չ լինին առանց միմեանց . զի ՚ի պա-
կասիլ միոյն՝ պակասին կամթերանան և այլք ,
զի կախումն ունին զմիմեանց . ուրեմն ամենե-
քեան պիտանի են առ ամբողջութի և կատա-
րելութի աղքին .

Բայց ո՛չ ոք ՚ի նոցանէ կարէ ասել զանձնէ ,
թէ ինքն միայն է ըմբռնօղ և պահօղ . և ո՛չ ոք
պարտի ուրանալ , թէ չիցէ ինքն միայն ըմբռ-
նօղ և պահօղ աղքի . Ապա յայտ է յասացե-
լոցս , թէ իւրագանչիւր անհատ աղքի միոյ՝
զայս օրինակ պարտի ասել և հաւատալ ո՞պ թէ
ինքեան միայն կարօտ իցէ բոլոր աղքն . և դար
ձեալ՝ թէ օդնել հարկ է եղքայրութե . Ո է
ո՛չ ինքն՝ այլ միաբան եղքայրութին է , որ պա-
հէ զաղքն . Վայ և ինքն պահի ընդ աղքին .
նմին իրի որ օդնէ եղքայրութե , օդնէ իւրեն .

Լա Յատկութի իմն է աղքասիրութե ջա-
նալ շահեցուցանել զաղքակիցս իւր՝ առևտը
ըութե , կամ օգտակար գործով . որովհետեւ
օդուտ միոյն՝ համարի լինել միւսոյն . զի թէ
ոյսօր նա ՚ի քէն օդտի , ՚ի վաղին գուցէ
դու յայլոց օդտիցիս , կամ ՚ի նմանէ . Արդ՝
այնչափ սերտ կապակցութի պարտի լինել ՚ի
մէջ աղքայնոց , ո՞պ թէ համայն անհատ անձինք
ողքին իցեն մի անձն և մի հոգի . Բայց ա-

ւաղ՝ զի այժմի օպառ անհետ երեխ ոդի աղքա
սիրութե յազգի մերում. զի առաւել կամին
ընդ օտարս առևտուրս առնել քան ընդ հա
մազգիս . և առաւել ընդունելութի ցուցա
նեն առ օտարս՝ քան առ իւրայինս :

Եւ Ա' չփոքր պարծանք է աղքի միոյ ունել
յատուկ լեզու, դիր, կանոն, և կրօն. և ոչ փոքր
աղքասիրութի է հաստատուն պահել զնս, և
օրըստօրէ շքեղացուցանել . որով ոչ միայն ող
ջոյն աղքն փառաւոր հանդիսանայ, այլև իւ
րաքանչիւր անհատք նորին. զի փառքն աղքի 'ի
յանհատս իւր երեխ : Այս աղքասիք ջանք՝
տեսանի յամ հրահանդեալ աղինս :

Բայց զիսարդ ոմանք յազգէն մերմէ՝ առա
ւել փոյթ են ուսանիլ զեզու և զգիր օտար
աղքաց՝ քան զհայոց . բազումք ևս տեղեակ
լեզուն՝ ընդ միմեանս խօսին այլաղքաբար .
ոչ միայն 'ի փողոցս և 'ի շուկոյս, այլև 'ի տունս
իւրեանց, գուցէ և զայն պարծանք համարին :

Այսու ախտիւ անհոգութե բազումք՝ զա
նուն եօթանասուն, ութսուն, և իննսուն
թոռոյ անգիտացեալ են . զի 'ի տասն թոռոյ
մինչ ցվաթսունն հայերէն թոռեն, և յետ այնո
րիկ տաճկական անուանակոչութիւն վարին . և
ոչ ածեն 'ի միտ՝ թէ ողջոյն աղքն նախատելի
լինի առջի այլոց աղքաց իբրև աղքատալեզու :

Ա' եծ անարգանք է աղքի ոչ ունել սեպչա
կան լեզու և գիր . զի ոչ թոռի լինել յատուկ
աղք . ապա մեծաղոյն նախատինք է այնմ, որ

անիցի և ոչ գիտիցէ . և ևս մեծագոյն արհա
մարհանկը , որ գիտէ և ոչ՝ ի գործ ածէ :

Եզրագիտութիւն այն գովելի է և օդ-
տակար . զի որքան լեզու գիտիցէ ոք , համարի
այնքան թուով մարդ . բայց նախ պարտ է գի-
տել զիւրն , և ապա զայլոցն : Ուստի որ ոչ գի-
տէ զեզու և զդպրութիւն ազգի իւրոյ՝ արտա-
քոյ գտանի կարգի բնուե , որ նախ զարմատն ,
և յետոյ զոստան յառաջ ածէ : Ապա պարտ է
ամենեցուն նախ զիւր հայրենի լեզուն և ըզ-
դպրութիւն քաջ ուսանիլ , և ապա զեզուս
այլոց ազգաց :

Յայն սակա պարտական են առաջնորդք և
գլւաւորք՝ որոց յանձն է խնամ և տեսչութիւն
աղգին , ամ հոգողութ ջանալ կրթել զմանկունս
աղգին ՚ի հայրենի լեզուս և ՚ի դպրութիւն .
մանաւանդ յայնոսիկ քաղաքս , ուր ոչ երբէք
գիտեն հայերէն :

Ո ի եթէ առաջին հոգաբարձուք փութա-
ցեալ էին վարժել զնոսա ՚ի հայրենի լեզուս ,
արդէն գտանէին նոքա հայրենախօտ : Եւ որ
տեսուչք և խնամածուք են այժմ՝ եթէ տու-
կաւին անփոյթ արասցեն , յետնորդք նշ գըտ-
ցեն զամենեսին այլալեզուս . զի օրըստօրէ ՚ի
բազում տեղիս պակասի յազգէ մերմէ գործ-
ածութիւն հայկական բարբառոյ :

Բազումք ևս անտեղեակ գոլով պատուա-
կանութե և ճնուե հայոց լեզրէին՝ առ ոչ ինչ
համարին զնա . այլ սակասն լեզու մեր կատա-

բեալէ, և նստդոյն քան զայլոց բազմաց, գուցէ
քան զլեզուս ամ ազանց :

Հաւաստի իմն թահի, ոոկ և մարթի ցուցա
նիլ՚ի բազում փաստից, թէ սա իցէ նախկին
լեզուն որով խօսէր աղամ, և որդիք և սե-
րունդք նր՝ մինչև ՚ի շինութի բաբելոնեան
աշտարակին :

Ա նզի նահապեան նոյ՝ և ընտանիք նորա
խօսէին զլեզուն աղամոյ. որովհետեւ նախքան
զլրհեղեղն ոչ գոյր այլ լեզու ՚ի վը երկրի:
Եւ ՚ի խառնակիլ լեզուաց ՚ի պատիժ աշտա-
րակաշինութե, նոյ կենդանի էր ՚ի հայաստան.
և անխառն մնաց ՚ի տան նորա նոյն լեզու . և
բնակիչք նախիջեանու և արարադոյ՝ նովին
լեզուաւ կրթեցան : Եւ ՚ի գառնալն հայկայ
՚ի կողմանցն բաբելոնի յաշխարհն արարատեան,
յոյժ հաւանելի է ասել՝ թէ նովին լեզուաւ
վարեցաւ, որով խօսէին բնակիչք տեղւոյն.
մանաւանդ զի այն բարբառ՝ էր նոյն ինքն
հայրենի լեզուն հայկայ, որով խօսէր յառաջ
քան զլառնակումն լեզուաց : Իսոյց աւաղ՝
զի գտանին ոմանք, որք զյարդ նր ոչ ճանաչե
լով անգունեն ՚ի զուր . որով զազդն անպա-
տիւ առնեն, ընդ նմին և զինկբեանս՝ որ մասն
են ազգին :

- * Աշխար ճեղքօրէ օգնեալ՝ իբրև զազաւ ամուր .
և շըրացեալ բարձրացեալ իբրև զմագաւորութիւն հաս
պառեալ : || Առակ . ԺՇ . 19 .
- * Օքայարուժ սրտիւ՝ ամը լվրուս ՚ի վը օքնացն ,
շէ ՚ի նին ժառառորդութիւն : || առ Առակ . ԺՇ . 24 .
- * Օքնաչ բարեաց և առաջինութեան մանիպուզ ըն
զեց , շէ օծարութեամբ և ամըութիւն ՚ի վէրաց ուր-
բութեան օքնացն մահու չոփ ջանալ մարթացեն :
|| Ե Առակ . Ղ . 28 .
- * Առժանի՞ է սրուժ զշնորհս զացա առնեա . զի սիրէ
շաշտու մը , և զժողովրտանցն՝ նա՛ շինեաց մը :
|| Առակ . Է . 5 .
- * Այնայն թագաւորութեան բաժանեալ յանձն՝ ա-
ւերէ . և առն բաժանեալ յանձն՝ խրժանի :
|| Առակ . Ժառ . 17 .
- * Ի՞ւ գլուխ ամենայնի զէ համաթառ իցէւ , համախա-
ռէւ , եղբարասէրէ , աղնաւագութիւն , իսկնարհէւ :
|| առ Պետ . Ղ . 8 .
- * Ա-իսուս ինտրէի , ևս ինչնին նշով լինել ՚ի ու
ընսոսէ՝ վա՛ եղբարց և աղգախանաց ինց ըստ մարմնոց :
|| Հոօմ . թ . 3 .
- * Լ ա՛ համարեցաւ չարչարէլ ընդ ժաղովրտեան ազ-
աւոծոց , չան առ ժամանաչ ՚ի վայելէլ ՚ի դը :
|| Հոօմ . թ . 3 .

ԳԼ. Զ

Ա Արժապետք պարտին լինել բարեկեցիկ զիկ. զի աշակերտք առաւել ուսանին զայն ինչ զոր ՚ի վարժապետն իւրեանց տեսանեն, քան թէ յոյլ ամ մարդիկ. Իսյց այս ինչ է խտիր. զի եթէ վարժապետն է կատարեալ առաքինի, աշակերտն թէպէտե նմանօղ լինի նմա, այլ յոլովակի ՚ը հասանէ ՚ի չափ կատարելուն նը.

Իսկ եթէ վարժապետն իցէ մոլի, աշակերտն ՚ը միայն հասանէ ՚ի չափ յոռութէ նը՝ այլև զանցանէ բազմօք, և լինի յոռեգոյն :

Ո՞ի միայն բարի օրինակ վարուց ուսուց շին առաւել օդուտ է աշակերտին, քան զբա զումդասա առանց բարի օրինակին :

Ա ըժանի՛ է նախառանաց, որ զայլս աշխատի կրթել, և զանձնէ չունի ինչ փոյթ. առ որ երաւացի է ասելքըժիշկ՝ բժշկեամ զանձնքու. Օ ի նա որ միայն զենական մակացուիս գիտէ ուսուցանել, այլ ՚ը արժանի բանաւորութէ գործա, է ծառ տերեւախիտ՝ բայց անպտուղւ

Ե Ո՞անուկ անհրահանդ և տղէտ՝ է իբրև անբան. զի ՚ը գիտէ կառավարիլ ՚ի բանէ՝ որ յատուկ է բանաւորաց, այլ ՚ի կրից՝ որ սեփիական է անբանից. Իսկ յորժամ ուսանի անդ զիմաստուի, սկսանի նոնաձել զեիրս, և վարիլ բանին. և ելանէ անտի այլ բանական:

ԾԱՆՈՂՔ ծնանին զօրդիս իբրև անբան. իսկ

վարժապետք առնեն զնս բանական : Դանօղք
տան զաւակաց միայն զկեալ . իսկ վարժապետք
տան զբարւոք կեալ :

Դ Անկունք եթէ քաջ ճանաչէին , թէ
զի՞նչ սնունդ մարմնոյ , և զի՞նչ սնունդ հու-
գույ , զվարժապետս կոչէին հայր բարի , և
զծնօղս հայր միայն . զի ծնօղք զմարմինս սնու-
ցանեն կերակրովք , իսկ վարժապետք զշողիս
խմասառութիւն և առաքինութիւն :

Դ Եծ զգուշութիւն պիտի ՚ի վարժել
զորդիս իշխանաց . ածեալ զմուաւ՝ թէ հանդեր
ձեւեն նոքա լինել կառավարիչ հասարակուե :

Ե Անդաստանք եթէ ոչ մշակեսցին , ոչ բե-
րեն զարմոիս բարեաց . մանկունք եթէ ոչ
դաստիարակեսցին , ոչ պտղաբերեն զառափի
նութիւն : Չիք ինչ ՚ի կեանս մարդկան որ ա-
ռաջնորդեսցէ յառաքինութիւն , ողի խրատ բա-
նից , և օրինակ գործոց :

Զ Հոդի խրատուէ առնել և ուսուցա-
նել . զի զոր իսօսի ոք բանին , պա՛րտ է և ինքն
կատարել գործով . ապա թէ ոչ ոչ ինչ զօրեն
բանքն խրատու :

Է Որ հանդերձեալէ լինել խրատիչ ոյ-
լոց , նախ ինքն առցէ զեւրատ յայլոց :

Ծ Խրատք խմասանոց՝ թէև խստագոյն
թունին , բոյց օգտակար են յոյժ . որպի դեղք
բժշկաց՝ թէպէտ և դառն իցեն , բոյց առող
ջարար են հիւանդաց :

Դ Կաւազան խրատու պիտոյ է նշ , որք ոչ

զգաստանան բանիւ խրատու . զի ըստ առաջին՝ որ ոչ ունկամբ՝ լսէ զբան , լսէ թիւ կամբ՝ մինչ ըմպէ գան :

թ Որ կարգեալ է ուսուցիչ այլոց՝ զորս ոչ գիտեն նոքա , ջանասցէ և ինքն ուսանիլ յայլոց զորս ոչն գիտէ . ապա թէ ինքն չունի փոյթ ուսանելոյ , յայտ է թէ և ոչ այլոց ջանայ ուսուցանել . զի որ զօդուտն անձին ոչ խընդրէ , ոչ ընաւ ինդրէ զօդուտն այլոց : Ո՞անաւանդ զի ոչ է նմա բաւական գիտել զգիտութին , այլև գիտել զկերպն ուսուցանելոյ . ապա թէ ոչ աշխատի բազում , և շահի սակաւ :

չ Դասատուք եթէ ճշգելով ուսուցանեն աշակերտաց իւրեանց զգիտութի . յաւէտ քան զժլատս ընդունելոց են զդատաստան . զի ժը լատք երկնչին ծախել զարծաթ՚ի պէտս , կամ ընձեռել ինչ կարօտելոց գիտելով՝ թէ որչափ ինչ տան այլոց , այնչափ պակասի ՚ի մթերից իւրեանց : Իսկ դասատուք չունին այդպիսի երկիւղ . զի նմանին լուսաւոր ճրագի , յուրմէ որչափ ճրագունք լուցանիցին , ոչ կորուսանէ ՚ի լուսոյ իւրմէ : Ո՞անաւանդ զի փորձառուեն և գիտեն , թէ դասատութիւն աճի գիւտութիւն իւրեանց՝ և ոչ եթէ նուազի . զի ըստ առածին՝ որ ուսուցանէ , և ինքն ուսանի :

ի այց զգոյշ լիցին դասատուք ուսուցանել նց զգիտութիւն , որք ուշիմեն մտզք՝ այլ յանդուգն բարուք . որպէ ոչ բարուգք առնեն , որք տան զսուր ՚ի ձեռս ըարաբոյից . զի բնաձիր

ուշիմութին՝ ստացական գիտութե զօրացեալ,
լինի ՚ի նո առիթ վնասու անձանց իւրեանց
և ընկերաց :

Ժա Պատուական ձիրք բնութե, ող սրամք
տութի, քաջ յիշողականութի, ճարտարութի
լեզուի, և այլն . որ գովութե պատճառք են
բարեկարդ իմաստնոց, դառնան ՚ի նախատինս
անգույշ իմաստնոց : Իմաստուն մոլե՛ հրեշէ
այլանդակ . զի ունի զգիտութի մարդույ, և
զգործ անբանից : Ասկան մարդիկ՝ եթէ ա
րեգակն սփուեսցէ զմեգ մթութե . և իմաս
տունն՝ եթէ արասցէ զգործ մոլեկան :

ԺԵ Անհնարին ցաւ է առն բարեսրտի տեսա
նել զտգէտս ամբարձեալ ՚ի պատիւ, և զիմաս
տունս՝ ներգեեալ և կոխան եղեալ : Ող ակն
ազնիւ՝ գեղեցիկ փայլե՛ ՚ի շարս անարդ քա
րանց . նոյնպէս սյր իմաստուն՝ ՚ի ժողովս տգի
տաց : Իմաստունն ոչ մեռանի, որ գրաւոր
աշխատութե թողու յիշատակ յերկըի :

* Իմաստութի բարե՛ առա շնորհս, և ձանաչել զօրէ
նըս՝ նոաց բարեաց է : || Առակ . ժկ . 15 :

* Իւնն չեր ատշնժամ լե շնորհս դն, եբրեւ աշէւ
համեմաւ լեցէ . գետել սող արծան իցէ չեղ երաժաշէր
ութէ՝ առա պատասխանի : || Առղ . դ . 6 :

* Փութացիք զանձն ու ընտիր հացա-ցանել առաջէ առ,
իշահ առանց անօթոց . ուղէղ համառօտէլ շբանն ձըլ
ձարբութե : || Է Տիմ . Է . 15 :

ԳԼ. Է

ա ՞ սոյր՝ որ բարւոք կըթէ զորդիս իւր
 'ի կենդանութե, յաւերժացուցանէ զվիշատակ
 իւր զենի մահուան։ Աարի կենցաղավարութի
 որդւոյ կենդանույ, փառաւոր առնէ զհամը
 լաւ հօրն մեռելոյ։

Ե ՞ Օնօղք՝ 'ի մեռանիլ իւրեանց եթէ
 թողցեն զորդիս իւրեանց աղքատ՝ բոյց իմաս
 տուն, բազում ընչեց ժառնդորդս առնեն զնուն.
 քան թէ թողուցուն հարուստ՝ բոյց տգետ։

Դ Եթէ ոչ կամիս տրտմիլ՝ 'ի վը զաւակաց
 քոց, տրտմեցն զնուն ՚ի մանկութե իւրեանց յան
 գիմանութիւն և սաստիւք։ Ո՛չ այնքան վիշտէ
 տեսանել զորդին վաղամեռիկ, որքան տեսա
 նել զնա չարաձախիկ։

Դ Ե ՞ Անօգուտէ հօր կըթել զորդին ՚ի վարս
 բարիս, եթէ մայրն թոյլ տայ նմա սովորիլ՝ 'ի
 չարիս։

Ե Որ զորդին իւր փափկութիւն սնուցա
 նէ, ՚ի տեղի կաթին թոյն արբուցանէ. զի
 մանկական փափկութին ՚ի զարգանալ հասա
 կին առաւել քան զթոյն վասակ։ Անգութէ
 մայրն, եթէ ոչ սնուցանէ զորդի իւր. բոյց
 առաւել անդութէ, եթէ սնուցանէ փափ
 կութեամբ։

Ղ Փափկութին ՚ի մանուկս՝ է իբրև փուշ
 կակուղ. բոյց որքան մեծանայ մանուկն՝ այն

քան կարծրանոյ և նա , մինչեւ խոյթել առ
որս մերձենայ :

Է ԾԱՆՈՂՔ ԵԹԵ իցեն առ որդիս իւրենց
կարի բազմագութ , որդիք նց լինին առ նոսա
իսպառ անգութ : || Եկըն հայրական դառնոյց
՚ի թշնամութ , եթէ ներելով յանցանաց զաւա
կին՝ պատճառս տայ անդրէն մեղանչելոյ:

Ը Խորթ մայր՝ իրաւամք կոչի այն ծնող,
որ գիտէ ծնանիլ զորդիս՝ այլ ոչ գիտէ բարւոք
կրթուք մնուցանել . նաև է մայր հարազատ՝ որ
գիտէ ծնանիլ միանգամայն և մնուցանել ՚ի
համեստ վարս :

Ծ Ո՞ անկունք առաւել ուսանին ՚ի մարց
քան ՚ի հարց . զի մայրենի դաստիարակութեք
մնանին մինչեւ ՚ի զարգանալ իւրեանց . ապա
պարուսին մարդք բարիոք կրթել զմանկունս իւր
եանց . զի մի՛յետոյ լացցեն ՚ի վո՞ կենդանի որդ
ւոյն առաւել՝ քան ՚ի վո՞ մեռեալ զաւակին :

Ժ Պարտական են ծնողք կրթել զմանկու
նըս իւրեանց ՚ի բարի վարս՝ հոգեշահ խրա
տուք , և օրինակօք առապքինսգործ քաղաքաւ
վարուել իւրենց . քանզի մատաղ հասակն ման
կական՝ թէ և բնական խառնուածով իցէ բա
րի , մնանելու վե ՚ի մէջ չարաբարոյից , և տեսուք
անբարի կենցաղավարութե ծնողաց իւրոց ,
լինի վատթար և մոլիք :

Ժ ա ՚ լամասինք հօր չարաբարոյի ծանրա
նոյ չարաչար վարուք որդւոյ իւրոյ . զի ՚ի հօ
րէն ուսաւ լինել չար :

ԺՇ ՚ՕՆՈՂՔ՝ արժանի են նախատանաց և պատժոց, որ զօրդիս իւրեանց թողուն շրջել անգործ :

ԺՇ ՚ՕՆՈՂՔ որ անփոյթ լինին, և ոչ տան զօրդիս իւրեանց յուսումն գիտութե՛ զի լի նիցին այր բարի, և ոչ յարհեսաս կարեռու՝ զի շահեսցին զպէտս անձանց, պարտաւոր են գատաստանի . զի ինքեանք գտանին պատճառ անհրահանգ և անգործ լինելոյ որդւոց իւրեանց :

ԺՇ ՚Ապականին ձուք, յորժամ թխսամայրն թողու անխնամ, և շրջի ըստ հաճոյս իւր . ան պիտան լինին մանկունք, յորժամ ծնողք ոչ պահեն զնս ընդ թեզք իւրեանց . այլ անհոգ եղեալ զնոցանէ, ինդրեն զգիւրուի անձանց :

գելցեն . բայց նոքա որք զերծուցին զօձիս
իւրեանց ՚ի ձեռաց աշխարհի , ո՛չ երբեք դառ
նան յետս ըմբռնիլ ՚ի նմանէ . ոյլ երթան
անդարձ ընդոր առաջնորդեն արդիւնք գոր
ծոց իւրեանց :

Ե Որ գանգատի զաշխարհէ , կամէ խե-
լագար , կամ նորոգ զգաստացեալ ՚ի խելագա-
րութէ . զի իւրաքանչիւրոք յիւրոց կրից առա-
ւել վեասի քան թէ յաշխարհէ : Աւ զինչ
իցէ աշխարհ , բայց եթէ բովանդակութ զգալի
գոյութէց որ յերկինս , և որ յերկրի . և աչա-
պյա ամ արարածք նոյ են բարի , և չիք ինչ ՚ի
նոսա խոտան :

Օ կ սկզբնատարերքս՝ հող , և ջուր , և օդ ,
և հուր , բաղադրութէ ընդ միմեանս , և յա-
տուկ զօրութէ՝ որ հարկաւ յառաջ գայ ՚ի
բաղադրութէ իւրեանց , տարրացուցանեն ըզ
կազմուած մարդոյ . և մարմինն բանական
հոգւով շարժի ՚ի դործ : Աստեղք արբանե-
կեն ՚ի լուսաւորութի՞ տունչեան և գիշերոյ :
Երկիր ծառոյէ ՚ի սնունդ և յաճումն կեն-
դանեաց և բուսոց՝ ՚ի դարման մարդկան :
Դազանք և սողունք նպաստեն ՚ի բժշկութի՞
մարմնոյ , և յայլ պէտս : Ապա զոյր ուրուք
դանդատիցէ մարդ . ո՛չ աւանիկ ամենեքին օդ .

տակար են և պիտանիք ուրեմն վնասի մարդ՝ ՚ի
մոլար դատողութենէ իւրմէ , և յանկարգ
բաղձանաց :

Ասկին բարի է , մինչդեռ կոյ յընդերս երկ
րի . բայց ագահութին եգիտ զնա գործիք
տանջանաց : **Վ**ինին անմեղէ , ցորչափ կոյ ՚ի
կարասի . սակայն արբեցութին արար զնա պատ
ճառ խելագարութեն : **Ա**երակուր ՚ի սնունդ
մարդկան տուաւ . իսկ որկորստութին դար
ձոյց զնա ՚ի պէտս զեղլսութեն : **Հ**անդերձ ՚ի
ծածկութին էառ զնա ՚ի նիւթ պՃնութեն : **Տ**ուն
վ՛ընկերութեն կազմեցաւ . բայց ամբարտա
ւանութին ընդարձակեաց զնա յաճումն սը
նափառութեն : **Յ**անկութին ՚ի պահպանութի
տեսակի բնաւորեցաւ . և անբարեխառնութին
փոխաբերեաց զնա յանկարգ բաղձանս շնութեն :

Տեսեր ո՛վ մարդ՝ դու ես որ զբարի և զօդ
տակար պարգևան ոյ դարձուցեր ՚ի չարիս՝ ՚ի
վնաս անձինքո . դու ես մասն աշխարհի , և
կոչիս փոքր աշխարհ . բայց անկարդութեդ
լինիս մեծ չար աշխարհի : **Վ**ազուր դանդա
աիս զաշխարհէ . զի դու ես որ տանջես զքեզ
իւրեւ զթշնամի , գուցէ առաւել ես քան ըզ
թշնամի . զի օտար թշնամին ոչ այնչափ կարէ
չարչարել զքեզ , որչափ դու չարչարես . հապա
զդաստացիր ՚ի կամնաոր խելագարութէդ ,
և մի՛ այսուհետեւ բամբասեր զանմեղ արա
րածս ոյ , այլ միայն զքեզ :

Ե Անմիտն՝ զըսրիսն զոր հարկ էր կրել
պատճառաւ անկարգութե կրից իւրոց , ար-
կանէ ՚ի մը երկնից , և բողոքէ զնմանէ . և ոչ
յայն հայի , թէ որ անկանի ՚ի հուր՝ այրի . և
որ թարթափի ՚ի փուշ՝ խոցոտի . ուստի և ամ
որ անկարգ ունի զկիրս՝ գործէ զմոլութիս .
և որ գործէ զմոլութիս՝ ՚ի հարկէ վնասի :

Ե Ամենայն որ տանջի և տառապի , կամ
մեղապարտ է , կամ անմեղ . եթէ իցէ մեղա-
պարտ՝ պարտի համբերել , զի արդար իրա-
ւամբ կրէ զպատիժ յանցանացն՝ որով յան-
ցեաւ : Իսկ եթէ իցէ անմեղ՝ պարտի և նա
համբերել , զի կայ և մնայ նմա հատուցումն
՚ի տնէ վն խոշոտանգանացն , որով խոշոտանգի
տարապարտուց յանիրաւութ մարդկան : Ապա
չէ արժան տառապելոյն՝ եթէ իցէ իրաւամբք,
և եթէ յանիրաւի , գանգատել զտարերաց՝
կամ զայ , ոյլ համբերութք տանիլ . ածել ըզ
մտաւ՝ թէ վիշտք և տառապանք աշխարհիս
այսորիկ փոփոխական են և անցաւոր , և ա-
ռիթ մշտնջենաւոր հանգատեան և փառաց :

Թ Յանիրաւի տրտնջէ ոք զայ , յորժամ
չքաւորի , կամ հիւանդանայ , կամ ՚ի ձախո-
ղութի ինչ անկանի . զի ինչք՝ առողջութի՝ և
յաջողուածք ՚ի տնէ նոյ յաւանդ տուեալ են
մարդկան : Ուստի մինչ պահանջէ և առնու-
զաւանդն իւր , չէ արժան ումեք տրտմիլ կամ
տրտնջել . ոյլ մանաւանդ պարտի համբերել
գոհութ , որ զամս բազումն ձրիապս վայելեաց

՚ի պարդես նը . որով քաղցրացուցանէ զկամն
տեառն՝ տալ անդրէն զոր էառ , եթէ օդուտ
ինչ իցէ նմին :

Ժ Ա Պ Ր Դ Ի Կ ՝ զոր միանդամ ունին յաշ
խարհի ինչք և մեծութիք , ստացուածք և
զաւակք , ոչ են նոցա տեարք՝ այլ աւանդա
պահք . զի այ է ամ , որ բաժանէ իւրաքանչիւր
որպէս և ախորժէ . ապա չունի ոք իրաւունս
տրտնջել զայ , յորժամ առնու ՚ի նմանէ զա
ւանդ իւր , և տոյ այլում : Օ ի մինչ տեսա
նէ ած , թէ ոչ բարւոք վարի ոք նոքքք , կամ
ոչ կամի վարիլ , առնու ՚ի նմանէ զաւանդն
իւր՝ և տոյ ընկերին : Խւ եթէ նա բարւոք
վարեսցի , յաւելու տալ զայլ ևս բարիս . ապա
թէ ոչ առնու ՚ի նմանէ ևս , և տոյ այլում :
Ուստի եթէ ոք կամի ընդ երկար վայելել ՚ի
պարգեսն այ , ՚ի վար արկցէ զնա ըստ կամացն
այ . իսկ եթէ չարաչար վարեսցէ , կամմառա
բերեսցէ վարիլ , անդրէն տեսանէ զանձն
ունայնացեալ :

Ժ Ա Պ ՚ի կեանս յոյս սգոյ և տառապի , ՚ի
հանդերձեալ կեանսն ուրախանայ և հանգչի .
վս այսորիկ կեանք աշխարհիս ոչ սահմանեցաւ
յայ լինել երկարատե , զի մի' մարդիկ յուսա
բեկ լինիցին ՚ի կրելոյ զվիշտս ՚ի ժամանակս
ձիգս . այլ արարաւ սուղ և կարձատե , զի ա
սանց տրտնջանաց կարասցեն իսպառ համբե
րել . և սակաւորեայ ժուժկալութիւն նեղու
թեանցն , զյուիտենականն ժառանգեսցեն

Հանգիստ և խնդութիւն :

ԺԷ Խշանկ աշխարհի՝ ՚ի պատժել իւրեանց
զմեղապարաս, հրատարակեն զյանցանս նց. զի
մի' ասիցեն մարդիկ, թէ յանիրաւի դատա
պարտեցին. Խակ ած՝ վն զի է մարդասէր և
արդար յամի, յորժամձախողութէ իւկը պա
տուհասէ զյանցաւորն, չկամի յայտնի լինել
յանցուածոց նը. զի մի' յանցաւորն վատա
համբաւեսցի ՚ի մէջ մարդկան. քանզի խշանկ
աշխարհի յանձինս իւրեանց խնայեն, խոկ ած
յանձն մեղապարտին :

ԺԷ ՈՌ ՚Ե ԳՈՒ լինի ընդ վիճակ իւր, մե
ղանչէ ընդ դէմտեսչութեն այ, որ ըստ ան
քըննին խորհրդոց իւրոց խնամէ զամենեսին
քաղցրութէ. ոմանց թոյլ առյ աղքատանալ,
և ոմանց մեծանալ՝ առ իւրաքանչիւր օգուտ:
Ո՞ի զի կառավարութի ընդհանուր աշխար
հի պահանջէ ունել կարդ ինչ յառաջնութե
և յետնութե ըստ խշանութե, ըստ փար
թամութե, ըստ խոհեմութե, ըստ քաջութե,
և ըստ այլեւս հանգամանաց. ո՞ղ զի փոփոխակի
օգնելով միմեանց՝ ՚ի բարւոք խաղաղութե վա
րեսցեն զկենցաղս իւրեանց: Խռ միւս՝ զի
տարբերութի և զանազանութի կարդաց՝ ՚Ե
սակաւ նպաստէ իւրաքանչիւր ումեք առ յա
ւիտենական վարձուցն արժանաւորութիւն:
Ո՞ ի առաւելեն հոգեսոր և մարմնաւոր բա
րութէ երախտաւոր լինելով առ նուազն. և
նուազն՝ երախտադէտ գոլովբարերաւեցն:

Երկաքանչիւր նոքա արժանաւորին միանդա
մայն յաւիտենական վարձուց : Ուստի եթէ
իշխանաւորքն դժգոհ լինիցին զվիճակէ իւր
եանց վ՛ ծանրութե զբաղանոց՝ և բազմա
վաստակ հոգոց , և հպատակքն՝ վասն աղքա
տութե իւրեանց՝ կամ քրտնաջան աշխատու
թեանցն , մեղսնչեն արդարեւ ընդդէմընդհա
նուր կարգի ածային նախախնամութե :

ԺԴ Յոլովակի երկնչին մարդիկ՝ յորմէ չէր
արժան երկնչիլ . և տրտմին՝ առ որ ո՛չ պիտեր
տրտմութի . զի երկնչին ՚ի ձախողութեց՝ յոր
ժամտեսանեն մերձենալ . և տրտմին՝ յորժամ
հասանեն չարիք : Խւ զայն ո՛չ ածեն զմտաւ ,
թէ ձախորդութիք անցաւորք են և փոփո
խականիք . և չէ արժան մարդոյ՝ որ վեճակեալ
է անմահական հոգւոյ , երկնչիլ վեհերոտու
թեամք , և տրտմիլ ցաւօք :

ԺԵ Վ'չենչեն զարմանիք , զի հոգան և տրրտ
մին մարդիկ ընդկորուստ յաջողութե . իսկ
ընդկորուստ անմեղութե ինչ ո՛չ հոգան . զի
գլխովին մարմին եղեալ՝ զմարմնականսն միայն
տեսանեն , և ո՛չինչ փոյթէ նց զածայնոց և
զշոդեորաց . ապա արժանապէս զըկին աստ ՚ի
մարմնաւոր բարեաց , և անդ ՚ի հոգեւոր փոց :

ԺՊ Ու ծառոյէ ոյ միամտութք սրտին ՚ի
յաջողութե իւրում , գտանէ զած ձեռնտու
և օգնական ՚ի ձախորդութե իւրում : Վ'արդիկ
մինչեւ իցեն թողեալ զած բազում անդամ ,
ած ո՛չ թողու զնն միանդամ :

Երբեմն թոյլ տոյց ած խարդաւանիլ ու
մեք՝ ի վտանգս ինչ, զե փոքր մի խրատեալ
յուղութ գայցէ . և մինչ տեսանհթէ այնու-
ոչ զբաստանայ , թողու հանդիպիլ առաւել
ժանունց և դժնդակ վշտաց . և եթէ նոքիմքք
ևս ոչինչ խրատեացի , բարձիթողի առնէ ըզ
նա . և հասանէ նմա որպէս արագ սուրհանդակ
անհնարին կորուստ և ապականութի :

ԺԵ Պատրիութեա և վիշտք խթան տուան
մարդոյ զարթնուլ՝ թմբութե, և առնուլ
՚ի միտ, թէ աշխարհս ոչ է տեղի երջանկուե
այլ նեղութե և կրից :

ԺԵ ՈՐ յաշխարհի քաղաքավալարի, անհնար է
մալ անփոփոխ յիւրում վեճակի . ապա թէ
ոչ պարտ է աշխարհի յեղափոխել զիւրն բը
նութի . զի յոլովակի տայ աշխարհ միով ձե-
ռամբ, և բառնայ միւսովն . միով ակամբն ու-
րախացուցանէ, և միւսովն լացուցանէ : Ապա
չէ արժան փեանալ՝ յորժամ տայ ումեք զյա-
ջողուածս, և ոչ տրտմիլ՝ յորժամբառնայ զնո-
սին . զի այս է բնութի նր՝ լինել դիւրափո-
փոխ : ՈՐ յուսայ մալ միշտ 'ի յաջողութեն,
տիրեսցէ նախ 'ի վը բնութեն և ժամանակի .
և զի չէ բաւական սյդմ, ապա մի՛ վսուահասցի
'ի յաջողուածս զոր ունի ոք :

ԺԵ Անցեալ յաջողութիւք յիշատակեալ 'ի
ձախողութե՛ բազմապատկեն զվիշտսն . և ան-
ցեալ ձախողութիւք յիշատակեալ 'ի յաջողու-
թե՛ , առաւելուն զբերկրանան . բայց պարտ է

զգաստ կալ յերկոսին ևս , զի՞ գուցէ յանդողնածք բարեդիպութեց՝ յանդգնութեն եղեցին առիթ . և ձախողութիք արկածից՝ տեղի տացեն յուսահատութե :

Ե՛ Ամէ պակասի ձիւն և անձրեւ ՚ի ձմերան , ցամաքին աղբիւրք յամարան . թէ պակասի իսպառ արկածք ձախողութե ՚ի մարդկանէ , լուեն լեզուք ՚ի գոչանալոյ ՚ի յաջողութե :

Ի՞ Յաջողութիք չարաց սուղէ և անհաստատ . զի ըստ օրինակի փայլատականց՝ կամ ասուպ աստեղաց՝ փոքր մի փայլին փառք , բայց անդէն անկանին և անհետանան : Լոյն երբեմն թոյլ տայ չարաց ունել զյաջողուածս , և գործել զանիրաւուի , վս բարւոյ իրիք վախճանի . ող զի կրթեսցէ զառաքինիս արիաբար տանել վշտաց , որովաճին վարձք նց և փառք :

Ե՛ Դժբաղդութիք և անյաջողելք՝ բազում անդամ այնպէս անզգայ առնեն զմարդիկ , մինչզի ոչ թողուն նմա ձանաչել զօդուտն անձին իւրոյ : Բայց որ իմաստունէ և նախատես՝ ոչ իսպառ լքանի . զի գիտէ բարեխառնել զտրտմութին . և մնալ զգաստ և անընկճելի : Աշան է անհաստատ մտաց վըրդովիլ յիրս՝ որք պատահին ընդդէմ կարծեաց . քանզի հաստատուն միտք ՚ի փոփոխիլ դիպուածոց՝ մնայ անփոփոխ :

Ե՛ Խոկումն դիւրափոփոխ վեճակի կենաղայց՝ խոնարհեցուցանէ զյանդգնութիք հըպարտացելոցն բարեբաղդուք . և զօրացուցանէ

զլքումն սրտի վհատելոցն դժբաղդութե՛ :
 Ո կ ածեալ՝ իյուշ՝ թէ յաջողուած և ձաւ
 խողութի իբրև զանիւս սրավար կառաց ան
 դուշ հոլովեալ՝ փոփոխակի յաջորդեն ՚ի տե-
 ղե միմեանց . փարթամն վիջանի ՚ի չափաւո-
 րութի ՚ի յաջողութե՛ իւրում . և նուասոն
 քաջալերի ՚ի ձախորդութե՛ իւրում . և եր-
 կոքին ևս հրաժեշտ տուեալ՝ ՚ի ծայրայեղի խո-
 տորմանց՝ գան ՚ի միջասահմանութի յորում
 կայանայ առաքինութին :

Ե՛՛ Ար ՚ի մեծութե՛ անկանի ՚ի թշուա-
 ռութի , մնայ յանձն առնուլ զմին յերկուց
 աստի . կամ մեռանիլ ՚ի տրտմութե՛ , կամ յաղ
 թել տրտմութե՛ : Ճւ քանզի մահուամբ իւ-
 րով ո՛չ կարէ գտանել զմեծութի իւր զոր
 կորոյս . ապա լսու է նմա արհամարհել զամ
 վիշտս , և մնալ կենդանի . յորում յուսալի
 է հասանիլ անդրէն յառաջին իւր բարե-
 քաղդութիւն :

Ե՛՛ Աւրախութին յաւետ ներդործէ ՚ի
 լեզուի քան ՚ի սրտի , և տրտմութին՝ յաւետ
 ՚ի սրտի քան ՚ի լեզուի . զի ուրախն առաւել
 խօսի՝ քան զոր ունի ՚ի սրտի զբերկրանս . և
 տրտմեալն նուալ խօսի՝ քան զոր կրէ ՚ի սրտ
 տի զցաւս . նա՝ բազում անգամ չկարէ խօսիլ
 բնաւ՝ որ տրտմագին է յոյժ :

Հրտմեալն յաւետ հանգչի ՚ի վշտաց պատ-
 մելով զցաւս սրտի իւրոյ՝ քան լսելով յայլոց
 զըանա սփոփանաց :

ի կ լ լ յ մ ի մ ա ս տ ո ւ ն հ ա մ բ ե ր է դ ժ բ ա ղ դ ու թ ե ա ն ց . զ ե վ ս ա յ ն ո ւ ս ա ն ի ն մ ա ր դ ի կ զ ի մ ա ս տ ո ւ թ ի , զ ե կ ա ր օ ղ լ ի ն ի ց ի ն հ ա մ բ ե ր ե լ ն ե ղ ու թ ե ա ն ց . ա պ ա ո ր ո չ գ ի տ է հ ա մ բ ե ր ե լ չ է ի մ ա ս տ ո ւ ն : Ո ր ո կ ո ս կ ի ք ն ն ի ՚ ի բ ո վ ս , ն ո յ ն պ է ս և ի մ ա ս տ ո ւ ն ն ՚ ի ձ ա խ ո ղ դ ի պ ո ւ ա ծ ս :

Ա յ ն ե ր բ ե մ ն թ ո յ լ տ ա յ ի մ ա ս ա ն ո յ ն ա ն կ ա ն ի լ ՚ ի վ տ ա ն գ ս , ա յ լ ո չ թ ո ղ ու կ ո ր ն չ ի լ . բ ո յ ց մ ի ա յ ն զ ե փ ո ր ձ ա ռ ո ւ թ ի վ տ ա ն գ ի ն ա ռ ա ւ ե լ ե ս ի մ ա ս տ ո ւ ն լ ի ն ի ց ի և զ գ ո յ շ :

Ո ր կ ե ն ց ա ղ ա վ ա ր ի ՚ ի մ է ջ բ ա ղ մ ո ւ թ ե , լ ի ն ի ց ի զ գ ո ւ շ ա ւ ո ր և ն ա խ ա տ ե ս . ո ր ո կ զ ե ՚ ի յ ե շ ա կ ա ր ծ դ ի պ ո ւ ա ծ ս ո չ ի ն ք ն վ ը դ ո վ ե ս ց ի , և ո չ զ ո ք վ ը դ ո վ ե ս ց ի :

Ի է զ ա խ ո ր դ ո ւ թ ի ն է մ ե ծ դ ա ս տ ի ա ր ա կ . զ ե զ ո ր ո չ գ ի տ ե ն մ ա ր դ ի կ ՚ ի բ ա ր ե բ ա ղ դ ո ւ թ ե , զ ա յ ն ա մ հ ա ր կ ա ւ ո ւ ս ա ն ի ն ՚ ի ն ե ղ ո ւ թ ե ի ւ ր ե ա ն ց . զ ե ո ր չ է ա ն կ ե ա լ ՚ ի ձ ա խ ո ղ ո ւ թ ի ս , ո չ գ ի տ է ի ն չ . զ ե ո չ ճ ա ն ա չ է զ ա յ լ ս , և ո չ զ ե ւ ր ի ն ք ն՝ ո չ զ ա ր ս , և ո չ զ բ ա ր ի ս :

Ի ը Բ ա ղ ո ւ մ ա ն գ ա մ օ գ տ ի ո ք ՚ ի ս խ ա լ ա ն ա ց ի ւ ր ո ց ք ա ն ՚ ի բ ա ր ե բ ա ս տ ի կ գ ո ր ծ ո ց : Օ ի ՚ ի մ ե ծ ա մ ե ծ գ ո ր ծ ո ց , և ՚ ի յ ա ջ ո ղ դ ի պ ո ւ ա ծ ո ց հ պ ա ր ո ւ ա ն ա ց ո ք , և կ ո ր ո ւ ս ա ն է զ ի մ ա ս տ ո ւ թ ի . ի ս կ ՚ ի ս խ ա լ ա ն ա ց ի ւ ր ո ց լ ի ն ի խ ո հ ա կ ա ն և ը զ գ ո յ շ . ո ւ ս ա ն ի ճ ա ն ա չ է լ զ ա փ ա ն ձ ի ն . և ո չ լ ի ն ե լ յ ա ն ձ ն ա պ ա ս տ ա ն : Օ ի բ ա ր ե բ ա ղ դ յ ա ջ ո ղ ո ւ ա ծ ք յ ա փ շ տ ա կ ե ն զ մ ի տ ա . ի ս կ ձ ա խ ո ղ պ ա ս տ ա հ ա ր ք վ ե ր ա ծ ե ն ՚ ի զ գ ա ս տ ո ւ թ ի : Ն շ ա ն

Բարի ցուցանէ , որ ամբաստան լինի զանձնէ . զի երեխ՝ թէ զգաստացեալ իցէ ՚ի նախկին անուղղայ գնացից իւրոց :

Ի՞թ Զախողակի դիպուածք՝ որ յառաջաւ գոյն պատահեալ են այլոց , ոչ սակաւ իրատեն զմարդիկ և զգաստացուցանեն , մանաւանդ զիշխանս և զկառավարս . ածեալ զմուաւ , թէ այն դժնդակ վախճան մնարթ է պատահիլ և ինքեանց , որպ պատահեցաւ այլոց :

Ե Փորձառութին իրաց անցելոց՝ հմուտի գործոց ներկայից՝ տայ ծանօթութին ապա գոյից : Ո չ որ զփորձ առեալ իցէ ձախողակի դիպուածոց և վշտաց , քանի գիտէ կառավարելքան զայն՝ որ ոչ կրեաց ինչ ձախողակ :

Զախողութին յաւելու զփառս մեծամեծարանց . զի այնու լինին կատարեալ և զգոյշ յամենայնի :

Ես ԱՇ երբեմն ձախողակի պատահարգք իսը րատէ զմարդ . որ յաղթեալ յանկարգ բաղձանաց՝ մերձ է յանկումն . որպ զի զգաստացի , և ՚ի բաց փախիցէ յայնպիսի ցանկութէ :

Որ չէ առեալ զփորձ տկարութեն իւրոյ՝ և բռնութեն կրից՝ չէ տակաւին իմաստուն . զի ոչ ձանացէ զանձն իւր , և ոչ գիտէ պաշտպանել :

Եւ Ա հատիլն ՚ի ձախողակս ծանրացուցանէ զկեցիու վտանգին , և դժուարին գործէ զելս նը . իսկ արիութին թեթեացուցանէ զվտանգն , և տայ գտանել զելսն : Ա իշոք և նեղութիք փոխին յանհնարին թշուառութի ,

յորժամհատանի յոյս, և բառնի համբերութիւն
Յաղթիլ՝ ի ձախողութեց՝ ոչ է գործ արիա
կան սրտի, այլ կանանցաբարոյի :

ԵՌ Ո՛չ զերծանի յիրաւացի նախատանաց և
ի վասուէ, որ վատթար երկիւղիւն կամպը
զերդութեց յետս կասի յայնմանէ, զոր պա
հանջէ վիճակ անձին իւրոյ առնել, թէ ի բա
բեբաղդութեց և թէ ի դժբաղդութեց :

Ա տանգ մինչ հեռի է, պարտ է նախատես
լինել և երկնչիլ. իսկ յորժամ գայ հասանէ,
պարտ է յայնժամ ստանալ զարիական սիրտ,
մեծ քան զվոտանդն որ առաջի կայ, և քա
ջութեց արհամարհել :

ԵՌ Զախողութիւն հրահանգեն զմարդ լի
նել բարեգութ և կարեկից վշտացելոց. ուս
տի և մեծատունք՝ որք չեն ճաշակեալ ըզ
դառնութիւն ձախողութեց, հաւատան զանձինա
գոլ ած. և ոչինչ համարին զմարդիկ. և կամին
ծառայեցուցանել ախտից իւրեանց զամենե
սին : Եր յորժամ լսեն զաղքատութիւն, զօ
տարութիւն, զվեշտ, ոչ իմանան թէ զի՞նչ իցեն
նոքին. և իբրև երազ թուի նց : Ա. Ա. յոր
ժամ զփորձ առնուն ձախողութեց, փոխարկի
խստութիւն ապառաժ սրտից նց՝ ի սիրտ մարմնե
զեն. և զգան՝ թէ և նոքա մարդիկ են նման
ինքեանց . և վարին ընդ նու գթութեց :

ԵՌ Ո՛չ գիտէ կարեկից լինել փորձանաւո
րաց և նժդէ չից, որ չէ կրեալ զձախողութիւն
և զտարութիւն: զի որ առեալ է զփորձ դըժ-

բաղդութե ինչ, գիտէ օգնել վտանգելոց :

Եւ Ի արեվիճակ է այն, որ երբեմն սիալել
իցէ՝ և դարձեալ անդրէն ՚ի զգաստութիւն . զե
խրատեալ նոքօք, այնուհետեւ ուղղէ զանձն,
և ուսանի թէ զինչ պարտ է առնել, և զի
արդ վարիլ :

Փորձառութիւն վտանգի՝ անօգուտ իմն է
մեղկ և անզգայ անձանց . զի և այնու ո՛չու
սանին զգաստանալ :

Եւ Եթէ ոք զերէ իմեքէ խորհի, արժան է
յաւէտ նախատես լինել ձախողակի գիպուա
ծոցն, որ կարէ պատահիլ յընթացս գոր
ծոցն : Օ ի ճշմարիտ խոյեմութիւն կայանայ ՚ի
տեսանել յառաջագոյն զամ վտանգս . և ճշմա
րիտ արիութիւն երեխ յարհամարհել զնոսա
մինչ ընդ առաջ ելցեն . զի որ ո՛չ տեսանէ յա
ռաջագոյն զերելի վտանգս, ո՛չ կարէ ու
նիլ զբաւական վստահութիւն ընդ դէմ կալ,
և զերծանիլ անվխա :

Եւ ՚Կիւրին է խրատել զանուղղայս, կամ
համովել զբարկացօղս, կամ քաջալերել զվշա
տեալս . բայց դժուարին է յոյժ՝ զոր ասէն
բանիւ, կատարել գործով . զի մարդիկ քաջ
գիտեն ուսուցանել այլոց . բայց ինքեանիք տը
կարանան առնել : Օ ի աւանիկ կարէ ոք
տեսանել զերեսս այլոց, և նշմարել զբիծան
որ ՚ի նոն . իսկ առ տեսիլ երեսաց իւրոց՝ պէտս
ունի միջնորդութե հայելոյ : Արդ՝ հայելի
են փորձառութիւնկ պէս պէս գիպուածոց .

որովք ուսանի ոք խրատիլ, համոզել, և քաջալերիլ. և ոչ կարօտի ուսանիլ յայլոց։ Իսկ որ չէ փորձառու, պէտք ունի իմաստնոցն խրատաբանութեց. որոց եթէ անլուր գտանիցի, վարանի ՚ի խորհուրդս, և յուսահատեալ վտանգի։

‘Ա, որ ոչ գիտէ միմիթարել զանձն ՚ի ձախորդութե իւրում, վարանի միշտ հոգովք տառապանաց. և բազումանդամ անկանի ՚ի յուսահատութի, որ մեծ է քան զամ չարիս։ Քանզի չառնու ՚ի միտ, եթէ կեանք աշխարհիս այսորիիկ անդուլ հոլովի ՚ի մէջ յաջողութե և ձախողութե, և ոչ ՚ի մինն կամ ՚ի միւսն դադարի. զի աշխարհս ոչ եղեւ երաշխաւոր պահել զմարդիկ միշտ ՚ի բարեբաղդութե. և ոչ երբեք խոստացաւ տալ ամենեցուն զյաջողուածս։

Եւ զի չէ հաստատուն ու եիցէ վիճակ յորում գտանին մարդիկ. վայ ոչ է պարտ յուսահատիլ ՚ի ձախողակս, և ոչ յապահովի և յանհոգս կալ ՚ի յաջողուածս. զի մարթ է գըլորիլ ձիոյ ՚ի հարթայառակ դաշտի՝ մինչ անվեհեր արշաւէ։ Եւ որովհետեւ երկաքանչիւր սոքա յաջողութի և ձախողուի՝ յողդողդուն են և փոփոխական, և չունին յարատեւութի. ապա մնայ մարդոյ զգաստ լինել ՚ի յաջողուածս, և արի ՚ի ձախողակս։

Ըթ Պատրողական է կենցաղս և խաբուսիկ. զի զբարեբաղդութի և զմեծութի վաճառէ

անարժանից դիւրագին, և զւանայ յարժանաց
շորաց . որով պատրեալ անգույցք՝ յօրանան ՚ի
մարմնական հեշտութին, և ՚ի զըօսանս ուրա-
խութե : Բայց իբրև շընի անիւ բաղդին,
քաղցր հեշտութին փոխի ՚ի դառնութին և ՚ի
զգուանս . և ուրախութին ՚ի տրտմութի : Ուստի
ալնրտ է նախահոյեաց զգուշութ զուսպ ու-
նել զանձն . զի ծանր են տուգանք՝ որ պատրաս
տեալ ֆնան փոխանակ առօրեայ հեշտութեց :

Են Որ ՚չ շատացեալ յաջողութն զօր ու-
նի , ցանկոյ առաւելագունի . ՚ի պատահիլ ձա-
խողութ իմիք փութով ընկճի և յուսահատի :

Խա Վագերախտ է նա և տմարդի , որ զամն
բազումն վայելեալ ՚ի պարգևս ոյ , յանկանիլ
իւրում ՚ի ձախորդութի՝ վաղվարակի սկսանի
տրտնջել զտեառնէ , և լքանիլ :

Որ անտրտունջ համբերէ ձախողակ կրից,
է քաջայոյս և արի . իսկ որ տրտնջէ և գան-
գատի՝ երկըտ է և վեհերոտ :

Խէ Խմաստունք առաւել երկնչին ՚ի յաջո-
ղութե քան ՚ի ձախողութե . զի յաջողութին
բազում անգամ առնէ զոք յանդուդն՝ գահա-
վէժ լինել ՚ի վտանգս . իսկ ձախողութիւնն
առնէ զգուշաւոր և զգաստ , զի մի՛ միւսան-
գամ անկանիցի :

Օմանելիք ՚ի հուր արկեալ , լաւ ևս բու-
րեն զանուշահոտութիս իւրեանց . առաքի-
նիք ՚ի նեղութիս անկեալ , առաւել ևս ցու-
ցանեն զբարեմասնութիս իւրեանց :

ԽՇ ՈՐ ո՛չ ճանաչէ զօդուտ իւր և զվեսաս,
թշնամի է անձին իւրոյ . և արդարեւ ոմանք
անզգայեալ թանձր տգիտութէ , կամ յափրշ
տակեալ բուռն կրիւք՝ ո՛չ ճանաչեն զօդուտն
իւրեանց և զվեսաս . և բանին կամ գործով
իւրեանց գահավիժեալ զանձինս ՚ի վտանգ՝
գանգատին զայլոց՝ ասելով . այս ոք կամ այն՝
արար մեզ զթշնամութիս զայս . և ո՛չ գիտեն
եղելիքն, թէ ո՛չ ոք վեսաի՝ բայց եթէ յիւրմէ:
Ապա մի ոք մեղադիր լինիցի ոյլոյ՝ բայց միայն
անձին իւրոյ . ուշ դիցէ ճանաչել զօդուտ
կարն, զի արասցէ զայն . և զվեսսակարն, զի
խորշեացի ՚ի նմանէ . ոտք զի կարասցէ պահպատ
նել զանձն, և կալ յապահովի :

ԽՇ Զիք բժիշկ ճարտար՝ քան զհամբեւ
ըութին յապաքինել զցաւս քո . և ո՛չ ձեռն
զօրտուոր՝ ազատել ՚ի նեղութէ . և ո՛չ փար
թամ առատ՝ ՚ի լնուլ զքեզ բարեզք . և ո՛չ
բարեկամկարեկից՝ ՚ի փարատել զորտմութիս
քո . զի համբերութին ամանհարից է ճարակ .

Դժբաղդութիք՝ որչափ ակամայ տարեալ
լինին, այնքան առաւել ծանրանան :

ԽՇ Ամենայն վիշտ և նեղութի՝ որ ՚ի թոյլ
տալոյն ոյ գան ՚ի վը մարդոյ, է վըեժիւնդ
ըութի յառաջագոյն գործեալ մեղաց . զի որ
կամաւ մեղանչէ՝ պատժի ակամայ : Ապա որ
համբերէ խոնարհութէ հոգւոյ՝ զարդար ցա
սումն ածային դարձուցանէ ՚ի քաղցրութի,
և գտանէ զազատութի :

Համբերել վշտաց՝ և շնորհ այ :

Խղ Անմիտ է՝ որ կարծէ զթշնամին իւր
բարեկամ . և ոչ ճանաչէ՝ բայց եթէ յորժամ
վսասի ՚ի նմանէ . և յիրաւի եթէ չէր անմիտ,
գոնէ ՚ի նշանաց ինչ կառկածէր զնմանէ վա-
ղագոյն , և զգուշանայր անձին :

Ատոյդ իմն է , զի բազումեն չարք յաշ-
խարհի , որք զանազան կերպին նիւթեն ըզ
թշնամութի , և արկանեն զմարդիկ ՚ի վտանգո .
և զի յանհնարիցն է բառնալ զամենեսին , կամ
յուղութի ածել . ապա արժան է՝ որչափ
ինչ մարթ է՝ զգաստ և աչալուրջ կալ առ մնա-
լոյ անվնաս :

Ի՞սյց յետ կարելի զգուշութե եթէ պնա-
սեսցի ոք , պա՛րտ է տալ զայն հարկաւոր և
անյեղլի օրինաց բնութե և աշխարհի՝ ըստ
նախախնամութեն այ . ուր բազում ինչ իրու-
ղութիք բնականք կամ բարոյականք՝ որք մեզ
երեխն ըստ դիպաց՝ վս ոչ դիտելոյ մեր զպատ
ճառսն , հարկաւ պարտ էին լինել . զի այսպէս
պահանջէր զուգընթացութի պատճառացն՝
յորոց յառաջդան այնոքիկ գործք , եթէ օդ-
տակարք իցեն , և եթէ վսասակարք :

Խէ Ա՞եծ քաջութի է տանիլ յանկարծա-
հաս արկածից բաղդի , քան ընդդէմկալ յան
դուգն յարձակման թշնամեացն դրոհի :

Ա՞չ յաղթահարի ՚ի ձախորդուեց որ ունի
զխոնարհութի , զհամբերութի և զջնազան
դութի . զի երեքին սոքա անբաժան ընկեր են

միւնքանց . և իբրև երեքկղի առասան անխղելի
են ՚ի բունութե՛ :

Խը Ո՞ւ արդիկ՝ թէպէտ և յամժամ ՚ի նորու
նոր դիպուածս ձախողութե՛ց անկանին, բայց
կարծելով թէ համայն ձախորդութիք ան-
ցեալ գնացին, և առ յապայն միշտ յաջողութիք
յաջորդե՞ն, քաջոյոյս եղեալ ուրախանան . ոյլ
յորժամ ձախորդ դիպուածք դարձեալ ժաման
նեն, վաղվաղակի լքանին և տրտմին : Ի՞այց
սակայն ո՛չ երբէք պակասի յոյս յաջողութե՛ ՚ի
մարդոյ. և ո՛չ իսպառ վերջանան ձախորդութիք.
այսու յուսով միշտ խաբին մարդիկ, և դնեն
՚ի մաի ո՛չ ևս խաբիլ : Աւ թուի թէ այս յու
սադրութի յածուստ հաստեալ է ՚ի բնուիս մար
դոյ. ապա թէ ոչ՝ անդէն առժամանայն յուսաբեկ
եղեալ, ո՛չ ևս կարէին զանձինս միսիթարել :

Ի՞այց այր կատարեալ և իմաստուն՝ գիտե-
լու թէ ո՛չ պակասին նորանոր արկածք, հա-
նապաղ պատրաստէ զանձն ՚ի կրել զնոր փոր-
ձութի ինչ . և ՚ի գալ նորա՝ մնայ անխոռով և
անտրտում : Աւ եթէ առ ժամանակ մի աեղի
տունեալ ձախողութե՛ յաջորդէ յաջողութի,
սակաւին ո՛չ ուրախանայ . որովհետեւ գիտէ,
թէ յաջողութին դիւրասահ է և անհաստատ:
Ուստի և ՚ի նոյն յաջողութե՛ դարձեալ սպասէ
փորձութե՛ . ո՛չ եթէ զնա խնդրէ, այլ զի ըս-
տոյդ վկայէ, թէ զհետ յաջողութե՛ ունի ժա-
մանել նոր ձախորդութի ինչ . նմին իրի միշտ
կեռյ միապէս. ո՛չ ը յաջողուածս ուրախանայ,

և ոչը ընդ ձախորդութիւն տրտմի . ըստ առածին՝ թէ իմաստնոց ոչ դոյ դիպուած . ոչ տրտմութիւն , և ոչ զարմացումն :

Եւ ոչ միայն յընթացս կենաց է անյող դողդ՝ ի պէս պէս կիրա , այլև ՚ի մահուն իւրում լինի անվրդով . զոր միշտ անմոռաց ունելով ՚ի միտս , բարեպէս ուղղէ զանձն ՚ի մեռանիլ : Ա նյ իմաստունք միշտ մեռանին , և ոչ երբէք մեռանին . մեռանին , զի հանապազ զմահն առաջի աշաց ունին . ոչ մեռանին , զի բարւոք մեռանելով , կենդանի գոլհամարին : Ա ահն ոչ վնասէ կատարելոց և իմաստնոց , այլ օդնէ . զի զերծուցեալ զնոսա ՚ի տառապանաց աշխարհի , հասուցանէ ՚ի հանդիստն յաւիտենից :

Խթ Ա ՚ի՛ ոք գոյթակենեսցի զնախախնամութիւն և զդատաստանէն նյ . թէ զիարդ թոյլտոյ ած չարաբարոյից յատի կենս կեալ ՚ի յաջողուե , և բարեբարոյից ՚ի տառապանս :

Ապափէն որբան և չար իցէ ոք , նաար է նմաթէ երբեմն արարեալ իցէ զգործ ինչ բարի , այլ ոչ արժանաւոր երկնային վարձուց . նմանապէս որբան և բարի իցէ ոք , մարթէ և նմա առնել երբեմն զչար ինչ , այլ ոչ արժանի դժոխային վրիժուց : Եւ ած՝ այնու զի է արդար՝ ոչ զոք թողու անվարձ . վայ զփոխարէնն նուազ բարւոյն՝ զոր արար չար ոք յայս կենս , հատուցանէ անցաւոր բարեաց յաջողութէ , և թողու պատժիլ՝ ՚ի հանդերձելն՝ ը բազում

չարեաց իւրոց : Այսպէս և փոխանակ փոքը
չարի՝ զոր մարդկային տկարութեն կամ տղիւ-
տութեն արար բարեգործ ոք, յաստիս անցա-
ւոր տառապանօք պատժէ . բայց ՚ի հանդեր-
ձեալն փոխանակ բազում բարեաց զոր արար
յընթացս կենաց, հատուցանէ զվարձա, վասն
անստելի խոստմանն զոր խոստացաւ յառատուէ
բարութեն իւրոյ : Ո կ բարին զոր գործէ ոք
արժանի յաւիտենական վարձուց, ոչէ ՚ի զօ-
րութեն մարդոյ, այլ ՚ի զօրութեն շնորհացն այ.
այլ զվարձմն հատուցանէ ած իրեւ զպարտա
վո հաւատարմութեն խոստման իւրոյ . ըստ
այնմ, վարձք ձեր բազում են յերկինս :

Դարձեալ՝ ած երբեմն բառնոյ զբարսյաշ
խարհէ, մինչ ունին դառնալ ՚ի բարին . զի
մի՛ առաւել ծանրասցի պատիժ նշ, կամ վեա-
սեսցեն բարեաց : Աւ երբեմն թողու մնալ
կենդանի, զի զբաստացեալ ուղղեսցին . կամ
նոքօք բարիք կրթեսցին : Այրբեմն բառնոյ
զբարիս, զի մի՛ ասհեսցին ՚ի մեղս, կամ ա-
ռաւել վշտասցին . և երբեմն պահէ զնոսա
՚ի նեղութեն, զի առաւել սրբեսցին . կամ
այլոց բարի օրինակ լիցին . և վարձք նոցա
բազմասցին :

Ապաքէն աշխարհս կառավարի իմաստու-
թեամբն այ . նախախնամի ողորմութեն նորա
և արդարութեն, որ ոչ գիտէ վրիպիլ, կամ
ումեք անիրաւիլ . քանզի և վտանգք՝ որ յերկ
նէ, և որ յերկիրէ, ՚ի տարելրաց, կամ յանիրա-

ւուէ մարդկան , ո՞չ եթէ ըսպատահման՝ այլ ըս
անկքննին դատաստանացն այ հասանեն ՚ի մար
դիկ . ըստ այնմ՝ * Ա՛յ յարեւելից , և ո՞չ
յարեւմտից , և ո՞չ յանապատէ լերանց . այլ ած
դատաւոր է : || ստղ . հր . 6 :

Աւրեմն լուսցեն լեզուք կարձամոաց խօ
սել ընդ դէմ նախախնամութեն և դատաս
տանին այ . այլ միայն գոհացեն զնմանէ , որ
զամբինչ բարւոք արար , և առնէ հանապազ :

* Այս զամբ էնչ շրբ ինտրեցին աչք էն , անշրջեցաց ՚ի
նոցանէ և ո՞չ արգելէ շրբք էն ցամ ուրախութիւն . և
ահա ամ անոտի է , և յօժարութ ոդուց : || Առղ . Ռ . 10 :

* Այրետ նանրութ նանեաց . և առուրդ նորս որպէս
հսկանէ անցին : || Առղ . Ճիւկ :

* Այնայն դատաւ յարտոց եբրւ զծաղէի խոսոց . ցա
մաքեցաւ խոսոն՝ և թօթափեցաւ ծաղէի նորս :

|| Ասոյ . Շ . 7 :

* Ո յ ամ սր էնչ ցաշխարհէի ցանկութիւն է յարժնոյ ,
ցանկութիւն է աչաց : || Յօհան . Ռ . 16 :

* Ա՞ն սր ՚ի ժորժութ էցէ , ասէցէ թէ ցամ ժոր
ժէն . շէ ած անժորէ է չարեաց . ժորժէ նա և ո՞չ շուն .
իւրաժանշերուն ժորժէ առ յէրոց ցանկութիւն չգետալ և
պարբեալ : || Յօհ . Ռ . 13 :

ԳԼ. ԺԲ

Ո՞չ ոք է որ ո՛չ խնդրեացէ զերջանկութիւն . բայց ո՛չ գիտելով զուեղին յորում գըտանի , անդուլ տատանի ընդ վայր : Ա' երթ համարի՝ թէ գտանիցի ՚ի համադամիորափկա . և իբրև յաճախսէ առայն , տաղտկացեալ թողու զնա՝ և ցանկաց հարատութե , յուսալով թէ ՚ի նմա իցէ : Եւ իբրև զիբորձ առնուաշխատութե զոր պարու էր ունել առ ստացումն և առ պահպանութի ընչից , գժկամակեալ ընդ այն՝ զհետ կրթի իշխանութե : Եւ մինչ փոխանակ հանգստեան գտանէ ՚ի նմա վտանգս յայտնի թշնամեաց՝ և որոգայթս սուտ բարեկամաց , թողու զայն իբրև բեռն անտանելի , և ՚ի խնդիր լինի սյլոյ :

Եւ զօր օրինակ անկեալն ՚ի ծովայսր անդր յածեցուցանէ զձեռն գտանել ինչ՝ որովմար թացի ապրել . ըստ սմին սարսափ և սա յամ իրս դիմէ , թերևս հանգուցանիցէ զբաղձանս իւր : Այլ ՚ի զուր ջանաց և տաղտապի . զիցորչափ տգետէ ոք և մոլի , չկարէ լինել սըր տադիւր . վոզ զի երջանկութին՝ որ է հանգիստ մոաց և բաղձանաց , ո՛չ յոյզլ իրս գտանի , բայց եթէ յիմաստութե և յառաքինութե : Ազա պամատ է իւրապանցիւր մարդոյ ՚ի խնդիր լինել և ստանալ զիմաստութի և զառաքինութի , որովք կարսացէ գտանել զերջանկութիւնն , բնական յաշխարհիս յոյսամիկ , և

զգերբնականն ՚ի կեանսն յաւիտենից :

Է Որովհետեւ ընական է մարդոյ ՚ի խնդիր լինել երջանկութե . սմին իրի և մանկունք մինչ սկսանին նորոգ քայլել, ընդաբոյս իմ ախորժակազ ցանկան շրջել անդադար. զի զեր ջանկութիւնն մարթացին ուրեք գտանել : Ոստոստեն ընդ օդս ՚ի վեր ՚ի խաղալ իւրենց, կարծելով թէ անդ իցէ ընակեալ : Չեռն կարկառեն առնուլ զոր ինց տեսանեն . զի հա մարին թէ այն իսկ իցէ խնդրելին իւրեանց : Հետամուտ լինին իմանալ զոր միանդամ յուն կանէ խօսին մարդիկ ընդ միմեանս . զի այն պէս թուի նոցա՝ թէ զայնմանէ զրուցաբա նեն՝ որում ինքեանք փափադին :

Բայց իբրև ՚ի ծերութին հասանեն, յայն ժամ քաջ ձանացեն՝ թէ երջանկութիւնն ո՛չ գտանի ՚ի վը երկրի, և ո՛չ ՚ի բարձունս օդոյ, և ո՛չ յայլ իրս յորս խնդրէին : Խւ փոխեալ զկարծիս իւրեանց, համարին գտանել ՚ի ըս տորինս երկրի . վը զգլուխս և զմէջս իւր եանց ընդ երկիր մածուցանեն : Ո՛չ ախոր ժեն ՚ի վեր յառնել . և ո՛չ գնալ և շրջել ու րեք . տաղտկացեալ խորշին յամէ զորս սիրէին, և ձանձրանան լսել յումեքէ որում նախ փա փէին . և իբրև յուսաբեկ վարանական դեգերեալ տագնապին ՚ի խորհուրդս, և ո՛չ գիտեն թէ զինչ արացեն : Հուսկ յետոյ ա պաստան եղեալ մահոնան՝ արթուն աչօք ըս պասեն նմա . հաստատութիւն եղեալ ՚ի մոի,

թէ նաև միայն կարէ հասուցանել երջանկութեան, զոր՝ ՚ի մանկական տիոց անտի կաթողին բաղձանգք խնդրէին :

Որ կամի լինել բարեբաստիկ, ապաստան եղեցի յած . սակայն մի՛ հեղգասցի առնել զոր կարէ՝ ՚ի պահպանութիւն անձին իւրոյ . զե այնպէս կամի ած, թէ մարդիկ զոր ինչ կարեն՝ արասցեն . և զոր ո՛չն կարեն՝ ինքեան յանձնեացեն : Իսյց է մարդ՝ որ կամի զածունել իւրեւ սպասաւոր . և զոր մարդկութեն է անկ առնել, և զայն թողու այ կատարել . և մինչ ո՛չ կատարի, գժգոհ լինի զայ . և ո՛չ որոշէ զածավայելուչ գործան ՚ի մարդավայելուչ գործոց :

Լորդ՝ դու արա՞ զայն զոր կամիս՝ և կարես առնել . և յանձն արա այ զոր կամիս՝ և ո՛չ կարես առնել : Լուեթէ օգուտու իցէ քեզ զոր կամիս, կատարէ ած . և զոր ոչ կատարէ ած, ծանիր՝ թէ այն չէ ինչ օգուտու քեզ . զե ած առաւել գիտէ զօգուտոն քո՝ քան զոր գու ճանաչես և կամիս :

Հ Ինութին մարդոյ՝ միշտ բաղձայ հեշտալեաց, զե ՚ի նաև հանգիցէ յաւիտեան, և փախչի ՚ի մահուանէ, որ է բաղձք անմահուեն : Խսկ ընութին ո՛չ վրիպի յայսմ. զե գործ բը նութեն է գործ այ . և զոր ինչ միանգամ սւնի ընութին, յայ ունի . ընդէլը ապա օրէնք արգելուն զմարդիկ ՚ի հեշտալեաց, և զման ասեն բարի : Լպագքէն ընութին ո՛չ

բաղձայ հեշտութեն և կենաց որ աստ է , այլ
այնմ որ 'ի հանդերձեալն է . ապա թէ ոչ ընդ
ինքեան հակառակէր բնութիւնն : « Քանզի
փորձին գիտեմք՝ թէ ոք զշեշտալեօք փարի ,
տակաւին բնութիւն 'ի նմա ոչ հանդչի . այլ
անդէն տաղտկացեալ զզո՞ի , և ցանկայ այլոյ
բաղձալոյ . նոյնպէս եթէ ոք 'ի տառապանաց
ծերուեն կամ փորձութեն նեղի , զմահ խնդրէ :

Իսկ եթէ բնութիւն մարդոյ այսմ հեշտուեն
և սյսմ կենաց ըղձանայր , ուրեմն 'ի նոցանէ
ոչ ձանձրանայր . այլ իսկոյն իբր 'ի կեդրոն իւր
'ի նոսին դադարեալ հանդչէր 'ի յաւիտեան :
Ապա յայտ է թէ զայլ ինչ խնդրէ նա՝ զոր
մարդիկ ոչ զգան . նմին իրի նեղին տագնա
պին , և զբնութիւն մեղադրեն : Ապաքէն բը
նութիւն անսխալ է 'ի բաղձանս իւր . և օրէնք
իրաւամբ արգելուն զմարդիկ 'ի սնոտի հեշ
տալեաց աշխարհիս . զի ուղղեսցեն զկամս իւր
եանց 'ի յաւիտենական հեշտալիս՝ և յանվախ
ձան կեանս՝ առ 'ի լինել երջանիկ . և մի՛ հա
կառակեսցին ընդդէմ ոյ , որ ուղեղ սահման
հաստեաց զբնութիւն :

« Երջանկութիւն կայանայ 'ի սիրելն զած
'ի վեր քան զամ . զի որպ սիրէ ած զմարդն 'ի
վեր քան զամ արարածս իւր , կամի զի և ինքն
սիրեսցի 'ի մարդկանէ 'ի վեր քան զամ : Որ
ոչ սիրէ զած ոոպ պարան է սիրել , վարանի ան
հանդիստ . զի չէ նար յայլ իրա հանդչիլ բաղ
ձանաց մարդոյ՝ բայց միոյն 'ի յած : Ո ոյ և

մարդիկ մինչ սիրեն զիմն արտօքոյ նոյ, ոչ կարեն անտաղտուկ յարամնալ՝ ի նմա . վազի ածմիսյն է առարկոյ սիրոյ, յորում կարեն հանգըլ բաղձանք մարդոյ :

Ե Պիմրտ է ամի զգուշութ պահել՝ ի սրտի զերկիւղն նոյ առաւել քան զամ բարիս . զի նովաւ կարէ ոք ստանալ զՃշմարիտ առաքիւնութիս, որք առաջնորդեն առ երջանկութի . Որ ոչ երկնչի ՚ի դատաստանացն նոյ, կամ ունի զաէրն նոյ կատարեալ, կամ հոգւովն է գլխովին մեռեալ :

Ղ Ապերջանիկ է նաև թշուառ, որ չունի զուղիղ հաւատս և զառաքինի վարս. զի է կ'յը հոգւով, և ոչ կարէ տեսանել զպոյծառութի ածային լուսոյն : Օ ի թէ և իմաստուն ոք իցէ, և խոստանայցէ գիտել զամ, հպարտացեալ է այնպիսին և ոչինչ գիտէ . զի չունի զՃշմարիտ գիտութին, որ է ճանաչել զած ուղիղ հաւատով, և ծառայել նմա բարի գործով :

Լ աւ է սիրել զած առանց գիտելոյ զգիտ նական սահման սիրոյ, քան գիտել զսահման սիրոյ առանց սիրելոյ զած :

Ճ՛շմարիտ հաւատացելն ՚ի գործ դնէ զայն՝ զոր հաւատայ . ապա որ հաւատայ՝ եթէ պատրաստել կոյ երջանիկ վիճակ այնմ՝ որ բարւոք կեայ, և ինքն վարի չարաչար՝ ող թէ ոչ հաւատայր, պակասեալ է ՚ի հաւատոց . զի ոչ կամի գործել զչար, որ հաւատայ թէ գոյ հատուցումն իւրաքանչիւր ումեք լստ գործա իւր :

Ո՞չ ոք կարէ առնել զշաճոյսն այ ՚ի ժառան
գութի կենացն յաւիտենից , եթէ ՚չ խընդ-
րեսցէ յայ , և տացի նմա առնել . ըստ այնմ,
* | Սնդրեցէ՛ք՝ և տացի ձեզ : || Տառ . Է . Ղ :

Է Արդա արարաւ յայ ազատ և անձնիշ
խան . բայց ՚չ գիտելով զերջանկութի իւր՝
ծառայէ մոլութեց որո՞գ գերի շղթայակապ .
Ապաքէն ազատ է նա , որ զերծ է ՚ի բռնութէ ,
և իւրովի շարժի ՚ի բարիս . զի թէպէտ և կո-
րուսանիցէ զինչ , զաջողուածս , և զանդամն
ինչ մարմնոյ , և գրաւեսցի ընդ մահուամբ ,
ունի տակաւին զկամնն ազատ և բարեյօժար .
Իսկ որ չարաշար վարէ զանձնիշխանութի իւր ,
թէև ազատ և հրամանահան ոք իցէ՝ առնէ
զինքն ծառայ մոլութեց . քան զոր չի՛ք առա-
ւել անարդ և յետին ծառայութի :

Ապա մարդիկ մի՛ արասցեն զանձինս ծա-
ռայ , որ ծնեալ են ազատ : **Ճ**' շմարիտ ազատ
նա է՝ որ զկամն իւր հաստատեալ ունի ՚ի բո-
րիս , և գործէ յօժարութբ : Ո՞չ բաւական
համարի լինել բարի , ֆէ՛ շատանալ սակաւ-
բարեօք . այլ և փութայ լինել բարեգոյն , ֆէ՛ որ
քան զօր առաւելուլ ՚ի գործս բարեաց :

Որ ծառայէ այ և հպատակի օրինաց նը , է
Ճշմարիտ ազատ , յորում վիճակի և իցէ :

Ե Արջանիկ է նա՝ որ ճանաչէ զինքն միշտ
ներկայ առաջի այ , և զած ներկայ առաջի
իւր . որո՞գ և է իսկ : Հաստատեալ ՚ի միտա՝ թէ
ած ՚չ զայլոյ ումեքէ հոգայ՝ բայց եթէ զիւք

մէ . և ինքն ոչ զայլ ինչ խորհի , բայց եթէ
զշաճյան այ առնելզի ած արար զամվս մար-
դյ , և զմարդ վս իւր միայն . ապա հարկ է
մարդոյ միայն ծառայել այ . և այս յայնժամ լիւ-
նի , յորժամ մարդ զոր ինչ խորհի և ասէ և
առնէ , այն ամ ՚ի փառա այ վերածէ :

Եւ մինչ ճանաչէ զանձն ներկայ առաջի
այ , և զած ներկայ յամ ուրեք , տեսօղ գոր-
ծոց և քննիչ խորհրդոց . ոչ բնաւ վրդովի ՚ի
պատահիլ վնասակար դիպուածոց . զի ստու-
դիւ ճանաչէ՝ թէ ած սիրէ զինքն , և միշտ
կամի զօդուտն իւր . և յորժամ թոյլ տոյ գալ
վնասու , է տակաւին վս օգտի իւրոյ : Արդ՝
որ ՚ի սոյն միտս հաստատեալ է , արդարեւ ու-
րախ և խաղաղ է նա յամ ՚ի կեանս իւր :

Թ Երջանիկ է նա՝ որ ոչ ինքն է ծառայ
ոյլում : և ոչ զայլս ունի ծառայ կամաց իւրոց :

Ժ Պատճառն և գործն՝ ոյնու զի են ա-
ռընչակից , փոփոխակի հային և ցուցանեն
զմիմեանս : Արդ՝ ըլլք են պատճառք . արար-
չական , ուստի է գործն . նիւթական , յորմէ է
գործն . տեսական , որովէ գործն . և վախ
ճանական , վասն ոյր է գործն :

Եւ որովհետեւ արարչական պատճառ մար-
դյն է ած . նիւթականն՝ հող կամ տարելք .
տեսականն՝ հոգի բանական . վախճանականն՝
փառքն երանութե . վոյ մարդն իբրև գործ
այ ունի զիարդ և զշայեցուած առ արար-
չական պատճառն իւր առ ած . զի ցանկոյ

պաշտել զնա . զի թէ և ոչ կարասցէ ճանաչել
զՃշմարիտ արարիչն՝ տակաւին զարարած ինչ
իբրև զած պաշտէ՝ զո՞ւ և կարծէ . զի բնութին
իւրովի ձկտի առ այն :

Ունի զկարգ և առ նիւթն յորմէ գոյացաւ . նմին իրի ըստ մարմնոյն՝ վասն զի է ՚ի հողոյ կամ ՚ի տարերաց , միշտ ՚ի նոյն հակի ,
մինչեւ լուծանիլ ՚ի նա :

Ունի զկարգ և առ տեսական պատճառն
առ հոգին . զի ոչ կամի թողուլ զնա , զի մի՛
ապականեացի . վայ խորշի մարդն ՚ի մեռանեւ լոյ . զի մեռանիլն՝ է բաժանումն հոգւոյն ՚ի մարմնոյ : Խակ հոգին իբրև անմարմին գոյացութի՝ ըստ ինքեան միշտ ցանկայ անմարմնոցն վիճակի , և ազատութե ՚ի բանտէ մարմնոյն . և յաւէտ զիմանալեացն խոկալ սիրէ . և զշոգեսոր միսիթարութին խնդրէ : Խա զի գոլովանմահ , միշտ ցանկայ անմահութե . և տակաւին ՚ի մարմնի բնակեալ , խնդրէ առ յապայն յիշատակ յաւիտենական թողուլ . որ է նըշան անմահութեան նորա :

Ունի զկարգ և առ վախճանական պատճառն . զի երանութին ըստ որումէ հանդիստ և լրումն բաղձանաց , առ ինքն քարշէ զամենեսեան՝ որք կարգեալ իցեն առ նա :

Վայ ամ ոք ցանկայ իւրոյ հանգստեան , ոտք ճանապարհորդ ՚ի դէմ եղեալ տեղին . զի բը նութին մինչեւ իցէ ժամանեալ ՚ի վերջին վախճան իւր՝ ոչ հանգչէ : Խա սակայն վերջին

վախճան մարդոյ ըստ սահմանելոյն այ ոչ տուել
լինի յաստի կեանս՝ այլ ՚ի հանդերձեալն . զի
չիք արարած ՚ի վը երկրի , որ կարօղիցէ լուլ
զփափագ մարդոյ . նմին իրի մարդիկ ՚ի կեանս
յայս միշտ են անհանգիստ , թէ և իցեն ամ
բարեգք աշխարհի յղփացեալ :

Եւ այս յայտնի ցուցանի ՚ի հանդարտուել
մատաց առաքինեաց , և յալէծուփ խորհրդոյ
աշխարհասիրաց . վս զի արք առաքինիք ուղ
ղեալ զշտիղս իւրեանց առած , անցեալ զսն
ցանեն զբարեգք աշխարհի . և զառաքինուին
կալեալ իւրե միջոց ՚ի հասանիլ առ վերջին
վախճանն , յամի անդորր մագք նաւեն ժաման
նել ՚ի նաւահանգիստն վերջին երջանկուե .
ոչ ինչ փոյթ կալեալ զիրաց անցաւորաց և ըզ
փոփոխուեց աշխարհի : Իսկ արք աշխարհա
սէլք՝ վարանական խորհրդուլ խուճապեն ան
հանգիստ . և ոչ կարեն գտանել գոնէ վայր
կեան մի անդորրութին մտաց . թէ և իցեն մե
ծագանձ իշխան՝ կամ ինքնակալ կայսր :

Այց ըստ որում բնութին բուռն բեր
մամբ գիմէ առ վախճանն . ՚ի գտանել գոյզն
ինչ գիւրութին մարմնոյ յարի ՚ի նա զգայա
կան կոյր բաղձանգք , իբր ՚ի վախճան իւր . այլ
տեսեալ թէ ոչ կարէ ՚ի նմա հանդըն , ՚ի բաց
թողու զայն՝ և ցոնկայ այլում զզուի և յայն
մանէ՝ և փափագի այլոց : Եւ այսպէս ամենե
քին ՚ի միոյ հեշտալեաց ՚ի միւս հեշտալիս ոս
տուցեալ թափառին անգաղար՝ հասանիլ ՚ի

վախճան իւրեանց. բայց ոչ գիտելով զի՞ն է իցէ
այն, կամ ո՞ւր գտանիցի, ընդ վայր տագնապին:

Ապաքէն ծանիցեն զի ած է ստոյդ վախճան
մարդոյ. առ որ ճնար է հասանիլ միայն առա
քինուեն ճանապարհաւ. թողթեն ուրեմն զաշ
խարհասիրուին, և զշետ լիցին առաքինուեն,
զի գտանել մարթացին զոր խնդրեն. ապա
թէ ոչ չեք ճնար նոցա հասանիլ ՚ի վախճան
իւրեանց, և լինել երջանիկ:

Բայց ոմանկը աշխարհասէրք տակաւին դե-
գերին յիրս աշխարհի՝ գտանել զնա. ոյլ սա-
կայն ոչ փափագ մարդոյ դադարի ՚ի խնդրելոյ
զնորանոր հեշտալիս, և ոչ հեշտալիք պակա-
սին: Խւ այս վէճ սրտի մարդոյ ըն հեշտալիս
աշխարհի տեւէ մինչեւ ՚ի դուռն գերեզմանի.
ուր յուսաբեկ եղեալ՝ քաջ ճանաչէ մարդ,
թէ ընդունայն վաստակեցաւ յիրս աշխարհի
գտանել զվերջին երջանկութիւն իւր. բայց
անկարելի է զկնի այնորիկ ՚ի ձեռս բերել ըդ
նա. զի յայնժամ սկսանի սերմանել, յոր-
ժամ ոյլք ճնձեն:

Ժան Ո՞արդիկ՝ ոչ զամզոր սիրեն՝ արժանի
են սիրոյ. զի սիրեն զաշխարհ և զոր յաշխար-
հի են վայելըութիք. վայ յոլովակի փոփոխեն
զսէր իւրեանց ՚ի միոյ առ ոյլ. և ոչ յայս կամ
յայն մնան հաստատուն: Ապա եթէ կամին
միշտ մնալ ՚ի սէրն, սիրեացեն զՃշմարիտ բա-
րին. զի նա միայն է արժանի սիրոյ:

Ժէ Ո՞արդս՝ եթէ ոչ ունէր զառ ՚ի յոյ

խոստացեալ ինքեան զերջանիկ կեանս ՚ի հան
դերձեալն . ոչ ոք գտանէր թշուառ քան զնա
՚ի վը երկրի . զի ծնանի արտասուզք . ուսանի
աշխատանզք . ապրի տառապանզք . և մեռանի
ցաւովք : Ապա փոյթ յանձին ունել պարտ է
ամի , գործովք բարութե հասանիլ ՚ի ժառան
գութե երանաւէտ կենացն խոստացելոց :

ԺՇ Բարիք և չարք խոստովանին զանձինս
ծառայ այ , բայց տարբերին ՚ի վախճանն . վա
զի բարիք ծառայեն իբրև զորդի . զի աշխա
տին միայն վա փառաց և վա սիրոյն այ . և ըզ
հոգ անձանց և զիւրայնոց յանձնեն ածային
կամաց . վա ած հոգայ զնոցանէ , որքան են
յերկրի աստ . և ՚ի յերկինս շնորհէ նց զյա
ւիտենից փառս : Օ ի սյապէս վայելէ մե
ծութեն այ՝ տալ տրիտուր ըստ յաւիտենի
իւրում զանհուն բարիս այնմ , որ ըստ յաւի
տենի իւրում սիրեաց զած՝ և ծառայեաց նմա
հաւատարմութե : Աւ այս փոխարինութ ոչ
է ըստ արժողութե գործոյն , և կամ գործո
զին . այլ ըստ առատութե բարութե և ողոր
մութե այ ընդունողին . զի ըստ առաքելոյն ,
* Աչ են արժանի չարչարանք ժամանակիս
հանդերձեալ փառացն : || հոօմ . ը . 18 :

Խակ չարք ծառայեն իբրև վարձկան . զի
աշխատին վա փառաց և վա սիրոյ անձանց . և
ոչ յանձնեն այ զանձինս և զիւրայինս . զի
կամին ըստ հաճոյս իւրեանց առնել զամինչ .
վա և ած զարս իբրև զվարձկան՝ ժամանա-

կաւոր բարեօք միայն վարձատրէ , ըստ որում
են արարածք իւր . նմին իրի ընդ սպառիլ
կենաց նոցա , սպառին և վարձք նոցա . ըստ
օրինակի ՚ի վարձու կալեալ մշակաց , որք յե-
րեկոյանալ աւուրն առեալ զսակ արկեալ դը-
րամն գնան . զի՞ ոչ իւրեւ որդի ծառայեցին
զի՞ մոցեն ՚ի ժառանգութիւն որդւոյ : Եւ
որովհետեւ ՚ի յաւիտենին իւրեանց արհա-
մարհեցին զանհուն բարին , զոր խոստացաւ
ած հաւատարիմ ծառայից իւրոց . իրաւամբ
զըկին յանհուն բարւոյն ՚ի յաւիտենին այ :

* Երանեալ են ամբիծք ՚ի հանապարհի , և այս գնան
յօրէնս դոն : || Սաղ . Ճժը :

* Արտ երանեցից ժողովրեան որոց այս այսպէսէ .
նա՝ երանի է ժողովրեան որոց դր ած է նոցա :

|| Սաղ . Ճիւկ :

* Երանեալ այս որ շահեցի ինչ , և յարտ՝ որ զմանա
պարհո ին պահեցէ . զի՞ որ զիս գտանէ՝ գտանէ զիւնան
և ընտունէ զիւնունի ՚ի դոնէ : || Այսակ . ը . 34 :

* Բնտէր բնաւ ամբարէշտ չենդանին իցեն , հնացեաց
և ՚ի գծութեան : || Յոբ . իտ . 7 :

* Երանեւեւ են՝ որ պահեն զպառաւիրանս նը . նուս
անին իշխանունի ստեւ ՚ի գոյափէն չենաց՝ և յանել
ընտ տրունու քաղաքին : || Յայտ . իտ . 14 :

ԳԼ. ԺԴ

ա Առաքինութեան է գործադրութիւն օգտակարաց, և խորշումն ՚ի վեասակարաց յառաւել ՚ի կիրած՝ ըստ առաջնորդելոյ ուղիղ բանին, հաստատեալ ՚ի մէջ երկուց մոլեկան ծայրից։ Դարձեալ՝ առաքինութեան է բարեկարգ ունակութիւն հոգւոյ. որով վարի մարդ ըստօրինի ՚ի խորհուրդա՝ ՚ի բանս՝ և ՚ի գործս. որպէս կամ յած, կամ առ ինքն, կամ առ ընկերն վերաբերին։

Ապաքէն օրինապահ, բարեպաշտ, արդար, և երկիւղած ասի, որ անթերի կատարէ որ ինչ օրինադրեալ է ՚ի վը իւր յայ, կամ ՚ի լուսոյ բանին. և խորշի յայնմ ամէ՝ յորոց արդելուն օրէնք. այլ տակաւին ոչ է՝ և ոչ ասի նա կատարեալ առաքինի։ «Բանզի ՚ի լինիլ մարդոյ կատարեալ, խնդրի առնել ինչ՝ որ իցէ գերազանց քան զշասարակ կանոնական պատուէրս և հարկադրութիւն. վը զի ո՛ և իցէ պատուիրան ածային օրինադրեալ մարդկան, համարի նմա պարտք. զոր եթէ կատարէ՝ ազդատի ՚ի պարտուց. և եթէ ոչ կատարէ՝ մնայ պարտական, և զրկի ՚ի վարձուց՝ զոր խոստացւ ած այնոցիկ՝ որպէս ամբողջ պահեն զամ հրամանս իւր։

Խակ նա՝ որ յառաւելութէ սիրոյն առ ած՝ առնէ զգերազանց գործս բարիս՝ անդր քան զըր ՚ի հասարակի պահանջէ, յայնժամ կոչե

կատարեալ առափինի . որոյ վարձք այնպան առաւելու քան զայլս՝ որքան ինքն առաւելու 'ի գործս բարեաց : « Քանզի առաքինութին յառաւելութէ ասացեալէ , որով թէ զբարին առաւել քան զայլս արար . վասն այնորիկ որ 'ի մեղ առաքինութին անուանի՝ առ արաբացիս քաղչէլէ կոչի , որ է առաւելութի :

« Ա, ազի՝ առաքինին՝ կազմի 'ի բառէս այր . յորմէ ածանցին և բառքս արու՝ կամ արի . և ստուգաբանի ունօղ այրուեն , կամ արիուեն . որ այն ինքն է՝ արքենի , քաջ , վեհանձն , զօրաւոր քան զայլս . յոյս միտ ասէ եղիշէ : * Արուք առաքինիք 'ի հոգեռոր պատերազմի : || Երես . 212 :

Արդ՝ օրինապահ ասին նոպա , որք զամ Տրամայեալ օրէնսն պահեն . կոչին ևս բարե պաշտ , կամ բարեգործ , զի բարի են օրէնքն , զոր ած կամ նը եկեղեցին օրինադրեաց . ասին և արդար , զի արդարութին է՝ ճնազան դելոց զջրամանս տն կատարել . կոչին և երկիւղած , զի երկնչին յայ , որ բարկանայ այնոցիկ՝ որք ոչ առնեն զջրամանս իւր : || Երեմն առ 'ի լինել ումեք կատարեալ առաքինի՝ արժան է նման առաւել քան զայլս 'ի մարդկանէ վաստակիլ 'ի գործս բարիս , և խորշել 'ի չարեաց :

Ա. Ալ զինչ ասելին է զնոցանէ , որք ոչ միայն թերանան 'ի գերազանց առաքինական գործոց , այլև բազումինիք պակասին յայնս՝ որք միօրինակ պարտաւորեն զամենեսեն 'ի պահել :

գուցէ և զընդդէմն առնեն հրամանացն այ ,
և օրինադրութեց սբ եկեղեցւոյ : Ապա նու
քա՝ որք ոչպահեն զօրէնս , մի՛ ակնկալցին ըզ
վարձս օրինապահաց և առաքինեաց առնուլ
յայ . զի յանդգնութիւն է՝ մանաւանդ թէ
յիմարութիւն՝ առանց արդեանց յուսալ և
ակն ունել վարձուց :

Է Առաքինութիւն է կրկին , ածաբանական՝
և բարոյական : Աճաբանականն բաժանի յեւ
ըիս , ՚ի հաւատո՞ ՚ի յոյս՝ և ՚ի սէր : Աարոյականն
բաժանի ՚ի չորս՝ ՚ի խոհեմութի , յարդարութի ,
յարիութի , և ՚ի բարեխառնութի . որք առանց
միմեանց ոչգործին , և ոչ առնեն զոք կատար
եալ առաքինի . ուր մին ՚ի նոցանէ անթերի
կատարի , այլք զշետ նը հարկաւ հետելին՝
շղթայաբար :

Կանզի որ ունի զկատարեալ հաւատ , հեւ
տեի նմա ունել զըոյս աներկմիտ , և զսէր
անկեղծ . և ՚ի նշան արդեանց կատարելութե
սիրոյ՝ պահանջին գործք բարոյական առաքի
նուեց՝ որք գործին խոհեմութէ , արդարութէ ,
արիութէ , և բարեխառնութէ . որովք իբրեւ
աստիճանաւ ժամանեն ՚ի կատարելութի ա
ռաքինութէ . և արժանաւորին ՚ի վայելել և
՚ի ժառանգել զերկնային փառան , զոր խոստա
ցաւ ած սիրողաց իւրոց . ուստի առաքինու
թիւնք են միջոցք և ճանապարհ առ երկնային
փառան , առանց որոց՝ չէ երբեք նար հասանիլ :

Ա. յլ սակայն Ճմարիտ առաքինութիւնկը

կախումն ունին զնորհացն այ , և նովաւ ար դիւնսաւորին . և շնորհք այ պարդեին յար դեանց չարչանացն քի . վայ Ճշմարիտ առա քինութիք՝ միայն ՚իքրիստոնեայս գտանին . և Ճշմարիտ առաքինիք՝ միայն քրիստոնեայք են :

Թահպէտ և արտաքոյ քրիստոնէական հաւատոյ գտցին ոմանք , որք յազդարարութենէ լուսոյ բանին և բնական օրինաց՝ վարեսցին խոհեմութիք՝ արդարութիք՝ արիութիք՝ բարեխառնութիք , և ստացեալ ևս իցեն յանձինս իւրեանց զվարս ճգնութիք՝ զգաստութեան ժուժկալութիք խոնարհութիք համբերութե , որք և իցեն ողորմած և աղօթասէր . այլ ո՛չ ասին տիրապէտ առաքինի :

Օ կ այսպիսի բարոյսկան գործք առանց շնորհացն այ՝ համարին իբր բնական գործութիք . իսկ բնական ճանապարհաւ ո՛չ ոք կարէ գնալ առ գերբնական երջանկութին . վայ ապարդիւն լինին ՚ի ստացումն երանական փառաց ամենասուրբ երրորդութիք :

Ա ս զի ՚ի ժառանգել ված պիտոյ են շը նորհք , որք բղինին յարդեանց չարչանացն քի . ուրեմն ո՛չէ Ճշմարիտ առաքինի՝ որ ո՛չ ունիցի զշաւատս նբ երրորդութիք և բանին մարդեղութիք . զի ո՛չ կարէ ընդունակ և արժանաւոր լինիլ ածային շնորհացն . նմին իրի և ո՛չ ժառանգ երանական փառացն այ : **Եպապարհութ** է նախ քան զամունիլ զուղիղ հաւատս քրիստոնէական . և հետեւապէտ զառաքինական :

ունակութիւն՝ և զգործս բարիս :

Եւ թէպէտ նախ քան զքս՝ ՚ի բնական և
՚ի գրական օրէնս բազումք հաճոյացան ոյ,

ոյլ ո՛չ առանց շնորհացն քի ։ զի հաւատային
՚ի գալոց մեսիայն ։ ըստ այնմ, * Աքրահամ
հայր ձեր՝ ցանկացաւ տեսանել զօր իմետես և
ուրախ եղեւ : || ահան ։ ը ։ 56 : Եւ թէ՝ * Բա
զում մարդարէք և արդարք ցանկացան տե-
սանել զոր տեսանէքդ, և ո՛չ տեսին . և լսել
զոր լսէքդ, և ո՛չ լո՞ւան : || Տառ ։ ծդ ։ 17 :

« Ա րդ՝ ամ ազգ մարդկան ունին զհա-
ւատա ինչ ուղիղ կամ մոլար՝ իբրև պարտք ի-
մացական բնութեան ։ վոյ և առ արաբացիս
հաւատն ասի աէն՝ կամ աէցն, որ նշանակէ
զպարտա : « Քանզի իմացական միտք հարկաւ-
ինդրէ տեղի ինչ ապաստանի՝ յոր ապաւինես-
ցի, և գտցէ զհանգիստ, մինչ վարանեալ տա-
րակուսի և տանջի վոյ այնոցիկ՝ որոց ո՛չ կարէ
բնականապէս հասու լինել, և զորս պարզ և
մեկն ըմբռնել :

Ա զի յատկութիւնէ իմացականին իմանալ
ինչ՝ որ ՚ի վեր իցէ քան զընականն . և այս է
զոր ուսուցանէ հաւատքն . ապա թէ ոչ
մարդն լինէր անարդ քան զանբան կենդանիս.
որք առաւել քան զմարդ զդան զընականս և
զազդեցութիւն նոցա . և գիտեն կառավարիլ
՚ի բնութէ իւրեանց :

« Քանզի աշխարհս և որ ՚ի նոսա՝ արարան
յանհուն կարողութն ոյ, և մարդն հունաւոր

կարողութե իւրով ճարտարեաց զարհեստական իրս՝ ի դիւրութիւն պիտոյից իւրոց և ըստ ձեռնիաս գոլոյ՝ զբազում բնական իրս գաղտնեաց բնութենե եգիտ աշխատանօք ։ բայց առայն որ գեր՝ ի վերոյ է քան զբնականն, ոչ կարէր թեակոխել բնականաւն ։ այլ կարօտ էր գերբնական զօրութեան :

Այս զի ամինչ որ ունի զէութիւն կամ զգովը յերիս բաժանի ։ յարհեստական, ՚ի բնական և՝ ի գերբնական : **Ա**րհեստականն է ՚ի վայր քան զմիտս մարդոյ ։ զի ՚ի մտաց հնարեալ տեսակաւորի ։ բնականն հաւասար է մտաց ։ իսկ գերբնականն ՚ի վեր է քան զմիտս ։ ուստի կարօտի մարդ գերբնական շնորհաց՝ զի կարողաց իմանալ զգեր՝ ՚ի վերոյն քան զինքն :

Արդ՝ առաջին մարդն ադամընկաղեալ ունէր զգերբնական շնորհս ։ որով ճանաչէր զմի ած ճշմարիտ, և պաշտէր զնա ։ զոր և յետնորդացն աւանդեաց : **Ա**յլ զինի ջրհեղեղին ՚ի բաղմանալ մարդկան ՚ի վը երկրի՝ սերունդքնը մոռացան զծանօթութիւն միոյն ոյ ճշմարտի, և անձնատուր եղեն յազգի ազգի մոլորութիւն ։ սակայն ոչ իսպառ անհետ եղեւ կրօնասիրութիւն ՚ի մարդկանէ ։ զի զշետ եղեն իւրաքանչիւր բազմութիւն ժողովրդոց հնարել զպաշտելի ինչ :

Արանզի այս իղձ բնական է մարդոյ, ունել զիմն պաշտելի, որ ՚ի վեր համարիցի քան զամ: և իցէ արարիչ և խնամօղ ամարաբոց ։

որ՝ ՚ի մեր լեզուս կոչի ած։ Եւ ըստ նախնի հարց ստուգաբանի աստ էած զմեզ, դի հաստեաց. կամ՝ ՚ի հաստումն ածօղ, դի է հաստիչ. այլ կարէ եւս ստուգաբանիլ ազդուած, դի ազդեցեալ, կամ հրատարակեալ, եւ կամ ծանուցեալ։ Քանզի չիք ինչ այնքան ազդեալ եւ ծանուցեալ առ արարածո՝ քան զգոլն այ։ ուղ եւ չիք ինչ այնքան լաեալ եւ ծածկեալ՝ քան զինչութին այ, որ առաւել ճանաչի բացասական անուամբ՝ քան ստորասականաւ։ զի ՚ի վեր քան զմիտս է։ ուստի պարտիմք միոյն զգոլն նը ճանաչել, եւ նմա պաշտօն մատուցանել։ առ որ եւ բնութին մեր ինքնին ձկոի։

Այս զայլ եւ այլ կրօնա հեթանոսուե սահմանեցին մարդիկ թելադրութե դիւին։ որ մալորեցոյց զնո՞ ՚ի բազմաստուածութի՞, եւ ՚ի զանազան աղանդս պաշտաման կռոց, եւ ստեղծուածոց։ ուղ զի նորօք զբաղեալ դադարեսցին ՚ի խնդիր լինելոյ ճշմարիտ ածդիտութե։

Բայց գոտան ՚ի նո՞ արք իմաստասէրք՝ որք բնական լուսով ծանեան թէ սնոտի են պաշտամունք կռոց։ և խնդրէին գտանել զ՛ւեղինակին բնուե զմի միոյն ճշմարիտն ած, մինչեւ մերանալ մոռք ՚ի կամարս աստեղաց։ Ուստի ՚ի շարժմանէ եւ ՚ի պատճառելութէ արարածոց մակաբերեցին, թէ գոյ գերագոյն էակ ինքնագոյ անշարժ եւ անպատճառ։ ուղ որ վսեմախոյն էր ՚ի նո՞ ասէր. է ոմն որ շարժէ, եւ ո՞չ շարժի, եւ ամբաւազօք է. եւ նմա տալի է պաշտօն։

Աւ թէպէտ ծանեան նոքա զած , այլ ոչ
ոոկ արժանն էր ճանաչել . և ոչ ևս իբրև զած
կարացին փառաւորել կամ գոհանալ , ոոկ նշա
նակէ առաքեալն : Քանզի ոչ էր հնար մար
դոյ բնական գիտութէ վերանալ առ ծանօ
թութի գերբնականին . զի զգալի կարողութին
չունի համեմատութի առ իմանալի առարկայն :

Այս գթացեալ ոյ ՚ի գործս ձեռաց իւրոց՝
յայտնեաց զինքն առ նահապետսն ազգի ազգի
տեսլեամբ , օրինակք , խոստմամբ , և գրական
օրինաք . որովք իբր զմանկունս նորակիրթա
վարժեր զմարդկայինս բնութի յայբենարա
նի ուսման ճշմարիտ հաւատոյ : Աւ հուսկ
յետոյ՝ որդւովն իւրով քիւ տերամբ մերով
յայտնեաց և ուսոյց զՃմարիտ և զկատարեալ
հաւատս ածպաշտուեն . որ նոյն ինքն է քըիս
տոնէական ոք և ուղղափառ հաւատքն :

Կպաքէն բաց ՚ի քրիստոնէական ոք հաւա
տոյ՝ որքան և զանազան աղանդք կամ կրօնք
իցեն՝ ոչ են ճշմարիտ հաւատք . զի կամ ոչ են
հասեալ առ ՚ի ճշմարիտ ածածանօթութին .
որպիսի է կռապաշտականն . կամ թերի մնա
ցեալ են ՚ի ճշմարիտ ածածանօթութի , որպիսի
է հրէականն : Աւ կամ խոտորեալ յուղըւուէ
ճշմարիտ հաւատոյ տեսական և գործնական
մոլորութէ . որպիսի են հերետիկոսական ա
ղանդքն . որք են թիւր աւանդութի՝ անպիտան
առ ժառանգութի յաւիտենական փոց : Աւրեմն
քրիստոնէականն է միայն ճշմարիտ հաւատք՝

որով միայն Ճանաչել Ճշմարիտն ած , մի էութիւ
յերիս անձինս , ՚ի հայր՝ և յորդի՝ և ՚ի սբ հո
գի . և հաւատացեալ լինի մարդեղութիւն բա
նին այ . որպ և սբ եկեղեցին ուսուցանէ ՚ի
հանդանակին , և ՚ի գաւանութեն :

Դ Արակէս մի է Ճշմարիտն ած , մի է ըստ
գոյացուեն և Ճշմարիտ հաւատք յամ ազգս և
՚ի լեզուս ուղղափառ քրիստոնէից . որ յառա
քելոց անտի անընդհատ յաջորդութիւն մինչեւ
ցարդ կոյ հաստատուն ՚ի մի՝ սբ՝ կաթուղիկէ՝
և առաքելական եկեղեցւոջ . և կացցէ մինչեւ
ցյաւիտեան : Ապա ամ եկեղեցիք ուղղափա
ռոց որ ընդ տիեզերս ամ՝ պարառութիւն ամ
ուղղափառ ազանց , են՝ և ասին կաթուղիկէ
եկեղեցի . որպիսի է և հայաստանեայց սբ եւ
կեղեցին , հիմնեալ ՚ի վը քարոզութեն սբ ա
ռաքելոց , ՚ի սահմանադրուեն ուղղափառ ժո
ղովոց , և յողջամիտ վարդապետուեն սբ հարց :
Եւ իւրաքանչիւր քրիստոնեայց յորմէ ազգէ և
իցէ , որ զնոյն Ճշմարտութիւն հաւատոյ ունին է ուղ
ղափառ : Եւ եթէ ընդ ուղիղ հաւատոյն ա
րացէ ևս զգործս բարիս , և բարի խոստու
վանութիւն ելցէ յաշխարհէ՝ ըստ կանոնաց սբ
եկեղեցւոյ , է որդէգիր այ , և ժառանգ երկ
նից արքայութեան :

Ե Բազումք միայն Ճանաչեն զանձինս թէ
են քրիստոնեայք , բայց ոչ գիտեն զարկաւոր
գիտելիս քրիստոնէական հաւատոյ և ուղղա
փառ վարդապետութեն : Ա ս ՚ի լինել խօսից

զհաւատոյ՝ և զվերաբերելոցն առ հաւատս , զընդդէմն ուղղափառութե խօսելով մեղանցեն . կամ օտարացուցիչս իմն խօսելով լսելեաց՝ առիթս տան գայթակղութե : Ուրեմն արժան է անցուն գիտել զայնս՝ որք առ հաւատալիսն վերաբերին , և կարեւորք են ՚ի փրկութի :

Ղ Պարտաւոր են ծնօղք՝ ուսուցիչք՝ կըն քահարք՝ և խօստովանահարք՝ ուսուցանել համբակաց զէական մասունս հաւատոյ՝ և զուղղափառ վարդապետութիս՝ ըստ աւանդութե սբ եկեղեցւոյ . ևս և զբարոյական առաքինութիս : ՞ Օ ՚ի ուղղափառ հաւատքն է՝ որ տայ ճանաչել զած . և է նա իմն և խարիսխ ամ առաքինութեանց : Առ որ յարի յոյսն , որ է աներկմիտ ակնկալութի ՚ի ժառանգել զխոստացեալ բարիսն , զոր ծանոյց հաւատքն : Առ նմին յարակցի և սէրն , որ է միաւորիչ ընդայնմ՝ զոր հաւատայ , և առ որ յուսայ մարդն : Ուստի հաւատն տայ ճանաչել զած . յոյսն առ ոյն հասուցանէ . և սէրն միաւորէ :

Եւ սէրն կատարեալ ոչ գիտէ դադարիլ ՚ի ներդործութէ իւրմէ . զի եթէ առ վայր մի լուեսցէ ՚ի սիրելոյ՝ անդէն կորուսեալ զզօրութի իւր՝ շիջանի , և ոպ թէ մեռանի . վայ հարկաւոր է նմա ելուզանել միշտ զներդործութիս սիրոյ . ֆա սիրել զած ՚ի վեր քան զամ . գոհանալ զնմանէ յամի . օրհնել զնա . ոչ խնոյել յինչա՝ և ՚ի սիրելիս , ՚ի մարմին՝ և ՚ի

կեանս վասն սիրոյն այ . խորշել յամմեղաց .
միամոտութե սրտիւ ծառայել նմա . կատարել
պամկամս նը . ճանաչել զերախտիս նը . յու¹
սալ ամի առ նա . և յանձինս բերել զայլ ամ
ածահաճոյ առաքինութիս , որք վերաբերին
յամբողջութի և' ի կատարելութ սիրոյ : Օ է
սէրն է պսակ հաւատոյ և յուսոյ . և ըստ ա
ռաքելոյն՝ է լրումն օրէնաց . զի զսիրոյն պատ
ուիրանէ ամ օրէնք և մարդարէք կախեալ
կան : Ապա հաւատքն է իբրև արմատ . յոյսն
իբրև ոստ . և սէրն իբրև պտուղ :

Է հաւատքն և յոյսն դադարին ըստ ներ
գործութե՝ ՚ի ժառանգել հաւատալեաց և
յուսալեաց , և մնան միայն ըստ ունակութե :
Խսկ սէրն որ առ ած՝ ոչ երբէք գիտէ դադա
րիլ , թէ ըստ ներգործութե , և թէ ըստ ու
նակութե . մանաւանդ թէ առաւել ածի և
զօրանսայ , յորժամ զսիրելեան փարի , և ընդ
նմա միանսայ : Խսկ նշան սիրոյն այ՝ է սէրն
ընկերին . զի զած պարտ է սիրել վս իւր , և
զընկերն վս այ : Լաւ ողբասցէ զվեճակ նց ,
որք բանիւ լոկով խռատանան ունել զսէր ,
բայց իրօք և ոչ մի ինչ արդիւնս սիրոյ ցու
ցանեն առ ած , և առ մարդիկ :

Ը Առաքինին յամ՝ ՚ի կեանս իւր երկնչն
և դողայ , զի մի կորուսցէ զարդիւնս առա
քինութե իւրոյ . ըստ այնմ , * ԱՇիւ և դո
ղութեամբ զանձանց փրկութի գործեցէք :
|| Քէլեպ . Բ . 12 : Ա . Ալ այս երկիւղ ոչ պատ

Ճառէ ՚ի նմա զտրտմական և զտանջօղ կիրս ,
այլ յաւէտ յառաջ ածէ զմտադիւր և զուրա
խական բերկրութիս . ըստ այնմ , * Ուրախ
եղիցի սիրտ իմ յերկնչիլ յանուանէ քումմէ :
|| սուշ . Ֆէ : Եւ որքան վերամբարձ թուչի սյն
պիսին ՚ի բարձրութի առաքինութե , այնքան
զօրանայ ՚ի նմա երկիւղ անկման . և որքան
երկնչի յանկմանէ , սյնքան վերասանայ ՚ի գա
դաթն գերագոյն առաքինութեց : Ուստի
ոչնչնչ փոյթէ նմա զրկիլ յընչից , անկանիլ
յիշխանութե , տարագրիլ ՚ի հայրենեաց , կո
րուսանել զառողջութի և զմարմին . զի քաջ
գիտէ նա , թէ սոքա են անցաւոր , և ՚ի բնուէ
իւրեանց կորատական . իսկ վարձք առաքինու
թեան՝ որ է փառքն արքայութե , է անկողսպ
աելի , և յաւիտենական մեծութի հոգւոյ :
|| ոյ ընդ պէս պէս ձախորդութիս աշխարհի
որք կարեն պատահիլ բնկեան , ոչտիրի , և ոչ
ընկճեալ լքանի . այլ խնդամիտ բերկրանօք
հրճուի , և զօրանայ ՚ի հոդի իւր . զի ունի
աներկեայ յոյս՝ որ առնուլ ՚ի տնէ զվարձս
վատակակոց իւրոց ՚ի յաւիտենական կեանս :

թ . Այր առաքինի և կատարեալ չածէ ՚ի
միտ զւարին զըր արար . և ցաւի ընդ այն՝ զո
րով տարտամութե զանց արար : Քիշատակէ
միշտ վերախտիս բարերարին , և մուռանայ իս
պառ զանիրաւութին զըր կրեաց յումեքէ :
Դաւական համարի զիւր սակաւ գոյսն . և ոչ
ինչ վարկանի զայլոց զւաղումն : Բնկերակցի

ընդ արանց բարեաց , և հեռի կայ՝ ՚ի հաղորդակցութէ չարաց : Առաջի մեծամեծաց պատկառ կայ և լուէ , և ընդ հաւասարս և փոքունս սիրով կենցաղավարի : ՚ի բարս հեղէ և խոնարհ , և ՚ի բանս քաղցր և սակաւախօս , և առամենեսին հաւատարիմ : ՚ի յաջողութեն ոչ բարձրամտի , և ՚ի ձախորդութեն ոչ լքանի : լինի բարեկամ սակաւուց , և թշնամի ոչ ումեք : Ամենեցուն բարիս առնէ ողքան կարէ . և ոչ ումեք չար ինչ առնէ՝ թէ և կարէ : Իսկ յաւուրս մեր նա ոչ վնասէ ուրուք , որ չէ կարօղ վնասել . զի ժամանակն գոլով չար , հազի՞ւ դտանի ոք ուրեք , որ կարօղ իցէ վնասել՝ և ոչ վնասեսցէ :

Ճ Առաքինին յաւէտ կամի՝ ՚ի կենաց զըր կիւլ՝ քան զհամբաւ բարեմասնութեան իւրոյ բժաւորել . հաստատեալ՝ ՚ի միտա՝ թէ կեանք աշխարհիս այսորիկ դիւրեղծական է և անցաւոր . իսկ համբաւ բարի՝ անմահ է և մշտնջենաւոր . և անմտութիւն է փոխանակել զմշտնջենաւորն ընդ անցաւորին : Բայց յատուկի է առաքինւոյն առանց ակնկալութէ բարի համբաւոյ գործել զբարին . և եթէ համբաւ չար հանիցեն ևս , չարտմիլ ընդ այն . այլ ջանալ զի մի՛ չար ինչ արասցեն ինքեւան :

Ժան Որ ոք ուրախանայ՝ մինչ բարեհամբաւեն զնա այլք , և տրտմի՝ մինչ անուն չար հանեն զնմանէ՝ ծառայէ յօժարութեան և լեզուի այլոց . քանզի մարդիկ ոչ հային ՚ի

Ճշմարիտն կամ 'ի սուտն . այլ որպ կամին և
ախորժեն , այնպէս համբաւեն :

ԺԵ Ամենայն մեծագործ շինուածք հնուց
Ժամանակին կարեն անհետանալ . բայց անուն
բարի ոչ բնաւ կորնչի : Ինտրելի է մեռանիլ
բարի անոնամք՝ քան կեալ վասահամբաւուք .
զի որ թողու համբաւ բարի յաշխարհի , նա
և յետ մահու մնայ կենդանի . իսկ վասա
համբաւն կենդանւոյն մեռեալ է , թէ և
ապրեսցի զամս բազումն :

ԺԵ ԶԵ նա ոյր կատարեալ և պատուելի ,
որ ունի զհամբաւ կատարելութե և զպա
տիւ , այլ նաև որ ունի զկատարելութի յին
քեան , և արժանաւորութի պատուոյ : Օ ի
են բազումք՝ որք ունին զհամբաւ կատարե
լութե և զպատիւ , այլ չունին զկատարելութի
յանձին՝ և արժանաւորութի պատուոյ : Եւ
են բազումք՝ որք չունին զհամբաւ կատարե
լութե և զպատիւ , բայց ունին զկատարելութի
յանձին՝ և արժանաւորութի պատուոյ : Այսպիս
ըստ է լինել կատարեալ և պատուելի՝ քան ու
նել զհամբաւ կատարելութե և զպատիւ :

Պատիւն նման է ծխոյ . և որ զհետ պնդի,
ոչ պակասի նման արտօսր աշաց :

ԺԵ Փութալի՝ է գովութե լինել արժա
նաւոր , բայց փախչելի՝ է 'ի լսելոյ զգովուի :
Որ ախորժէ լսել զգովեստ իւր , կորուսանէ
անդէն զարժանաւորութի իւր : Այս կա
տարեալ յորժամառ երեսս զգովեստ իւր լսէ ,

՚ի սրանի խւրում զանձն անգուսնէ : Այսորժակն լսելոյ գովվեստ անձին, է նշան սնափառութեած՝ Շմարիս գովութիւն դէմյանդիման՝ է նման սուտ մարդահաճութեան :

ԺԵ Բազումք են որք գովին, բայց սակաւք են ՚ի նո արժանի գովութեած : Համբաւն բազում անգամ չէ համաշափ ընդ իրին՝ որ գովութիւն հռչակի . զի հասարակութիւն սովոր է առանց քաջտեղեկութեած՝ ՚ի վերքան զջմարտութիւն իրին հռչակ հարկանել : Համբաւն է ող ստուեր մարմնոյ եղեալ յարեւու. որ մերթանք քան զմարմինն և մերթ նուազի . վայ չէ արժան ամիւ հաւատու ընծայել համբաւոյ, այլ մանաւանդ խնդրելի է ճշմարտութիւն իրին :

ԺԴ Համբաւ գովութեած իմաստնոց կամ առաքինեաց՝ որ ննչէ ՚ի բերանս ռամկաց, նըմանի օդոյ, որ դիւրաւ փոփոխի յամգոյնս : Օ ի թէ հաւատալ արժան է, եթէ ջուրք ծովու կարեն մնալ անշարժ ՚ի հողմոյ, հաւատուլ ՚ի դէպ է և համբաւոյ ռամկաց . այլ ող ՚ի մեղմ ինչ հողմոյ շարժին ջուրք, նոյնպէս և ՚ի դոյզն մի կարծեաց փոփոխի դատումն և համբաւ նոցա :

Բարեմտանց է զմասնաւոր բարիս ուրուք գովութեամբ հռչակել :

ԺԵ Այս առաքինի պարտ է լինել ներանձնաւոր . ող զի խօսեսցի ընդ մարդոյ սակաւ, ընդ անձին յաճախ, և ընդ ոյ միշտ : Առանձնութիւն բռնադատէ զհոդին ելանել յերկինս,

և խօսել ընդ այ . զի ած ոչ խօսի ՚ի սրտի ու
ըուժ՝ բայց եթէ ՚ի միայնութեն նորա :

Առարկայ խօսակցութեն մարդոյ ըստ որում
է մարդ՝ վերածի յերիս . կամ ՚ի գովութի այ ,
կամ առ ՚ի ուսանիլ զՃշմարիտ ինչ , կամ առ ՚ի
ուսուցանել զկարեսորս . իսկ զոր խօսիցի ոք
օտար ՚ի սոցանէ , խոտորի ՚ի սահմանէ մարդ
կութեն . զի անդէն անկանի կամ ՚ի տրտնջանս
զայ , կամ յուսումն մոլորութեն , կամ յու-
սուցանել զանարժանս :

Ժը Առաքինութին առաւել աճի ՚ի կրել
զնեղութս վե այ . և որ սիրով գիրկս արկանէ
խաչին՝ ոչ զգայ զգժուարութի ինչ : Օ է
յորժամ հաստատութէ դնէ ոք ՚ի մտի կրել
զվիշտս՝ առ ՚ի պահէլ զաւատն և զսէրն այ ,
վիշպն անդէն վախճան առնուն : Եւ որ ՚ի
միտ ածէ զքարչարանս քի այ մերոյ , համբերէ
ամ նեղութեն աշխարհի . մանաւանդ զի ար-
ժանի համարի զանձն դառնագին ևս վշտաց
և նեղութեան :

Յանկ փշալից արգելու զյափշտակօղս մը
տանել յայգին՝ և ապականել զարդիւնս նը .
նեղութիւնք և վիշտք զմողուն թշնամոյն
հոգւոց մտանել ՚ի սիրտ առաքինւոյն , և կո-
ղոպտել զքարեմութի նորա :

Որ կարէ բառնալ զխացն ՚ի վը ուսոց , չէ
արժան նմա գետնաքարշ ածել :

Ճթ Զէ արժանի վարձուց որ առնէ զբա-
րին , այլոր համբերութէ յարատեէ ՚ի նմին .

զի իսպառ համբերութին է՝ որ պատկե ըզ
դործն բարի : Որ յետս կասի՝ ՚ի բարոյն
զոր սկսեալ է առնել, խանգարէ զարարեալն.
և չէ յայտ՝ թէ կարասցէ առնել լաւագոյն
ևս քան զայն :

Ի Պատմինոյն վարձք և պարծանք բազ
մանան, մինչ կարասցէ բեղմաւորել զար-
դիւնս բարեաց ՚ի դառն վիշտ . զի յայնժամ
նմանի երկրի, որ բուսանիցէ զուշանս ՚ի մէջ
փշոց : Քանզի և մարդիկ զարմանան և
գովեն, յօրժամ տեսանեն զերկիր փշահեղձ
լի շահեկան պտղովք :

Իս Ո՞ի տրտմեսցին առաքինիք՝ մինչդեռ
տեսանեն զայլս ՚ի յաջողութե ճոխացեալ, և
զինքեանս յանյաջողութե ներդեեալ . այլ
յայնժամ պահրտ է նց տրտմիլ, մինչ տեսանեն՝
թէ յօրացեալքն ՚ի մեծութեան, ոչ ունին
փոյթ զառաքինութեանց :

Ի՞՛ Պործք դժոնարինք՝ և իբր անհնա-
րինք՝ դիւրաւոր են այնմ, որ անձանձիր ջա-
նոյ գտանել զելս . գործք դիւրինք՝ դժոնա-
րին լինին այնմ, որ դանդաղի մեղկութիւն և
լքանի : Որ կամի լինել առաքինի, աշխատ
լիցի կրթել զանձն իւր ՚ի գործո առաքինութե .
որ թէպէտ ՚ի սկզբանն երեխ կրել դժոնա-
րութիւնը, բոյց ապա զբայ զանակնունելի
իմն դիւրութիւն և զչանգիտ . ոոկ վաստակեալն
՚ի ճանապարհի՝ մինչ հասանէ յիջեվանն, և նա-
ւագնացն՝ ՚ի դէմեգեալ նաւահանգիստն :

ԵՌ ԶԵ Քաջութիւն զինուորի մղել՝ ի պատերազմ. այլ յաղթել թշնամոյն։ Ար պանծոյ ՚ի քաջութիւր ՚ի ժամանակի խաղաղութե, վաղ աճապարէ ՚ի փախուստ ՚ի ժամու պատերազմի։

Պատերազմէ կեանկք մարդոյ ՚ի վը երկրի։ և յաղթօղք ժառանգեն զմրցանակն։ Արդ՝ է մարդ՝ որ մարտնչի ընդանձին։ է՝ որ ընդաշխարհ։ և է՝ որ ընդ մարդ։ բայց ոմն յաղթէ, և ոմն յաղթի։ Յաղթէ նա անձին, յորժամզանկարդ բաղձանս իւր նուաճէ։ յաղթէ նա աշխարհի, յորժամզանկարդ և զմեծութիւ արհամարհէ։ յաղթէ նա մարդոյ, յորժամբարիս առնէ ամենեցուն։ և համբերէ վեասուց՝ զոր ընդունի յանիրաւ մարդկանէ։

Խոկ յաղթի յանձնէ, յորժամզաճոյս մարմնոյն կառարէ։ յաղթի յաշխարհէ, յորժամփառաց և մեծուեն ծառայէ։ յաղթի ՚ի մարդոյ, յորժամշար փոխանակ շարի հատուցանէ։ Ապա ջանասցուք յաղթօղդ գտանիլ յամի, զի առցուք զպասկն փառաց։

ԵՌ Անարի վատասիրտէ՝ որ առ ահի կորը տեան ընչեց՝ կամ մեծուեն յանձն առնու անի բաւիլ առ անծ կամ առ ընկերն։ զի լսւէ մեռանիլ քաջութէ, քան կեալ յանցաւորութ։

ԵՌ Նաերք եթէ ոչ ջանասցին զբարիս գործել առաւել քան զերիտասարդա՝ ոչ կարեն արդարանալ։ վս զի ծերս թուլացեալ են բոնութիք ախտաւոր կրից։ և զի մերձ են ելանել յաստի կենցաղոյս, պարտին զպաշար

յաւիտենական ուղղոյն պատրաստ ունիլ միշտ։
 ի՞ն Որ յերիտասարդութե՛ իւրում պատրաստէ զեռանդն հասակին և կրից, և ոչառաքինաբար կեսյ, եղեալ՝ ի մտի՝ ի ժամանակի ծերութե՛ գործել զառաքինութի՛ . այն պիսին յորժամհասանի ի ծերութի՛, և մօտի ի դրունս մահու, ունի պատճառել զտկարութի՛ մարմնոյն։ Ա. Ալքանզի չէ հնար ի գերեզմանի գործել զառաքինութի՛. ապա իրաւամբ ժառանգէ զպատիժ հեղգութե՛ իւրոյ։

ի՞ն կեանք մարմնոյն է հոգին, և կեանք հոգւոյն է հաւատքն կենդանի . կեանք հաւատոյն է սէրն, և կեանք սիրոյն է յոյսն . կեանք յուտոյն է խոսառումն այ, և կեանք խոսառմանն է Ճշմարտութի՛ն այ, որ ի խոսամանն է հաստատ . ապա պինդ կալցուք զհաւատոյն Ճշմարտութի՛ . որով ճանաչեմք զՃշմարիտն ած . սիրեմք զնա . և յուտամք աներեսութից պարգեաց նը, զոր խոստացաւ շը նորհել այնոցիկ, որք հաւատով յուտով և սիրով ծառայեն նմա :

ի՞ը Փառք կենցաղոյս՝ և հեշտութի՛ մարմնական՝ նախքան զստացանին քաղցր թունին. այլ զկնի ստացմանն դառնացուցանեն զախորժակն մարդոյ . իսկ գիտութի՛ և առաքինութի՝ որք են մտաց և հոգւոյ հեշտութի՛, զներհակն դործեն. զի յառաջքան զստացանին դառն և դժոնարին թունին . այլ զկնի ստացմանն քաղցրացուցանեն զհոգին . զորմէ առէ մարգարէն.

* **Պ'աշակեցէք և տեսէք**, զի քաղցրէ :

|| սովորութեան . լդ :

Առաքինութին ողէ գեղեցիկ, նոյնպէս է
և փափուկ . մինչ զի դպրու մի պակասութիւն
մեծապէս արատաւորի . զի է իբրև պարզ
հայելի , որ 'ի շոգեաց աղօտանայ . կամ իբրև
դիւրաբեկ ապակի , որ 'ի թեթև ինչ բաղամա
նէ խորտակի . վայ զգուշացին առաքինիք
յինչ և իցէ պակասութէ . զի մի տղեղացին
դեղափոյլ երեսք առաքինութե իւրեանց :

Ե Ոչ ամ որ յերկրի կենցաղավարի՝ և ըդ
վայելքութիւնս աշխարհի ունի համարի աշխ
արհասէր . այլ այն՝ որ մոզք և կամզք 'ի
սէր և 'ի վայելքութիւն աշխարհիս բեեռեալ
կոյ . քանզի հնար է մարմնով յերկրի բնակիլ ,
և հոգւով յերկինս ճեմել . ըստ առածին՝ կոյ
յաշխարհի , չեսոյ յանապատի :

Է Ո՞ր ինչ առնես ընկերի քում , զայն
առնես արարչին քում . զի անձ ինքեան համար
ի՞ զոր առնես այլում . զի և նա իւր է արա
րած . և ըստ այնմ հատուցանէ քեզ՝ եթէ բարի
և եթէ չար : Ապա ջանա՛ բարի առնել ընկե
րի քում , զի և քեզ բարի լինիցի . զի զոր ինչ
սերմանես , զնոյն ժողովես :

Եւ Աարդիկ՝ բազում անդամ ընդ անձանց
հակառակին . զի զոր ունիլ կարծեն , զնոյն կո
րուսանեն . և յորմէ փախչել կամին , 'ի նմանէ
ըմբռնին : Ո՞ղ որկրամոլն կամելովհեշտանալ ,
և ընդ երկար ապրել , խճողէ զորույն իւր

պէս պէս կերակրովք և ըմպելեզք . սակայն նոքիմբք առաւել տանջի , և կարճէ զկեանս իւր : Հպարտն՝ ցանկանալով յամէ փառաւո ըիլ , մեծամեծա բարբառի զանձնէ իւրմէ , բոյց ոյնու առաւել ևս անգոսնի . զի ամենեքին արհամարհեն զհպարտն : Պռղն՝ անաշխատ կենաց փափագանք՝ ձեռնարկէ գողանալ զինչ այլոց . բոյց ըմբռնեալ ՚ի վախճանի , չարաչար մեռանի : Ազա միայն առաքին ւոյն է կեալ բարեբաստիկ :

Ե՞ւ Զիք պատուական քան զկեանս , բոյց չեք անարդ քան զնա յաշա մոլեաց , որք յում պէտս վատնեն զնա վասն անարժան իրաց : Քանզի սնափառն ՚ի վտանգի դնէ զկեանս վո փառաց . ագան՝ վո ընչեց . բղավտոյն՝ վո հեշտութե . ոխակալն՝ վո հանելոյ զվրէժ . սոքա իրաւամբք զըկին ՚ի կենաց , զի ո՛չ Ճանաչեն զյարդ նորա :

Ե՞ւ Ա՛չքէ , որ ո՛չ սիրեացէ զիմն , և ո՛չ յուսասցի իմիք , զի ՚ի նմա հանգիցեն բաղանկք իւր . քանզի վախճան սիրոյ և յուսոյ՝ է լրումն բաղձանաց . ապա բարիք և չարք ունին զսիրելիս և զյուսալիս , յորոց ակնկալեալ սպասեն առնուլ զլրումն բաղձալեաց և յուսայեաց՝ իբրև վարձ և տրիտուր սիրոյ իւրեանց և յուսոյ :

Ա՛րդ՝ բարիք սիրեն զած և յուսան առնա . վոյ վարձք նց յանձուստ պարգևի նց , որ է հանգիստն յաւիտենից : Խոկ չարք սիրեն

զաշխարհս , և յուսան իրաց աշխարհի . վայ
յելանել նց յաշխարհէ , մնան անվարձ յոց . զի
զոր սիրէին և որում յուսոյին , մնաց անդէն
յաշխարհի : Քանզի աշխարհս ոչ կարէ ՚ի
հանդերձեալ կեանս վարձատրել զբիրօղա իւր .
սակայն սիրելին բարեաց ած՝ որ երկնի և
երկրի է ար , հանդուցանէ զբաղձանս բար-
եաց . նոյն ինքն լինելով նց վարձք սիրոյ նց
և յուսոյ ՚ի հանդերձեալն :

Հ Հաստատուն և խորարմատ ծառք՝ թէ
պէտ և ոստովվը յամ հողմոց շարժին , ոյլ կան
մնան յարմատս անկործան . ըստ այսմ այր առա-
քինի յարմարէ զինքն ըստ փոփոխման դարձ
ուածոց ժամանակի , մնալով անշարժ ՚ի բա-
րեմոտութե իւրում : Քանզի ՚ի փոփոխիլ
ժամուց և ժամանակաց՝ եթէ փոխեսցի մարդ
՚ի բարեմոտութեն , ոչ ոյլ ինչ շահի՝ բոյց եթէ
զինքաս : Այս է խմաստութի մարդոյ , ՚ի յա-
րաշարժ դիպուածս ժամանակի՝ ՚ի բարի միտս
մնալ հաստատուն :

* Ազակէ զէւ եղբարէ՝ գլուխն այ՝ պատրաստել
շնարդն չեր պատրաստ չենտանէ , ով , համոց այ , զեօ
սուն պաշտօնե չեր : || Հոռովմ . ժբ . 1 :

* Հաստատարին է բանս , և այսն չափի զէւ հաստա-
տան լինել , զէ ժայթ արացեն բարեաց գործոց վերա-
հայու լինել հաստատացեալն ած , զէ այնէ բարի և
օդապահը նաբեհան : || Տիտ . դ . 4 :

ԳԼ. ԺԴ

Թ Պահապան պատույ և համբաւոյ՝ է խոհական դատումն մտաց և ընտրողութին . զի՞ որ քաջ խորհի , բարոպ դատի , և ըստ պարագայից ժամանակին յարմարէ զգործն . ոչոք կարէ ստգատանել զնա իւիք . այլ մանաւանդ մատուցանէ նմա զգովութի և զմեծարանս :

Ե Ինքնահաւանութի է առնել զամ՝ միայն ըստ իւրում դատողութեն . և յիմնորութի է առնել զամ՝ միայն ըստ այլոց դատողութեն :

Դ Ծաներունի ոք՝ որ ընդ լիութեն աւուրց ունի զկատարելութի մտաց , դովութեն է արժանաւոր : Ո ի՞ բազմամեայ փորձառութեն ուսաւ ընտրել զաւն ՚ի վատթարէն , և զօդտակարն ՚ի վնասակարէն : Ապա երիտասարդք մի՛ հատանիցեն վճիռ դժուարին իրաց յառաջ քան զփորձառու ծերս . այլ նախ ընդ նոսա ՚ի խորհուրդ մոցեն , և ըստ դատման նոցա որոշեսցեն առնել :

Ե Երն՝ եթէ չիցէ խոհական՝ որո՞վ պահան չէ այն արգոյ հասակ , երիտասարդէ է անփորձ . և երիտասարդն՝ եթէ չիցէ եռանդնոտ , ծեր է ուժաթափ :

Դ Զէ իմաստութի միամսութեն սրտիւ վաղմաղակի հաճ և հաւան լինել խորհրդոյ իմիք՝ թէև օգտակար երևեսցի , մինչեւ իցէ ՚ի քննին մատուցեալ զամ պարագայս նր . զի՞ դուցէ վնաս ինչ պատահեալ , զեղը և

ապաշաւ զինի եկեսցէ :

Ե Խաբէութի մասց է երկըսյական կար
ծել զամանցո, որք ստուգին եղեն յանցեալ
ժամանակս . և ոչ հաւաստալ՝ որք լինելոց են
յետ այտորիկ . և միայն հաւաստի համարել
որք ակներև տեսանին լինել այժմուս.զի այս
պիսկըս ոչ իբրև բանաւորք ՚ի գործոց ներ
կայիս զանցեալսն և զապաւնիս իմաստասի
րեն . այլ իբրև անբանք զգործ ներկայիս մի
այն ճանաչեն՝ որում ականատես եղեն , և
զայն ևս վաղվաղակի մոռանան . կամ զոր ՚ի
հարկէ պատճառաւայն գան յառաջ, ըստ դիպաց
իմն վարկանին լեալ . և զայն ոչ գիտեն , թէ
հանդերձեալ են կրել վնասուք անձանց զպու
տիժ անհաւանութեն իւրեանց :

Պ Ո՞ւծի զգուշութեն պէտո ունի խօ
սիլ ինչ՝ կամ խորհուրդ տալ իշխանաց առ ՚ի
ուղղել զնու : Օ ՚ի թէ ծանիցեն նոքա ըդ
Ճմարտութի բանիցն ասացելոց, և զսխալմունա
իւրեանց , բայց տակաւին զայրանան , եթէ
իցեն ՚ի բանս խրատու փոքր մի ծանր և խիստ
բառք . զի կենցաղավարութեն ընդմարդելու
զաց՝ ուսեալ են շողզորթել , և լսել միշտ
զշաճուկս : Ուստի բաւական է խոյթել զնու
Ճմարտութի պարզ բանից , մինչ կամին ճա
նաչել զսխալման իւրեանց :

Է Խոհեմն առ ստացումն միոյ իրի ոչ դնէ
՚ի վտանգի կորստեան զբազումն . և վասն
բազում անհաւաստի իրաց՝ զմի հաւաստին ոչ

Յողու ՚ի ձեռաց :

Ը Եթէ դէպ լիցի կոռնիլ ընդ ումեք ,
քննելի է նախ՝ թէ ունիցի արդար իրաւունս
կոռնելոյ : Երկրորդ՝ թէ ը ումկոռնեցի , կմ
զի՞նչ զօրութի իցէ նր : Երրորդ՝ կարողութ
իւր իցէ՞ բաւական յաղթել նմա : Առաւել
յուսալի է յաջողակ ելից հասանել խոհական
խորհրդով , քան գաղանական վստահութե :

Թ Ո՛չ վայելէ քաջ զօրավարի անսարի վա-
տութե յետս կալ ՚ի պատերազմէ՝ թէև իցէ
վտանգաւոր , մինչօդուտն հայրենեաց ստիւ-
պէ . զի ըստ է նմա մեռանիլ փառօք՝ քան ապ-
րիլ անսարդանօք : Բայց և ոչ յանդուգն հա-
մարձակութե միջամնելի լինել ՚ի թշնամիս ,
խնդրելով զկորուստ անձին . զի խելագարութ
է արկանել զանձն ՚ի վտանգ մահու՝ չունելով
ուստեք ակնկալութի յաղթութե :

Որ ո՛չ վարի խոյեմութե , կշռելով զեար
զօրութե իւրոյ և զվեճակ թշնամնոյն , ա-
ռաւել յանդուգն է քան արի . և արժանի է
նախատանաց և պատուհասի՝ քան գովութե
և պասկի . զի միջնորդ առանալոյ զսաղթութին
է սպասել դիպողագոյն առթի :

Ժ Եթէ կամեցի ոք բուռն հարկանել
զգործոյ իմեքէ , որ իցէ մեծ և դժուաբին ,
պա՛րտ է խորհրդակից ունել զիմաստունս և
զառաքինիս , և ունինդիր լինել նոցա . զի
եթէ ձախողակ ինչ դիպեսցի , մի՛ ոք կարիցէ
մեղադիր լինել նմա :

ԺՌ Ո՞նդ դէմքնութե մարտ մղէ , որ ձոդ
տի առնել զգործս՝ որ առաւելէ քան զկար
անձին իւրոյ :

ԺՌ Ո՞ր փութայ առնել զ՞և և իցէ գործս,
և ոչ սպասէ դիպողութե ժամանակի . է նա
որպ ծառ՝ որ յառաջքան զժամանակին արձա
կէ զծաղեկ . բայց վնասեալ՝ իցրայ՝ ոչ ժա
մանէ բերել զպտուղ :

ԺՌ Ո՞ր ինչ կամի ոք ասել կամ առնել,
նախապէս պարտէ զամ պարագայս նը մտա
ծել . զի մի' յետոյ վնաս ինչ զհետ եկեսցէ ,
և վերջին զղջումն ոչինչ արժեսցէ : Խորա
խորհուրդ մտածութե կարօտի գործն , առ
որ միանգամ ձեռնամուխ եղեալ՝ անհնարինէ
դառնալ յետս :

ԺՌ Վարդիկ յոլովակի վո սակաւ օգտի
վնասին բազմօք . զի հայեցել միայն յառաջակայ
օգուտն՝ ոչ մտադիր լինին մեծամեծ վնասուց՝
որք կարեն զհետ գալ նմին . զօր եթէ ուշի
ուշովդիտեալէր նց , զգային արդեօք և ըզ
գուշանային . վոյ ոչ զսակաւ օգուտն խընդ
րէին , և ոչ զըազում վնաս կրէին :

ԺՌ Խորհրդականք ու իցէ աղքի կամ քա
ղաքի՝ պարախն լինել աղատ ՚ի կրից . ֆ ՚ի սի
րոյ և յատելութե . որպ զի զօգուտն հասա
րակաց կարասցեն տնօրինել :

ԺՌ Եթէ ոք կոչեսցի ՚ի տուն խորհրդոյ ,
մի' վաղվաղեսցէ խօսիլ զկարծիս իւր , մինչե
ոչ հասցէ նմա կարգն խօսելոյ :

ԺԵ ’Ի ժողովս բազմութե՛ յորժամ խօսք
ինչ լինիցին վ՛ս կարեռը խնդրոյ իմիք . ո՞չ
պարտ հայիլ թէ ո՞լէ որ ասէ . այլ թէ զի՞նչ
է՝ զոր ասէ . զի մարթէ լինել թէ ասացուած-
միոյ ումեք ’ի նուաստից կամ ’ի փառունց՝ իցէ
յաւէտ օգտակար քան զկշուութիս բազւմ
իշխանաւորաց . ապա չէ արժան վ՛ս անձինն
նուաստութե՛ անգոսնելի զըանսն համարել :

ԺԵ Զէ բաւական գիտել զխօսին բար-
ւոք , այլև զյարմարութի ժամանակին և ըլլ
տեղւոյն . զի չարացար նուագէ քնարահար , որ
’ի տուն մեռելոյ գեղգեղէ զերգս հարսանեց .
Որ ’ի խնջոյս ուրախութե՛ խօսի զքանս աղեւ-
տից և տրտմութե՛ , զքաղցր սիւկ գեղեցիկ
գարնան՝ փոխէ ’ի ցրտաշունչ օդ ձմերան :

ԺԹ Օ գոյշ և չափաւոր պարտ է խօսիլ
զանձնէ . զի մի՝ ’ի գովեստ իւր շրջեացի բան-
քըն . որ թէպէտ և ստոյգ և հաւաստի իցէ ,
տակաւին կարծի լինել երկբայական . Որ ո՞չ
ուսաւ զգուշութե՛ խօսիլ , այնպիսոյն ար-
ժան է իսպառ լռել :

Ե՛ Անձն որ արժանի է գոլութե՛ , պարտ է
զայն գովել ըստ չափու առաքինութե՛ նո-
րին , և ո՞չ առաւելազանց . իսի եթէ հարկն
ստիպեացէ խօսիլ զպակասութի ուրուք , խօ-
սեացի զեղցելով , և ո՞չ ճշդիւ :

Ի՛ Ախորժելի է մարդոյ խրատել զայլս՝
քան թէ զանձն իւր . գուցէ համարի թէ
առաւել գիտիցէ զըսչ և զվասս այլոց քան

զիւրն։ Ուստի թէ իմաստուն ոք իցէ և թէ
տղետ՝ յօժարամիտ բերի ՚ի խրատ պայլոց ։ իսկ
անձին իւրում՝ կամ ոչ բնաւ, կամ հազիւ
երբէք գտանի խորհրդատու և խրատիչ ։ սա
կայն արժան է գիտել ամենայնի, թէ իւ-
րաքանչիւրոք առաւել պարտական է հոգալ
զանձնէ քան զայլոց ։

ԻԵ Պարտ է կարծել, թէ կարելի է յամ
մարդոյ հասանել ինքեան չար ։ բայց ոչէ
պարտ չար ինչ առնել ումեք ։

Ո՛չ խոհեմութիւն իսպառ զշետ պնդել
տկար թշնամուց, զի՞ մի գուցէ յուսահատեալ
ընդդէմ դարձին, և զօրացի ՚ի վերայ հա-
լածքն իւրոյ ։

Բազում բարեկամք երբեմն ոչ կարեն օդ-
նել յորժամ անկանի ոք ՚ի տառապանս ինչ.
բայց մի միայն թշնամի կարէ վնասել մարդոյ՝
մինչդեռ կայ ՚ի յաջողութե ։ ապա ջանալի է
ոչ բնաւ ունել թշնամի ։

Ի՛՛ Երկու ինչ յաւետ հարկաւոր են առ
երջանկութիւն ազգի կամ քաղաքի ։ խոհեմութիւն
և զօրութիւն ։ Խոհեմութիւն զի օդտակար օ-
րինօք և խոհական խորհրդով կառավարեսցէ
զազգն կամ զքաղաքն ։ Օ օրութիւն զի պահ
պանեսցէ քաջութիւն յարտաքին թշնամեաց ։ և
զյարուցեալսն ՚ի վը, որք կամին զիսաղաղութիւն
ամբոխել ՚ի բայց հալածեսցէ ։

Բայց հասարակութիւն է մարմին ինչ, որոյ
աչք են խոհեմութիւն, և ձեռք՝ զօրութիւն ։ և

ոսկ ձեռք առանց աշաց անպիտան են ՚ի գործ, մանաւանդ թէ և վսասակար . զի փոխանակ հարկանելոյ զթշնամիս, անդիտացեալ հարկա նեն զբարեկամն . այսպէս և զօրութի առանց խոհեմութե է վսասակար : Այս մեծ վսաս է ազգի կամքաղաքի՝ յորժամ պակասին խոհեմ կառավարք :

ԵՌ Այր հանճարեղեթէ ՚ը յօդուտո հասարակաց վարեսցէ զՃարտարամութի իւր, նման է այնմ՝ որ ունի զգեղեցիկ ոտս, բոյց ՚ը կարէ քայլել :

ԵՌ Ան ոմանք՝ որք ուրախութի երթան ՚ի գործ ինչ՝ կամ ՚ի զեօսանս . բոյց բաղում անդամդարձ առնեն տրտմութի, կամ ՚ը բը նաւ կարեն դառնալ : Քանզի ՚ը գիտեն քաջ կշռել զանդամանս տեղւոյն՝ և ժամանակին՝ և ընկերացն . վայ շարժին անզգուշաբար, և վսասին չարաչար : ԶԵ բաւական մարդոյ խոհ կալ զգնացից իւրոց, այլ և զամ պարագայից նորա՝ զի մի՛ անկանիցի ՚ի վտանգս . կամեթէ անկանիցի, նախատես գոլովնմին՝ վսասեացի սակաւ, և գտցէ զելս :

ԵՌ Յաւէտ զգուշալի են փռքը չարիք քան զմեծամեծ չարիս . զի յորժամ վտանդ ինչ ձանաչի լինել մեծ և մահաբեր, հնարս խնդրեն մարդիկ՝ և զերծանին . իսկ յորժամ տեսանի լինել փռքը՝ չնչին իմն համարին զնա և անվսաս, և ոչինչ չոգան . վայ ըմբռնին ՚ի նմանէ և վսասին : Ուստի պա՛րտ է առն խոհականի,

ոչ լինել գլխովին վատահ , և ոչ կարի իմն կաս
կածոտ . այլ զմիջինն ունել շաւիդ զգուշա-
ւոր . զի վատահն յոլովակի գահավիժէ ՚ի վը-
տանդս . և կասկածոտն միշտ տանջի յերկիւ-
ղէ վատանդին :

ԵՇ Հնարէ մարդոյ գիտել զխորս ծովու ,
այլ ոչ զգաղտնիս սրախ . և չէ իմաստուն , որ
՚ի բանից և՚ի գործոց ուրուք կարծէ ճանա-
ցել զխորհուրդս նր : **Օ** ի բազում անդամ
այլէ սիրտ ուրուք , և այլ բանք նր և գործ .
և իմաստուն ոք որչափ և համարիցի իրազեկ
եղեալ խորհրդոց նենդաւորին , տակաւին
խաբի ՚ի նմանէ . զի անդունդ անհնարին է
սիրտ առն նենդաւորի :

ԵՇ **Օ** սիրտ ընդ լեզուի փոխանակէ , որ
զցաւս սրախ իւրոյ պատմէ այնմ , որ միայն
մնոտի խոստմամբ սովորէ օգնել , և ոչ ծա-
գիւ մատին ՚ի գործ մերձենալ :

ԵՇ Այլ զգուշաւոր զկիրս ցաւոց սրտի իւ-
րոյ ոչ յայտնէ արտաքին նշանաւ գիմաց կամ
շարժմանց . գիտելով՝ թէ ոչ օգուտ ինչ յայն
մանէ ստանայ :

ԻՇ **Գ**իտնական ոք՝ մինչ հանդերձեալ է
խօսիլ զերեւելի ինչ խնդրոյ , պարտ է նմա-
զիւրաքանչիւր բառսն կշռել , և պարզ և մե-
կին իմացուածով բացատրել : **Օ** ի թէպէտ
գիտաւորութիւնը իւր իցէ ուղիղ , և բանկն ող
ջամփատ , բայց եթէ գտանիցի ՚ի բանսն մթին
ինչ կամ երկդիմի , լսողքդ առնուն զայն ՚ի

թիւր միտս. մանաւանդ եթէ իցեն հակառակա
սէր, և ատեցող ճշմարտութե . և դառն թշնա
մուբ վատահամբաւեն զնա իբրև մոլորամիտ :

Իսկ եթէ լաօղք իցեն մոլորամիտ , ծեքեն
զուղեղն , և մեկնեն չարաչար . և առնուն ՚ի
վկայութիւն խեղաթիւր կարծեաց իւրեանց .
և դայթակիղեցուցանեն զռամիկսն . և արկա
նեն ՚ի նո շըունջ և խոռվութիւն : Ապա մեծ
զգուշութիւն պիտի գիտնականաց ՚ի խօսիլ
ինչ . ոոկ զի մի կարասցեն չարացոյզ միտք գտա
նել պատճառս ՚ի խօսել զքարիս :

Ե Խոհեմն ո՛չ դատի զերս տրամսբաշխա
բար , այլ համեմատաբար . քանզի ո՛չ ամենեքին՝
ողք ամբարձեալ են ՚ի հաւասար իշխանութիւն,
ունին և զշաւասար փառս . և ո՛չ ամենեքին՝
ողք անկեալ են ընդ հաւասար պատժովք , ու
նին և զշաւասար տանջանս . զի փառք և տան
ջանք պէսպիսանան ըստ պէսպիսութե անձանց :
Ապաքին առաւել փուլորի նուաստ ոք բարձ
րացեալ յիշխանական պատիւ . և առաւել
տանջի ազնուական ոք իշխան՝ անկեալ ընդ
պատժովք : Ո ի նուաստ սկզբան՝ առաւել
մսեմեւ պանծալի երեւի վախճանն փառաւոր .
և փառաւոր սկզբան՝ առաւել դառն թուի
և տանջողական՝ վախճանն թշուառ :

Ես ՚ հիւանդութիւն , որ բժկի դեղուլ .
և է՝ որ պահեցողութե . է բաղձանք՝ որ պէտա
ռնի ջանից և աշխատութեց . և է՝ որ կարօ
տի ժամանակի և համբերութե . ապա թէ ոք

Ճիշտիցէ որոշել, և ըստ տեղւոյն՝ ՚ի վար արկանել, ոչ ընու բաղձանք և ցանկութիւնը նը. ող գնալ՝ ՚ի դէմ եղեալ տեղին՝ պահանջէ ըզ ջանս՝ զի հասանիցի. և մանգաղ արկանել յանդս՝ պահանջէ ժամանակ, զի հասունացիւ. Եշէ բաղձանք՝ որ խնդրէ զջանս միանդամյն և զժամանակս, ող բաղձանք գիտութեց և արհեստից. ապա գիտել զժամանակ աշխատութեան կամ համբերութեան՝ տայ լրումն բաղձանաց և ցանկութե :

Եւ Խոհեմք՝ յարտաքին նշանաց ինչ բազում անգամ ձանաչեն զնելքին յօժարութին մարդկան. վայ չէ առաջ՝ որպէս և նոքա համարին, թէ որ ՚ի փոխ առնու ուրախութէ, բազմիցս տրտմութէ հատուցանէ. և որ առնու տրտմութէ, վճարէ ուրախութէ :

Ա ասն զի որ ՚ի փոխ առնու ուրախամիտ՝ թուի թէ անիրաւ ոքէ. և ոչ կամի անդրէն դարձուցանել, կամ կարի՛ անագան. վայ մինչ բռնադատի տալ զպարտս իւր, իբրև թէ ակամայ՝ և տրտմութէ հատուցանէ : Խակ որ առնու տրտմութէ, երեխ թէ իրաւասէր ոքէ. և հաստատեալ է ՚ի միտս հատուցանել զպարտսն. զի զփոխն ՚ի ստիպմանէ հարկաւորութե իբրև ակամայ առնու . վասն որոյ վճարէ ուրախութեամբ :

Եւ Ա՛ինչ ընդ ումեք կենցաղալարիս ընտանեբար, դիր ՚ի մտի քում թէ եկեսցէ ժամանակ, յորմէ բաժանեսցիս խուռալութեամբ :

ապա զգացած լեր չոտալնմա զգաղանիս քո + զի
մի' զղջասցիս յետոյ :

Ե Եթէ տեսանես զյաջողութի ուրուք,
մի' դիցես՝ ՚ի մտի քում թէկ քեզ պատահես
ցի + բայց մինչ տեսանես զձախորդութի ու
րուք, այնպէս հաւատացես՝ թէ մարթէ և
քեզ պատահել. զի վաղհասանեն առ մարդիկ
վտանդաւոր դիպուածք քան թէ յաջողուածք:

Ե Չիք հարկաւոր դիտութի քան զձանա
չումն անձին. զի որ ճանաչէ զանձն իւր, ճա
նաչէ զած. և որ ճանաչէ զած, սիրէ և զնա,
և ցանկոյ հաճոյանալնմա. որով ժամանէ ՚ի
գագաթն կատարելութե: Այլեմն պարտէ
մարդոյ դիտել թէ է մի ՚ի հասարակ մարդկա
նէ մահկանացու. տկար և հոսանուտ ընութե
վիճակեալ. յամի և յամ ուրեք միշտ կարօտ
ածոյին օգնականութե: և թէ զոր ինչ ունի,
յոյ ունի, թէ բնական և թէ ստացական :

Ե Կւրաքանչիւր մարդ կարէ ուղղել ըլ
վարս իւր՝ եթէ խորհեսցի ող և պարո իսկ է
խորհիլ, թէ փառքն արքայութե վասն իւր
միոյն է պատրաստեալ. և ինքն միոյն է գնաւ
լոց յարքայութի՝ եթէ ծառայէ ոյ. նոյնպէս
և դժոխքն վ՛ իւր միոյն է, և ինքն միոյն գը
նալոց է ՚ի դժոխս՝ եթէ ոչ ծառայեսցէ ոյ:
Կամ թէ խորհեսցի զանձնէ լինել յաշխար
հախումք բազմութե մարդկան, յորմէ յա
նականիալ ժամու յափշտակելոց են զինքն՝ տա
նէլ կամ ՚ի յաւիտենական փառս, կամ ՚ի

տանջանս. արդ՝ զինչ արդեգք առներ յայնժամ՝
անտանօր, արասցէ այժմ աստէն, զի նոյն բան
է՝ որ լինելոց է ամ մարդոյ :

Այս Բազում ինչ իրք տեսանին յաշխարհի,
որոց պատճառք են գաղտնի . բայց ունակք ՚ի
մարդկանէ՝ յախտէ հետաքրքրութե դրդեալ
յուղեն և քննեն, զի կարասցեն հասու լի-
նել պատճառացն . սակայն որ ինչ եղեալ է,
և լինի, և լինելոց է . կամ յայ է, կամ ՚ի
մարդկանէ, և կամ ՚ի բնութե :

Այս ածային անհաս իմաստութե դործս,
բազումք մեղանչեն յանդգնութե . զի զպատ-
ճառն կարդադրութե, կառավարութե, փո-
փոխութե աշխարհի, ըարաց յաջողութե, և
բարեաց դժբախտութե, և այլն, ոչ կարասցեալ
ընդ դատման իւրեանց զուգակշիռ գտանել,
յայլև անտեղի մտածութիւնս և յօտար
կարծիս անկանին . և յայսմանէ անթիւ ամ-
բարշտութիք յառաջ եկին :

Այս դործս ՚ի մարդկանէ արարեալս վըի-
պին՝ թիւր դատողութե . զի զմիտս դործո-
ղին՝ որ առ մի վախճան դիտէ, առ զանազան
վախճան վերածեն՝ ըստ իւրաքանչիւր կար-
ծեաց իւրեանց . յորմէ և ոչ սակաւ ըարկք
յառաջանան :

Այս դործս բնութե մոլորին, յորժամ ՚ի
մասնաւոր փորձոյ զընդհանուր ինչ հետեւ-
ցուցանեն . կամ որոց պատճառք են գաղտնի,
զնոցանէ անոտի կարծեգք յերազեն դիտել:

Աակայն բազումք ՚իքննել զգաղտնիս բնութե, թէև մասամբ ինիք կարացին գիտել, այլ բազում ինիք սխալեցան : Առ յայնմանէ՝ զի կամեցան զհետ կարծեաց իւրեանց բռնի ձը դել զգործս բնութե, անհամար տարածայն կարծիք և վէճք յուզեցան ՚ի մէջ բնաղննից և փիլեսոփայից, և յուզին մինչեւ ցարդ . և եւ ըւի թէ ոչ բնաւ ունի վերջանալ :

«Բանդի չիք այլ ինչ ՚ի բնութե, բայց եւ թէ շարունակութի պատճառաց և գործոց . սակայն բազում անգամ պատճառն է յայտնի, և գործն ծածկեալ . և յոլովակի ևս գործն յայտնի, և պատճառն ծածկեալ : Ապա պարտ է զգուշութ վարիլ ՚ի ճառելն զայնցանէ, որոց պատճառն և գիտութին՝ կամ ՚ի մարդկանէ ծածկեալ է, և կամ չափով յայտնեալ . զի մի առ ած կամ առ մարդ մեղանչեսցուք . և կամ սխալեալ նախատեացուք իբրև տգէտ կամ յանդուգն :

Այս իր խոհեմ յորժամառնէ զգործ ինչ մեծ յօդուտ հասարակաց, ոչ պարծի և հռչակէ առնուլ զգովութի ՚ի մարդկանէ . զի ոչ ՚ի միտ բերէ թէ ինքն արարեալ իցէ, այլ արդէն մոռանայ զոր արարն . և ջանայ և ես մեծագոյն բարիս առնել ամենեցուն . զի որ պարծի ընդ գործս իւր, թէև իցէ մեծ և արժանի գովութե, կորուսանէ զյարդ իւր և զգութի : Խակ այր թեթեամիտ՝ նախ քան ըզ ձեռնարկելն ՚ի գործ ինչ, և կամ յառաջքան

զլրումն նորին՝ մեծապէս պահճայ և հրատաշ
րակէ . բայց իբրև ոչ յամբոկ գործոյն ժաման
նէ , չամացէ ասել՝ թէ այսպս ոչ կարծէի . վայ
և առակ նշաւակի լինի առաջի ամենեցուն :

Ը Այս խոհեմոց պատմէ զանձնէ իւրմէ
զգործ ինչ բարի լսել զգովութի , և ոչ զքար՝
ընդունիլ զնախատինս : **Օ** ի եթէ զքարիսն
պատմէ՝ լսողք անգոսնեն զնա իբրև զնա
փառ . իսկ եթէ զքարիսն , լսողք անարգեն
զնա , և գոյթակղին . ապա ոչ է խոհեմութի
ասել զայն ինչ՝ որ առ գովեստ և կամ յա
նարգանս իւր վերաբերի :

Ե Այս ամ որ զկերպարանս Ճշմարտութե
ունի , է Ճշմարիտ . և ոչ ամ որ զկերպարանս
ստութե ունի , է սուտ . քանզի բազում ինչ
իրգք եղեն , և եղեալ են , և լինին . բայց ընդ
դէմ երեխն մտաց մարդկան . և բազում ինչ
համաձայն մտաց պատմին . որք չեղեն իրգք , և
գուցէ ոչ լինիցին մինչեւ ՚ի յաւիտեան : **Ապա**
ոչ է արժան սուտ համարել զայն ամ , որ ընդ
դէմ երեխ մեզ . և կամ Ճշմարիտ վարկանել
զայն ամ , որ համաձայն թուի . այլ պարտ է
խոհեմութի զէակութի գործոյն և զպարա
գոյսն քննել , ապա հաւանութի տալ , կամ չտալ :

Ա արդիկ՝ եթէ ճանաչեն զմի ինչ պարա
գոյ զքանից և զգործոց ուրուք՝ որ իցէ Ճըշ
մարիտ , առ այն վստահացեալ կարծեն գիտել
և զայլ ամ գաղտնիս սրտի նը . և ՚ի միոյ բա
ցայցյտ և հաւաստի դրութենէ՝ վաղվաղակի

մակաբերեն զբազում անծանօթ և երկբայս
կան հետեւութիս իբրև զշմարիտս . ուստի
բազմից անպիտան առնեն և զայն , զոր ճշմար
տութք ծանեան : «Բանզի ՚ի ճանաչելն զմի
ճշմարտութի , ոչ հետեւի յայնմանէ գիտել և
զայլ ամ ճշմարտութիս , այլ զնոր խորհուրդ
և զքննութի պարտ է ՚ի մեջ բերել . և ճշդիւ
խուզարկել աստիճան առ աստիճան զամ կո
րելի և կարծելի պարագայս իրին , զորմէ է
բանն . մինչև յամ կուսէ փայլեացի նշոյլ ճըւ
մարտութե : Ողկ ՚ի կորնչիւ իրիք ՚ի տան , և
՚ի լինել անդ առն ուրուք որ երբեմն գողա
ցեալ իցէ ինչ , առ հասարակ կարծիք լինի ըզ
նմանէ՝ թէ նա գողացաւ : Այս ճշմարիտ է ,
թէ նա երբեմն գողացաւ ինչ , այլ ոչ հետեւի
թէ և այժմ նա գողացեալ իցէ . ապա զգուշա
նալի է՝ ՚ի ճանաչելն զմի ինչ ճշմարիտ՝ մակա
բերել յայնմանէ զանծանօթ և զերկբայսական
հետեւութիս , և պնդել իբրև զշմարիտս :

Խա Արդիկ քաջ գիտեն բարւոք խօսիլ
քան բարւոք գործել . զի թէ գիտէին այնպս
առնել , ողկ և ասեն , կամ ոչ բնաւ գտանէին
չարք յաշխարհի , և կամ յոյժ սակաւ :

Խէ Արամուուին առանց խորագիտուե , է
յիմարութի . և խորագիտութին առանց մի
ամուութե , է խորամանկութի . միամուութին
խորագիտութք , և խորագիտուին միամուուք ,
է խոհեմութի . ողկ տրն մեր , || Տառ . Ճ . 16 :

Ընդ միամուուե աղաւնւոյ յարեաց զխորագիւ

տութին օձին . զի ուսուացէ զմարդիկ խորշել յերկուց վասակար ծայրից, և հաստատիլ ՚ի խոհեմութեան :

Խո՛ ԱՌ' ամաչեսցէ խմաստունն խոնարհիլ և խորհուրդ հարցանել այլոց, կարծելով թէ նոքա ՚ը հասանեն ՚ի չափ խոհականութե իւրոյ . զի ահա և ածելին առնու զսրութի ՚ի կակուղիաշւոյ վարսավիրին . և երկաթն զգենու զգօրութի՝ միսեալ ՚ի լոյծ ջուր :

* ԱՍՏԵԽԱՐԵԴ բարեաց պահանցի զիւ՞ և դառս սի՞ պահեսցն զիւ՞ :

* ԱՌ' առջ խոսորիցի՞ և դ' ատհեաչ . ժարչ' զառն չո ՚ի հանապահէ չարէ :

* Բարիէ է չառարած բանից ժան զանելիքն էրեանց . բարիէ է երկայնաժան ժան զհպարտացեալն սկսով :

|| Ճառզու . Է . 9 :

* Փառաչ և անարգանչ ՚ի ճեռու լեզունէ , և չործանունն նարդու ՚ի ճեռու անարգ լեզունէ էրուն :

|| Ախրաք . Է . 15 :

* ՈՌԵԽԱՅ՝ ընարդու բարա բարի նարդու , զի ՚ի նմանէ շնորհս բարեաց գացէն :

* Լաշերու այսուհետեւ խորագիւու էբրև զօյն , և դամեաւ էբրև զազանիու :

* ՈՇՈՎ չափոց շինել աշարակ , և ոչ նախ նառեալ համարից զժախսն՝ էլի սոնկոց բառախն ՚ի չառարդուն :

|| Պուկ . 14 . 28 :

ԳԼ. ԺԵ

ա ԱՇ այնքան վտանգաւոր է հեծանել
յանկիրթ երիվար , քան յայտնել զգաղտնիս
անփորձ բարեկամի : Ապա չէ արժան անխտիր
ումեւիցէ բարեկամի յայտ առնել զգաղտնիս
սրտին . այլ այնմ՝ զօր փորձիւ ճանաչէ ոք
լինել խորհրդապահ :

'Ի ծակ սակնոր լնու զջուր , որ ծանուցա
նէ զծածուկս հոգւոյն այնմ՝ որ ոչ գիտէ
պահել զխորհուրդ :

Է Աթէ ոք կամի զգաղտնի ինչ հռչակ
հարկանել , դաշամբք խորհրդապահութէ յայտ
նեսցէ զայն ռամկին . զի ռամին առաւել
մունետիկ է խորհրդոց քան խորհրդապահ :
Ապա հաւատարիմ խորհրդապահութի ոչէ
յուսալի գտանել 'ի մեջ ռամկաց՝ այլ իմաստ
նաց . և այն ոչ ամ իմաստնոց՝ այլ սակաւուց և
կարի' սակաւուց . առ որոյ ընտրութի մեծի
զգուշութեան է պէտք :

Դ ԱԵԾ ինչ խնդրէ , որ խնդրէ պահել
զխորհուրդն զօր յայտնէ :

Դ ԱՅ խորհրդապահէ՝ ունի զեերանն ՚ի
սրտի . և որ չէ խորհրդապահ՝ զսիրտն ունի
՚ի բերանն : Բայց են ոմանք՝ ողք համարին
զգաղտնիս՝ ողք բեռն ինչ ծանր . զօր ինքեանք
ոչ կարացեալ տանիլ , տան այլոց որպի բեռ
նակրաց ՚ի բառնալ :

Ե Հպարտն յափշտակեալ յախտէ մնափա

ռութե՛, ախորժէ պատմել զխորհութս մտաց
իւրոց՝ որ բերէ գովութի ինքեան. որով մատնէ
այլոց զգաղտնիս սրտի իւրոյ :

¶ Բարկացօղն ո՛չ կարէ պահել զխորհ
հութս իւր. զի՞ ցամնուլ իւրում բուռն
բարկութք՝ եռայ արիւն նը, և ո՛չ ժուժայ
լուել. և անդէն վաղվաղակի թափէ ՚ի սրտէն
զգաղտնիս իւր. ուստի դիւրին է գողանալ
՚ի նմանէ զխորհութս գաղտնիս : Օ ի բարկ
կացօղն է իւրեւ զտիկ լցեալ պատուական հեշ
զանիւթիւ . որ մինչ բռնաբարի յումեքէ՝
պայթի առ ժամայն, և թափէ զոր ունի :

Է Խորհրդապահն՝ մի յաղագս պահելոյ ըզ
խորհութ ինչ՝ խօսեսցի զառտո. և մի յերկիւ-
ղէ յայտնուե գաղտնեաց, այլափոխել զէման
ցուցյէ . զի՞ դէմք և աչք առաջնորդ և դես-
պան են սրտին . և մարդիկ այսպիսի նշանօք
փութով նախատես լինին, և իմանան զգաղտ-
նիս : Եպա ՚ի խօսիլն պահտ է միայն զվեսաա
կարսն ծածկել, զի՞ լիցի ստախօս. և զկարգ
բանիցն անշփոթ պահել, զի՞ մի՛ զնշոյլ խոր-
հրդոցն երեւեցուսցէ ՚ի դէմս իւր, զորմէ
լուել կամէր :

* Արդէս ժաղաւ խրճանեալ ՚ի պարսպաց՝ և անպարեսպ
իցէ . նաշնդէս և այց որ ո՛չ խորհրդով էնչ գործիցէ :

|| Առակ . ի՛ե . 28 :

* Բաղըւունք խաղաղաբար ւեցին ժեզ . և խորհրդունց
շեցի ժեզ ՚ի հաղպբաց : || Ալրագ . Ղ . 6 :

ԳԼ. ԺԶ

Պատրիք մարդոյ ուղղել ՚ի ներքուստ ՚ի խղճէ, և յարտաքուստ ՚ի յօրինաց. զի եթէ խիղճն թելադրեալ ՚ի թիւր կամաց՝ հակառակ զինի ընդդէմուղիղ բանի, օրէնքն յանդիմանեալ սանձեն զնա, և ածեն ՚ի հնազանդութիւն։ Խիղճն՝ իբր ներքին արդար դատաւոր ՚ի կողմանէ բնութեն. և օրէնքն արտաքուստ իրաւարար ՚ի կողմանէ այց, իբրեւ երկու թաթ կշռոյ՝ զմէտն արդարութեն ՚ի միջասահմանութեն պահէն։

Քանզի մարդիկ եթէ միայն խղճիւ կառավարեալ լինէին, բազում անձնասելք կողմանապահ լինէին բնութեն. և զուղիղն թիւրէին. և ոչոք էր՝ որ յանդիմանէր և ուղղէր զնո՞ւ։ Խսկ եթէ միայն օրինօք կառավարեալ լինէին, բազումք ևս չարակամութեն իւիք խարեէին զպարզամիտս, և զիրս անօրէնս իբրեւ զօրէնս յառաջադրէին առնել և գործել։ Ապա կարեւոր են երկոքին ևս՝ խիղճ և օրէնք, առաջնորդել մարդկան և ածել յառաքինութիւնը առ հուպ վախճան. և այնույերջանկութիւնը իբրեւ առ իւր վերջին վախճան. զի ըստ առածին, ած և բնութիւն ոչ երբէք գործեն ընդունայն։

Խիղճն՝ ՚ի բնական օրէնս պարտէ զցետերթալ ուղղութեն բանի. ըստ այնմ, * Հեթանոսք որք զօրէնսն ոչ ունին՝ բնութեն զօրինացն

գործեն : || հաօք . բ . 14 : և յեկեղեցականս՝
Տետևիլ ածային օրինաց . զի յածայինս ոչ է
բաւական միայն ուղղութիւն բանի , այլև պա-
հանջէ համաձայնութիւն օրինացն այ :

Է Ա յսն մտաց՝ է նշայլ ինչ յաւիտենա-
կան օրինաց , որ յայ ներտպեալ է ՚ի բնու-
թիւնս մարդոյ . որով մարդոն առնէ զարժանն
և զվայելուն , և հերքէ զայն՝ որ չէ արժան
և վայելուք : Աւ ածային օրէնքը պարդեւ-
ցան յայ իբրև թարգման նորին կամաց . զի
նա՝ որ միայն բնութիւն էր մարդ , և ճանաչէր
միայն զենական ուղղութիւն , օրինօքն լիցի և
բարոյականապս մարդ , և ճանաչեսցէ զածային
ուղղութիւն . և կամ՝ որ նախ բնականաւ էր
պատկեր այ , օրինացն պահպանութիւն լինիցի
և նման այ՝ և ածային մարդ : Ա այ ուղեղ
բանն մտաց և օրէնքն միաբան ուղղեն զբարս
մարդոյ՝ ՚ի պահել զիսիղջն յուղղութե ՚ի խոր-
Տելն ՚ի խօսելն և ՚ի գործելն : Ապա որ խոտո-
ւի յուղղութիւն մտաց և ՚ի հրամանէ օրինաց ,
հակառակի այ և բնութե իւրոյ :

Է Ա թէ ոք յամի անսայ խղճին իբրև
խղճահար , առաւել ևս սիսալի . վայ հարկէ
խոհեմութիւն վարիլ ընդ խղճին . զի ոչ է ար-
ժան խսպառ անկուշել , կամ գլխովին նմա-
Տետևիլ . այլ բարեկարգիլ զնա լուսով բանին
և օրինօք . և յիրս տարակուսականս՝ ուր խիղ-
ճըն մտաց տկարանսայ որոշել՝ դիմել առ իմաս-
տունս և օրինագիտուս , և ուսանիլ ՚ի նոցանէ՝

զոր պարտն է առնել։ Եւ յայնս՝ ուր եր կուստեք ոչ պակասին հաւանական փաստք կամ պատճառք առ ի առնել զիմն կամ խորշել զանկասկածն և զապահովագոյնն ընտրել։

Ե Չար է խղճահարութին, բայց չար ես է լինելն անխիղք։ ապա պարտ է լինել խղճմը տանաւոր։ ֆ՝ ոչ իբրև փոքրոգի յամի եր կնչել։ և ոչ իբրև յանդուգն յամի վստահիլ։ ոյլ իբրև արի՝ չերկնչել, ուր չել պարտ։ և երկնչել, ուր պարտն է։

Ե Յանդուգն է կամք մարդոյ, և բա զում անդամ ելանէ ըստ սահման բանաւո րութեան։ վայ և խիղք մտացն տուաւ նմա սանձ։ զի մի՛ քան զպայման առաջնորդութե բանին արշաւեսցէ։ իսկ եթէ ոք ազդարա րութե խղճին ոչ անսայցէ՝ պարտաւորի դա տաստանի։ Բայց դատօղն վազի է մարդ՝ տը կարանայ որոշել զիրաւունս արդարուե։ վայ ապաստան առնէ անդրէն զդատաստանն՝ խըլ Ճի մտաց պարտաւորին։ զի նա է անխաք դա տաւոր դաղմնեաց սրտի։ ոտ զի պարտաւորն նմա երդնուցու։ որ եթէ ընդդէմ դատման խղճի մտացն երդնու՝ լինի երդումն սուտ։ և մայ ոյնպիսին պարտաւոր դատաստանին այ։

Դ Անասունք եթէ ունէին զկարողութի խօսելոյ ընդ մարդկան, արդամրւ կշտամբէին զայնոսիկ որը դործեն ընդդէմ ազդարարուե բանին, և խղճի մտաց։ Եւ քանզի անասունք ոչ ունին զքան՝ վասն որոյ և ոչ անկանին ընդ

պարտաւորութե պատժոց . և ոչ է վասն նց
կարգեալ դատաւոր և քննիչ գործոց : Իսկ
մարդիկ՝ վն զի ունին առաջնորդ զըսնն՝ և
ազգարար զիսիղճն . եթէ ոչ անսան նմին՝ ան
կանին ը դատաստանաւ : Ապա նախատինք են
մարդոյ ունիլ զբան , և վարիլ իբրև զանբան :

Է Ապամք ՚ի մարդկանէ քաջ Ճանաչեն
՚ի սիրոս իւրեանց , թէ սիսալեալ են ՚ի գործս
ինչ կամ ՚ի բանս . բայց տակաւին ընդ դէմ
խղճի մտաց իւրեանց ջանան բանիւ արդա
րացուցանել զանձինս : Ճապահ է նշան յա
մսուութեան իւրեանց ՚ի չարիս . զի երեխ՝
թէ ոչ կամին ուղղել զիսալանս իւրեանց :
Զէ ընտրութե և սիրոյ արժանի՝ որ յայտնի
Ճշմարտութե յամառեալ հակառակի , զի մի՛
սիսալեալ երեեսցի :

Ը Որ ոք գործէ ընդ դէմ խղճի մտաց
իւրոց՝ չկարէ լինել զերծ ՚ի խոյթոց է նը .
զի խոյթ խղճին խիստ է քան զմաչ . քանզին
մահն միանդամ մեռուցանէ , իսկ խոյթ խղճին
յամժամ : Ապա որ ունի զիսիղճ իւր անխաբ
դատաւոր անձին , և հնազանդի օրինաց և
հրամանաց նը , մնայ ազատ և խաղաղ ՚ի ներ
քին տանջանաց սրտին :

Թ Խիղճ մարդոյ նմանի շան , որ առ օ
տարս հաջէ և հալածէ . և առ ծանօթս քծնի
և շողոքորդէ . քանզի ՚ի խորհել և ՚ի գործել
ումեք զբար ինչ խղճն վաղվաղակի հաջէ և
հալածել ջանայ զբարն , իբրև օտար և թշնամի

բնութե մարդոյ : Խակ եթէ տակաւ առ տակաւ չաւ չարն ընտելացի մնւաւ և ել գործել ՚ի միտս , այնուհետեւ խիղճն մտաց վարի ընդ նմա իբրև ընդ ծանօթի , և լուէ ՚ի յանդիմանելոյ : Վասն որոյ և մարդն համարձակ սահի յամենայն մոլորութիս . յորոց յառաջադոյն հարեալ ՚ի խղճէ խորշէր : Ո՞պա ջանալի է ՚ի սկզբան չտալ տեղի չարի իմիք . և զեխղճն միշտ արթուն պահել . զի մի' գահավէժ լիցի մարդ ՚ի խորս չարեաց :

* Խրչչառին առանձին իմն չարութի՝ ինչեամբ վիակ գտառադարբեալ : Թշո չանիոէ զանհնարինս՝ նեղեալ ՚ի խղճէ նպաց : || Խմաստ . ԺԷ . 10 :

* Քանչշէ պարծանք մը ացո լն՝ վիացութի նպաց Շըրոց . զէ սրբութի և սոսուգութի ոց , և ոչ նարմնեղն իմաստութի , աց շնորհօքն ոց շրջեցաւ առշեսարհի : || 20 Առըն . առ . 22 :

* Ո՛չ եղձելոյէք առնձին՝ և լինեցէք գտառառորդ չարեացն խորհրդոց : || Յակ . Բ . 4 :

* Անքեւէք էլու սրբու մը զեշ ո՛չ սոգառնիցին , զհամարձակութիւն ունինք առ տարուծած :

|| առ . Յօհ . Ղ . 21 :

ԳԼ. ԺԷ

Ա Պանդատէ արդարութիւնն՝ յորժամ
մարդիկ ո՛չ այնպէս դատին զանձինս՝ որպէս
դատէին զայլ :

Ե ԱԵ հարկ դատաւորին ընդ պատժովք
արկանել զանցաւորն, եթէ առանց մեղսնչե
լոյ իրաւանց՝ կարէ զնա թողուլ անպատիժ .
զի պատուհասելովն ոչ եթէ զիրաւունս պաշտ
պանէ, այլ զիրաւունս անգութ առնէ :

Ի Ն մարդիկ՝ որք կամին ծառայեցու
ցանել զօրէնս արդարս հաճուե կամաց իւր
եանց . և սոքա են անօրէնք և կամապաշտք .
որք և չառնուն ՚ի միտ, թէ պարտ է օրինաց
իշխել ՚ի վը կամաց մարդոյ՝ և ո՛չ եթէ կամք
մարդոյ ՚ի վը օրինաց . զի եթէ կամք մար
դոյ լինէր օրէնք, լինէին այնքան օրէնք՝ որ
քան մարդիկ :

Բ այց օրէնքն պահանջէ ունիլ և զնա
զանդեալս . իսկ ՚ի կացուցանել ամենեցուն
զկամն իւրեանց օրէնք, լինէին ամենեքին իշ
խողք . և ով գտանէր հնազանդ օրինաց . բայց
եթէ յորժամ մի միայն մարդ մնայր յաշխարհի:
Ա Ա այնօրիկ նախնի օրէնադիրք իւրաքանչիւր
ազգաց՝ սահմանեցին օրէնս բարիս, զի ամենե
քին միաբանեսցին ՚ի մի կամն . և որ բնութին
ետ իւրաքանչիւրոց զառանձին կամն, մարդիկ
միացուցին ՚ի մի օրէնս . ընդ որ բնութին իսկ
զարմացաւ, տեսանելով եթէ մարդիկ գտին

հնարս կառավարել զկամն իւրեանց :

ՊԵ ԶԵ արժան բնակիլ ՚ի քաղաքի , ուր
ո՛չդոյ օրէնք . կամ ո՛չ գտանի դատաւոր օրի-
նապահ . զի ուր ո՛չդոն օրէնք , մարդիկ լինին
անօրէնք . և ո՞լ կարասցէ մնալ անվասա ՚ի մէջ
անօրինաց : Լամ թէ իցեն օրէնք , բոյց թէ
դաւորն ո՛չ ՚ի գործ դիցէ զհրամանս օրինաց՝
յու դիմեսցէ զըկեալն խնդրել զիրաւունս .
զի սյնպիսիքն ջատագովեն զօրէնս , այլ վարին
իւրեւ զանօրէնս . և յեղծանել իւրեանց զօ-
րէնս , եղծանեն զքաղաքն և զհասարակութին :

(Օ)րէնք կամ բարեկարգութիք որք վերա-
բերին առ հասարակութին , հասարակաց հա-
ւանութիւն պարտին հաստատի :

Ե Լարջանիկ է քաղաքն , յորում դատա-
ւորք են իմաստուն և արդար . միապէս հային
՚ի դատաստանն աղքատաց և փարթամաց, եկաց
և բնակաց . ո՛չ թիւրեն զիրաւունս վ՛ կաշա-
ռաց , կամ վ՛ երկիւղի , կամ վ՛ սիրոյ :

Պ Ո՛չենչ վՃիռ գործոյ կարէ մնալ հաս-
տատուն՝ եթէ չիցէ հիմնեալ յիրաւունս . ուս
տի մարդիկ եթէ առ ժամն համաձայնեալ ընդ
միմեանս՝ վՃռեսցեն առնել զգործ ինչ՝ որ
վերաբերի առ ինքեանս , ՚ի վախճանի տարա-
ձայնին ՚ի միմեանց՝ և նանրանայ վՃիռն , ե-
թէ չիցէ իրաւամք հաստատեալ :

Ի Լթէ սյըր ընդընկերի իւրում կենցա-
ղավարէր աննենդ և խաղաղ , աւելորդ լինէր
նց դատաւոր և դատաստան . զի ո՛չոք ունէր

յայնժամ զվեճ . և ոչ ոք կարօտէր երթալ ՚ի
դատ . վս զի դատաւորն սահմանեցաւ վս խար
դախութե և անիրաւութե մարդկան . զի եւ
թէ մարդիկ անիրաւեսցին առ միմեանս , դա
տաւորն արասցէ իրաւունս : Առակոյ արդա
րութին , յորժամ դատաւորն որ պահապանն
է իրաւանց՝ հալածէ զարդարութին ՚ի դա
տաստանէ իւրմէ , և զըկեալն խնդրէ իրա
ւունս ՚ի նմանէ :

Որ ատէ զերաւունս , ատէ և զայնս որ
խօսին զերաւունս :

Ե Որ զըկէ և յափշտակէ զինչ այլոց՝ կո
րուսանէ զերաւունս ժառանգութե ընչեց
իւրոց . ապա որ ցանկայ խաղաղութե վայելել
զինչ իւր , հատուսցէ նմա զոր զըկեաց . զի
որ զըկանօք զինչ այլոց ժողովէ , ող թէ ըդ
հուր ՚ի հանդերձս իւր ծրարէ :

Թ Ո ինչ քան զայս իրաւացի հատուցու
մըն՝ յորժամ նա որ յընթացս կենաց իւրոց
ցաւօք և վնասուք այլոց ստացեալ իցէ զինչ ,
թողեալ երթիցէ ցաւօք սրտի , և վնասուք
հոգւոյ : Անիրաւուի էր արդեօք՝ եթէ նա
որ զըկանօք մթերեալ էր զինչ , վայելէր ՚ի նո
մտադիւր . զի գանձք որ ժողովին զըկանօք ,
պահին կասկածանօք , և կորուսանին ցաւովք :

Ժ Յանցաւոր է օրինաց՝ որ ո՛չ ընու ըզ
պարտաւորութին իւր . ապաքէն իշխանաւորն
դաշամբ հատուցման վարձուց պահէ առ իւր
զապասաւորն զի ծառայեսցէ . և սպասաւորն

ծառայէ , զի վարձ առնուցու : Ապա եթէ իշխանաւորն զլասցի տալ զսակ արկեալ վարձ սըն , կամ սպասաւորն ոչ ծառայեսցէ հաւա տարմութէ . մինն լինի զրկօղ , և միւսն գող . և երկրքին իսկ ոչ հատուցանելով զպարտաւո րութիս իւրեանց՝ յանցաւոր օրինաց դատին :

Ժա Որ առանց իրաւանց տր լինի բազմաց , իրաւունքն առնեն զնա ծառայ սյլոց :

Ժէ Արդար հատուցումն լինի՝ յորժամ նա որ հասոյց զվաս այնմ՝ յորմէ չէր ընկալեալ չարիս . կրեսցէ զվաս յայնմանէ , որում ար ըարեալ էր բարիս :

Ժէ Որ առաջնորդ լինի մատնութէ և դա ւաճանութէ՝ օրինակաւ իւրով ուսուցանէ սյլոց զնոյն առաւել և ինքեան :

Անութի է մարդոյ , ՚ի բազում բարի օրի նակաց զսակաւ բարիս , և ՚ի սակաւ չար օրի նակաց զբազում չարիս ուսանիլ :

Ժէ Աճ՝ ըստ յօժարութէ և բազճանաց և ջանից իւրաքանչիւր ումեք հատուցանէ զփո խարէնն . զի եթէ յօժարեսցի ոք և ջանասցէ առնել զբարի կամ զըսր , և չկարիցէ գոր ծով ՚ի գլուխ ածել , տակաւին արժանաւորի վարձուց կամ պատժոց :

ԿԲանզի գործք որ ունին զբան բարւոյ կամ չարի , վ՛այն փոխարինութէ են արժանի , զի գործին ՚ի հրամանէ կամաց . ապա թէ ոչ լինէին գործ մարդոյ՝ բնական և հարկաւոր , և ոչ եթէ գործ մարդկային՝ բարւոյական

և կամաւոր : Այս վեց զի կամաւորութին է՝ որ
առնէ գործն արժանի հատուցման . ապա և
բաղձանքն ելուղեալ՝ ի կամաց՝ առ’ ի գործել
զեարի կամ զար , արժանաւոր գտանի վար
ձուց կամ պատժոց , է՝ որ յաւէտ , և է՝ որ
նուազ . ըստ յաւէտ և նուազ՝ կամ յարատե
և անցողական ըղձանաց և ջանից խւրափանչ
իւր մարդոյ :

ՃԵՇՄԱՐԲԻՄ ՀԱԼԱՏԱԳԵԱԼՆ ՔԻ՝ է իբրև
որդի և ժառանգ ոյ . իսկ անհաւատն՝ իբրև
ծառայ և վարձկան . ուստի՝ ի գործել նց զեար
ինչ հաւասար ծանրութե , արդարութին պա
հանջէ՝ զի պատժեսցին անհաւասար պատ
ժովք . իբր զի սաստիկ պատուհասեսցի հա
լատագեալն քան զանհաւատն . քանզի ապրս
տամբութին որդոց է առաւել չար , և մե
ծագոյն պատժոյ արժանի , քան զապստամ
բութիւն ծառայից :

**ԱՌԱՋՄԱՐԲԻՄ ՀԱԼԱՏԱԳԵԱԼՔ պարտին ա
ռաւել քան զամ մարդիկ ահիւ և դողութե
զանձանց փրկութի գործել . ըստ այնմ , *** Աթէ
ոչ առաւելուցու արդարութի ձեր աւելի քան
զդպրաց և զիարիսեցոց , ոչ մտանիցէք յար
քայութին ոյ :

* Բաերան արդարոց խորհի զեմաստութի , և լւզու նը
խօսեացի զերաւոնս :

|| Սաղմուս . լզ :

ԳԼ. ԺԸ

ա Այս քան զՃշմարտութիւնն արժանի պատույ, բայց չիք քան վնա յաւելո անարդ գեալ. մարդիկ՝ ՚ի խօսելն ընդ միմեանս մեծացուցանեն զփառս նը, և ցուցանեն զանձինս ջատագով Ճշմարտութե. բայց ՚ի գործս իւրեանց արհամարհեն հանապաղ, և պատուադիր լինին ստութե:

Այսոյն Ճշմարտութիւն զմարդասիրութի իւր ՚ի գործ արկեալ, երկայնմտութե տանի անարդանաց իւրոց. և ո՛չ գլխովին մեկնի յաշ խարհէ, սպասեալ դարձի նց. և կամի՛ զի ո՛պ ամենեքին ՚ի խօսիլ իւրեանց մերձ են Ճշմարտութե, միասցին ընդ նմա և ՚ի գործել իւրեանց: Ուստի ամ որ բարիս գործէ, միանայ ընդ Ճշմարտութե. զի ամ բարի է Ճշմարիտ, և ամ Ճշմարիտ բարի. իսկ որ չար գործէ, հեռանայ ՚ի Ճշմարտութե. զի այն է չար, որ ո՛չ ունի զՃշմարտութիւն:

Տեսեր զներողութիւն Ճշմարտութե, զի ո՛չ առ ժամայն վրէժինդիր լինի անարդողաց իւրոց, և ո՛չ խնդրէ իրաւունս. ոյլ առ ամենեսին հուպ մատչի՝ և օդնէ սոէպ, զի շահեսցի զնս. թէպէտ ո՛չ ամենեքին հուպ առ նադտանին, և ընդունին զօդնականութիւնը:

Է Ո՞ի՛ ոք յուսասցի ՚ի սուտ խօսողէ ընդունիլ զբարի ինչ. քանզի ստասացն չունի ինչ բարի. զի որ զՃշմարտութիւն կորուսանէ,

կորուսանէ զամբարիս . զի ճշմարտութինէ ամբարի :

Ստասացն զայս միայն շահի , զի թէւ զճշմարիտն ասասցէ , ոչոք հաւատոյ նմա :

Չէ արժան ՚ի թիւս մարդկան գրիլ , որ սովորէ սուտ խօսիլ :

Ե Չիք գովելի քան զճշմարտութիւնն . բայց աւաղ՝ զի ընք ոյժմուս ատելի քան զայն . են բազումք՝ որք բանիւ ճշմարտասէր լինել պարծին , բայց սրտիւ ատեցողք են ճշմարտութե : Խակ ճշմարտութին ճանաչելով ըզ դաղտնիս մարդոյ՝ ծպտեալ շրջի յաշխարհի , զի մի՛ իսպառ հալածեսցի . բայց ճանաչեն զնաւ պատուասիրեն , որք ուղիղ են սրտիւք :

Ե Ճշմարտութին հալածական եղեալ ՚ի մարդկանէ՝ որոց այլէ սիրտ և բերան , բնակի ընդ անմեղ անասունս , որոց նոյն է սիրտ և բերան :

Ե Ուր ծագեալ է լոյս , ոչ բնակէ անոդ խաւար . ուր թագաւորէ ճշմարտութի , անդ ոչ գտանին դեք :

Ուր ունի զճշմարտութի ՚ի խօսս , և զուղ զութիւն ՚ի գործս , ունի նա կրկին թևավերասլանալ յերկինս :

Ե Ուր ընք ճշմարտութի , ընք անդ և բարութի . զի երկոքին սոքա են անբաժան ընկերք . որովհետեւ նոյն են իրօք ընդ միմեանըս , և տարբերին տեսականութիւն եթ : Ապա յայտ է՝ թէ ՚ի չարս չնք ճշմարտութի ,

զե չեն բարի . և որ ըունին զՃշմարտութի՞ ,
խաւարեալ են միտք նց , զե Ճշմարտութի՞ն է
լոյս մտաց . վայ և չարք յամ խորս մոլորութե
անկեալ՝ ոչ իմանան :

Աւստի եթէ կամիցի ոք զքարն դարձուցա
նել՚ի բարի , նախ պանրոտ է լուսաւորել Ճշմար
տութի՞ զմիտոս նը . ոող զե միտքն իւրովի յափըշ
տակեացի ՚ի սէր բարւոյ . ապա թէ ոչ՝ ընդ
վայր տքնի խրատին . և ոող թէ անլուր լսելեց
ջանայ ազդ առնել զներդաշնակութի՞ երգոց :

Է լ եզու մարդոյ եթէ ճանաչէր զպար
տաւորութի՞ իւր և զքափ իւր՝ գուցէ ոչ փա
կեալ լինէր ՚ի բերանի ընդ պարտպօք ատա
մանց և դրամբք շրթանց՝ իբրև յարդելանս
բանտի : Պարտաւորութի՞ նը՝ է խօսիլ ըդ
Ճշմարիտն . զե լեզուն է թարգման խորհրդոց
և մտաց . և չափ նը՝ է խօսիլ զարժանն : Իսյց
ոչ ճանաչէ զպարտաւորութի՞ իւր , եթէ ոչ
պահէ զհաւատարմութի՞ ՚ի խօսս , և ասէ ինչ
ընդդէմը ոնմանն և դատման իւրոյ . և ոչ ճա
նաչէ զքափ իւր , եթէ աւելի քան զարժանն
խօսի : Լայս իրաւամբ պատժի լեզուն՝ որ ոչ
ճանաչէ զպարտաւորութի՞ և զքափ իւր :

Եւ չեն ինչ զարմանք , եթէ լեզուք զա
ռամեալ ծերոց և պառաւանց աւելի քան զար
ժանն խօսին , զե պարիսպ ատամանց նց խրա
մաւեալ են , և դրունք շրթանցն թուլացեալ :

Ե Որ չէ օգտախնդիր անձին , սովոր է լի
նել Ճշմարտախօս . քանզի շահակըն են , որք

լուեն զՃշմարիտն , և կամ ստեն : Բնդ ցորեանն զորոմն խառնէ , որ ընդ Ճշմարիտն ըզ սուտ ինչ յարէ :

թ Աէ արժան ստել երբէք՝ առ՚ի վերծանիլ՝ վտանգէ . զի թէ մարդկային հնարն տը կարանայ ՚ի փրկել , պարտ է աղօթիւք առ ածապաւինիլ , և զելս հնարից առ՚ի նմանէ խընդրել . և ոչ երբէք վճարիլ և ստել . զի ած է ամենելին Ճշմարտութիւն . և միշտ զՃշմարտութիւնի կամի : Ուստի որ ոք ստութիւն իւկը այլայլէ զՃշմարտութիւն , մեղանչէ ընդդէմ ոյ , և ընդդէմ խղճի մտաց իւրոց . և ած քաջ գիտէ փրկել , եթէ իցէ օդուտ . ապա թէ ոչ լուէ մեռանիլ պահմամբ Ճշմարտութեն , քան կեալ յանցանզք ստուեն : Վակայն ած երբեմն թոյլտայ չարաց սուտ խօսիլ՝ առ՚ի փրկել զեարիս , որ սիրեն կորուսանել զկեանս քան ստել :

թ Խռակի է Ճշմարտութիւն . սրտի , բերանոյ , և գործոյ . բայց բազում անգամ ոչինչ զօրէ առ մարդիկ Ճշմարտութիւն սրտի և բերանայ . եթէ ոչ ՚ի վը գոյցէ Ճշմարտութիւն գործոյ . որովհետեւ մարթէ ստիլ երկուց առաջնոց , կամ մնալ անգործադիր : Արդ՝ միայն ոյ է սեպհական Ճանաչել զՃշմարտութիւն սրտի . մարդիկ հաւատարիմք միմեանց՝ Ճանաչեն զՃշմարտութիւն բերանոյ . իսկ հասարակութիւնն Ճանաչէ զՃշմարտութիւն գործոյ :

Ապա չէ նա խոհեմ , մինչ զայն որ սեպհական է ոյ , պահանչէ ՚ի մարդկանէ . ոյ յորժամ

խնդրէ՝ ՚ի մարդկանէ ճանաչել զյօժարութիւն
և զըաղձանս սրտի իւրոյ, թէ ստուգիւն կա-
միցի զայս ինչ . այլ պարտ է նմա բանիւն ևս
յայտ առնել . Զէ խոհեմ, մինչ զայն որ յա-
տուկ է հաւատարիմանձանց՝ պահանջէ ՚ի հա-
սարակաց . ֆ խնդրէ՝ ՚ի հասարակութէ հա-
ւատալ բանից բերանոյ իւրոյ . այլ հարկ է
նմա գործովք ևս ցուցանել .

Լառակի է և ստութիւն . ֆ սրտի՝ բերանոյ՝
և գործոյ . զի է՝ որ զայլ ինչ խորհի, և զայլ
ինչ խօսի . և է՝ որ զայլ ինչ խօսի, և զայլ
ինչ գործէ . և ուր մինն երից աստի չէ հա-
մաձայն, անդ է ստութիւ : Բայց օրէն է խո-
հեմ կառավարչին երբեմն պատրուակել զՃըշ
մարտութիւն . ֆ զայլ ինչ խորհիլ ՚ի սրտի, և
զայլ ինչ խօսիլ, կամ զայլ ինչ գործել . բայց
այս ո՛չ է աղաւաղել զՃըշմարտութիւն, այլ միայն
թանդուզել և ծածկել . զի սյապէս պահան-
ջէ օգուտն հասարակաց . քանզի երբեմն բա-
րին յաղթահարէ զՃըշմարիտն :

Ժա Որ միանգամ ստէ երդման կամ դաշին
իւրոյ վ՛շ շահասիրութէն, վեասէ անձին . զի
ո՛չ ոք հաւատայ նմա յայլում նուագի, թէն
երդնուցու պահել վեսուտումն իւր . վեասէ
ևս հասարակութէն . զի բառնայ յ՛նէ զյարգ
հաւատարմութէն, որ հաստատեալ է յերդման :

Ժբ Ան է քաջութէն մեռանիլ ՚ի պատե-
րազմի՝ առ հաստատուն պահելոյ զդաշն հա-
ւատարմութեան, քան յաղթել թշնամւոյն

ուխտադրուժ երդմնազանցութեն :

Ժդ ԶԵ արժան վնաս հասուցանել այնմ,
զոր երկբայական կարծեզք համարիս լինել
թշնամի . զի լսել է՝ թէ նա լիցի չարագործ՝
քան թէ դու :

Իւղում ինչ իրողութիւն գործեցան յառջին
գարս . բայց այժմ կամ ոչ հաւատան նց մար
դիկ, և կամ դժուարաւ . և բաղում ինչ ստոյդ
գործին ՚ի ներկայս . զորս յետագոյք կամ ոչ
հաւատասցեն, և կամ դժուարաւ : Ապա ըզ
գուշալի՞ է մեզ չստել զանցս անցելոց . զի՞ մի՞
և յետագոյք անստոյդ համարեսցին զՃշմար
տութեն գործեալսն առ մեզք : Որ ոչ երբէք
հաւատայ ումեք, ոչ ոք կարէ հաւատալ նմա :

Ժդ Ո՛չ ամհակառակութիւն է իրաւացի . զի
են ոմանք՝ որք հարցեալ ինչ ումեք՝ լսեն պա
տասխանի Ճշմարիտ . բայց չունելով ուղիղ միտու,
թիւրեն զըսնն, և հակառակին յանիրաւի :

Իւղումք ևս լուեալ զՃշմարիտ ինչ, ոչ
կամին հաւատալ, մինչև չիցեն զփորձ առեալ.
և յորժամ փորձեն՝ վկայեն լինել Ճշմարիտ,
բայց վնասուք անձանց իւրեանց :

ԺԵ Օ որ ինչ խօսի ոք՝ պարտ է լինել Ճըշ
մարիտ . բայց ոչ զամենայն որ իցէ Ճշմարիտ,
պարտ է խօսիլ :

ԺԴ Ինական է մարդոյ խնդրել զՃշմարի
տըն, և ցանկալ բարւոյ . զի Ճշմարիտն է ա
ռարկայ կարողութեն մոտաց, և բարին կամաց,
և յատուկ է ամ կարողութեան բնականաբար

դիմել առ իւր առարկայն : Բայց բազումք ո՛չ
ունելով զկատարեալ ճանաչումն ճշմարտի և
բարւոյ , վարանական դեգերին ՚ի խնդիր նո
ցուն . և մինչ ո՛չ կարեն սոտանալ , անհասանելի
զերսն վարկանին . իսկ թէ ուշի ուշով հայես
ցին , կարեն զնո՞ ճանաչել և՝ ի ձեռս բերել .
զի չէ օտար ՚ի հասողութէ մարդկան :

Վապէն ճշմարտութին է համակերպութի
երի ընդ իմացութե . իսկ բարին է այն , որ է
համաձայն ուղեղ բանի : Ուստի եթէ չէ Տե
տազօտէ մարգք ըմբռնել զերն այնպէս , որպ է
իրն յինքեան , հասու եղե ճշմարտութե . և
որ լուսով բանին առաջնորդի յընտրութի
գործոց , գտանէ զբարին . ապա թէ ոյլազք
վարեսցի , վըիպի ՚ի ճշմարտութ և՝ ի բարւոյ .
և անկանի ՚ի մոլորութի և՝ ի չարիս : Ուրեմն
քաջմտադիր լինել պարտ է ՚ի հետազտել ըզ
բնութի իրին՝ ՚ի ճանաչել զճշմարիտն . և խո
հական խորհրդով վարիլ յորոշելն զմի ինչ
գործողութի յայլմէ՝ ՚ի գտանել զբարին . և
յայսոսիկ կայանայ կատարելութի մարդոյ :

Ուստի իմաստունք որք ճանաչեն զճշմա
րիտն , և առաքինիք որք գործեն զբարին , են
զընարթամիտ և ուրախասիրտ . իսկ տգէսք որք
զսուտն ըմբռնեն որպ զճշմարիտ , և մոլիք որ
զառերեւոյթ բարին սիրեն փոխանակ իսկական
բարւոյ , միշտ տանջին ՚ի միտս և՝ ի կամն իւր
եանց , և ո՛չ ունին հանգիստ . զի միոյն ճշմա
րիտն է հանգուցիչ մտաց , որպ և բարին կամաց :

ԺԵ Ճ՛ՆԱՐՊՈՒԹԻՒՆ բնական իրաց հաս-
տատեալ է՝ ՚ի փորձս . զի ամ տարակուսանք
կամ դժուարին խնդիրք՝ որք են շուրջ զբնա-
կան կամ զգալի գոյացութե , ոչ լուծանին
բանիւ , այլ միայն փորձով : Ո ի բանն որչափ
և զօրաւոր իցէ , միայն զմիտսն հաւանեցու-
ցանէ , այլ ոչ կարէ զնա հանգուցանել . կամ
իբրև ապացուցեալ ճշմարտութի բռնադա-
տել ՚ի հաւանութի . զի քաղցեալն ոչ յագի
բանիւ , այլ խնդրէ հաց ՚ի կերակուր :

ԺԵ Յաճախակի խաբին մարդիկ , որք հա-
նապազ ցանկան լսել զնորագոյնս . զի ոչ հե-
տամուտ լինին քննել և իմանալ զՃշմարտու-
թիւն իրին :

ԺԵ Ա րտասոնէ ճշմարտութին մինչ ա-
տեն զնա նենդաւորք և ստասազք . և եթէ
ոչ ուրեք գտանէին հաւատարիմք և ուղղա-
խօզք միսիթարել զնա , իսպառ ըսէր յաշխար-
հէս , և երթեալ բնակէր յերկինս . ուր ոչ
գոյ նենդութի և ստութի :

* Ա յինայն երիեր աղաւէնի ՚ի ճշմարտութի , և երիբնէ
օրհնեն զՃշմարտութի . և ան գործք շրջին և դոշան ա-
ռաջէ նորս . և ոչ է ՚ի ճշմարտութ անիրաւութի և ոչ ի՞ւ
|| ա . Երգըաս . դ . 36 :

* Պիշտէ էն առաջէ աւատն շբթունք սուրք . իսէ սր
առնէ զհաւատո՞ւ շնտունելի' է նմա :

|| Առակ . ԺԵ . 22 :

ԳԼ. ԺԹ

ա Բնութին մարդոյ գոլովքաղաքական և
ընկերասէր՝ կարօտի բարեկամութեան , թէ
յուրախականս և թէ ՚ի տրտմականս . իսկ որ
ոչ ունիցի զսէր բարեկամութե ընդ ումեք՝
արտաքոյ ելանէ ըստ սահման բնութե մար
դոյ . վասն զի ուրախութին ընկերակցութե
բարեկամաց առաւելու , և տրտմութին բա
րեխառնեալ նո՞ւզի : Առ որ ոչ դիտէ թէ
զինչէ բարեկամութին , ոչ դիտէ նա՝ թէ
զինչէ մարդ :

Ե Խենցաղօգուտ խորհրդածութին փո
խադարձ խօսողութե բեղմնաւորի և իբր կեն
դանանսյ և աճի . զի երկու կարծիք ընդ մի
մեանս բաղդատեալ՝ ցուցանի արժանն և վայե
լուչն՝ և եղանակն դիւրութե ՚ի գործ դնելոյ
՚ի դէպ ժամանակի . իսկ ՚ի մնալն առ մի ոք
ծածկեալ՝ ընդ ինքեան բթանսյ , և կամ մո
ռացմամբ կորնչի : Ապա պա՛րտէ ունիլ մար
դոյ խոհեմ և խորհրդապահ բարեկամ խոր
հիլ ընդ նմա . զի եթէ բարի է՝ զոր կամի առ
նել , օգնելով բարեկամին՝ լինի բարեգոյն .
իսկ եթէ ոչէ բարի՝ ազգարարութե բարե
կամին՝ յետս կասի ՚ի նմանէ . զի օգուտ կամ
մվաս խորհրդոց և գործոց՝ այլում պարզ և
մեկն երեւի քան ինքեան :

Պ Ճ' շմարիտ բարեկամութիւնն գտանի
տիրապէս ՚ի մէջ իմաստնոց՝ մարդասիրաց և

առաքինեաց . ապա որ ունի հաւատարիմբար
ըեկամութի ընդ ումեք , նշան է՝ թէ ունի
նաև զիմաստութի , կամ զմարդասէր բարս ,
և զբարւոք կենցաղավարութի . զի ըստ սյսպի
սիս յօժարամիտ և փոյթ են մարդիկ առնել
զբարեկամութի . իսկ այն որ ոչ ունի զոք բա-
րեկամ , նշան է թէ իցէ տղէտ՝ կամ մարդա-
տեաց , կամ մոլի . վասն զի ամենեքեան խոր-
շին յայսպիսեաց :

Դ Ճշմարիտ բարեկամութին կայանայ ՚ի
փոխադարձ հաղորդութե բարեաց և չարեաց .
որպ զի յաջողուածովք բարեաց ուրախասցին
սիրտք . և կարեկցութե չարեաց՝ թեթևաս
ցին տրտմութիք . ապա թէ ոչ բարեկամութին
փոխի ՚ի շահասիրութիւն :

Ե Ա մաւ է ունիլ զիմաստուն բարեկամն
քան զբարում գանձս . զի իմաստուն բարեկամն
օդնէ յաւուր նեղութե օգտակար խրատուք .
այլ գանձք և մեծութիք ոչ բնաւ :

Ղ Յ ատուկ է ճշմարիտ բարեկամաց լինել
հաւատարիմմիմեանց . և յատուկ է հաւատար
մաց ունել ընդ միմեանս սերտ բարեկամութի :

(Օրէնք բարեկամութե հաստատի և պահ-
պանի ՚ի հաւատարմութե . և ուր չիք հաւա-
տարմութի , չիք անդ և բարեկամութի :

Ե Օ քիել ՚ի բարեկամէն՝ առաւել դառն
է և ցաւալի , քան զըկիլ յընցնց . զի ինչք
բազմացուցանեն զթշնամիս , և բառնան ըզ
հանդիստ ստացողին . իսկ բարեկամութին

թշնամիսն նուազէ , և զանձն բարեկամին
հանգուցանէ :

Ե Որ փութով բարեկամանոյ ը ումեք ,
փութով քակէ զկապն բարեկամութե :

Թ Կեղծ բարեկամ՝ է ուղխաջուր անձ
ըւոյ . և ոսկ ուղին ՚ի պակասիլ անձը ըւոյ ցա
մաքի . նոյնպէս և կեղծ բարեկամն ՚ի դա
դարիլ յաջողութե , անհետ լինի :

Ժ Յատուկ է օգտախնդիր և կեղծաւոր
բարեկամի , ՚ի ձախողութե բարեկամի իւրոյ
նախուին լինել ՚ի փախչօղա . որ ՚ի յաջողութե
նը նախահրաւէր լինէր ՚ի կոչնականս :

Չախորդութիւնն է փորձաքար բարեկա
մութե . և որ չէ անկեալ ՚ի ձախորդութի
ինչ , ոչ կարէ որոշել զկեղծ բարեկամն ՚ի ճշմա
րիտ բարեկամէ :

Ճա Կեղծ բարեկամն է առաւել չար՝ քան
զյոյտնի թշնամին . զի ՚ի յայտնի թշնամեաց
սովորէ զգուշանալ ոք . բայց ՚ի ծածուկ թըշ
նամեաց չունելով զկասկած , վսասի չարաչար :

ԺՇ Արժանի զարմացման է՝ զի յորժամմար
դիկ զձի կամ զէշ գնոց առնուն , խուզարկեն
զընութի և զքարս նը . իսկ յորժամբարեկամ
զոք առանան՝ յարտաքին կերպարանս նը և եթ
հային . իսկ զներքին բնաւորութէ նը ան
փոյթ լինին . Որ ոչ ընտրէ իւր բարեկամ և
խորհրդակից զարս առափինիս և ճշմարտախօ
սըս , արժան է զի վսասեացի ՚ի նենդաւոր բա
նից խորամանկ շողոքորթաց :

ԺԴ Օ ի՞նչ յիմարութիւն քան զայս առաւ
ւել վտանգաւոր . մինչ զարատաւոր անու-
սունս ստանց դանդաղանաց արտաքս վարեն
մարդիկ ՚ի տանէ իւրեանց . իսկ զմոլի բա-
րեկամն հանապաղ սեղանակից և խորհրդա-
կից ունին ընդ ինքեանս :

ԺԴ Որ ստանսոյ զբարեկամ բարի՝ դտանէ
զամ բարի . իսկ որ ստանսոյ զբարեկամ չար ,
կորուսանէ զամ բարի : Ինտրելի՛ է մնալ ա-
ռանց բարեկամի , քան ընկերանալ ընդ չարի :
Ո ասն այնորիկ մանաւանդ ստանսի է զբա-
րեկամն , զի բարին զոր ունի ոք՝ մնասցէ ամ-
բողջ . և զոր չունի՝ ստասցի նովաւ . բայց
բարեկամչար՝ զբարին զոր ունի ոք՝ բառնայ ՚ի
նմանէ . և զոր ոչ ունի՝ ոչ բնաւ կարէ տալ . զի
որ չարքն են՝ այլում բարիս առնել ոչ կարեն :

ԺԵ Ուէ կամիս ունել քեզ զոք բարեկամ
և հաւատարիմ , նախ լեր դու նմա անկեղծ
բարեկամ . ոոկ զի քոյդ բարութիւն զայլս արաս-
ցէ քեզ բարեկամ . զի եթէ դու ոչ կամիս
այլոց զբարին , մի՛ յուսար՝ թէ այլք կամես-
ցին քեզ բարի :

ԺԴ Չիք յաւէտ զուարձալի իմաստնոց՝
քան կենցաղավարիկ ընդ առաքինի բարեկա-
մը , և խօսակից լինել վշ կարեւոր և օդտա-
կար իրաց . դիւրին է իմաստնոց կորուսանել
զամ վայելչութիւն աշխարհի , քան զըկել յըն-
կերութիւն առաքինի բարեկամաց :

ԺԵ Արկնաքաղաքայի ՚ի դէպ է անուանել

զնո՞ւ, որք 'ի գործս բարեկաշտուե՞ սերտ սիրով
բարեկամութե՞ մնան 'ի միմեանց անբաժան .
սյս՝ է երկնային կեանս վարել 'ի յերկըի . զի
երկնայնոց է 'ի սերն այ և 'ի սեր ընկերին մը
նալ հաստատուն : Ապա որ բարեկամութե՞
կեսյ ընդ բարիս 'ի գործս բարիս , նախ քան
զելանելն յերջանկաց գաւառ՝ անշուշտ կրէ
յանձին զնոցուն քաղսքավարութի՞ :

ԺԸ ՃՌԱԳՆ՝ որքան և լուսափայլ իցէ , տա
կաւին պէտս ունի հատման պատրուգի . ապա
եթէ մնասցէ անյարդար , լինի դիւրահալ և
աղօտալոյս . այսպէս և մարդ՝ որքան և բազմա
հանձար իցէ՝ կարօտի խորհրդակցուե բարե
կամաց . զի մի' գուցէ կարեոր ինչ խորհրդա
ծեսլ իրողութի՞ իբրև իւղ ճրագի վաղվա
ղակի հալեալ սպառեսցի . կամաւելորդ պա
րագայիւք առ լցեալ՝ պայծառութի՞ խորհըռ
դոյն մուսյլ առնուցու :

ԺԹ Խրատ իմաստուն բարեկամաց՝ քաջ
պահպանէ զիշխաննն , քան զբազում գունդս
ահեղզօրաց : Անկանին 'ի վտանգս՝ որք ան
գունեն զիսրատ իմաստուն բարեկամաց :

Ե Ո՞ի 'ի նշանաց ճշմարիտ բարեկամուե
է պահել 'ի գաղտնիս սրտի զիսրհուրդս ըն
կերին , և ոչ մատնել օտարաց . զի խորհրդա
պահութին է չիմն բարեկամութե՞ . և առանց
նը սեր ընկերին չկարէ կալ կանգուն : Զէ
ճշմարիտ բարեկամ՝ որ մինչ գժդմնի ը բարե
կամին իւրոյ՝ լուծանէ զինիք հաւատարմուե ,

և հրատարակե զգաղանիս նորա :

իա Հարազատ բարեկամ նման է հայելոյ՝
կշռոյ՝ և փորձաքարի . զի ող հայելեաւ տե-
սանէ ոք զվայելըութի կամ զարատ երեսաց
իւրոց . և կշռով իմանայ զըսփ ծանրութե-
իլին . և փորձաքարին ճանաչէ զատիճան և
զարժողութի ոսկւոյն : Այսպէս և ազգարա-
րութե բարեկամի կարէ ոք քաջ ՚ի միտ առ-
նուլ թէ խորհուրդ իւր՝ զօր խորհեալն էր
յառանձնութե իւրում իցէ վայելուչ կա-
տարեալ և արժանի՝ ըստ ժամանակին , ըստ
տեղոյն , և ըստ ամ պարագայիցն : «Քանզի
ըազում անդամ առանձինն առանց խորհը-
դակցի՝ թէ և իմաստուն ոք իցէ անկանի ՚ի
սխալանս . կամ տարակուտսի յիրս ինչ . կամ ըդ
խորհեալն թողու տարտամ և անդործ . վայ
կարօտի այլում , զի ուղղեսցէ զսխալանսն , և
զտարակուտսանսն լուծցէ . և զխորհեալն եթէ
իցէ հարեկաւոր և օդտակար՝ խրախուսեսցէ ՚ի
գործ դնել : Ապա որ ունի անկեղծ և իմաս-
տուն բարեկամ՝ ոչ սխալի . քանզի աչք առա-
ւել տեսանեն քան զակն . իսկ որ ոչ ունի խոր-
հըդակից բարեկամ ՚ի գործս զօր հանդեր-
ձեալ է առնել զգոյշ լիցի . զի կամ անկեալ է
՚ի վըիպակս , կամ մերձ է յանկանիլ :

ի՛ Հարազատ բարեկամութին պահանջէ
ունիլ զշաւասարութի ինչ . կամ ըստ փարթա-
մութե , կամ ըստ պատույ , կամ ըստ իմաս-
տութե , և կամ ըստ խոհեմութե . ապա թէ

ոչ փոխարկի բարեկամութեն անուն՝ կամ՝
՚ի շահասիրութի՛, կամ՝ ՚ի շողզորդութի՛,
կամ՝ ՚ի դասառութի՛, և կամ՝ ՚ի կուրօրէն
հաւանութի՛ . Վայ անհաստատ է բարեկա-
մութին՝ ուր չիք հաւասարութի՛ ինչ :

Ի՞՛ Հոգին բարեկամութեն է անկեղծ սէր .
զի առանց նը բարեկամութին է դի անկեն-
դան . կամ է պաճուճապատանք ինչ՝ որ արտա-
քին երեսութի՛ ցուցանի լինել մարդ , այլ
իրօք է կեղծիք . և ող դիւրաւ կործանի շին-
ուածն՝ որ չիցէ հաստատեալ՝ ՚ի վերայ վիմի .
սոյնպէս փութով եղծանի բարեկամութին՝
որ չիցէ հիմնեալ՝ ՚ի վերայ սիրոյ :

Ի՞՛ Բարեկամութին ող դեղեցիկ է տես-
լեամք , նոյնպէս և փափուկ է բնութք . Վայ
և դոյջն պակասութք ծանր հիւանդանայ . և
փոքր ինչ անհոգութք մեծամեծ վէրս երես
ցուցանէ . քանզի մարդիկ չնչին նեսիւք սի-
րելեաց կարեվէր խոցին՝ ՚ի սիրտ՝ քան հրա-
ցոյտ գնտակաք թշնամեաց : Բազում անդամ
ստատիկ սէր բարեկամութեն յանհնարին ատե-
լութի՛ փոխարկի անզդուշութք . նմին իրի
միշտ կարօտի փոխադարձ դարման մատուցա-
նեցյ , զի ևս քան զւս զօրանցի :

Ի՞՛ Յաճախնել առ բարեկամն առանց կա-
րեսոր ինչ առթի՛ բերէ զտաղտկութի՛ և զան-
պատութի՛ : Եւ կարի իմն յամր և անագան
երթեւեկութի՛ հովացուցանէ զչերմութի՛ սի-
րոյ . ըստածին , որ հեռի է յաշաց , հեռի է

և ՚ի մնաց . ապա որ կամի արդոյ և սիրելի լի նել յաչա բարեկամին , մի՛ կարի յաճախեսցէ , և մի՛ կարի անաղանեսցի . այլ մնացն լծակօք կշռեսցէ զժամանակն :

Եղ Անդ է կատարեալ բարեկամութի , յոր ժամ երկոքին ունին զմի սիրտ և զմի հոգի . զոր ինչ կամի մինն՝ կամի և միւսն . և զոր ինչ ասէ մինն՝ ասէ և միւսն . եթէ առնէ մինն՝ առնէ և միւսն . և եթէ դաղարի մինն՝ դաղարէ և միւսն . մինչև երեխլ նց՝ թէ ոչ են երկու անձինք , այլ մի հոգի՝ յերկուս մարմինս բնակեալ : Անդ է տեսանել անձանձիր քաղց ըութի կենաց , և յաւերժ ուրախութի . ՚ի միասին կեան , և ՚ի միասին մեռանին . մանաւանդ զի մեռանին և բնաւ իսկ ոչ . զի ունին ներդոյացեալ ՚ի հոգիս իւրեանց զսէր անմահ և մշտնջենաւոր :

Իէ Աշան է կատարեալ բարեկամութեան՝ եթէ ոք յանձն արասցէ զօդուտն իւր ՚ի կամն բարեկամին , և ասիցէ . զայն օդուտ համարիմ ինձ , զոր կամլցի առնել բարեկամն իմ ինձ :

Եղ Անարժան է սիրոյ և բարեկամութե , որ մոռանայ զերախտիս բարեկամի իւրոյ . զի է մարդ՝ որ բազում անդամ զմեծամեծ բարերարութիս ընկալեալ է յումեքէ , և մինչ ըստ դիպաց իմն յայլում նո՞ւագի ոչ դտանէ զոր ինդրէ , վաղվաղակի մոռանայ . և առ ոտն հարկանէ զայն ամ երախտիս նորա . խոժոռի և անդուսնէ զըարեկամն :

իթ Ո'չէ Ճշմարիտ բարեկամ, որ յորդորէ զբարեկամն իւր գործակից լինել ընդ ինքեան ՚ի վսաս այլոց . այսպիսին կերպարանօք զանուն բարեկամութեն կրէ, բայց իրօք զթշնամութի նիւթէ . զի տոյ նմա մեղաննչել, գործակից առնելով անօրէնութեն իւրոյ :

Ե Բարեկամութին ծնանի ՚ի սիրոյ . իսկ սիրոյն ո՛չէ հարկ՝ զի սիրեցեալ առարկայն իցէ մերձաւոր . քանզի կարէ սիրել և զկարի հեռաւորն և զբացակայն : Ուստի որք պատճառաւ հեռաւորութեն տեղւոյ, գադարին ՚ի սիրելոյ զընկերս իւրենց, և ո՛չ ջանան առնել նմա զբարիս, ո՛չեն կատարեալ ՚ի սէրն :

Է Օ այրանան ցաւք սրտի, մինչ ՚ի վշտանալ ուրուք՝ ուրախանան այլք . թեթեանան ցաւք, մինչ ընդ վշտացելոյ ուրուք կարեկից լինին այլք : Վաս որ ունի զկիրս ցաւոց ՚ի սրտի, թագուսցէ զայն ՚ի թշնամւոյ, զի մի ուրախասցին, և ինքն առաւել տրտմեսցի . և յայտնեսցէ բարեկամին, զի ՚ի վշտակցիլ նոր թեթեասցի ինքն ՚ի ցաւոց, և միթարեսցի :

Ը Ճշմարիտ բարեկամ այնոքիկ են, որք փոփոխակի բառնան զծանրութի և զցաւս իրեւրաց . բայց գտանին և ոմանք, որք բանիւ շըրթանց կոչեն զընկերս իւրեանց բարեկամն և սիրելիս, այլ ՚ի սրտէ համարին զնո ողկ բեռնաբարձ գրաստու, զի միշտ բառնան զբեռինս իւրեանց ՚ի յուս նց . իսկ ինքեանք ո՛չ երբէք մերձենան ՚ի բեռինս նոցա . և սոքա են

կեղծաւորք, և սռւա բարեկամք :

ԵՇ ԶԵ արժանի սիրոյ, որ ո՛չ սիրէ զիմն՝
որպ պարտն է սիրել . վ՛շ զի կամ ո՛չ ձանացէ
զարդ նորա, կամ արհամարհէ զնա : Աշան
Ճշմարիտ սիրոյ ո՛չ են բանք լեզուի, այլ՝ ար-
դիւնք գործոյ : Ո՛չ է անդ սէր, ուր թա-
դաւորէ իմ և քո :

ԵՇ Օ այն պարտ է ձանացէլ բարեկամ, և
պինդ ունել ՚ի սիրելութե, որ ազդ առնէ
զսխալանս քո առանց իրեք շահասիրութե . զի
թէւ խիստ իցեն բանքն, և ընդդէմ ախորժա
կին քում, հաճեաց ընդունիլ . զի հային յօ-
գուտ անձին քո : Հիմնը է նա՝ որ առէ զըա-
րեկամ իւր, զի յանդիմանի ՚ի նմանէ :

ԵՇ Ո՛Յ զայն միայն համարեացիս թշնամի՝
որ հասուցանէ անձին քում չարիս, այլ և
զայն՝ որ բարեկամ լինել կարծի, բայց ո՛չ
ազդ առնէ զսխալանս քո . և վ՛շ շահասիրութ-
իւրոյ ներբողէ զքեզ կեղծուպատիր գովես-
տիւ . յորմէ խաբեալ անկանիս ՚ի վտանդ, և
լինիս վատանուն :

ԵՇ Ճ՛շմարիտ բարեկամութին պարտաւորէ
զամենեսեան զըարիս կամիլ, և առնել ընկե-
րին . իսկ խրատել, և յանդիմանել զեղեսյրն՝
որ իցէ սխալէլ ՚ի բանս կամ ՚ի գործո՝ է կա-
միլ, և առնել ընկերի իւրում զըարիս . ապա
որ կարօղ գոլուզանց առնէ, և անփոյթ լինի
՚ի դարձուցանելոյ զեղեսյր իւր ՚ի մեղաց խը-
ռատուք կամ յանդիմանութե, մեղանցէ ընդ-

դէմ սիրոյ պատուիրանին :

Աչ լնու զօրէնս ճշմարիտ բարեկամութեն ,
որ տեսանէ զորդի բարեկամի իւրոյ անխրատ՝
և ոչ խրատէ կամ յանդիմանէ :

Եւ Անական և ածային օրինօք պարտաւու
ընկը նպաստիւք ընչից օդնել ընկերին , մինչ
է ՚ի կարօտութեն ըստ մարմնոյ . ապա առաւել
ևս հարկ ՚ի վը կայ նպաստիւք խրատուց և
յանդիմանուեն օդնել կարօտելոյն ըս հոգւոյ :
Արժանի է վարձուց որ առաջնորդէ ումեք
ընդ Ճանապարհ ուղիղ . բայց ոչ է պարտ
յերկուաննալ՝ թէ մնասցէ անվարձ , որ արգե
լու զոք գնաւը ընդ Ճանապարհ մոլար :

Եւ Եղեայրական յանդիմանութին առ հա
ւասար և համապատին բարեկամն՝ ՚ի գործ
դնի . զի իշխանաւոր ոք , կամ դատաւոր մինչ
յանդիմանէ զյանցաւորն՝ այն է սաստ կշտամ
բանաց հեղինակութեն իւկը . իսկ եթէ փոքրն
յանդիմանէ զմեծն՝ այն է յանդդնութի : Այլ
խոհեմութեն և զգուշութեն իւկը որդին զհայր
իւր , կրտսերն զերէց եղեայր իւր , կինն զայր
իւր , և հպատակն զիշխանն իւր կարէ խրա
տել , և զգործ յանդիմանութեն ՚ի վար արկա
նել . բայց այն ոչ ասի յանդիմանութի՝ այլ
աղդարարութի . իբրև զի յուշ առնէ նմա
զանպատշաճութի բանից , կամ գործոց , յորոց
կամի խորշեցուցանել զնա :

Եթ Յանդիմանութին՝ յառաջ եկեալ ՚ի
սիրոյ բարեկամութեան , պահանջէ ունել

զայսոսիկ պայմանա . նախ՝ զի յանցանքն իցէ
ստոյդ . զի յանդիմանութին վո տարապարտ
յանցաւորութեան կարելէր խոցէ զսիրտ :
Երկրորդ՝ զի իցէ համաչափ յանցանացն, կամ
նուազ քան զարժանն . զի որ տարապայման
ձգի ՚ի յանդիմանելն, փոխանակ զվէրս բու-
ժելոյ՝ առաւել ևս զայրացուցանէ : Երրորդ՝
զի իցէ ՚ի դէպ ժամու, և առանձին . զի յան-
դիմանութին որ լինի առաջի բազմութե, ոչ
է խրատ զգաստուե՝ այլ թշնամնկք : Չորրորդ՝
զի իցէ ցաւակցաբար՝ մեղմե ազդու բանիւք .
զի որ հոգւով վըէժխնդրութեան՝ և խիստ
բանիւք վարի, տեղի տայ յանդգնութե :
Հինգերորդ՝ զի իցէ յոյս ուղղուե . զի առա-
ւել վտանգաւորէ յանդիմանել զանուղղայն :

Ի՞ր զպակասութիւն բարեկամի իւրոյ՝ ոչ
ազդ առնէ, և ոչ խրատական բանիւք յան-
դիմանէ, զի մի՛ բարեկամն վշտասցի, կամ խո-
ժուեսցի, ոչէ նա ճշմարիտ բարեկամ՝ այլ
մանաւանդ թշնամի . զի գործ թշնամնութե է՛
կարօղ գոլով ուղղել զսխալանս բարեկամին .
յորմէ զչետ գան նմա և այլ մեծամեծ վնասք .
զօրս եթէ կամեսցի յայնժամ՝ ոչ կարէ խա-
փանել : Վպա եթէ խրատեսցէ, և նա ոչ ան-
սայցէ, առցէ ընդ իւր և զոմանս ՚ի բարեկա-
մաց, և խրատեսցէ նոքօք, զի գոնէ շահեսցի
զեղքայրն : Իսկ թէ և նց ոչ անսայցէ, ասաս-
ցէ առաջնորդին եկեղեցւոյ, որով ազատեսցի
՚ի պարտաւորուե . որ եթէ նմա ևս ոչ լուիցէ,

Եղիցի իւրեւ զշեթանոս , և զմաքսաւոր .
|| նոտ . ծը . 17 :

- * | ա՞ւ են հարսածք բարեխամի , քան զիամակոր հայ
բարս լշնամաւոյ : || Առակ . իէ . 6 :
 - * | ա՞ւ է այստեղութիւն առադիմականը քան զբարեխա
մա-թի ՚ի ծածուչ : || Առակ . իէ . 5 :
 - * Բարեխած հաւապարիմ աշաբախ աճուր , և որ է գիտ
շնո՞ւ է գիտ գանձ : || Աիրաք . զ . 14 :
 - * Օ հաւապարիմութիւն սապացէր ընդ բարեխամի ապշտ
առ-թիւ նորս . զի և ՚ի բարիս նորս ուրախացէր :
- || Աիրաք . ժք . 28 :

Հենրանիքութիւն

ԳԼ . Ի

ա Առաքինութեց ոմանք են առանձնա
կան , որք միայն զգործօղս իւրեանց միսիթա
րեն . որպիսի է աղօթք , և ծնրադրութիւ , բա
րեպաշտ խոկումն զայ և զածայնոց , զղումն ՚ի
մեղաց , ծումապահութիւ , և պահեցողութիւ , և
այլ ապաշխարանաց գործք . և սոքա վերաբե
րին առ կրօնն : Խսի ոմանք են ընկերական ,
որք միանգամայն զգործօղսն և զընդունօղսն
միսիթարեն . որպիսի է ողորմիլ կարօտելոց ,
ազատել զգերիս , ծառայել հիւանդաց , միսի
թարել զտրտմեալս , բարիս առնել հասարա
կաց . և սոքա վերաբերին առ բարոյականն :

Եւ արդարեւ սոքա երկոքին ևս են գովելի , բարի , ածահաճոյ , և վարձուց արժանաւոր . այլ ընկերական առաքինութիւն՝ եթէ գործին առանց սնափառութե , գովելի ևս են , և մեծագոյն վարձուց արժանի . զի՞ ոչ միայն լինին յօդուտ և' իշահ գործողին՝ այլ ընկերին . մանաւանդ զի օրինակաք գործոց իւրեանց շարժեն զբազումն բարերարել այլոց : Բատ այսմէ և հիւրասիրութիւն . որ ոչ միայն զհիւրընկալն ուրախացուցանէ՝ այլ և զհիւրն . որ և զայլ բազում մասունս առաքինութե պարունակէ յինքեան . յդ զմարդասիրութիւ , եղբայրախրութիւ , քաղաքավարութիւ , օտարասիրութիւ , ողորմութիւ , խոնարհութիւ , քաղցրութիւ բարուց , և այլն :

Է ՚Վաջ գիտէ թէ զինչէ լինել հիւրասէր և օտարասէր , որ երբեմն լեալ իցենմանդեհ և պանդուխտ , զբաւոր կամ հիւանդյօտար երկրի :

Դ Ո՛չէ նա հիւրասէր , որ կոչէ ՚ի սեղան զհացկատակս , կամ զբարեկամն ՚ի շնորհուկս նց , և' ի փառս անուան իւրոյ . այլ այն՝ որ զաղքատա՝ զանյարկս՝ և զնմանդեհս ժողովէ ՚ի տուն իւր , կերակրէ և միսիթարէ զնս առանց փոխադարձ ակնկալութե :

Դ ՚Պէմք զուարթունք՝ և բանք քաղցունք առաւել յագեցուցանեն զհիւրս՝ քան սեղան բազմախորտիկ և անուշահամըմակելիք :

Ե Ո՞ղի և խելադար է հիւրընկալուն :

որ այնու դիտմամբ ասպնջական լինի օտարաց , զե եկեալ մատուսցեն ինքեան զպատիւ և զմեծարանս :

¶ Առ առաջի հիւրոց մեծաբանէ զանձնէ , ոչ միայն զվարձս իւր կորուսանէ , այլ և որպէս զամբարտաւան նախատի : Քանզի հիւրն կամ պարտի գովել զմեծաբան տանուտէրն՝ և լինել մարդահաճոյ . կամ լուռ կալ՝ և երեխիլ տմարդի : | աւ է ՚ի սեղան քաղցրախօս աղքատի ուտել հաց աշտուճ , քան ՚ի կոչունս մեծաբան փարթամի՝ կերակուր համադամ :

* Ի՞րեա՛ շհաց ժազցելցց առ և զազւառս անցարիս տար՝
՚ի ոսուն ժուելիէ աւսոնիցէն շերէ՝ շգեցուցանիշէր :
|| Հասոյ . Ճ՛՛ . 7 :

* ՚ աղեռս սրբոց հազրեւեցարուք . շհիւրասիրութե
շհեա երեւայտ : || Հուօմ . Ճ՛՛ . 13 :

* Եշեացուիրութիւն հաստատեսցի՝ առ չեղ . զառարա
սիրութիւն մոռանայք . շե այնու ոճանչ յանդէռս ընկա
շն շհրելուակս : || Երբ . Ճ՛՛ . 1 :

* ՚ ամեն շան շամենայն սէր սէրո ունել ընտ դժանս .
շե սէր ծածիէ շբաշմութիւն և զաց , օտարբասէրտ լե
նել ընտ դժանս առանց որդոն չելցա :

|| ա Պիետ . Շ . 8 :

ԳԼ. ԻԱ

Յ Երջանիկ է քաղաքն՝ որոյ բնակիչք են
ժրածանք, և վայելեն՝ ի վարձս աշխատութե
իւրեանց. ստացեալ ունին միայն զհարկաւոր
սիրտոյս կենաց, և փախչին յաւելորդաց և՝ ի
զուարձալեաց. կահք և կարասիք՝ հանդերձ և
տուն՝ կերակուրք և ըմպելիք համեստ են և
չափաւոր: Խ'նդ է տեսանել խաղաղութիւն
քաղաքացւոց՝ և միաբանութիւն ընտանեաց.
Հպատակութիւն օրինաց՝ և հնազանդութիւն մե
ծաց. ատել զմարդահաճոյս՝ և սիրել զըա
րեսիրտս. և կեալ ազատ և ուրախ:

Է Որ ՚չ բաւական համարեալ զկարեւորս
անձին զօր ունի, զհետ լինի վայելչականաց՝
որք ՚ի զարդ և՝ զուարձութիւն վերաբերին,
զըկի և՝ կարեռաց անտի. և որ չէ գոհ ընդ
վեճակ իւր՝ կորուսանէ և զայն. և ապա
խնդրէ, և ՚չ կարէ գտանել:

Շ Ուակաւապէտն հանդիսոտ և անտրոտունջ
վարէ զկեանս իւր. զի սակաւ են իրք կա
րեռը, որոց հարկաւ պէտս ունիցի. և զայնո
սիկ ևս դիւրաւ կարէ գտանել: Ո՞չ տանջի
՚ի ստանալ զաւելորդս՝ որք սնուցանեն զսնա
փառաւթին. և ՚չ տրտնջէ յորժամ չունիցի
զնոսա, զի ՚չ կարօտի նոցունց:

՚Քանզի որ բազմաց կարօտի, անհանդիսա
ջանաց ստանալ զնոսին. և մինչ ՚չ կարէ ՚ի ձեռս
բերել տանջի և տրտնջէ: Խսկ տրտունջն՝ ՚չ

միայն է ամբոխիչ մտաց և խարտոց կենաց ,
այլև ձանձրացուցիչ ընկերաց . զի ամենեքին
զզո՞ին և տաղականան և՝ի բաց հեռանան ՚ի
տրտնջօղ բերանոյ . վայ և ո՛չոք կամի կենցաղա
վարիլ կամբարերարել այնպիսւոյն : Օ ի այս
իսկ է բարք տրտնջողին . անգոհ լինել զբարե
րարէն՝ թէև բազմօք իցէ երախտաւորեալ ՚ի
նմանէ . և մեծամեծա տրտնջալ՝ եթէ փոքր
մի ժամանակ անտես եղեալ իցէ ՚ի բարերա
րութենէ նորա :

Ե Համեստն սակաւուք շատանայ՝ որք կա
րեւորք են ՚ի դարման կենաց . վայ միշտ մտա
դիւր կայ և ուրախ : Խակ փառամոլն հանա
պաղ ջանայ ՚ի ստանալ զարծաթ՝ ՚ի պէտս վայել
չականաց . վայ անհանգիստ տառապի ՚ի հոգս
և ՚ի զբաղանս : « Ա, բազում անգամ անար
ժան միջոցօք հնարի շահիլ, զի մի՛ նո՛ւազութի
ինչ բերցէ պատո՞յն իւրոյ . սմին իրի չարա
չար տանջի ՚ի խղճէ մտաց : Ապա բարին է լի
նել չափաւոր և համեստ , և կեալ զո՞ւարթա
միտ , քան լինել մեծատուն՝ բայց փառամոլ ,
և տանջիլ մտօք և մարմնով :

Ե Օ ի՞նչ առաւել ցանկալի մարդկութեա
քան զայն՝ որ առաւել օգտակար է ՚ի պահ
պանել զկեանս մեր երջանկաբար . ապա զի՞արդ
չիցէ յաւէտ ցանկալի բաւականութին կա
րեւորք , որ պահէ զկեանս մարդոյ զո՞ւարթ ,
առողջ , և երկար :

Ե Քաղաքական կենցաղավարութին միջա

կայնոց՝ է առաւել ապահով և հանգիստ քան
զայլ վեճակս կենաց . զի եթէ լինիցի ոք կարի
իմն նուաստ , այլք իշխեն նմա . վայ կայ միշտ
՚ի տառապանս նեղութե և վշտաց : Աւ եթէ
մնիցի կարի իմն յարդոյ , ինքն իշխէ այլոց .
վայ կրէ հանապաղ զթշնամութի՞ ՚ի յաշաղկու-
տաց : Խակ որ զմիջակայինն վարէ զկենցաղ ,
ո՛չ գլխովին ընկճեալ է ընդ իշխանութե ու-
րուք իբրև զնուաստ ոք . և ո՛չ կրէ զթշնա-
մութիւն ՚ի յաշաղկուտաց իբրև զեշխանաւոր
ոք . վասն որոյ միշտ կայ խաղաղ և մտադիւր ,
շափաւոր պիտոյիւք շատացեալ :

Է Տրտմութի՞ է սրտի ըղձանալ բազմաց ,
և հասանիլ սակաւուց . և բերկրութի՞ է հոգւոյ
ըղձանալ սակաւուց , և հասանել բազմաց :
Ապա մի' ցանկասցի ոք բազում ստացուածոց ,
զի մի' տրտմեսցի յորժամ չկարիցէ ունել . այլ
սակաւուց և կարեւորաց միտ դիցէ , զորս դիւ-
րին է ՚ի ձեռս բերել : Աւ եթէ բազմաց ևս
հասանիլ նմա դէպ լիցի , յայնժամ ուրախամիտ
բերկրեսցի անձն նը , իբրև զայն՝ որ ՚ի պե-
ղեն վերկիր , գտանէ զգանձ :

* Լ ա՞ւ է պատառ մէ հանով խաղաղութի՞ , առն զառանս
և շենշեօք և բարեօք լշնանութի՞ : || Առակ . ԺԵ . 1 :

* Շ ահավաճառ մէծ ոճութաղութի՞ է բառականութի՞
հանդերձ : || Բ Տիմ . Ղ . 6 :

ԳԼ. ԻԲ

Թ Այրկիրն է մայր գթած . և ոչ դադարի երբեք՝ ի բաշխելոյ զպարգևս բարիս որդոց իւրոց , և առնել զնու փարթամ . և որբան առաւելուն՝ ջանս գործել զնա , այնքան առաւել արդիւնս շահեկանս մատուցանէ նց . ապա պարտաւոր գտանին բնակիչք՝ եթէ թողուն զերկիրն անգործ , և զանձինս կարօտ :

Ե Պարտ է ջանալ և աշխատիլ յոյնպիսի արհեստա , որով սնանի և պահպանի կեանք մարդոյ . և ահա այսպիսի է արհեստն մշակուել : Թա՞ղ՝ զի աշխատութին առողջ պահէ զմարմինն և զօրացուցանէ . իսկ ծուլութիւնն Տիւանդագին առնէ և տկար :

Դ Արեբաստիկ փարթամութիւն՝ մշակութին է համարելի , որ աննախանձ ընձեռէ զՃշմարիտ հարկաւորս կենաց մարդկան . իսկ թէ կարելի՛ է մարդոյ գործելով զերեսս երկրի ստանալ զՃարկաւոր պէտսն , ուրեմն տարապարտ տաժանի՝ ի խնդիր ոսկւոյ և արծաթոյ՝ ական հատեալ՝ ի խորս երկրի :

Ե Ազգումք՝ ի մարդկանէ զերջանիկ հարստութիւնն՝ որ զետեղեալ է՝ ի մշակութեե երկրի , մահու չափ պատերազմաւ և արեան հեղմամք զօր ամ տառապին գտանել . և ոչ գիտելով թէ ուր իցէ , ի զուր թարթափին ընդամ երկիր : Զէ յանդունդս խորոց թաքուցեալ . այլ կոյ ի պատրաստի՝ ի նելքոյ

ոտից իւրեանց . եթէ գործեն զնա , ոչ միայն զդարման կենաց գտանեն՝ այլ և զխաղաղութի , զառողջութի , և զերկարութի կենաց՝ աւելի քան զոր կարծեն այլովեղանակաւ ունել :

Ե Անափառութիւնն է աղքիւր թշուառութե . զի բազումք վս չափազանց վայել չութե ՚ի կարեորացն ևս զըկին , և տառապին ՚ի կարօտութե . ապա որք հարկաւոր պիտոյիւքն շատանալ կամին , գտանեն զիրն դութիւն և զխաղաղութիւն :

Ղ Առաւել քան զամարհեստս՝ որք ծառայեն ՚ի դիւրութի՝ ՚ի զարդ՝ և ՚ի վայելքութի մարդկան , պարտ է ծաղկեցուցանել զարհեստս՝ որք հարկաւորք են կենաց . որպիսի է երկրագործութի , հովուութի , գարբենութի , ոստայնանկութի , և հիւսնութի : Առող վուրդք որք շատանան հարկաւորգք , և ոչ զհետ կրթին վայելքականաց , կեան անմեղ և հանգիստ կենօք . ոչ տանջեն զայլս անիրաւ յափշտակութիք և բունութիք . և ոչ արկանեն զանձինս ՚ի չարաչար աշխատանս առ՝ ՚ի ստանալ զաւելորդս , որք ոչ են կարեորք կենաց՝ այլ սնոտի վայելքութի : Անութին սակաւուք սովոր է շատանալ . իսկ ցանկութի՝ ոչ երբեք դիտէ ասել բաւ :

Ե Աիրոյ և յարդանաց են արժանաւոր ճարտար արհեստագէտք , զի կաղմն զարհեստակերտուածս հանճարաւոր . որք թէպէտ են դործ ուշիմմտաց , այլ ոչ հարկաւոր ՚ի պէտս

կենաց : Խսկ զիարդ չիցէ գովելի մշակն , որոյ
գործ է հարկաւոր և կենցաղօգուտ . և ոչ
ըստ գործոց ճարտարաց՝ ի վայելքութիւն մարդ
կան հնարեալ . զի քրտնաջան վաստակոցն ար
դեամբ կերակրէ զքաջահանձար արհեստա
ւորս , և զամ վիճակ մարդկային ազդի :

Ո՞չ պարտ անգունել զմշակութին . զի ոչ ոք
որ աւողջ միտս ունի , արհամարհէ զգործ ինչ
պիտանի՝ արարեալ ձեռամբ անհանձար գիւ
զականի . ոյլ հաճեալ հաւանի ընդ այն , և
մեծ շնորհ և երախտիս անձին վարկանի :

Ե հերեկտոն թագաւոր աթենացւոց՝ որ
եդիտ զկիրառութիւն արծաթի գրամոց , եդ օ
րէնս հպատակաց գործել զերկիր , և պտղովք
նորա սնանիլ . գարմանել զիսաշինս , և զկաթն
նց առնուլ ՚ի կերակուր , և զասրն ՚ի ծած
կոյթ . զի ասէր , երկիր տայ անպակաս զպտուղ
իւր ՚ի սնունդ մարդկան , մինչ աշխատին ՚ի նո՛
մարդիկ : Բայց յորժամ ետես՝ եթէ ՚ի պատ
ճառս գրամոց թողին զերկրագործութին , և ա
պականեցին զքարս իւրեանց . և յախտէ ար
ծաթսիրուն յաճախեցան չարիք ՚ի վը երկրի ,
զղջացաւ յոյժ . և առգառնուն սրտին թողել
զիշխանութիւն իւր , առանձնացաւ յանմարդի
խորշ լերանց . և եկաց անդ աղքատ և թախ
ծագին մինչև ցվախճան կենաց իւրոց :

* Որ սն համեցէ գործել և չերեցէ մ' :

ԳԼ. ԻԳ.

ա Ծառայ կամսպասաւոր՝ որ միայն ըզ
դիւրութիւն անձին ընտրէ, ոչ բարւոք ծաւ-
ուոյէ տեառն իւրոյ ։ զի ծառայ բարի՝ յանձն
առնու կրել զնեղութիւն յօգուտ տն իւրոյ ։
իսկ ծառայ վատ՝ խոյս տայ ՚ի դժուարութէ,
և ոչ օգնէ նմա ՚ի ժամանակի հարկաւորուե :

Ե Օ ինչ օգուտ է շրթամբք խօսից ե-
րեկիլ տիրածան, և գործով գտանիլ դաւա-
ծան ։ զի ոչ լեզուն է որ տիրասէր առնէ, այլ
գործն՝ որ յառաջ գայ յանխարդախ սրտէ ։
ծառայ օդտախնդիր ոչ կարէ լինել հաւատա-
րիմ տն իւրոյ, և ոչ բարեջան ՚ի վաստակս :

Ե Ծառայ որ նենդէ տն իւրում՝ և յա-
րի ՚ի կողմը թշնամւոյն, արժան է զի պատճես-
ցի յայնմանէ՝ որումեղել թւակից ։ զի որ իւ-
րում բարերար տն գտաւ դաւածան, ոչ ոյլ
ումեք յուսալի է լինել նմա հաւատարիմ :

Ե Կամք ծառային պարտի լինել այն՝ զոր
ունի տր իւր ։ սիրել զոր սիրէ ։ և ատել զոր
ատէ ։ զի որ ջանայ խոնարհեցուցանել զտրն ՚ի
կամն իւր, և գործել ըստ հաճոյս անձին իւ-
րոյ, ոչ է ծառայ՝ այլ տր ։ Աւ ոչ իսկ արժան
է ծառային քննել զպարագայս գործոյն, ընտ-
րել կամելով զդէպն և զանդէպն ։ ոյլ միայն
կամակար հնազանդութ ՚ի կատարումն պատ-
օւիրանին փութալ :

Ե Հաւատարմութիւն սպասաւորին երեխ

յիրս դժուարինս . զի նա է հաւատարիմ , որ
եռանդագին սիրով և զոնարթութե՛ տանի
վշտաց . իսկ որ խոժոռի և տրտնջէ՝ անարժան
է սպասաւորութե՛ և վարձուց : Պայզն մի
ծառայութի՛ մեծաւ սիրով՝ առաւել հաճե-
լի է , քան մեծ ինչ աշխատութի՛ արարեալ
նոնազ սիրով :

Ղ Հնազանդութի՛ ծառային յառաջդայ՝ ի
բարերարութե՛ տն . և ուր առաւել է բարե-
րարութի՛ , անդ առաւել է հնազանդութի՛ :

Է Բնդ դէմարդարութե՛ է զաշխատաւոր
սպասաւորս թողուլ անինամ՝ ի ծերութե՛ նը
կամ՝ ի տկարութե՛ . զի որ մինչ կարօղն էր՝
ծառայէր հաւատարմութե՛ , արժան է զի խնա-
մարկեսցի՝ ի տկարութե՛ իւրում : ապա թէ ոչ
ոչ երբէք գտանիցի հաւատարիմ սպասաւոր :

Ը Եթէ տեարք լինէին բարի , ոչ գտա-
նէր ծառայ չար . զի ծառայք ոչ այլ իմիք ցան
կան և հետեւին , բայց եթէ նմանօղ լինէլ տն
իւրեանց , և՝ ի պատիւ նց հասանել :

Թ Այն է կատարեալ ծառայութի՛ առ ած ,
որ յառաջ գոյ միայն՝ ի սիրոյն ոյ . և Ճմարիտ
սիրօղն յանձն առնու կորուսանել զինչա , զպա-
տիւ , զսիրելիս , և զանձն իսկ , զի մի կորուսցէ
զսէրն ոյ : Անկատար ծառայութին է՝ որ յա-
ռաջ գոյ յերկիւղէ պատժոց . զի որ առ եր-
կիւղի ծառայէ և հնազանդի , առաւել զինքն
սիրէ քան զած :

* Օ ժառաց մշնդիք որ վաստակեց ուշ թ' զա-
բայս-սյեւ և շնդիք որ առաջալեց շանչն եր է
վերաց ու թ' զա-եր : || Աիրաք . Է . 22 :

* Օ ձառաց ծեր սիրեալ դու , և յաշապութե չարօն
շնա կ' առաջեր : || Եթոաք . Ե . 23

* Ծանուաց՝ հնաշանտ լեռու տէրանց ձերսց զամբ . կ'
առ աշանէ ծանուացու լիք էլքի մարդահանցք :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԵՎԻՆ

፩፻፷፭

ա Պաեղեցիկ դուստր խոնարհութե՛ ՚ի
դէպէ է անոնանել զնազելի հնազանդութին .
զբոյ զբազմապատիկ ձիրս շնորհաց՝ վայելողք
միայն Ճանաչեն . զի բարոյապէս ազատ կացու-
ցանէ զկամն մարդոյ . որ ազատ գոյութենակա-
նաբար հնազանդութե՛ բանին , անհնազան-
դութին նմա՝ եղեալ է ծառայ կրիցն բարոյա-
պէս . և այս ազատութի՛ է անաշխատ թագալ-
ւորութի . առանց պատերազմի յաղթութի :
Ի՞նդ է տեսանել ամ թշնամեաց պարտութի .
անդ վերընձիւղին երփներանգ ծաղիկք խա-
ղաղութե՛ . անդ բարդաւաճին կենցաղօդուտ
պտուղք սիրոյ և խնդութե՛ :

Ապաքէն որդիք մարդկան՝ որք միանդամ ցանկայք կցորդակից ձեզ ունել զվայելքագեղ օրիորդն խոնարհութե զնազանդութին՝ ոպե կամի ած, փութացարուք ընդ առաջ ելանել նմա և ողջագուրել. առեալ ածել զնա ՚ի սեն եակ սրտի ձերոյ. և իբրև դշխոյ պանծալի բազմեցուցանել ՚ի գահոյս կամաց և յօժարութեան ձերոյ. որպ զի և դուք թագ ականա կուռ կապեալ ՚ի գլուխ՝ պսակեսջիք փառօք:

Է Հնազանդութին ենթադրէ զներգործութի ինչդրական. կամ ՚ի ներքս յինքեան, և կամ առ արտաքս: ՚Ի ներքս, որպ հնազանդիլ կամաց առ բարւոք առաջադրութի մոտաց. և կամկամիլ զիր ինչ ըստ կամաց հրամայողին: Եւ առ արտաքս, ոպ հայիլ աչօք, խօսիլ լեզուաւ, գործել ձեռօք. և այլն: Ապա պաշտօն հնազանդութե է գործողութի ինչդրական, գործադրիչ այնմ ամի, որ է վայելուց օդտակար և բարի, առաջադրեալ ՚ի մտաց՝ կամ ՚ի հրամայողէն:

Ք Հնազանդն ոչ ունի զյատուկ կամն. զի կամք նր՝ է կամքն հրամայողին. և այսու ոչ եթէ բառնի անձնիշխանութի մարդոյ, այլ առաւել հաստատի: Օ ի մեծ իշխանութի է մարդոյ այնպէս կառավարել զկամն իւր, մինչ և ամ ակնարկութե մտաց հնազանդեցուցանել. զորս միտքն յատուկ ճանաչմամբ իւրով օդտակար համարի, և առաջադրէ նմա առնել: Ապա թէ ոչ մարդն լինէր անկարօղ ՚ի շարժել

զկամն իւր , որով բառնայր իսպառ աղատութ
անձնիշխանութե . զի կամքն գոլով բաղձանք
իմ կըյր՝ ոչ կարէր ընտրել զքարի և զքար ,
եթէ ոչ հնազանդէր մնաց :

Ուստի մինչ միոքն տեսեալ զօգուտն ան
ձին իւրոյ՝ յորդորէ զկամն հնազանդիլ կամաց
այլում , արդէն միացեալէ ընդ նմա . և այ
նուհետե այն ոչ է կամք այլոյ՝ այլ կամք իւր .
և իբրե իւրոյ ինքեան հնազանդի աղատաբար :
Ապա ուրեմն որ աղատ կարողութք ենթարկէ
զկամն իւր կամաց այլում , զոր սեպհականեալ
ունի ինքեան իբրե յատուկ կամք . ոչ եթէ
կորուսանէ զանձնիշխանութիւն իւր , այլ
առաւել հաստատէ :

Դ Հնազանդիլ կամացն այ բնական է ամ
ստեղծուածոց . ըստ որում ած է հեղինակ
բնութե . ուստի և յաւիտենական անյեղլի
օրինացն այ հնազանդին ամ արարածք . իսկ
հնազանդիլ օրինացն այ , է հնազանդիլ ածային
կամաց , զի ՚ի նմանէ է օրինադրեալ :

Արդ՝ օրէնքն ածային առ հաստատուն և
անեղծանելի մնալոյ տպաւորեցան ՚ի միտո
մարդկան , որք կոչին բնական օրէնք . կամ
ածային յայտնութք ՚ի գիր արձանացան , որք
և ասին գրաւորական և շնորհական օրէնք .
զորս մարդիկ օրինադետք՝ կամ որոց յանձն է
պաշտպանութի օրինաց՝ գուն գործեն հա
նապազօր հրատարակել ամցուն . և որք լսենն՝
պարտաւորին հնազանդիլ , և ՚ի կատարումն

նոյին փութալ :

Են և օրէնք եկեղեցական և քաղաքական .
որք թէպէտ չեն յատկապէս հրամայեալ յայ .
սակայն դիմեն ՚ի լրումն կամացն ոյ . զի եկե-
ղեցականն հայի ՚ի բարեկարգութիւն ճշմարիտ
կրօնի . և քաղաքականն ՚ի բարոք կառավա-
րութիւն հասարակաց : Ապա որ ոչ հնազանդի
օրինացս այսոցիկ՝ արժանի՞ է պատժոց , իբրև
հակառակօղ ածային կամաց :

Ե Հնազանդութիւն պարտաւորէ զինա-
զանդեալսն մինչեւ ցմահ . զի եթէ ոք ՚ի միում
նուագի անհնազանդ գտանիցի , զառաջին
վարձն ևս կորուսանէ . զի ո՞ր շահ սոտացի
ոք ՚ի հնազանդութիւն օրինաց , եթէ ՚ի վախ-
ճանի օրինազանց ելցէ յաշխարհէ :

Պ Արդիկ յինչ ինչ գործողութիւն՝ զորս
պարտ էին առնել , պատճառառնօք իմն կարեն
զանձինս անբասիր կացուցանել՝ եթէ զանց ա-
րացեն զնոքօք . այլ ո՞չ է մարթ անբասիր մնալ
նց՝ եթէ անհնազանդ գտանիցին այնց , որոց
ածային կամ մարդկային օրինօք պարտաւորին
հնազանդիլ : Ուստի պարտին ամենեքեան պա-
տըսպարիլ ընդ դրօշակաւ հնազանդութե . և
որ ոք ստամբակել վտարանջէ , արժանի՞ է պա-
տուհասի . զի դրեալէ , որդի անհնազանդ ՚ի
կորուստ եղիցի :

Ե Աչ ոք բաւական է յընթացս կենաց ան-
վրէպ ընթանալ ինքնին առանց առաջնորդի .
քանիզի որ ընդ անծանօթ ճանապարհ գնայ ,

պէտս ունի ումեք լինել նմա ուղեցոյց : Իսկ
մարդիկ մինչդան յաշխարհ՝ անծանօթ են կեն
ցաղյս ճանապարհի . ուրեմն կարօտին ուսա-
նիլ յայլոց զջանապարհ՝ ուղիղ, ընդ որ ունին
անցանել ՚ի կեանս իւրեանց . զի մի խոտորիցին
յուղիղ պողոտայէ մարդկօրէն կենցաղավա-
րութե ՚ի յառա և՝ ՚ի կիրս . և այս լինի հնա-
զանդութե տեղեկագունից : Ո ՚ի զոր ՚է
գիտէ ոք առ որ գիմէ , պարտի ուսանիլ յայ-
լոց , զի հասանիլ կարիցէ :

Ո՞արդ՝ եթէ ՚է վարժեսցի ՚ի հմտագունից
՚ի խօսս , ՚ի գործս , ՚ի վարս , և յուսմունս ,
անարդ քան զանբանս գտանի : Անբանք ՚ի
կառավարութի իւրեանց՝ ունին դաստիարակ
զանութին . իսկ մարդիկ կարօտին լնուլ զայն
՚ի միմեանց՝ տգէտք ՚ի գիտնոց ուսանելով .
և տկարք ՚ի կարողաց խնամելով . և այսոքիկ
բարեմաննութիք ՚է կարեն յառաջանալ այլով
իւիք , բայց եթէ հնաղանդութե ուսուցչաց
և խնամակալաց :

Վորածին տղայն ՚ի մնալն անխնամ՝ կամ
մեռանի , կամ այլանդակ իմն դառնոյ . զի թէ
՚է պնդեն ՚ի խանձարուրս զիափուկ անդամն
նը , քայլէ իբրև զգորտ : Ա ոյ ած խնամա-
ծու բնութե մարդկան՝ զառաջին ծնօղս մեր
՚ի կատարեալ հասակի ստեղծ . և՝ ՚ի միտս նոցա
տպաւորեաց զամհարկաւոր գիտելիս , ՚ի կո-
ռավարել զնորաբոյս մանկութի մարդկայինս
բնութե . և սերունդք նց վարժուե ուսեալ

առ ՚ի նոցանե՝ առ յետնորդս աւանդեցին . և
խոհականագոյնքն ՚ի նո ընդ դարս բազում
փորձիւ զբազում կենցաղօգուտ խնամն ՚ի վր
յաւելին մինչեւ ցարդ՝ ՚ի դիւրութիւն կենաց
մարդկան . բոյց այս ամենայն եղեւ և լինէ Տը
նազանդական հոգւով :

Ո ՚ի եթէ ոչ անսային յետինք ՚ի գործ դը
նել զոր լուան և տեսին յառաջնոց , ոչ գտա
նիւր այժմօգտակար ինչ՝ յաջորդութիւն հաս
եալ առ ժառանգս նախնեաց : Ուստի հար
կաւոր էր արդեացս , կամ ունել զամշնորհս՝
զոր ուներ նախկին մարդն , կամ զուրկ մնալ
յամ բարեմասնութիւն . և կամ կրել իւրա
քանչիւրոց զբազում տարժամունս ՚ի գիւտ
նոր ՚ի նորոյ կենցաղօգուտ պիտոյից : Ապաքէն
պարտէ համբակաց հնազանդիւն հմտագունից
առ ՚ի ուսանիլ զամհարկաւորսն , թէ արհես
տականս , և թէ իմաստասիրականս , մանա
ւանդ զբարոյականս . ոնկ զի կարասցեն գնալ
անմոլար յընթացս կենաց . և բարւոք զելս դը
տանել ՚ի հովտէս տառապանաց :

Ե Ա. շակերտք պարտին հնազանդիւն ու
սուցչաց իւրեանց յու և իցէ արհեստս , թէ
յաղատականս և թէ ՚ի ծառայականս . և յանձն
առնուլ զաշխատանս կամակար սիրով . և ջա
նալ ըստ չափու՝ մինչեւ ՚ի կատարեալ տեղեւ
կութիւն : Բոյց արդէն բազումք անհնազան
դութիւն յետս կացեալ , մնան թերի յօգտաբեր
ուսմանց . որուլ զըին ՚ի բարեբաստութէ , զը

մարթ էր նց ստանալ՝ եթէ հնազանդեալ՝ ՚ի
գործ դնելին զպատռներս ուսուցչաց :

Բայց և ուսուցիչք պարտին ուսուցանել
աննախանձ և փոյթեռանդն, զի մի համբակքն
՚ի սնավաստակ տարժանմանց վճատեալ լքա-
նիցին . ապա թէ ոչ հակառակ լինին ոյ , որ
կամի զի մարդիկ օդնեսցեն միմեանց ՚ի բարի
կըթութիս ուսմանց :

Թ Հնազանդիլ ոյ , ծնողաց , ուսուցչաց ,
իմսստնոց և ծերոց , և ևս՝ բարերարաց՝ որ
պիսի են թագաւորք՝ իշխանք կամ առջնորդք ,
ոչ միայն գրական և շնորհական օրէնք , ոյլ և
բնական օրէնք զնոյն օրինադրէ : Արովկետե
մարդիկ ծնանին տգետ և անհրահանգ , կա-
րօտին ապա ուստանիլ ՚ի գիտնոց՝ և հրահան-
գիլ ՚ի խնամակալուաց . ուրեմն որ ոչ հնա-
զանդի սոցա , չարաչար մեղանչէ . և պատժոյ
է արժանի :

Ա րտպին կերպարանաւ և բանիւ բերա-
նոյ ոչ զանձն օտարագուցանէ ՚ի հնազան-
դութէն ոյ . բայց գործովք սակաւք դաս-
նին.սակայն ած ոչ ՚ի բանս՝ ոյլ ՚ի գործս հային
Ապա որ կամի գիտել թէ իցէ հնազանդ ոյ ,
քննեսցէ զգործս իւր . որ թէ իցէ ածային
օրինաց համաձայն , է հնազանդ . իսկ եթէ ոյլ
ազգ ինչ իցէ , ծանիցէ զինքն անհնազանդ :

Ե Հնազանդութին ոչ է անկարգաբար
հպատակութի կամաց այլում . ոյլ ունի չափ՝
կարգ՝ և կանոն . չափն է կարողութի հնա-

գանդելցին . զի ո՞չ ոք պարտաւորի բառնալ ըզ
լուծ ՚ի վեր քան զկար իւր : Արդին է արժա
նապատճեւթիւնց , որոց հնազանդիլ պա
հանջէ . ող հոյր արժանապատիւն է քան ըզ
մայրն . երեց եղեայր քան զկրտսերն . թագաւ
որ քան զիշխանա . հոգեոր առաջնորդք քան
զաշխարհական տեարս . և չէ արժան զնուազն
նախամեծար ընտրել քան զառաւելն : Խակ
կանոնն է ածոյին կամքն . զի սա է յաւիտե
նական կանոն ուղղուեն տպաւորեալ ՚ի միտս
մարդկան , յորմէ ո՞չ ոք պարտի զարտուղել :
Խակ եթէ ոք ընդ գէմկամացն այ բռնաբարէ
զգը ՚ի հնազանդութիւնց ելոցէ իրս և պա
տահմունս , եղծանէ զկանոն հնազանդութեն .
Վոյ ո՞չ ոք պարտաւորի հնազանդիլ նմա :

Ժա Անաշխատ հնազանդին մարդիկ յորոց
երկնչին , զի մի՛ վնաս ինչ կրեսցեն . բայց եթէ
վնասն իցէ հոգեոր՝ չէ արժան առ երկիւղի
հնազանդիլ . զի լաւ է կորուսանել զինչ , ըզ
պատիւն , և զմնօրմնոյ կեանս՝ քան կորուսա
նել զհոգի :

Ժք Ոմանկը անվարձ ելանեն ՚ի հնազանդութէ .
զի հնազանդին այնոցիկ , որոց համբաւ և մէ-
ծութիւն ՚ի փառս աշխարհայինս բարձր է՝ և
ո՞չ յածոյինս . և յանկանիլ սոցա ՚ի սնոտի հող
մաձիգ բարձրութէ , կորնչին և վարձք հնա-
զանդելոցն նոցին : Այս ո՞չ է հնազանդութիւն
առաքինական՝ այլ ծառայական և մոլեկան . և
այսու ախտիւ բազում են այժմ ախտացեալք :

Իսկ եթէ հնազանդէին առաքինեաց և իմաստ նոց, մեծութե նց և փառաց՝ որ բարձրէ առաջի ոյ, լինէին և ինքեանկը հաղորդակից :

ԺԴ Այս հլու և հնազանդ՝ թէև պակաս մեսցի մահուամբ, տակաւին համբաւ նր և փառք՝ որ է պտուղ հնազանդութե նր, մնաց անծորելի. զի թէպէտ նա գնաց յաշխարհէս, բայց զբաղումբարի գործս եթող յնի կեն դանի, զորս հնազանդութե ուսաւ կատարել:

(1) ի փառք անձին գործն է . և ըստ գործոց զանազանին մարդիկ . որովհետեւ ըստ մարդ կութե ամենեքեան են նոյն :

ԺԴ Հնազանդութիւն բռնի՝ կրէ ընդ իւր զապստամբութիւնը գաղտնի . զի միշտ ժամ պարապոյ խնդրէ նուաճեալն Ծընկէց լինիլ ՚ի բռնութէ . և երկոքին ևս տանջին ՚ի միտս. բռնաւորն՝ զի մի՛ թողուցու վտարանջել . և նուաճեալն՝ թէ որպէս ազատեսցի ՚ի բռնութէ :

Այս է չարաչար հնազանդութիւն, որ անարդ ևս է քանի զգերութիւն . զի որ գերի է, միան գամ վշտացաւ՝ յորժամ եղեւ գերի . և յետ այնորիկ ունի զինքն յօրէնս գերւոյ . վայ ոչ այնքան վշտանոյ . նա՝ զի գուցէ գերիչն իբր ՚ի ստացուած իւր խնոյէ ՚ի նա, և ոչ տառապեցուցանէ :

Իսկ որ ոչ է գերի օրինօք պատերազմի, Ճանաչէ զինքն աղատ, թէև իցէ հպատակ՝ կամ հարկատու . որոյ աղագաւ մինչ բռնաւ բարի անողը քան զօրէնս հպատակաց կամ

Հարկատուաց ՚ի չարաչար հնազանդութիւն ,
տառապի մեծապէս , և ապստամբիլ խորհի :
Ապա չէ արժան զոք բռնի նուածել ՚ի հնա-
զանդութի՝ այլ քաղցրութէ և բարերարութէ :
Ժե Հաւասարապատին իշխանաց դժուա-
րին է հնազանդիլ միմեանց . զի ամազնուական
ծանր համարի իւրում նմանաց հնազանդիլ .
յայսմանէ յառաջանայ անհնարին խռովութի
և հակառակութի առ միմեանս , և վիշտ և մնաս
առ հասարակութին : Ապա արժան է աղաչել
զած՝ զի զգլիսաւորս ազդի կամ քաղաքի ՚ի
սէր շարժեացէ . զի սոքա միայն շաղկապաւ-
սիրոյն կարեն միաբանիլ , և միմեանց հնազան-
դիլ , յօդուտ անձանց և հասարակութե :

Ժզ ՚ի բառնիլ հնազանդուե , բառնին բա-
րեկարգութիք յամ կառավարութէ . զի՞ր օրի-
նակ եթէ զօրապետք ոչ հնազանդէին արքայի ,
և զօրք՝ զօրապետաց , ուր երեւէր յաղթութի
թշնամեաց : Ո է թէպէտ քաջութ մղի պա-
տերազմ , բայց պահանջի ևս հնազանդութի
ամ ակնարկութեց զօրապետին , որով անդին
լինի արիւնն զոր հեղուն : Իսկ եթէ ինք-
նարշաւ մղեսցին ՚ի պատերազմ առանց հրա-
մանի զօրապետին , ոչ ՚ի համարի գնոց է հե-
ղումն արեան նց . այսպէս ամբարեկարգութիք
յնի հիմնեալ կան ՚ի կանոնն հնազանդուե :

Ժէ Պարտաւոր են մանկունիք՝ հպատակիլ
սիրով և զուարթութէ ամ ակնարկուեց ծնո-
ղաց և ուսուցչաց իւրեանց , և ևս եղեարց ,

կամ խնամածուաց . մինչեւ շտալ տեղի սրտմը
տութե նոցա : Ա ն զի չար և վտանգաւոր է
հակառակիլ կամաց ծնողաց , կամ վորպե-
տաց , կամեղեարց , և կամ այցելուաց . որք ըզ
բարին նց կամին և առաջտրեն . որովհեաւ
հասակն մանկական չէ բաւական անձամբ ան
ձին զօդուտն իւր խորհիլ , և առնել : Ապա
ուսանիցին որդիք հնազանդ լինել ծնողաց իւր
եանց , զի և որդիք իւրեանց հնազանդեացին
ինքնենց . զի զոր ինչ սերմանէ ոք , զնոյն և հնձէ :

Ժ Հնազանդութին է ենթարկել զկամն՝ ի
ներքոյ հրամանի այլոյ , կամ վ՛ս սիրոյ , կամ վ՛ս
վարձուց , և կամ վ՛ս երկիւղի : Որ վ՛ս սիրոյ
հնազանդի , սիրէ զանձն նը՝ որում հնազանդի :
Որ վ՛ս վարձուց հնազանդի , սիրէ զինչ նը ,
զոր ակն ունի առնուլ՝ ի նմանէ : Որ վասն
երկիւղի հնազանդի , սիրէ զիւր ինքն՝ զի մի
պատժեացի :

Ապաքէն երեքին ևս են բարի և օգտա-
կար . այլ առաջինն յոյժ գովելի է , և կատար
եալ՝ ի կարգի որդիութե . զի որդւոց է վասն
սիրոյ հնազանդիլ ծնողաց : Երկրորդն է՝ ի
կարգի վարձկանութե . զի վարձկանաց է վ՛ս
վարձուց հնազանդիլ վարձկանաց : Երրորդն
է՝ ի կարգի ծառայութե . զի ծառայից է յեր
իիւղէ պատժոյ հնազանդիլ տերանց . որ ա-
ռաւել ծառայութի ասի՝ քան հնազանդութի ,
վ՛ս զի ՚չ կամաւոր . իսկ հնազանդութի է՝ որ
լինի աղատ կամօք . նա զի ամ որ է ծառայ՝

Համրկ է նմա լինել ևս հնազանդ ։ այլ ոչ ամոք
է հնազանդ՝ պարտ է լինել ևս ծառայ ։

* | ա-է ունինտբութ ժան զշոհ ընտիր , և հնապան-
տուծի ժան զմարդ խոյոց ։ || ա . թագ . ժե . 22 :

* Արդես անհնապանտուծեամբ մոյն մարդոց մշաւրք
բաշունք եղեն . նոյնպէս և հնապանտուծի մոյն՝ արդարք
բաշունք եղեցին ։ || Հոօմ . ե . 19 :

* Հնապանտ լերուն ամ մարդիւշին սպեշտածոց վա-
ռն . ելեւ թագաւորի՝ էբրւ առաւել ութիւ , ելեւ դա-
պաւորաց՝ էբրւ ՚ի նմանէ առաւելցոց ՚ի Հրեծինտբութ
չարտարձացն , և ՚ի գովութեան բարեգործացն ։

|| ա . Պետ . ը . 13 :

ԲՆԵԼԲՈՒԾԻՆ

ԳԼ . ԻԵ

ա Յանկալի՛ է ամկենդանեաց ընկերութ-
կենցաղավարիլ ընդ տեսակակիցու իւրեանց .
առաւել ևս մարդկային ազգի , որք բազում
անդամ՝ ՚ի բազում իրա փոփոխակի կարօտին
օգնականութե միմեանց . ՚ի ձախողակի պա-
տահման , ՚ի ժամանակի հիւանդութե , ՚ի պա-
կասիլ կարեռը պիտոյից : Եւ որովհետեւ մար-
դիկ ծնանին տգետ և տկար , առաւել քան
զայլ ամ կենդանիս պէտս ունին դարմանոյ և
ուսման՝ առ՚ի կեալ և լինել երջանիկ՝ և զայսո
սիկ ոչ կարեն գտանել յառանձնակեցութե ,

բայց եթէ յընկերական վեճակի :

Իսկ թէ բնական է մարդոյ ըղձանալ ընկերական իենցաղավարութեն , յոյտ է փորձիւ . զի ահա ՚ի գտանիլ ումեք յանապատ անմարդի , տրտմի և տառապի . և ՚ի տեսանել զիսուռն բազ մութի մարդկան , ուրախանայ և միսիթարի :

Վակայն պարտ է ընսորել զայնպիսի ընկեր , որ յուրախական կիրա ուրախակից լինիցի , և ՚ի տրտմականս՝ կարեկից և միսիթար : Եւ որքան քաղցր է և ցանկալի ընկեր բարի , այնքան դառն է և տաղտկալի ընկեր չար : ՚Նա ՚ի գըժ ուարին գիպուածս գիտէ բառնալ զծանրութի ցաւոց , և գիւրացուցանել զտառապանս . ան պատճառէ զանակընկալ վտանգս , և յաւելու վիշտս ՚ի վերայ վշտաց :

Է Բաղումչարք են ՚ի մարդիկ , որք եթէ չար ընկերի ոչ պատահէին , ոչ լինէին չար . են և բազում բարիք , որք եթէ բարւոյ ընկերի ոչ հանդիպէին , ոչ լինէին բարի : Վպա լինել չար կամ բարի յոլովակի պատճառի յընկերութեն : Օ գուշացին երիտասարդք յընկերութեն չարաց , եթէ ոչ կամին լինել չար և վատահամբաւ . զի հասակն երիտասարդական՝ գիւրասահ գոլով ՚ի մոլութիս , օրինակու չար ընկերին փութով ուսանի զչարիս . յիմար է այն՝ որ անխափիր ընդառնեսին ընկերանայ :

Դ Ոչինչ են զարմանք , զի բազում բարեւ բարոյ մարդիկ հազիւ զմի ոք չար կարեն ուղղել . իսկ մի ոմն չար բառական է մոլորեցու

ցանել զբաղումն . քանզի և բազում առողջք զմի բորոտ ոչ կարեն սրբել . բոյց մի գք բորոտ կարէ ախտացուցանել զբաղումն :

Է Բազումք ընկերակից լինելով չարաց , ոչ միոյն զհայրենի ժառանգութիւն վատնեալ՝ ՚ի յետին չքաւորութիւն հասին . այլ և զանգին դանձ ամօթխածութեն և պարկեշտութեն կորուսին . և անարդ անուն ստացեալ՝ առակ նը շաւակի եղեն յնի , և կորեան զկորուստն յաւիտենից : Ապա մեծի զգուշութեն պէտս ունի ընտրութիւն ընկերաց :

Ե Զարսահը մարդիկ՝ շողւքորդ և կեղծ բարուք արտաքուստ երեխն բարի . բայց իբրև զօձ գեղեցկամորթ զթոյն մահու ծածկեալ ունին ՚ի ներքս ՚ի սրտի . և խաբելով զանփորձ երիտասարդս՝ արկանեն ՚ի պէս պէս մոլութիւն : Ապա եթէ կամիցի երիտասարդն կենցաղավարիլ ընդ ումեք , քննեսցէ զընկերս նը . եթէ իցեն բարեհամբաւ , ընկերակից լինիցի և ինքն . իսկ եթէ իցեն վատնուն , խորշեսցի ՚ի նմանէ . զի մի՛ և ինքն լինիցի վատնուն . զի ըստ առածին , Այս յընկերէ իւրմէ Ճանաչի :

Դ ՚Կժոնարին իմն է երիտասարդաց հետի կալ ՚ի տեսաւորութեն չարաբարոյ ընկերաց . զի այն հասակ առոյգ և եռանդնոտ՝ ցանկայ երթալ ՚ի զբօսանս և ՚ի սրճանոցս , և ընկերակից լինել ընդ բաղմաց : Ապայց պարտէ գիտելնց , թէ ալք բարեբարոյք սակաւ ,

իսկ չաղք բազումեն յոյժ . ապա ընտրելի՛ է
ընդ սակաւուց բարեաց կենցաղավարի՛ քան
անխտիր ընդ բազմաց , զի՞ գուցէ հանդի՛
պեսցին չարաբարոյ ընկերաց :

Է Ա մաւ է ընդ բարի ընկերա գտանիլ՝ ՚ի
վիշտս , քան ընդ չար ընկերա ՚ի հեշտալի
վայելս . նաև ՚ի մահուանի կեցուցիչ , իսկ սա՞
մարմնոյ և հոգւոյ անողորմ դահիճ :

Ը Աթէ ոք ընկերակցի ընդ չարս , կամ
պարտ է համաձայնիլ նոցին , կամ հակառակիլ .
Եթէ համաձայնի , լինի և ինքն չար . իսկ
եթէ հակառակի , առնէ զնս թշնամի ինքեան :
Ապա յաւէտ զգուշալի՛ ՚ի կենցաղավարուե՛ ,
զի՞ մի՛ գուցէ ընկերակից լինիցի ընդ չարս .
զի՞ դիւրին է ընկերանալ , բայց դժուարին
է օտարանալ :

* Որբեաչ է՛ մ' նախոննէր ընդ չարս , և մ' ցանչանաց
ցես չաւ ընդ նոսու : || Աշակ . իդ . 1 :

* Որ անէին չար է՛ աշըց բարե ո՛չ լինի :

|| Աիրաք . ժդ . 5 :

* ՚Ի պաշաց նոցա ծանիջեւ զնոսու . մ թէ չաշէցէն
՚ի ծայ եազաւ չամ ՚ի առաստանի լուզ :

|| Աշատ . է . 16 :

* Յառանի հերիշածածողէ՛ յետ դանդամ և երիկաս եւը
բառելցա՞ հրածարեւթէր . գետութէր զէ թերեւուէ
այնպիսին : || Տիտ . դ . 10 :

ԳԼ. ԻԶ.

Ա Որպէս չի՞ք մեծագոյն չար քան զշպար
տութին . նոյնպէս չի՞ք մեծագոյն բարի քան
զխոնարհութին . զի նա առնէ ատելի ոյ և
մարդկան , և սա՝ սիրելի և հաճոյ . նա անհան
գիստ տառապեցուցանէ , սա անվըդով խա-
ղաղութե հանգուցանէ : Եւթէ խորհեսցի
մարդ , թէ զինչէր նախ , և զինչ սյժմ , և
զինչ լինելոց է առ յապայն , ոչ կարէ բնաւ
հպարտանալ :

«Քանզի սկսանիլն է յանարդ նիւթոյ . ծը
նանիլն ցաւօք . կեալն տառապանօք . իշխա-
նութին անօդուտ . փառքն վաղաթառամ .
կեանըն կարծատե . մահն հարկաւոր . մարմինն
ապականացու , և կերակուր որդանց . յայամ
ամէ և յայլ բաղումդ լիսոց դիւրին է մարդոյ
առնուլ՝ իմիտ զթշուառութի բնութե իւ-
րոյ , և լինել խոնարհ :

Ե Ո՛չ նա Ճշմարիտ խոնարհ , որ բանին
լոկով զանձն անպիտան խոստովանի . բայց
մինչ զնոյն յայլմէ լսէ , վրդովի գժդմի և
բարկանայ . ուստի յայտ է թէ ոյնպիսին առա-
ւել հպարտ է քան խոնարհ . զի խոնարհ խոս-
տովանութե կամի գովութիս ընդունիլ , և
փառս որսալ՝ ի մարդկանէ : Ո՞անսաւանդ զի
ստասաց է և կեղծաւոր . զի զայլ ինչունի՝ ի
լուզունի , և զայլ ինչ խորհի՝ ի սրտի . և որպէ-
խորդախ ոսկեգործ զարոյըն փոխանակ ոսկեց

Ճանայ ՚ի վար արկանել :

Ե Խոնարհն՝ զգործ բարի և օդոտակար բաղմաց սովորէ առնել ՚ի ծածուկ, զի մի գովութիւն հռչակեսցի . քանզի ՚ի տնէ ակն ունի առնուլ զշատուցումն : Խակ հպարտն՝ զփոքը ինչ գործ բարի զոր առնէ՝ ցանկոյ հրատարակել . զի ընկալցի զգոլութիւն ՚ի մարդկանէ՝ իբրև վարձ գործոց իւրոց . վայ և ոչ առնու վարձս ՚ի տնէ : Խոնարհն՝ եթէ զգովեստ անձին յումեքէ լսէ , ամաչէ և տրտմի . խակ հըպարտն՝ գոռողանայ և բերկիլը . և կամի զի առաւել ևս լոնիցէ :

Ե Խոնարհութիւն վայ զի է բարի՝ ոչ խտրէ զրք, այլ ընդունի զամենեսին որք սիրեն զնա. զի այս բնութիւն է բարոց , զամենեսին հաղորդս առնել բարութիւն իւրոց : Խաւ է որպանդամանդ ազնիւն , որ ՚ի տունջեան և ՚ի գիշերի փայլի . առ աղքատս՝ որք գոհ են զվիճակէ իւրեանց, և շատանան կարեորզք , ունի շողջողիւն՝ բայց աղօտալցոյ : Խակ առ փարթամն՝ որք աղդօդուտ արդեամբք ճոխանան , իբրև ՚ի քաջարուեստ ակնաղործէ բաղման կիւն ճախարակեալ , մեծապայծառ ցոլանայ . և զաշս ամենեցուն առ ինքն գրաւէ :

Ե Կատարեալ խոնարհն՝ թէև ունիցի ըղմեծամեծ շնորհս, զինչս զպատիւն և զմեծուին, տակաւին նուաստ զգացումն ունի զանձնէ իւրմէ . ոչ տեսանէ զբարիսն զոր ունի . այլ կամի զպակասուիս իւր տեսանել՝ զի ուղղեսցէ

զնս . որով և ևս արժանանայ շնորհացն այ :

Հ Ա Յ Ի ոք զխոնարհութին կարծիցէ պա կասութի անձին զօրութե . կամ յիմարութի մտաց . կամ թիւրութի կամաց . այլ ճշմարտին գիտասցէ , թէ նա է նշան արիութե ոգւոյ , խմաստութեան մտաց , և ուղղութե կամաց : Քանզի անարին՝ յիմարն՝ և մոլին ոչ երբեք կարեն խոնարհիլ . զի ոչ ամենեքեան բաւա կան են ունիլ զայնքան մեծ զօրութի , մինչեւ յաղթել զանբան կիրս հպարտութե և բար կութե , և լինիլ հեղ և խոնարհ : Ա Կ Ա Յ որ կամաւ խոնարհի առաջի ամցուն , է զօրեղ , խմաստուն , և բարի . և ընդ հակառակն՝ անզօր , յիմար , և մոլի է նա , որ չունի զխոնարհութի . զի ոչ կարէ նուածել զմոլեկան կիրս անձին իւրոյ . և զաղթանակ խոնարհութե առնուլ յասպարիզի կենցաղոյս :

Է Լ Ճ Ա Յ Բ Ո Վ Ե Ն զխոնարհութին առաջի մարդկան՝ առ ՚ի ցուցանել զանձինս խոնարհ . խակ նա՝ որ ճշմարիտ խոնարհ է ըստ սրտին այ , գովի զխոնարհութին յայն սակիս՝ զի է բարի և արժանի գովութե . և ոչ եթէ այնու խոնարհ կարծեսցի ինքն և փառաւո րեսցի . նա՝ զի ճշմարիտ խոնարհն ոչ երբեք համարի զանձն հասեալ ՚ի կատարեալ խոնար հութ . ոյլ միշտ կըթէ զինքն առ այն հասանիլ :

Շ Ո Շ Է Ն ա խոնարհ՝ որ առաջի մեծամե ծաց նուաստացուցանէ զանձն , և կերպա րանի ՚ի կերպարանս խոնարհի . բայց մտզք

Հաւասարապատին նոցին, կամ վերագոյն քան
զնո՞ւ զանձն վարկանի. այլ նա՝ որ քան զայլս ա-
մենեսին նուռաստ ճանաչէ զանձն իւր, թէև
ունիցի զմեծագոյն առաքինութիս, և զայլ
ստացական բարիս առաւել քան զնոտա :

Ե ԱՇ նա խոնարհ, որ մինչգտանէ ըզ
յաջողուածս բարեաց, և զայլատին՝ ի մարդկա-
նէ, երեխ հանդարտ և խոնարհ. իսկ յորժամ
անկանի ՚ի ձախորդութի, և կրէ զարհամար-
հանս, վրդովին և դառնանայ : **Ճ** Ճշմարիտ խո-
նարհուին ոչէ ծառայ մոլութեց. զոր իբրեւ
անարդ գերի, կամ անբան գրաստ, ը հաճոյս
ոք կապեացէ և արձակեսցէ. կամ իբրեւ աւե-
լորդ զգեստ ագանիցի ոք, և ՚ի բաց հանցէ .
այլ ազատ է և ինքնիշխան, հարկաւոր զորդ
հոդոյ, և պարծանք ազգի մարդկան :

Ապա Ճշմարիտ խոնարին յամ ժամ և յամ
ուրեք մնայ հանդարտ և անվրդով. ոչ՝ ի պատ-
ուիլ իւրում ամբարտաւանէ, զի ոչ երբեք
զանձն արժանի պատուոյ համարի. և ոչ յար-
համարին վշտանայ, զի գիտէ ունիլ զպակա-
սութիս արժանի անարդանայ :

Ե Բնդ վայր ջանայ խոնարհ երեխինա՝ որ
զիետ պնդի փառաց . զի թէև արտաքուստ
ունիցի զկերպարանս խոնարհութե, բայց ՚ի
ներքուստ կրէ յինքեան զշոգին հպարտուե :
Իսկ Ճշմարիտ խոնարին որբան ՚ի բարիս յաճա-
խէ, այնքան առաւել ամաչէ . և իբրեւ բազ-
մապտուղ ոստ ծառոց՝ որբան առաւելու

արդեամբք , ոյնկան առաւել խոնարհի : Ա այ
զամբարիս զոր ունի , շնորհացն այ տնագրէ և
գոհանայ . և միշտ զանձն անարժան վարկանի .
և երկնչն՝ զի մի' գուցէ մեծամտեացի . որով
մեծամեծ ևս պարզեաց գտանի արժանաւոր :

Ժա Խոնարին ո՛չ միայն երկարաւելեաց լինի
և առողջ , այլև յամժամանակս ազատ մնայ ՚ի
վնասունէ . զի ո՛չ խոռովի յումեքէ , ո՛չ տրտոմի ,
ո՛չ յուսահատի , ո՛չ զայրանայ . յորոց պատճա-
ռին ազգի ազգի հիւանդութիք և մահ . ո՛չ
թշնամանայ ընդ ումեք , վայ և ո՛չ ոք ջանայ
վնասել նմա . և այսպէս խաղաղ և երջանիկ
կենօք կնքէ զաւուրս իւր :

ԺԷ Խ'յն է հեղև խոնարհ , որ թէպէտ կո-
րող է վրէժիսնդիր լինել անիրաւութեց ա-
րարելոց ընդ դէմիւր , այլ ածավախ իմն եր-
կիւղածութէն ներէ : Խակ հպարտն՝ վասն
փռքու յանցանաց՝ ջանայ վրէժս պահանջել ,
զի երեւեացի կարօղ :

ԺԴ Ո՞ի խաբեացեն զանձինս մեծամիտք ՚ի
մնալ իւրեանց անպատիժ՝ մինչ ո՛չ թողուն
զյանցանս զղջացելոյն , որ թախծագին պա-
ղատանօք հայցէ զներումն : Օ ի թէպէտ և
երկայնամիտ լինի ած , և յապաղէ պատժել ,
զի թէրևս դարձցին ՚ի խստաբութէ իւր-
եանց . բոյց յետոյ իբրև տեսանէ յամառեալ ,
սաստիագինս պատուհասէ . ուղ ուժգին հար-
կանէ ոք ապտակ , որբան զձեռն իւր հեռի
տարածէ : Ո՛չ իմիք ներողութե է արժանի ,

որ չէ ներողաւիտ :

Ժ- Որ կամի մերժել յանձնէ զմեծամը տութի , ամբարձցէ զաքս իւր՝ և հոյեացի ՚ի հոյակապ դամբարանս . ածցէ զմտաւ , թէ մարդիկ՝ որ երբեմն մեծաշուք փառգք բարդաւաճեալ ճոխանացին ՚ի վը երկրի , զիարդայժմ ՚ի նեղքոյ երկրի նեխեալ և հողացեալ կոխան լինին յամենացնէ :

Ժ- Խշանկք և մեծատունք՝ դիւրաւ կտրեն ստանալ զխոնարհութի՝ եթէ ածցեն ըզ մտաւ , թէ յոր աստիճան բարձրութե ամբարձեալ կան . զի որ ՚ի բարձրունս բնակի՝ առաւել երկիցէ յանկմանէ , քան որ ՚ի ստորին վայր գտանի : Ապա իշխանք՝ որ ՚ի վերոյ են քան զբազումն , ՚ի խոնարհութե կալցին զանձինս իւրեանց առաւել քան զբազումն , զի մի անկանիցին . քանզի մեծութի և փառք յաշ խարհի որչափ բարձրագոյն իցեն , այնչափ վտանգաւոր են և երկեղութ :

* Արձակեացէ արձատս ՚ի խոնարհ և արացէ զպառող ՚ի վեր : || Ղ . Օմագ . Ժ- 30 :

* Խանարհաց և հեշտ աղաջան՝ մշտ ուղահան և շնկն : || Յուղիթ . թ . 16 :

* Հայեցանա յաղընս խոնարհաց . և ոչ արհամարհեաց շխնդրուածս նոցտ : || Այալմոս . Ճ-ա :

* Ո՛րշատ մծ են՝ խոնարհեցն զեղ ցոդի . և առաջի ոց գոյեն շնորհն : || Եիրաք . Ղ . 20 :

ԳԼ. ԻԵ

ամբերութին է զօրութին այն արխութե, որով դիմակալ է անզուսպ կրից. սա ոչ յաւելու ինչ ՚ի ներգործութիս, զորս ներգործեն մարդկային գործարանք ներքին և արտաքին. այլ միայն է զօրութին ինչ բնաւորեալ ՚ի զսպել և արգելուլ զայն ամ, զոր խոհեմութին ոչ թոյլատրէ առնել. Ա ն զի խոհեմութին է ընտրել զառնելիս և զխորշելիս, և արիութին է ՚ի գործ դնել. իսկ զօրութին՝ որ ընդ դէմկայ և խափանէ առնել զոր արգելու խոհեմութին, ասի համբերութի. Ապա համբերօղն է տիրօղ ՚ի վը բուռն կրից. իսկ անհամբերն՝ յաղթահարեալ և տկար :

Եւ խորհրդաբար կոչեցաւ համբերութի, ք համբերօղ. զի յորժամկիզք բարկուե սրէ և ջերմացուցանէ զարիւնն, ՚ի կծու և ՚ի դառն համփոխարիէ զքաղցրութին նը. զի որդ յայտ է ՚ի փորձոյ. յորժամ սաստիկ եռայցէ քաղցրահամ ինչ, փոխի ՚ի կծու և դառնա համ. Իսկ առն համբերողի զիջանին կիզք. զովանայ արիւնն, և անդէն ստանայ զառաջին բնական համն քաղցրութե. ուստի սասցաւ համբերութի, ք համբերողութի:

Է Զիք յաղթօղ դժոնարութեց Շի քան զհամբերօղն, և ոչ յաւէտ տկար քան զայր ապա ժոյժ. զի ոչ գոյ այնքան ծանր և դժոնարին, որումկատարեալ համբերութին ոչ յաղթեսցէ.

և ոչ թեթեագոյն ինչ բեռն, զոր անհամբերութին ոչ ծանրացուսցէ . զի ու և իցէ իր դիւրաբառնալի , 'ի պակասիլ համբերութելինի անտանելի : || այս այր անհամբերը յամի տաղտկանայ, խռովի, և յուսահատի. և ոչ միայն անձին իւրումէ տանջանք, այլ և ամցուն . նը մին իրի ամուբեք է անարգ և թշուառ :

Դ Ո վնչ արդեօք շահի ոք անհամբերութելի պատահիլ դժուարութել , բայց եթէ զառաւել վիշտ . որումեթէ համբերէր, վիշտին դադարէին ՚ի լինելոյ վիշտ : « Քանզի անհամբերութին բազում անդամ մնութի կարծեօք երեակերպէ զդժուարութի , ուր չեք բնաւդժուարութի . կամ զակաւն առաւելու , և զփոքրն մեծացուցանէ . զի նմանի խոշորացոյց ապակւոյ , որ զլուն իբրև զիկուերեւեցուցանէ . կամ մելամաղձութե ախութի , որ զգոյն իբրև զգոյ կարծեցուցանէ . սմին իրի հանապաղտանջի՝ որ ոչ գիտէ համբերել :

Ե Այն լինի ոք անհամբեր՝ ընդ որ ոչ հաճի կամք իւր . զի եթէ ամինչ լիներ ըստ կամաց՝ ապաքէն կամք իւր հաճեալ հաւանէր , և միաբանէր ընդ նմին . և յայնժամ ոչ բնաւ պարտ էր գտանիլ 'ի մարդում ունակութին համբերութե : Իսկ արդ՝ գոյ ունակութիւն համբերութե տպաւորեալ 'ի կամամարդոյ անդասին 'ի բնութէ . ապա պարտին գտանիլ յաշխարհի ներդործութիք ինչ կամ պատահաբք՝ որք իցեն ներհակք հաճութեան

կամաց առ'ի համբերել նոցին։ Առ որովհետեւ
ամ կարողութիւն կարգեալ է առ իւր առար
կոյ։ ապա և կարողութիւն համբերութեան կար
դեալ է առ հակառակս կամաց մարդոյ՝ առ վեց
արս և նեղութիւն, ող առ իւր առարկոյ։

Ապա որ ոչ կամի համբերել կրից, բարձցէ
յաշխարհէ զամհակառակ ներգործութիւն և
զվեշաս։ իսկ եթէ չէ բաւական այսմ, զայն
արասցէ՝ առ որ բաւական գտանի։ ֆէ՛ համ
բերել դժուարութեց։ Իսկ եթէ ոչ ախոր
ժէ համբերել, բարձցի ինքն անհամբերն յաշ
խարհէ, որ ոչ կամի հնազանդիլ ընդ հանուր
կարգի տիեզերաց։ որ ՚ի հակառակ էութեց
գոլով բաղկացեալ, զհակառակ ներգործու
թիւնս ածէ յառաջ։

Ե համբերութիւն անդ երեխ, ուր ան
հաճոյք կամաց մարդոյ պատահին։ ող հիւան
դութիւն, ձախորդութիւն, քքաւորութիւն ան
պատութիւն, ևս և մահ սիրելեաց։ և որ սո
ցուն են սակի վշտացուցիչ դիպուածք։ Առդ՝
է ինչ յայսցանէ՝ որ յածային կարգադրու
թենէն լինի։ է՛ որ ՚ի մարդկանէ պատճառի։
և է՛ որ ՚ի կամաց կամ յանզգուշուն ուրուք
յառաջ գոյ։

Ապա ովանհամբեր՝ ում ՚ի սոցանէ բարկա
նալ արժանէ։ զի անհամբերութիւն յառաջա
նոյ ՚ի բարկութէ։ Աթէ բարկանաս հեղիւ
նակին բնութե որ է ած, թէ ընդէր թու
ղու դաւդժնդակ պատահարացս, հակառակիս

արարցին քում։ Աթէ բարկանաս մարդկան, զի վշտացուցին զքեզ։ Հարկիս ուրեմն զամ մարդիկ՝ ՚ի կամս քո խոնարհեցուցանել, զի արասցեն զշաճոյս կամաց քոց։ և այս է յան կարելեաց սակի, զի չէ բաւական մի ռք նուա ձել զկամն բազմաց, և հնազանդեցուցանել ինքեան։ այլ մանաւանդ քեզ անկ է նուաճիլ ընդ կամք նց և հնազանդիլ։ Խակ եթէ բար կանաս անձին քում, զի հասոյց քեզ չարիս։ ահա դու ընդ քեզ ոգորիս։ և այս է անհնա ըին յիմարութի։ Ապա զոր ակամոյ կրես, պարտիս կամաւ համբերել։

Պ Անհնաը է մարդոյ ամենեին զերծ ՚ի վտանգէ մնալ, մինչդեռ կենցաղավարի ՚ի կեանս յայսմիկ։ ապա ՚ի հասանել արկածից՝ պարտ է արիաբար տոկալ և համբերել. և իւրեւ վէմանդրդուելի՛ զալիս փորձուեց կենցա զոյս ծովու փշրել և յետս դարձուցանել. զի լաւ է համբերել տառապանաց՝ և կեալ, քան անհամբեր բարոյիւք լքանիլ և զմահ համ բուրել։

Է Պարտ է ունիլ մարդոյ զշամբերութին, ոչ միայն վս շահու անձին՝ այլև վս ածսի րութե, եղայրախրութե, և ազգասիրութե, ԿԲանզի է մարդ՝ որ գիտէ համբերել միայն վս օգտի իւրոյ. իսկ ուր ոչ գուցէ ինքեան շահ ինչ, թէպէտ և օգտակար իցէ բազմաց, չկամի համբերել։ Բայց սակայն պարտ է համ բերել վասն ածսիրութեան, մինչ յուսալի է

փառաւորութի՞ անոնանն այ վ՛ եղայրսի
ըութե, մինչդեռ այնու եղայրն քո շահեալ
լինի վ՛ ազգասիրութե, յորժամազգն ողջոյն
բարեհամբաւի : «Բանզի անհամբերութի՞ է
զի փառքն այ խափանի . է զի եղայրն քո գը
թէ կամկործանի . և է զի ազգն ողջոյն պա
խարակի կամ վնասի : Ապա փութալի՞ է ստա
նալ զհամբերութի՞, առ'ի ստանալ վարձս աստ
և 'ի հանդերձեալն :

Ե համբերութի՞ն՝ առանց իրիք սանձի
նոնաձէ զանբան կիրս բարկութե ընդ հնա
զանդութի՞ բանին : Այ է օրիորդ գեղեցիկ
որ ընդ առաջելանէ ամեհի առիւծու գազա
նացեալ բարկութե . ուր գեղովերեսաց՝ բա
րեձեռութի՞ կերպարանաց՝ համեղութի՞ բա
նից՝ և վայելութի՞ ձայնից՝ 'ի հեղութիւն
հանդարտութե ածէ զվերագն անհեթեթ
առաւել քան երկաթի կապանօք :

Եւ ո՞ կարէ զարդիւնս համբերութե ճանա
չել բայց եթէ նա՝ որ գիտէ համբերել . քան
զի զի՞նչ չար ո՞չ յառջ գոյր'ի բազմահոյլ ամեհի
կրից իբրև զալիս ծովու առ միմեանս բաղմե
լոց, եթէ համբերութի՞ն իբրև վէմ որձաքար
ո՞չ խորտակէր զըռնութի՞ նց : Այս յաղ
թութի՞ որով յաղթէ համբերօղն ամ դժուա
րութեց և կրից, է մ.ծ և զոնարձալի . զի որ
զմտաւ ածէ զվտանգն՝ յորմէ համբերութի՞ն
զերծ գտաւ, տօն ցնծութե կատարէ : Ապա
լեր ծառայ համբերութի՞, զի ազնտ լիցիս 'ի

Ճառայութեա բարկութե . և որ ճառայէ համբերութե , ամ կիրք նմա ճառայեն :

Թ Բնդհանուր բնութին է քաջավարժաստիարակ՝ ածել զանհամբերն ՚ի համբերութին , և խոհական խորհրդով ընտրել զժամանակ խօսելոյ և գործելոյ . ոչ ամինչ յամժամու յաջողի լինել . զի է ինչ՝ որում պարտ է լինել աստ և այժմ . և է ինչ՝ որ յայլում տեղ ւոջ և յայլում ժամանակի . ապա թէ ոք չիցէ իւելամուտ սոցին ընտրուե և հանգամանաց , ոչ մի ինչ մարթի ըստ կարգի խօսիլ կամ գործել :

Տ Են՝ զիարդ գիտեն տունկք զժամանակն արձակելոյ զտերեւ , զծաղիկ , և զպտուղ . և հաւք զձուս ածելոյ , ՚ի թուխս նստելոյ , և զձագս հանելոյ . իսկ եթէ ապաժաման բերին ՚ի գործս՝ առ որ կարգեալ են ՚ի բնութին հաստատուն օրինօք , եղծանին և ըքանան : Ապաքէն ուսիր համբերել՝ ովլ մարդ , և պահեր զիարդ բանական բնուե . զի մի քան զանզդայս և զանբանս երեւեսցիս անզգայ և անբան :

Ժ Բազումք համբերեն դառն նախատանաց օտարաց առ երկիւղի . բայց խրատական բանից բարեկամաց՝ ողք ծանր թունին , ոչ համբերեն վշ սիրոյ . սոքա նմանին դիւահարի , որ երկիւղին բանտափետին զգաստանայ , և սիրով բարեկամին կատաղի . որոց պարտ էր առաւել համբերել սիրելեաց քան օտարաց :

Լ Եւ մի' ասիցէ ոք , թէ ակամոյ բունադատիմ համբերել օտարի : Ապաքէն եթէ արժան

է համբերել օտարի յոչ կամաց, ապա ևս առա
ւել արժան է համբերել բարեկամին յօժա
րութե կամաց . եթէ առ ակամայն գիտես զի
ջանիլ, ընդէ՞ր 'ի կամաւորէն յետա նահանջիս.
յայտ ուրեմն է՝ թէ ոչ ունիս զսէր, որով ա
նարդ քան զամ արարածս գտանիս . զի չե՞ք
արարած՝ որ ոչ ունիցի սէր կամ դիմողութի
առ նմանին իւր . տես՝ յո՞ր յետին անարդութի
հասեր ով անհամբեր :

Ժա Այն ինչ զոր ամենեքին գովեն և պան
ծան ունել՝ է բարի և օգտակար . զի ոչ է
մարթ ամցուն միանդամայն խաբիլ և սխալիլ .
իսկ արդ՝ զամբերութին ամենեքին գովեն և
ունել պարծին, նաև նքին իսկ անհամբերք.
ապա է բարի և օգտակար մարդկան : Ուստի
որ ոչ գիտէ համբերել նեղուե՝ որում պարտ
է համբերել, է անխոհեմ և արժանի մեղադ
րութե . զի անխոհեմութի է հերքել զբարի
ինչ և օգտակար . և մեղադրութե արժանի
ոչ ձանաչել ումեք զպարտաւորութի իւր :

ԺԵ Ո՛չինչ այնպէս զօրաւոր դեղերեւեցաւ
յաշխարհի 'ի բժշկել զծանր ծանր հիւան
գութիս, որքան համբերութին . զի անպիտան
լինէին ամ դեղք և ձարտարութիք բժշկաց՝
եթէ անհամբեր լինէր հիւանդն 'ի պահել
զպատուիրանս բժշկին : Ապա համբերութին
գործ կատարեալ ունի . և որ համբերէ ձա
խողակի գիպուածոց, 'ի վախճանի գտանէ
զելս յաջողակ և զդիւրութի :

ԺՇ ԱՊաջանձար խորհրդածութիւք իւ¹
մաստնոց՝ իբր խոր յիմարութիւն համարէին,
եթէ ոչ ընկերանայր նոց համբերութիւն ՚ի
գործ դնել զգիտմունս իւրեանց, սպասելով
դիպողագոյն առթի և ժամանակի ։ ապա այր
անհամբեր՝ թէե իցէ նրբամիտ և խորախոր
հուրդ, տակաւին յիմարէ և ոչ ինչ գիտէ ։
զի ոչ կարէ յառաջացուցանել զայն՝ զոր խոր
հեալն է յառաջագոյն։

ԺՇ Ապօւմք կարէին հասանիլ բաղձանաց
իւրեանց որոց ցանկային, եթէ գիտէին համ
բերել որչափ պիտոյն էր ։ որ իբր քաջ ուղեւ
ցոյց ընդ անմոլար ճանապարհս առաջնորդէր
նոցա ՚ի դէմ եղեալ տեղին։ Խոկ անհամ
բեր բարոյիւք վաղվաղեալ յընթացս՝ կորու
սին զՃանապարհն ։ և դեգերեալ յաղամող և
յանել շաւիզս՝ զկարացին ժամանել ՚ի նպա
տակ բաղձանաց իւրեանց։

ԺՇ Զիք զօրեղ բարեկամ՝ որ կարօղ իցէ
ազատել զոք ՚ի նեղութիւն, քան զՃամբերու
թիւնն ։ զի բաղօւմք անկեալ ՚ի տառապանս՝
ըունելով զՃամբերութիւն զօրավիգ ինքեանց,
վչատեալ լքան և զրաւեցան ՚ի կենաց ։ որք
եթէ գիտէին յուսով համբերել՝ կարէին եւ
լանել ՚ի տառապանաց ։ և մոռացեալ զվիշտս՝
զուարՃանային ընդ կենդանիս ։ բայց արդէն
ընդ մեռեալս են։

ԺՇ Ապօւմք պիտոյք են յաշխարհի ՚ի պա
հել զկեանս մարդոյ ։ սակայն ոչ ամենէքին

միտպէս կարեռըք . զի են իրք՝ որք եթէ պա
կասիցին , ասկաւին պահպանին կեանք մար
դոյ՝ բայց ոչ վայելքաբար . ող աղ՝ իւղ՝ միս
գինի , և այլն : Եւ են իրք՝ որք եթէ պա
կասեային , պակասի և կենդանութի մար
դոյ . որպ օդ՝ ջեր՝ հաց՝ ջուր : Այսպէս
բազում առաքինութիք պիտոյ են մարդոյ .
յորոց ոմանք եթէ պակասին , կարէ լինել
մարդ՝ այլ ոչ կատարեալ . որպ իմաստութի ,
արիութի , առատաձեռնութի , զուարձա
խօսութի , և այլն : Իսկ առանց համբերու
թեան՝ ոչ կարէ լինել մարդն մարդ . զի համ
բերութին այնպէս պիտոյ է մարդոյ առ ի
կեալ մարդկաբար . որպէս օդ , հաց , և
ջուր , առ ի կեալ կենդանի : Ապա որ ոչ
գիտէ համբերել , ոչ գիտէ նա և կեալ
մարդկաբար :

* Համբերելը համբերէ տեառն , և նայեցաւ առիս ,
և շաւաւ ազթիւ ինց : || Սաղմոս . լթ :

* Ա ա՞ որ հորուսեալէ շամբերս-Ռին :
|| Որպք . բ . 16 :

* Որ համբերեացէ ՚ի սպառ , նա չեցի :

|| Սատ . ժ . 22 :

* Պիտոնցէ չեղ համբերս-Ռին . չէ շնան ոյ աբաբեալ
հառչիւ առետեացն : || Եւր . ժ . 36 :

ԳԼ. ՏԸ

ա Օ տեղութիւ մարմնական կենաց՝ ՚ի
դեպ էր կոչել անընդհատ յաջորդութիւ մա-
հու . և որովհետեւ յամ վայրկենի քայլափոխէ
՚ի մահ , գրեթէ յամ վայրկենի մեռանի . և
որչափ առաւելու ամօք ՚ի կեանս , ոյնչափ ա-
ռաւել կրէ մահունս : Ապա յիրաւի՛ յիմա-
րութիւ է յանմահից կարգի դնել զանձն , և
անփոյթ լինել զսոդեորաց . այլ մանաւանդ
յամ կետի ճանաչել զանձն մեռանելոց , և
գործել զբարիս . որ է կեանք հոգւոյ՝ և
պատճառ երջանկութեան :

Ե Անէպէտ ած վս օգտի մարդկան ծած-
կեաց ՚ի նոցանէ գիտել զժամանակ օրհասի մա-
հուն , բայց և ՚է յամնցրամեան երկարութիւ-
կենաց եթող մոռանալ՝ ող յառաջին դարսն .
յորս ասլրէին զբազում հարիւրաւոր ամս՝ մինչ
անցանել զինն հարիւր ամօք : Այլ հավել-
իք զտասանորդն կենաց մարդկան առաջնոյ
դարուն առ յետնորդս եթող . զի դուն ու-
րեք արդէն շուրջ զիննսուն կամ զարիւր ա-
մօք պարաբերի ժամանակ մարդոյ . և այն ցա-
ւօք և հեծութիւ :

Եւ զայս արար ած՝ ՚է միայն ՚ի կարձել
զբարութիւ մարդկան , այլ և առ ՚ի զդասատ առ-
նել զնո՞ւ . զի գո՞նէ այսու չափաւոր թուով
ծանուցեալ զկարձութիւ կենաց մարդկան ,
յամ ժամ արթուն և պատրաստ դատանիցին

տնօրինել զկեանս իւրեանց՝ ի բարիս : Եւ ո՞չ
այսու միոյն՝ այլև ինչ ինչ յայտնի նշանզք
ծանոյց զմերձենալ մահուն . դ՝ սպիտակուբ
հերաց , ծերութե , հիւանդութ , և պէս պէս
տկարուբ մարմնոյ : Ապա ո՞չ են աղատ մարդիկ
՚ի մեղադրանաց , եթէ տակաւին յազդարա
րութե սոցա ո՞չ զգան զմերձենալն մահուն :

Դ Արքափ մեծանոյ ոք հասակաւ , այնչափ
առաւել մօտի ՚ի գերեզմանն . զի կեալն մարդոյ՝
է խոնարհիլ ՚ի մահ . եյորժամծերանոյ , յայն
ժամ հասանէ ՚ի գրունս մահու :

Դ Զիք ստոյգ քան զմախն , և չիք անստոյգ
քան զօր և զժամանակ մահուն . սակոյն այր
խոհեմո՞չ է անծանօթ . զի քաջդիտէ թէ ամ
վայրկեան է ժամանակ մահու իւրոյ :

Խակ արդ՝ ժամանակն բաժանի յերիս . յան
ցեալն , ՚ի ներկայն , և յապառնին . անցեալն
և ապառնին ո՞չ են ընդիշանութե մարդոյ .
զի մին անց գնաց , և միւսն չեւես է եկեալ :
Եւ ներկայն է յարահոս՝ և անկայուն . ՚ի
գոյն՝ անդէն չքանոյ , և փոխի ՚ի յանցեալն .
անուամբ յորջորջի , բայց իրօք ո՞չ երեւի . զի է
յարախախուստ միջոց անցելոյ և ապառնոյ .
և ասացաւ ներկայ , զի իբրև կէտ անբաժա
նելի ՚ի մէջ կայ երկուց ժամանակաց . և ահա
միոյն ներկայ ժամանակն է ՚ի գործածութե ,
զորով յածի կեանք մարդոյ :

Խակ ժամանակն է փոխիսական տեղութ
առեղծական և փոփոխական իրաց . և ժամանակ

ասի , զի գոյ ժամանէ միշտ . և այս լինի մեզ
 'ի հողովանէ արեգական , որ չափէ զվայրկեն ,
 զժամ , զօր , զամիս , և տարի . և ասի տարի , զի
 միշտ տանի զժամ և զժամանակ կենաց մերոց .
 աեւ ուրեմն յորպիսի անկայուն միջոց զեւ
 տեղեալէ կեանք մարդոյ :

Ա. ըդ՝ որ զայս քաջ' միտ առնու , Ճանաչէ
 զինքն ՚ի վայրկենի իմիք ներկոյ ժամանակի
 մեռանելոց . զի յամ վայրկենի հնարէ մեռու
 նիլ . և այսու մտածութէ զմահն կրէ միշտ
 առաջի իւր . ըստ այնմ , Հաւատայ քեղամօր
 ծագել վերջին . և այսպէս գիտէ զօրհասն՝
 թէ յայսմ կետի յորում գտանի , մեռանելոց
 իցէ . որովհեաւ ոչ գիտէ՝ թէ կարիցէ մնալ
 կենդանի ՚ի յաջորդ վայրկեանն , որ գեւ
 ևս է ապառնի :

Ե Աարդն կեայ տուրեառութէ շնչոյ .
 և այն յառաջ գոյ ՚ի շարժմանէ և ՚ի բաղիսման
 նէ սրտին . արդ՝ եթէ դադարիցի բաղիսումն
 սրտի , իսկոյն մեռանի մարդն . իսկ ոչ գիտէ
 թէ երբ դադարիցի . զի հնարէ՝ թէ վայրկեանն
 յորում առնու ոք զըունչ , իցէ վերջին .
 ապա յամ շնչառութիս պարտի ասել՝ թէ այս
 վայրկեան է վերջին , որով միշտ զգաստ մնայ :
 Ա. յս է նկատումն ՛ք , որք ճանաչեն զին
 քեանս յամ շնչառութէ մեռանելոց . իսկ որ
 ճանաչէ՝ թէ արդէն մեռանի , ոչ կարէ մե
 զանցել . ապա խոկումն մահու ազատ պահէ
 զմարդն ՚ի մեղաց :

Ղ Ո՞ահն է անհրաժեշտ ոստիկան մարդկան՝ կան ՚ի կողմանէ ոյ, որ յօրէ ծննդեան կալել ունի զօձիս իւրապանչիւր մարդոյ՝ ածել կացուցանել առաջի ոյ : Ապա կարի յանդուգն է նա՝ որ ՚ոչ զարհուրի, մինչդիտէ թէ ՚ի ձեւը անխաք ոստիկանի անկեալ կայ, որ կարէ ընդ քարշ տանիլ զինքն ՚ի յատեան անաչառ արքայի ՚ի դատել : Ըստ՝ որ ՚ի սոյն լինի միշտ մտախոյն, ՚ոչ երբեք կարէ մեղանչել :

Է Օմունի թէ կեանք մարդոյ ՚ի վը երկը իցէ երեք օր . մի՛ օր ծննդեանն, մի՛ օր մահունան, և մի՛ օր ամժամանակ կենաց նը, թէ երկար իցէ և թէ սուղ : Ասյց յաւետ երեւի լինել թէ իցէ երեք վայրկեան . զի ծը նանի ՚ի մի վայրկենի, կեսյ ՚ի մի վայրկենի, մեռանի ՚ի մի վայրկենի . զի յամ վայրկենի հնար է մեռանիլ : Կա աւանիկ թէ և կեցցէ զամն բազումն, համարի իբրև զմի վայրկեան ժամանակի . զի ամք բաղկանան յամոց, ամիսք յաւուրց, աւուրբք ՚ի ժամուց, ժամք ՚ի վայրկենից . և ՚ոչ այլ ինչ են ամք, բայց եթէ բազ մապատկութիւն վայրկենից . յայսմանէ յայտ է՝ թէ հեշտութիւն կամտանջանք զոր կրեն մարդիկ յաշխարհի, են վայրկենական : Ապա մեծ անմտութիւն է սակա վայրկենական հեշտութե կամտանջանաց մեղանչել առ ած . զի երկու քեանն ևս ՚ի վայրկենի իմիք են, և իսկոյն անցանեն :

Ը Կեանք մարդոյ՝ թէ և տեսեսցէ զամն

բազումն , Է տակաւին սուղ . զի զկէս մասն յափշտակէ քունն , զմի մասն տանի անզգայութիւնն տղայութե , զմի մասն գողանան դա տարկաբան ընկերք , գուցէ և զմասն ինչ տը կարութիք մարմնոյ և ցաւք . ապա ջանալի՛ է ՚ի գործ ածել զայն մասն ժամանակի՝ զօր ՚ի ձեռին ունիմք , ՚ի բարի և յօդտակար իրողութիւն :

Թ Ոչոք ՚ի մարդկանէ կարաց մինչև ցարդ , և ոչ կարացէ ոք երբէք խկութե նշանակել զպատկեր մահու . զի զայն միայն մեռեալք տեսին՝ և ուսան . և չեղև միում ՚ի նոցանէ դառնալ յաշխարհ ՚ի յայտնել կենդանեաց՝ թէ որպիսի ինչէ մահն . ապա կենդանիք որքան զարհութելի դոլ ցուցանեն , տակաւին ոչ կարեն լրիւ յայտ առնել . զի անծանօթ են զնմանէ : Ո՞ահն յաւէտ անողորմ գտանի յայսմ մասին , զի միանգամ գոյ առ կենդանիս . և այն ՚ի վերջին կէտն . թէպէտև յայնժամ ուսանին մարդիկ՝ թէ ո՛իցէ , որպիսի պատրաստութե սպասելի է նմա , զիարդ պարտ է ընդունիլ , զինչ արդեօք խնդրէ ՚ի մէնջ . սակայն այն ամուսումն է անօդուտ . զի յետ սյնորիկ ոչ կարէ ոք ՚ի գործ դնել :

Ժ Ո՞ահն միանգամ պատահի մարդկան . բայց մարդիկ յերկիւղէ նորին պաշարեալ գըրեթէ յամժամկենդանւոյն մեռանին : Այլ սակայն ընդ վայր տանջանք է երկնչիլ յայնմանէ , յորմէ ազատիլ չէ նար . միայն պարտ է պատրաստ գտանիլ , զի մի՛ իբրև չարագուշակ

դահիճ՝ ՚ի գուբն մահու , այլ իբրև աւետաբեր հրաւիրակ կոչեսցէ զքեզ՝ ՚ի յարկն յաւիտենից :

Ժանապարհին՝ ՚ի մահուանէ իմաստունն, զի ճանաչէ զմահն անհրաժեշտ պարտք բնուե մարդկեղէն կազմուածոյ . ՚է զարհուրի առաքինին, զի գիտէ զնա բարեհրաւեր առջնորդառ առ ած ճանապարհին : Ո՞եռանի աներկիւղ և ուրախ , որ միշտ զմահ իւր ունի ՚ի մտի . և սգայ ՚ի վը յանցուածոց իւրոց : Ո՞եռանի երկիւղին և տրտմութք , որ ՚է յիշէ զմահ . և ուրախանայ ՚ի հաճոյս մարմնոյ և աշխարհի :

Ժք Եթէ կամիս չերկնչիլ ՚ի մահուանէ , կուլ միշտ զնա ՚ի մտի քում . զի ընդելասցիս ընդ նմա իբրև ընդ բարեկամի , և մի զարհուրեսցիս ՚ի նմանէ՝ յորժամ առեալ տանիցի ըզ քեզ յայլ աշխարհ : Եւ եթէ կամիս տեղեկանալ բնութե և բարուց նը , յաճախակի Երթ յայցելութի մահամերձ հիւանդաց , և տես՝ թէ ոտք մեռանին նոքա . զի այս բնութի է մահու , միապէս վարիլ առ ամենեսին , առ մեծատունս և առ աղքատս . զի ՚է երկնչիլ յումեքէ : Եւ ուսեալ քո զմեռանին՝ աներկիւղ լիցիս ՚ի մահուանէ , որ է յատուկ պարտառութի քո . զոր բնութին՝ ածասահման և անյեղին օրինօք եղեալ է ՚ի վը քո : Ո՞ւղ՝ նաերկիցէ ՚ի մահուանէ , որ ՚է յիշէ զմահ . և չէ ընդ նմա ընդել և բարեկամ . վայ մինչ գոյ առ նա մահն՝ երևի նմա իբրև սոսկալի

Թշնամի , որ եկեալ է վարել զնա յանսկերծ և
՚ի դժնդակ ծառայութիւն :

Որ միշտ զմահ իւր՝ ունի ՚ի մաի , ՚ի մե-
ռանիլ իւր՝ նա ո՛չ զարհուրի . զի մահն եկեալ՝
որպէս ընտանի , հրաւիրէ հանգչիլ յիւրն
հայրենի : Որ ՚ի մահուանէ՝ միշտ հեռի փախ
չի , զմահն առնէ՝ անհաշտ թշնամի . դոյ որպ
զինուոր՝ ահեղ արքայի , տանիլ խստութք՝
ուր ո՛չն կամի :

ԺԴ Օ Քնչ օգուտ է կեալ բարի անոնամք,
և մեռանիլ վատութք . զի չարաչար մահն եղ
ծանէ զբարի կեանս , յորս եկեաց ոք զբա-
զում ժամանակս . և բարի մահն տոյ մոռանալ
զանբարի կեանս անցեալ ժամանակաց : Բայց
քանզի ո՛չ գիտէ մարդ՝ թէ յորում աւուր մե-
ռանիցի , ոոկ զի բարի մահոնամք կնքեսցէ ըզ
կեանս իւր . զի դոյ մահն որոկ զգող գիշերի
՚ի ժամուն՝ յորում ո՛չ կամիցի ոք : Ապա յոյժ
սիսալի նա , որ սպասէ աւուր վախճանի , զի
լինիցի բարի : Եւ քանզի ամօր կարէ լինել
վախճան կենաց . ապա զօր ամենայն պարտ է
գտանիլ բարի , որպէս զի բարի մահոնամք
կնքեսցէ զվախճան իւր :

ԺԴ Այն է բարի մահ՝ յորժամ՝ ՚ի շնորհս ոյ
մեռանի մարդն . զի ոոկ կեանկ մարմնոյ է հո-
գին , նոյնպէս կեանկ հոգւոյն՝ է շնորհքն
ոյ : Աեռանի մարմին՝ մինչ բաժանի հոգին
՚ի նմանէ . մեռանի հոգին՝ յորժամ բաժանի
՚ի նմանէ ածոցին շնորհք : Անմահ է բնութ-

Հոդին մարդոյ . բայց՝ ՚ի զրկիլն յածային շնորհ
հաց՝ ասի մեռանիլ բարոյականապէս . իսկ ըստ
նորհքն պահպանի և աճի առաքինութեալ . ապա
այր առաքինի է ՚ի շնորհս ոյ , վայ մահն
առաքինեաց է բարի :

ԺԵ Խըրեք են վասոց դառն թռեի մահ .
սէր աշխարհի , խիղճ մաաց , և անստուգութեալ
փրկութեալ : Ուստի ասէր ոմն իմաստասէլ .
որովհեաւ ոչ գիտես՝ եթէ յորում տեղւոջ
և յորում ժամանակի սպասէ քեզ մահն , դու
յամ ժամ սպասեաջիր նմա . զի մի անպատրաստ
գտանիցիս ՚ի գալստեան նորա :

ԺՂ Ո՞արդս ունի ազատութիւն նմանիլ հը¹
րեշտակաց և անբանից . եթէ հոգւովս վարի՝
նմանի հըրեշտակաց . իսկ եթէ մարմնով
նմանի անբանից : Ո՞որդ՝ մինչդեռ կենդանի
է մարդ , թէպէտ կարէ վարել զկեանս ըստ
նմանութեալ անբանից , այլ ոչ կարէ յետ մահու
մնալ աննորոգելի և անպատիժ ըստ նմանութեալ
անբանից . քանզի ունի հոգի բանական և անմահ ըստ նմանութեալ հըրեշտակաց .
Վայ ըստ նմանութեալ հըրեշտակաց չարաց պատժի
՚ի յաւիտեան : Ո՞պա խորհեսցի իւրաքանչիւր
զվարման իւր , և արասցէ ողկ և կամի :

ԺԷ Ո՞որ բարի և իմաստուն՝ ՚ի քաջառողջ
կենդանութեալ իւրում զմիտս մահամերձ հիւանդաց ունի : Ո՞ ի յայնժամ բազում ինչ
Ճշմարտութեալ զգայ հիւանդն , զորս յառողջութեալ
իւրում ոչ զգայր . վայ զի քաջանացէ ՚ի նոյն

կէտ զօդուտ և զպատոնականութիւն առաքիւնութեն , զունչութիւն և զվասա աշխարհային հեշտութեն և մեծութեն : Արդիկ ողբան և մոլի իցեն յառողջուե իւրեանց՝ ՚ի ժամման հու զգաստանան , և ցանկան առաքինաբար կեալ . բայց աւաղ՝ զի ոչինչ կարեն շահիլ , վազի արեգակն ՚ի մուտս է խոնարհեալ :

Ժը ԱՇռք քաջ ճանաչէ զդառնուի մահու , բայց այն՝ որ էառ զՃաշակ մահու . այլ զինչ օգուտ իցէ գիտել յայնպիսում ժամանակի , մինչ ոչ կարէ այնուհետեւ քաղցրացուցանել զդառնութիւնը : Ակայն և այժմ ոչ իսպառ մնայ անգիտելի՝ որոյ աչք են ՚ի գլխի իւրում : զի մարթ է սակաւուք իրազգած լինել նմա , և զօդուտն անօրինել : Ո ի եթէ ոք եղեալ զանձն ՚ի տեղի հոգեվար հիւանդի՝ առաջին նկարեսցէ զանհրաժեշտ մահուն զպատկեր , փքը ՚ի շատէ իմանայ զանհնարին տագնապ և զդառնութիւն ժամուն այնորիկ : Ուստի և նա որպէ ՚ի մեռելոց կենդանի՝ յառողջութեն իւրում հոգայ և պատրաստէ զկարեորսն անդառնալի ուղղոյն և յաւէժ կենդանուեն . որովք դառնութիւն փոխի ՚ի քաղցրութիւն , և տագնապ մահուն ՚ի հանգիստ քնոյ , և առաջնորդ կենացն անվախճանից :

Ժթ Խորհրդով ասհմանեցան գերեզմանաւ տունք իւրաքանչիւր ազգաց ՚ի բաղմամբոխ հըրապարակս , կամ ՚ի դրունս քաղպեաց , կամ յանցս ճանապարհաց . զի որ ՚ի քաղաքին ևն

մարդիկ, տեսեալ զմահարձանս զգաստացին և յիշեսցեն, զի և ինքեանք թաղելոց են անդ. և ուրք՝ ի քաղաքն մտանեն, ՚ի միտ առցեն թէ և ՚ի նմա մարդիկ մեռանին: «Քանզի անմռունց բարբառք մեռելոց՝ առաւել զարթուցանեն զմարդիկ յիշտկել զօր մահուն և զգաստանալ քան մեծաձայն ազգարարութիք կենդանեաց:

Ե՞ Արւոք գրեն ՚ի մահարձանս մեռելոց, թէ (այս է տապան հանգստեան:) որովհետեւ մարդ՝ ՚ի մեռանիլ իւրում՝ հանգչի ՚ի տառապանաց աշխարհի: զի փորձութիւն է կեանք մարդկան ՚ի վը երկրի:

Այսկայն եթէ կարէին մարդիկ զատանել ՚ի միմեանց զըարիս և զըարիս, ՚ի դէպ էր գրել զայս միայն ՚ի մահարձանս բարեաց: իսկ ՚ի մահարձանս չարաց՝ լաւ ևս էր գրոշմել (այս է տապան տանջանաց:) «Քանզի չարք ՚ի մեռանին անցանեն յառօրեոյ վշտաց Շի՝ ՚ի յաւիտենական տանջանս, դր ՚ի մահուանէ ՚ի մահ: ող և բարիք ՚ի կենաց ՚ի կեանս:

Ի՞ն Օ գերեզմատունս եթէ ոք անոնանես ցէ բնակարան ստախօսից, ոչ սխալ է: վա զի թաղեալքն ՚ի նո՞ ՚ի կենդանուն իւրեանց ըզ բազումինչ ասէին, և խոստանոյին առնել: դր շինել, քակել, ուտել, ըմպել, պանիլ, շրջել, և այլն. այլ ստելով խոստման իւրենց, դնացին անդր և դադարեցան: և առնեն ինչ ոչ:

Ի՞ն Պերեզմատունն է այնպիսի դպրոց, յո բում մեռեալք վարժեն զկենդանիս, համեցք

զիսօսունա . այբբենարան կամ գիրք ընթերցանութեն են մահարձանք շիրմաց . զորս եթէ ուշի ուշով ընթերցցի պք , զբազում կենցաղութուտ շահեկանութիս դանձէ անձին . 'ի միտ առնու 'թէ ոյք են թաղեալքն . ումսպասեն . զենք խորհին . զիարդ թողեալ զժառանգուիս և զստացուածս իւրենց՝ մերկ և կողոպուտ աստ ընկողմանին . ճոխաբան լեզուք կան լոփի . քաջարուեստ մատունիք՝ անոդործ . սիգաճեմ ընթացք՝ կաշկանդեալք . որք ո՛չ սեղմէին 'ի հոյակապ ապարանս՝ յերկիանգուն տապանի բովանդակին . զայսոսիկ և առաւել քան ըզ սոյն օդտակար խրատս ուսանին կենդանիք 'ի մեռելոց :

Ի՞՛ Ուք 'ի կեանս իւրեանց սովոր են հոգալ զտանց , զվաճառաց , և զառետրութեց . նաև 'ի ժամաւ մահուան իւրեանց զնոցանէ միայն խոկան . զնս յանձն առնեն յետնոց . և վոնց պատուիրեն աշխատ լինել . որպէս թէ միւսանգամդառնալ ունին յա : Խորհին զերաց՝ յորոց հրաժարին . և ո՛չ զայնց՝ առ որս 'ի պատրաստի են երթալ . խօսին զանցաւորաց՝ և ո՛չ զյափիտենականէն : Պատուիրեն կատարել զշինուածս՝ զորս հիմնաւորեցին . զարդարել զայգիս և զըուրաստանս՝ զորս տնկեցին . շահեցուցանել տոկոսեօք զմոյր դրամոցն՝ զորս դանձեցին . հոգալ զարծաթոյն՝ զորս 'ի վարձու ետուն . արդիւնաւորել զշահավաճառութիւնն՝ զորս սկզբնաւորեցին : Խաւ զինչքան

զայս անմիտ խորհրդածութիւն և ջանք՝ ան-
փոյթ լինել զՃշմարիտ պիտոյից, և հոգալ
զայնց ողք չեն ինչ նմա պիտանացու :

ի՞ւ Օ գոյշ են մարդիկ ՚ի պահպանութիւն
մարմնաւոր ընչից ։ ոյլ անհոգ ՚ի պահպանութիւն
հոգեւոր բարեաց ։ բայց որ իմաստունն է, ա-
ռաւել քան զմարմնաւոր ստացուածս գուն
գործէ անկորուստ ունել զհոգեւոր բարիս :

ի՞ւ Պործք մարդկային ըստ էակութեանն
են անցաւոր և անկայունն . ոյլ ըստ ներգոր-
ծութեա կամացն անփոփոխ և մնայուն . զի յոր
միանդամ յարի կամքն և սիրէ ազատ ներգոր-
ծութեա, ՚ի նմա յաւիտեան մնալ ախորժէ
եթէ հնար իցէ . վայ ըստ յօժարութեա բաղ-
ձանացն չափի հատուցումն յաւիտենական
բարւոյ կամ չարի :

Պարձեալ կամքն գոլովաթոռ սիրոյ, ներ
գործել նը և յարիլ ինչ է սիրել զնա . և
յորժամ ՚ի բարին յարի՝ զած սիրէ, որ է յա-
ւիտենական . զի միայն ած է իսկապէս բարի
և աղքիւր բարութեա . ըստ այնմ (չլիք ոք բա-
րի, բայց մի ած :) Եւ յորժամ ՚ի չար ինչ
յարի՝ յետս դառնայ ՚ի սիրոյն ոյ առ ստեղծ-
ուածս . նմին իրի ժամանակաւոր գործոց
մարդոյ հատուցանի փոխադարձ վարձք՝ կամ
պատիժ յաւիտենական . զի առարկայն զոր
սիրեաց՝ կամ ատեաց, է ած յաւիտենական :

Ազաքէն յամկէտ կամք մարդոյ կարէ յարիլ
կամ ՚ի բարի ինչ կամ ՚ի չար ունակաբար

կամ ներգործաբար . և ոչ դիտէ մարդ , թէ
՚ի հասանել մահուան՝ ՚ի բարի կամս դտա-
նիցի , թէ ՚ի չար կամն : Ուրեմն պարտէ
մարդոյ յամ ժամ հաստատել զկամն ՚ի բարի
խորհուրդս և յածահաճոյ գործս . զի ընկալցի
իւր վարձք յաւիտենական զամենաբարին ած .
քանզի զներգործութէ կամաց իւրաքանչիւր
ումեք կախի հատուցումն , եթէ բարի՝ և ե-
թէ չար :

իդ Ո՞ահն զերկուս շնորհս առնէ բարեաց .
մի՝ զի ազատէ զնս ՚ի չարեացն աշխարհի , յորս
տառապէին . և միւս՝ զի հասուցանէ զնս ՚ի
ժառանգութի երկնային բարեացն , որոց փա-
փագէին : Եւրիակ այսմ , զերկուս վնաս առ-
նէ չարաց . մի՝ զի զըկէ զնս ՚ի վայելութեց
աշխարհի , յորս հեշտանոյին . և միւս՝ զի մատ-
նէ զնս ՚ի տանջանս դժոխոց , յորմէ երկըն-
չէին : Ո՞ոյ բարիք ուրախութէ մեռանին ,
խակ չարք թախծութէ :

իէ Ո՞ահն ոչ վարի աջառանօք ընդումեք .
վոյ ոչ ոք պարտի զնմանէ գանգատել : Օ ի
եթէ բառնայր յաշխարհէ միայն զծերս , ո՞յլ
կարէր զմոլուիս երիտասարդաց զսպել . եթէ
զերիտասարդս , ո՞բաւական լինէր զագահուի
ծերոց յաղթահարել : Եթէ զցաւագարս մի-
այն ՚ի կենաց հատանէր , ո՞կարօղէր արդեզք
զուժեղացն յանդգնութի չափաւորել . եթէ
զառողջս մարմնով , ո՞ձեռնիաս գտանէր զցա-
ւագարս և զհիւանդս խնամել : Եթէ միայն

զաղքատոս ՚ի բաց տանէր , մի՛ թէ մարթ ինչ
էր ումեք զիարթամացն հպարտութի խոնար-
հեցուցանել եթէ զիարթամա միայն , ո՞ կարէր
զթիւ աղքատաց ՚ի համար առնուլ : Եթէ
զառաքինիս բառնայր ՚ի միջոյ , աշխարհս լինէր
դժոխք . զի մնային միայն մարդիկ դիւազգիք :
Եթէ զքարս , յոյժ սակաւ գտանէին մարդիկ
յաշխարհի . որովհետեւ սակաւաթիւ են բա-
րիք : Ապաքէն մահն ընդ ամենեսեան մի օրի-
նակ վարի , զի զամենեսեան զգաստ և ան-
տրտումպահեսցէ . վայ ո՞չ ոք իրաւունս ու-
նի տրտնջալ զնմանէ . զի մարթ է իրա-
քանչիւր ումեք ըմբռնիլ ՚ի մահուանէ՝ յո-
րում հասակի և իցէ :

Ե՛՛ Որտնեղութիւն է յոյժ տանջանք մը
տաց , սպասել գալստեան ումեք . մանաւանդ
յորժամ յամե նա ՚ի գալ . ուստի լաւէ՝ եթէ
այլք սպասեսցեն քեզ գնալ առ նո՛ , քան թէ
դու սպասեսցես գալստեան նոցա առ քեզ :
Ապա անհնարին տանջանք լինէր կենդանեաց ,
եթէ սպասէին մեռելոց՝ միւսանգամ գալս-
տեան նոցա յաշխարհ , զորս սիրէին . բայց
այժմ ո՞չ տանջին կենդանիք , զի ո՞չ սպասեն
մեռելոց . այլ մեռեալք սպասեն կենդանեաց
երթալ առ նոսա :

Ի՞թ Որ վայ յանցանաց մատնի ՚ի բանդ՝ ո՞չ
զայլ ինչ մտածէ , բայց եթէ ազատիլ . իսկ
մարդիկ ՚ի նախկին մարդն յանցանօք ըմբռ-
նեալ՝ արկան իբր ՚ի բանդ՝ ՚ի բազմավեց յայտ

աշխարհ . ուր մնան յամ ՚ի կեանս ոնկ յարգելանս , և ՚ի մռանին աղատին . ուրեմն մահն է աղատիչ ՚ի բանդէ վշտաց աշխարհի : Բայց ածողորմած և գիտակ ամի՞ զորս կրեն մարդիկ յայս աշխարհ , կարձեաց զժամանակ կենաց մարդոյ . և ինքեան միայնոյ պահեաց զքանալին , թ զվճիռ մահուն . զի մի՞ ոք տաղտկացեալ ՚ի դառն վշտաց , համարձակեսցի խընդրել զմահ , կամ զեւրովին երթալ : || այ մահն որ ըստ կամացն այ լինի՞ ոչ միայն աղատէ ըդ մարդն ՚ի բանտէ տառապանաց աշխարհի , այլ և հասուցանէ ՚ի լաւագոյն կեանս . յայն սակա մահն ասի դուռն լաւագոյն կենաց :

Ապաքէն քանի՞ դառն լինէր կեանք մարդոյ ՚ի վը երկրի , եթէ ոչ էր մահ . յայտ է փորձն ՚ի չարաչար ախտացեալս , ՚ի զառամեալ ծերս , ՚ի յետին չքաւորս , և յանզերծ փորձանաւորս . որոց ամենեցուն միսիթարիչէ մահն :

Չիք ճարտար բժիշկ յապաքինել զցաւս հիւանդին՝ առւել քան զօրհաս մահուն . զի ուր ոչ աղդեն զօրուիք դեղոց քաջարուեատ բժշկաց , սա առանց ինչ դեղոց գիտէ ապաքինել : Ապա մեծ ողորմութի՞ է յայ առ մարդիկ՝ լինիլ նց մահկանացու . որև ոչ փոքր պատիւն է մարդոյ , մինչ ած ինքեան սեպհական արար գիտել և կամիլ զօր և զժամ մահու . ուրեմն մի երկնչիր ՚ի մահուանէ , այլ ջանսա՞ զի բարի մահուամբ ելցես յաշխարհէ :

Ե Խարանելի՞ է մարդ , որ գիտէ եթէ

պանդուխտ է՝ ՚ի վ՛՛ երկրի ։ վ՛յ ընդ ժամանակը ժամանակակա առաքէ ՚ի բուն հայրենին իւր ՚ի յերկինս զգանձս բարեաց՝ զոր ստացաւ յամ ՚ի կեանս իւր ։ և կտակագրութե իւրով պատրաստեալ զպիտոյս ճանապարհի՝ սպասեալ մնայ գալստեան մահու իբրև հմուտ առաջնորդի, ճանապարհորդել յերկինս՝ ՚ի վայելել յա լիտեան յարդիւնս վաստակոց իւրոց :

Բայց է մարդ որ գիտէ՝ թէ երկիրս չէ տեղի սեպհական ինքեան, այլ իջևան ինչ առժամանակեայ բնակութե ։ որովհետեւ չէ ծնեալ մարդս վ՛՛ երկրի՝ ըստ օրինակի ան բանից, այլ վ՛՛ երկնից՝ ըստ նմանութե հրեշտակաց ։ բայց սակայն ոչ ինչ հոգայ զայնմանէ, և ոչ ջանայ ամբարել անդ զգանձս իւր վայելել անվախճան կենօք :

Եւ թէպէտ կարապետն մահու հիւանդութին՝ բազում անգամ եկեալ ազդ առնէ նմա, այլ նա տակաւին ոչ զգաստանայ պատրաստական գտանիլ։ Եւ մինչ յաւուր միում իբրև զգող գիշերի յանկարծակի հասեալ բռնադատէ տանիլ, յայնժամ զգայ մարդ ըզ վրիպակն զոր արար, բայց անագան։ Ո ՚ թէպէտ ըստ ձեռնհաս գոլոյ աճապարէ պատրաստել, այլ ոչ ամ կարեւոր պիտոյիւլք ։ և ոչ ևս կարէ առնել կտակագիր, ոտք զի ամ ինչ յետ մահու իւրոյ լինիցի բարեկարդ և օրինաւոր։ Ա նայ յոլովակի յառնէ խուզութի՞ մէջ ժառանդորդաց, և այլ ընդ եղքօր իւրոյ

՚ի դատ վարեալ , ծախեն զինչս բազումն ՚ի դատաստանական կոիւս . և եթէ ոչ խաղաղացին ՚ի համոզանաց հոգեոր հովուաց և մտերիմ բարեկամաց , հայրենի ժառանգութիւնն ամ ոչ կարէ լինել բաւական վայրավատին ծախուց նոցա :

Ապա ամոք փութասցի մինչդեռ ժամանակն ՚ի ձեռսէ , պատրաստել զպէտա հոգւոյ և մարմնոյ իւրոյ հաստատուն կտակագրութ : Բայց այս գովելի սովորութ՝ զոր հաստատուն օրինգը պահեն այլազգ քրիստոնեայք , նուազեալ տեսանի այժմ յազգի մերում , թերեւս յանհոգութէ առաջնորդաց և իշխանաց . որ արդարեւ պիտանի է յոյժ և օգտակար , մանաւանդ առն քրիստոնէի և բարեպաշտի :

Ես Չիք թշուառ և ողորմելի քան զայն , որ ընկողմաննեալ ՚ի մահիճս տանջի արտաքուստ մահաբեր ցաւօք , և ՚ի ներքուառ ՚ի խղճէ մը տաց . ՚ի միոյ կողմանէ տեսանէ զիսուճապումն մահու՝ վարել զհոգի իւր յանծանօթ ինչ աշխարհ . և ՚ի միւսմէ կողմանէ նշմարէ զպատրաստութի ժառանգորդաց ընչից իւրոց՝ տանիլ զմարմին իւր ՚ի գերեզման : Արկեղք գանձուց և ստացուածոց որք զետեղեալ են մի ըղմիով առաջի աչաց իւրոց , յաւելուն զտառապանս նոր . զի յուշ անդր ածեն զզրկեալսն , յորոց յանիրաւի էառ , և զկարօտեալսն՝ որոց զլացաւ տալ . մնոտի յոյսն առողջութեն զոր տան նմա մերձաւորք իւր , ոչ կարէ միսիթարել

զնոս . զի տեսանէ զանդամն մարմնոյ իւրոյ
լուծեալ և թալկացեալ :

Ազա որ կամի անտրտում մեռանիլ՝ յորմէ
անհնարին է խորշիլ , կտակագիր արասցէ ՚ի
կենդանուն իւրում . եթէ զըկեալ իցէ զոք՝
հասուսցէ նմա . եթէ զլացեալ իցէ նպաս
տել կարօտելոց՝ եկեղեցեաց և վանորէից՝
տացէ ըստ արժանւոյն . և մաքրեալ զմիտս ՚ի
խղճէ չարեաց խոստովանութիւն և հաղոր
դութիւն՝ հրաժարեսցի ՚ի տառապանաց կեն
ցաղցս հանգչիլ ՚ի յերկինս :

Այս որ խրատէ զհիւանդն հաստատուն
կտակագրութիւն տնօրինել զամ պէտս հոգւոյ
իւրոյ և մարմնոյ , զողորմութիւն աղքատաց ,
զպատարագիս , զնպաստն եկեղեցեաց և վա
նորէից , և զոր այլ ևս են հոգողութիւն յօ
դուտ որդւոց և ընտանեաց իւրոց . յուշ ա
րարեալ նմա՝ թէ այս ամպատաստութիւն ոչ
եթէ փութացուցանեն զմահ , այլ խոստանան
զառողջութիւն . զի թեթեացուցեալ զմիտսն ՚ի
բազմատագնապ հոգոց , և մաքրեալ զսիրան
՚ի խղճէ չարեաց , թեթեացուցանեն և զհիւ
ւանդն ՚ի ցաւոց . նա՝ զի ցորչափ կենդանի է
կտակագիրն , ոչոք ունի իրաւունս պահան
ջել ՚ի նմանէ ինչ . զի կտակ յետ մահուն է
հաստատուն :

Այս յլ յորժամ ինքն հիւանդանաց , չածէ
՚ի միտ զխրատն որով խրատէր զայլսն . և եւ
թէ ոք ՚ի բարեկամաց առաջադրեսցէ նմա

կոտակադիր լինել, խոժոռի և երեսս դարձուցանէ . ասելով, մի՞թէ ամ որ հիւանդանայ՝ մեռանելոց իցէ : Յաւելու ասել՝ թէ զգամ յանձն իմ, զի ես այսու հիւանդութե՛ ոչ մեռանիմ . բայց թէ հիւանդացայց առ'ի մահ, յայնժամեդեալ եմ 'ի մտի առնել զկտակագը ըստթի . զայսոսիկ և զոր այսպիսիք են անտեղինք՝ յանդգնի խօսիլ, որող այն՝ թէ ածոմն իցէ գիտել զօր մահուան :

Ուստի բարւոք առնէր, եթէ ոք զլսրատն զոր տոսր այլոց հիւանդաց՝ արձանագրէր 'ի թղթի . և 'ի հիւանդանալ իւրում կատարէր գործով : Քանզի մահն ոչ զոք ունի իւր խոր հըրդակից, զի ազդ արացէ նմա զժամն օր հասական . և ոչ ումեք երկնչի, զի հեռի կացցէ . ոչ զոք թողու կենդանի, զի և ինքն ընդ նմա անմեռ մնասցէ :

Եւ վազ զի կայ մնայ մարդկան միանդամմեռանիլ, գուցէ յայսմհիւանդութե՛ մեռանելոց իցէ . զի չիք նմա յայտնութի՛ վերուստ, թէ յայլում նուագի մեռանիցի : Ապա որ ուսուցանէ զայլս, և զանձն ոչ ուսուցանէ, բաղում գանից պարտաւոր գտանի . իբրև զծառայն որ գիտէ զկամս տն իւրոյ, և ոչ պատրաստէ ըստ կամաց նորա :

Ի՞՛ Բժիշկ ոք՝ եթէ ոչ ճանաչէ զպատճառ հիւանդութե՛ ուրուք, ոչ կարէ առողջացուցանել զնա . զի պնդացուցիչ դեղս տայ, որում

օշարակ պիտի . և երակ հատանէ , որ խարանաց կարօտի . սմին իրի բազում բժիշկք բազում անդամ ՚ի խորհուրդ մոտեալ՝ ոչ կարեն բժշկել զիսօթացեալն : Ո ի նոքա միայն մարմնական ախտաւորութեց գոլով հմուտ՝ անտեղեակ են հիւանդութեց հոգւոց . և ո՞գիտէ գուցէ հիւանդութի այնմ՝ որում ջանան օդնել , իցէ պատճառեալ ՚ի խղճէ մոտաց :

Ո ի որ վէրս ունի ՚ի հոգին՝ և տագնապի հանապազ ՚ի խայթէ մոտաց , նա ՚ի դոյզն մի հիւանդութէ մարմնոյ տկարանայ , և անկանի ՚ի մահիճս ցաւոց . և զիարդ օգնեացեն այն պիսոյն ճարտարութիք բժշկաց , կամ ո՞ր շահ նմա ՚ի մարմնական դեղոց . և այսու օրինակաւ բարտ բազում են ախտացեալք , զորս չէ մարթանացել :

Այս պարտաւոր են մերձաւորք հիւանդին՝ առանց դանդաղսնաց տանիլ առ նա զհոգեւոր բժիշկ , որ խորհրդական խոստովանութեանիցէ զցաւս հոգւոյ նը , և զօգտակարն մատուցէ նմա զդարման . և հիւանդն ազատեալ հոգւով ՚ի խղճէ չարեացն , առողջացի և ՚ի մարմնական ախտաւորութէն : Այս եթէ մահ ևս ՚ի վը հասանիցէ ոչ ինչ տագնապես ցի , այլ ո՞ու ՚ի քաղցր քուն հանգիցէ . և փըսկութեան հոգւոյ իւրոյ բերկրեալ՝ զո՞ւարթումօք ՚ի պատրաստեալ օթևանս երկնից ճանապարհ արասցէ . և փոխանակ սգոյ և տրտմութոր թողլոց է մերձաւորաց իւրոց , թողլուցու

Տողեղուարժ սփոփանս և միսթարութիւն :

ԵՌ Այսէն է ճշմարիտ բարեկամ, որ օգնէ բարեկամին՝ ի մեծի նեղութեւ նր. իսկ ոչ կարէ լինել այլ ինչ նեղութիւն մեծ՝ ի կեանս մարդոյ՝ քան զօր մահու նր. ապա ճշմարիտ բարեկամն՝ ի լսել զինանդութիւն բարեկամին, երթայ և օգնէ նմա օգտակար խրատուք. ողջ զի փութասցի առնուլ զնք խորհուրդն ապաշխարութեւ, և արասցէ կտակագրութիւն :

Բայց աւաղ՝ զի զբազումն տեսանեմք յաւուրս մեր, որք պանծան զանձանց լինել բարեկամն ինանդին, և երթեալ յայցելուի նր, չառնեն ինչ զըսց զապաշխարութեւ և զկտակագրութեւ. այլ վեր՝ ի վերոյ խօսելով զինանդութեւ նր և զբժկաց, դառնան և յուսադրեն զնա առողջանալ. և իբրև մարգարէ՝ կամորդի մարգարէին՝ նշանակեն նմա զօրն և զժամն ելանելոյ նր՝ ի մահճացն, և երթալոյ՝ ի վաճառանոցն : Առ ողորմելի հինանդն հաւատացեալ բանից նց, յապաղէ տեսանել զպատրաստութիւն իւր. և մինչօրհաս մահուն ստիպէ զնա, հազին առեալ զխորհուրդն ապաշխարութեւ ելանէ յաշխարհէ :

Այսպիսիք ոչ են ճշմարիտ բարեկամն ինանդին՝ այլ շողոքորթ, չասացից թէ թշնամի. զի փոխանակ փութացուցանելոյ զինանդն տեսանել զպատրաստութիւն անդառնալի գնացիցն, սուտ խոստմամբ առողջութեւ տան նմա յապաղել. և փոխանակ նպաստամա-

տոյց լինելոյ , վաստու նր գտանին պատճառ :

Ապաքէն ընդ ամ մարմնաւոր ծառայութեց և բարերարութեց կարէ մարդ ըստ արժան ւոյն հատուցանել . բայց ընդ հոգեւոր խրատու՝ անհնարին է մարդոյ առնել արժանի հատուցումն : Ո ի հոգին է անգին . ապա և խրատն որ տուեալ լինի ’ի փրկութի հոգւոյ՝ է անգին . իսկ առ այն որ է անգին , պահանջի արժանի հատուցումն վարձք անգին . բայց քանզի տալ զայն անկարելի է մարդկան , ապա ած տայ և հատուցանէ ընդ հոգեւոր անգին խրատուց զվարձս անգին :

Ե Այնքան սաստիկ է և զօրաւոր սերն ծնողական , մինչզի ’ի մեռանիլ որդւոյն մնայ անմեռ ’ի սիրո ծնողին . մանաւանդ եթէ որդին իցէ բարեբարոյ : Բայց ոչ վայելէ հաւատացելոյ անդր քան զպայման սգալ և տըրոտ միլ . զի եթէ բարի էր որդին , ոչ է արժան լալ . զի մեկնեցաւ ’ի միջոյ չարեաց , և գնաց վայելել յարդիւնս բարեաց իւրոց : Իսկ եթէ չար էր , ոչ բնաւ արժան է լալ . զի կան խահաս օրհասիւ բարձաւ չարն ’ի միջոյ , և ոչ յաւելաւ պատիժ նր . որ եթէ մնայր կենդանի , կարէր գործել զայլ ևս չարիս՝ յաւելուլ զպատիժ իւր : Բայց է երբեմն զի թոյլ տայ ած մեռանիլ որդւոյ բարեայ , զի մի՛ գուցէ լինիցի չար . և բառնայ ’ի կենաց որդի չար , զի մի՛ չարագոյն ևս լինիցի :

Ե Կոծ մեծ ունել ’ի վերայ մեռելոյ՝ և

վայիւք և ճըովողըալ, արտաքոյ է մարդկային
բանաւորութեն, և անվայել քրիստոնէական
յուսոյ և կրօնի։ Օ ի եթէ ուղիղ հաւա-
տով և բարի վարուք հրաժարեցաւ ՚ի կենցա-
ղոյս, նա յանմահական կեանս ուրախացեալ
բերկրի. և դու իբրև անյոյս ոք սգաս տըրտ
մութեն, որպէս թէ չիցէ անդրէն յառնելոց։
Իսկ եթէ չարաշար վարուք մեռաւ, բաւա-
կանէ նմա սուգն զոր ունի ՚ի վը իւր. զի
թէ և աշխարհ ամ ՚ի մի վայր ժողովեսցին և
կոծեսցին՝ ոչ կարեն հաւասարիլ ագոյ և տըրտ
մութեն, զոր ունի մեռեալն ՚ի վերայ կո-
րստեան իւրոյ։

Եթէ ասիցեն, բարեացապարտ ոմն էր
մեռեալն և երախտաւոր բազմաց։ Ապաքէն
արժան էր նց գիտել, թէ սաստիկ սգով չկա-
րեն լինել շնորհապարտ. իսկ եթէ ախոր-
ժեն, անմոռաց ՚ի մոխ կալցեն զերախտիս նը.
և բանիւ և գրով յիշատակելոց են զշամբաւն
բարութեն, և զազգօղուտ արդիւնս վաստա-
կոց նը յազգէ ազգ մինչեւ յաւիտեան. մա-
նաւանդ զի յորդորեալ յօրինակէ նորին՝ լի-
նիցին իւրաքանչիւր ըստ կարի բարերար և
երախտաւոր հայրենեաց իւրեանց։

Իսկ եթէ ասիցեն բազմորդի էր մեռեալն
և անստացուած, և եթող որբ և անխնամ
զորդիս և զընտանիս իւր. Օ ի՞ է զի չա-
նուն ՚ի միտ, թէ ոչ ինչ օգտէ սուգ և թախ-
ծութի. զի ոչ կարէ լնուլ զպէտս որբոցն և

այրուց : Հապա՞ փոխարկեսցեն զսուգ իւր եանց՝ ՚ի գթութի՛, և մարդասէր կամք խնա մածու լինիցին նոցա մինչեւ ՚ի զարդանալ, և հողալ զկարեաց իւրեանց՝ մի՛ թողուցուն յաղարծի և անխնամ զորբեսն, և մի՛ կարօտեալ զընտանիս նորա :

Եւթէ ասիցեն, սիրելի էր մեղ մեռեալն և բարեկամ : Իսկ արդ՝ պարտ էր նոցա ո՛չ մեծակական ձայնարձակութի՛ ընդ վայր աղաղակել, և սգով և կոծով՝ ՚ի թուխս համակիլ, ոյլ հաստատուն կալ՝ ՚ի սիրելութի՛ . և որ ինչ վայելէ բարեկամութի՛՝ ՚ի նոյն կանխել . աղօթս առնել վ՛ս մեռելոյն, և տալ պատարագիս և ողորմութի՛ . ՚ի բարելից շինութի՛ պահել զտուն նը, և խնամով զարդացուցանել զորդիս նը . զուստերսն տալ յուսումն գիտութի՛ . և յարհեստս պիտանիս, և զդստերսն բարեկարդութի՛ պահել և ամուսնացուցանել, և սիրով բարեկամուել հոգածու լինել ընտանեաց նը, ոոկ թէ ինքն իցէ կենդանի :

Ապա ասիցեն, եթէ ՚ի ծաղկեալ հասակի մեռաւ : Ծանիցեն այնպիսիքն, թէւ այն էր հարկաւոր՝ և գրեթէ բնական, նկատմամբ պատճառաւացն՝ յորոց եկն յառաջ մահն տարաժամ :

Ազպէն մարմին մարդոյ՝ ըստ անյեղլի օրինաց արարչապետին բնութի՛, բաղկացեալ է յայլաւոր տարերաց կամ ՚ի նիւթոց . որք ունին զտարբեր յատկութեւաս, զտարբեր

շարժմունս , և զտարբեր ներգործութիս : Քանզի հողն է հաստատուն , անթափանցելին , և ծանրադոյն քան զյլսն : Ո ուրն է մածուցիկ , որ ընդ մտեալ յամ կազմութիս գործարանաց մարմնոյ , տայ նց լինել դիւրաշարժ : (Օդն է հոսանուտ , որ տայ միջոց այլոց տարերաց մարմնոյ շարժիլ առ հարկաւոր գործս : Հուրն է յաւէտ ներգործական և շարժուն : Ուստի և մարմինն բաղկացեալ յայսոցիկ տարերաց՝ կամ 'ի նիւթոց , ունի զանազան յատկութիս նց . ֆ զանթափանցութի , ըդծանրութի , զդանդաղութի , զեաժանելութի , զտարածութի , և զշարժականութի :

Արդ՝ մինչ հաւասարակշիռ են տարերքս , զօրացուցանեն և պահպանեն զմարմին մարդոյ . բայց մինչ կորուսանեն զհաւասարակշռութին , տկարացուցանեն , և առ բերեն զմահ . և որք պատճառ էին պահպանութե և կենաց , լինին առիթ ապականութե և մահուան : Քանզի հուրն առաւելեալ՝ երագեզարժումն մասանց նիւթոյ , և խանգարէ ըդկազմուած մարմնոյ . ջուրն առատացեալ՝ թուլացուցանէ զջելս և զնեարդս . օդն լցեալ անյարմար մասամբ՝ բերէ զմահաբեր ախտս :

Կորուսանեն զհաւասարակշռութիս իւրեանց տարերք , մինչ 'ի բաղմամեայ գործողութ տկարանան գործարանք մարմնոյն . և նուազի օր ըստ օրէ ձգողական շարժումն տարերաց , որք ձգէին զմասունս համեմատս էութեան

իւրեանց՝ ՚ի մնունդ և յաճումն մարմնոյ , և
՚ի պահպանութիւն կենաց . և ընդ հակառակն՝
սկսանին տարերք վանողական շարժմամբ վանել
զնիւթս՝ որք աննման են էութե՛ իւրեանց , և
տկարանան և քակտին . և յայսցանէ յառաջգոյ
մահն ծերութե՛ ըստ սահմանելոյն այ :

Կորուսանեն ևս զչաւասարակշռութիւնս
իւրեանց տարերք . է՝ որ ՚ի կերակրոց և յըմ
պելեաց , և է՝ որ ՚ի խառնակեցիկ վարուց . է՝
որ յապականուէ օդոյ , և է՝ որ յամբոխմանէ
կրից . և յոյլ ևս բազում և ՚ի զանազան պատ
ճառաց , որք կարեն խանգարել զկավմուած
մարմնոյ և գործարանաց . ուստի և տարերք
վանողական շարժմամբ հերքեն զնիւթսն , որք
ոչ համեմատին էութե՛ իւրեանց , և նուա
զին և քակտին . և յայսցանէ յառաջգոյ մահն
տարածամ :

Եւ զայսոսիկ զերկոսին , ոյսինքն զշար
ժումն ձգողութե՛ որով պահպանին կեանկք ,
և զշարժումն վանողութե՛ որով լուծանին
կեանկք , հաստատուն օրինօք սահմանեալ է
ած ՚ի բնութե՛ մերում մինչև ՚ի կատարած
աշխարհի : Եւ յորժամ փոփոխեսցին օրէնք
բնութե՛ յօրէնս շնորհաց , և եղեցի երկին
նոր և երկիր նոր , յայնժամ նորոգեսցի և
մարմին խոնարհութե՛ մերոյ ըստ նմանութե՛
մարմնոյ փառաց որդւոյն այ . և առցէ իւրա
քանչիւր զչատուցումն գործոց իւրոց :

Իսկ արդ՝ եթէ մահն ծերութե՛ և եթէ

ման Երիտասարդութե են բնական և հարկաւոր, մինչ զպատճառան յորոց յառաջ գան՝ խելամտութե քննեսցուք։ Օ ի որ արկանի ՚ի հուր, հարկաւ այրի ։ և որ գահավէժ լինի, հարկաւ խորտակի ։ այսպէս ամպատճառ հարկաւորապէս ներգործէ ։ ուստի և ամ գործէ հարկաւոր և բնական, նկատմամբ պատճառացն՝ որք զուգընթանան և յառաջ ածեն ըզ գործն։ Ապա չէ պարտ տրտմութե լքանիլ ընդ մահ մեռելոյն։ ոյլ զգաստութե զարժանն անօրինել, և զնոյն կատարել փութալ։

* Եթէ Ռունիցի Յարդ չեցցէ, Վախճանեալ շառուրս չենաց էրոց։ Աղասէցից ժնչ ժոսոնիտաձ լինիցի։

|| Յուբ ։ ԺՇ ։ 14 ։

* Սակաւ լայ ՚ի ՀՇ Ռուելցն՝ զի հանգեաս։

|| Աիրաք ։ ԽՇ ։ 11 ։

* ՈՇ Յահ՝ որպէս զի տառն է այլապահ չո Յարդոց խաղաղացէլոց ՚ի ՀՇ սապացուածոց էրոց։

|| Աիրաք ։ Խա ։ 1 ։

* ՈՇ Յահ՝ զի Գեղեցիկ Են տառաստանի չո, իարօնելոց տառն, և նուազէլոց ՚ի զօրութէ։ || Աիրաք ։ Խա ։ 3 ։

* Եթէ ոչ հարն յորենոց անիեալ յերիէր Ռունիցի, ինչն մասն չա։ ապա նէ Ռունիցի, բազում արդէնս տառնէ։ || Յով ։ ԺՇ ։ 24 ։

* Օ ՚ի Բաշան Մշաց Յահ է ։ այլ շնորհրն ոց՝ չեանդ շա-էտենից, ՚ի քա յու ՚ի պր մը ։ || Կոօմ ։ զ ։ 23 ։

ՅԱՆԱԿԱՐԱՔՆԵՐԸ ՅԱԿԱՐՁԻՆ ՀԱՊԱՐՔ :

—————

ԷՐԵՒ

Ա	ՂԱԶՅՆՈՐԴ	1
Բ	ՎԱՀԱՆԱՅ	18
Շ	ԽՍԹԱՆ	22
Դ	ԺՈՂՈՎՈՐԴ	50
Ե	ՂՋԳԱՍԵՐ	57
Վ	ԱՐԺԱՎԱՐԵՄ	79
Է	ՕՆՈՂ	83
Ը	ՂՄՈՒՄՆՈՒԹԻՒՆ	101
Ճ	ԼՐԻՄԱՍԱԼՐԴ	106
Ձ	ՂԻՄՈՒԹԻՒՆ	112
Ճ	Ա ԻՃԱԿ ԿԵՆԳԱՂՋՄ	124
Ճ	ԼՐՃԱՆԿՈՒԹԻՒՆ	152
Ճ	ՂՄԱՔԲԻՆՈՒԹԻՒՆ	164
Ճ	ԽՈՀԵՄՈՒԹԻՒՆ	186
Ճ	ԽՈՐՀԾՐԴ-ԱՊԱՀՈՒԹԻՒՆ	202
Ճ	ԽԻՂՃ մատաց	204
Ճ	ՂՄԴ-ԱՐԾՈՒԹԻՒՆ	209
Ճ	ՂՄԱՐՄՈՒԹԻՒՆ	214
Ճ	ՂԱՐԵԿԱՄ	222
Ե	ՀԻՄԱՍԻՐՈՒԹԻՒՆ	234
Ի	ՂԱՄԿԱՄՆՈՒԹԻՒՆ	237
Ի	ԼՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ	240
Ի	ՂԱՐԱՍՊՈՒԹԻՒՆ	243
Ի	ՀՆԱՋԱՆԴՈՒԹԻՒՆ	245
Ի	ՂԱԿԵՐՈՒԹԻՒՆ	256
Ի	ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆ	260
Ի	ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ	266
Ի	ԽՈԿՈՒԹԻՆ մահու	275